491.99-5 (075)
Բ.61

# ՀԱՅԵՐԷՆ
# ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

## ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԼԵԶՈՒԻ
## ՆԱԽԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑԱՑ ՀԱՄԱՐ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՑ
ՊԱՏ. Մ. Տ. ՔԻՐԷՃՃԵԱՆ

Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԻՆԱՍԵԱՆ
1864

Արդարեւ ճշմարիտ է, թէ [illegible] և

[illegible] հին [illegible], և [illegible]

[illegible] մը, [illegible] ըլլայ, կրնայ [illegible]

[illegible] բոլորովին [illegible]

[illegible]

[illegible] է, [illegible]

[illegible]

[illegible] :

ԼՈՐՏ ՊԱՅՐԸՆ

A T/2008

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

Հայկազեան դպրոցներուն մէջ յոյժ հարկաւոր դասագիրք մը, այն է Հայերէն Աշխարհաբար լեզուի Քերականութիւն, պակաս տեսնելով շատ տարիներէ հետէ կփափաքէինք այդ կարօտութիւնը լցունելուն։

Սակայն այսպիսի լեզուի մը, որ տակաւին ուղղեալ կարգաւորեալ և հաստատ հիման վրայ չէ կցուցուի ընդհանրապէս, անոր կատարեալ Քերականութիւն յօրինելու ինհարկէ ուշք կըստահի, անկատար բանի մ' ալ ձեռք զարնելու ուշք կխրախուսի,. և թերեւս այս պատճառաւ ազգիս քերթողներն ժամանակ չտուին մինչեւ հիմա այսպիսի աշխատասիրութեան։ Բայց մեք կէս մը մեր դպրոցներուն թախանձանքէն ստիպեալ, և կէս մ' ալ սիրելի ազգիս դեռահասակ դասուն ըստկարի վայելուչ դպրութեան առաջնորդելու փափաքելով, ոչ բոլորովին խրախուսեալ և ոչ իսպառ վհատեալ, ձեռնամուխ եղանք այս Քերականութիւնս պատրաստելու, և միանգամայն մեր ազգային յարգոյ քերթողներուն դիտողութեանն յանձնելու։ Արդ որոնք որ սիրողաբար իրենց ուշադրութեանն արժանի համարին այս երկասիրութիւնս, և բարեհաճին իրենց դիտողութիւններն ուղղել առ մեզ, շնորհակալութեամբ պիտի ընդունինք, և ըստ այնմ պիտի սրբագրենք, եթէ Տէրն կամենայ երկրորդ տըպագրութիւնն հրատարակելու. միայն թէ մեծագոյն

մասին ընտրողութեանն հետեւելով, ըստ Կուինտիլիանոսի, որ կըսէ, "Զանզի յայտնի է թէ խօսքն ստակի նման գործածուելու է, այսինքն՝ վրան հասարակաց դրոշմ ունենալով": Ուստի մասնաւոր անձի մը գաղափարն բաւական չէ փոփոխութիւն ընելու երբոր ընդհանրին ընդունելի չերեւիր: Այսու ամենայնիւ իւրաքանչիւր ուսումնականի գաղափարն փափաքելի է մեզ ընդունել, որով կարող կըլլանք մեծագոյն մասին գաղափարն ինչ ըլլալուն հասու լինել.

Կարեյոյս ենք թէ որչափ անկատար տեսնուի այս գործս, մեր ազգային Նախակրթական դպրոցաց ներկայ կարօտութիւնը լցունելու պիտի ծառայէ իմասին ուղղախօսութեան, եթէ մեր ազնիւ ուսուցիչներն ներողամիտ լինին անոր անհրաժեշտ թերութեանցն:

# ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Քերականութիւնը լեզուին անխառնակ պահպանուելոյն կամ խառնակութիւններէ զտուելոյն, և օրըստօրէ մշակուելոյն համար կարևոր ուսմունք մ'և հարկաւոր միջոցն է. քանզի անոր մէջ կաւանդուին այն կանոնները, որոցմով լեզուն մաքուր և միօրինակ կմնայ ազգին ամէն ճիւղերուն մէջ, կամ հետզհետէ. միաձևութեան կուգայ թէև մէկմէկէ խիստ հեռաւորնակ ըլլան: Ճշմարիտ է թէ քերականական գիտութիւնն ամէն լեզուի ընդհանուր լինելով, ոևէ լեզուի մը Քերականութիւնն ունողն քերականական արուեստին հմտութիւն կունենայ. և թերևս այս կարծիքն էր, որով ոմանք համոզուած էին, թէ Հայերէն Գրաբարի Քերականութիւն ունողն Աշխարհաբար լեզուն ուսած կըլլայ ըստ կանոնի խօսելու և գրելու: Սակայն համարձակութեամբ կրնանք ըսել թէ այնատեն այդ կարծիքն համոզիչ կըլլար, եթէ կարէինք ենթադրել թէ Գաղղիերէն լեզուի Քերականութիւն ունողն Անգղիերէն լեզուի կանոններն ուսած կըլլայ բովանդակապէս. քանզի այդ երկուքն թէպէտ զատ զատ լեզուներ են, բայց ազգակից են իրարու. շատ նոյն բառեր կգործածեն երկուքն ալ միայն տարբեր հնչմամբ. թէոր ըսենք՝ թէ Գրաբար Հայերէնն Աշխարհաբարին հետ ունեցած տարբերութեանն՝ հաւասար է Գաղղիերէնին ունեցած տարբերութիւնն Անգղիերէնին հետ, թերևս սխալած չենք լինիր:

Արդ Գրաբար Քերականութիւնն Աշխարհաբար լեզուն ըստ կանոնի խօսիլ և գրել չուսցնելն ինքնին յայտնի է, բայց մէկ քանի օրինակներ ալ յառաջ բերենք: Քաջ հայկաբան հեղինակ մ'իր աշխարհաբար գրութեանցը մէջ փոշի բառին առականը փօշէյէ գրած էր, ով մէկ երևելի լրագրի մը բանասիրականին մէջ: Ուրիշ մէկ հայկաբանութեան դասատուի մը գրութեանը մէջ՝ Բէ առանց ը ի. Բ—նտ—րչէ—ըմէ՝ իբրև մէկ բառ, կարդացինք: Աղէկ լեզուագէտ թարգմանչի մը թարգմանութեանը մէջ տեսանք հ—րցա—նէր. ցա—ցա—նէր. գրուած իբրև ——ցանէմ վերջով բայեր: Նաև, չէ պիտի տամ, չը խօսեցայ, հիւանդուբէ—նէն հետևանքը, ուրախութէ—նէն, ձեռուըն——ն առնուլ, մը նէ, գէ—ղէ, ևն, ևն, աստնկ շատ սխալանք առհասարակ ուսումնականաց գրուածոցը մէջ տեսնուած են և կտեսնուին: Ասոնք զարմանալի չեն, այլ միայն Լորտ Պէյրըն երևելի փիլիսոփային վկայութիւնը կհաստատեն, որ Քերականութեանս գրանը վրայ գրած ենք, որ ըսել կուզէ թէ ամէն լեզու և լեզուին ներկայ ձևն բա—ն էր Քէր—լ—ն—բէ—նն ——նէն—ըր—է ուղիղ խօսելու և ուղիղ գրելու համար: Դարձեալ ուրիշ վըկայութիւն մը Երկրագունտ օրագրին Պատուելի Խմբագիրն կուտայ իր յայտարարութեանը մէջ, "Նուիրական պաշտաւո-

րութիւն կհամարինք", կըսէ, "մեզ անոր (Աշխարհաբար լեզուի) խոտորմունքն, անհարթութիւններն, թիւրութիւնները ակներեւ ցոյց տալ. և ըստ կարելւոյն ուղղել ջանալով՝ մեր Աշխարհաբառն կարգաւորել և հաստատ հիման վերայ դնել"։ Ուրախ ենք այսպիսի պատուական օրագրի մ'ազգիս մէջ հրատարակութիւնը տեսնելով. և փափաքելի է արդարեւ որ բոլոր խմբագրերն այս նուիրական պարտաւորութիւնն յանձն առնուն. քանզի կվկայենք թէ մայրենի լեզուն կոկելու և յարդարելու մեծ նպաստ կրնան մատուցանել օրագրերն, բայց ո՞րն դիւրին է մանաւանդ դպրոցներու աշակերտաց, օրագի՞ր կարդալով ուղղախօսութիւն ուսնել, և այն ալ անշուշտ անկատար, եթէ նոյն լեզուին քերականութիւնը մանկութենէ կարդալով։

Ես չեմ կարծեր թէ ալ երկար փաստաբանութեան կարօտ է ապացուցանելու, թէ Գրաբար Հայերէն քերականութիւնն Աշխարհաբար լեզուն չուսուցներ ուղիղ խօսիլ և ուղիղ գրել. որ ասիկա չէ թէ ենթադրութիւն մ'է, այլ փորձով տեսնուած իրողութիւն մ'ամենուս աչքին առջեւ. թէ որ ուսուցիչներն և ուսումնականներն սխալանք կընեն ուղիղ Աշխարհաբար գրութիւն ընելու, միայն Գրաբար քերականութիւն մը կարդալով՝ արհեստաւոր եղողներն ինչպէս ուղղախօսութիւն պիտի գիտնան։

Բայց ոմանք երկիւղ մ'ունեցած են՝ թէ երբոր Աշխարհաբար լեզուի քերականութիւն մտնէ դպրոցներու մէջ՝ Գրաբարն բարձի թողի պիտ' ըլլայ, և բուն Հայկեան լեզուն պիտի կորսուի. ասոր պատասխան սա կըսենք, որ եթէ կկարծուի թէ այս գրութեամբ ազգին ամէն անհատներն արու և էգ՝ վերջապէս Գրաբար լեզուն պիտ' ուսնին և հասարակօրէն զայն գործածեն, այդ անկարելի լինելուն ոչոք կտարակուսի. և յայտնի է թէ ուսումնականութեան տաղանդ ունեցողներն պիտ' ուսնին, հայկաբանութեան հմուտ կամ լաւ հայկաբան ըլլալու համար։ Այսպէս եղած է Հռովմայեցւոց մէջ Լատիներէնն և Յունաց մէջ Հելլեններէնն. թէ որ անոնց մէջ այն հին լեզուներն գործածական եղած չէ մինչեւ ցայսօր մանաւանդ Յունաց մէջ որոնք զարմանալի կերպով նախանձաւոր են իրենց լեզուին. ուրեմն ինչ յոյս կայ թէ մեր ազգին մէջ պիտի լինի։ Եւ թէ որ միայն ուսումնականներն պիտ' ուսնին, անոնք թէ Աշխարհաբար քերականութիւնն ուսած ըլլան կամ չըլլան, իրենց մէջի եռանդը պիտ' ստիպէ զիրենք բուն Հայկաբանութիւնն ուսնելու. ուրեմն այդ երկիւղն անհիմն է։ Բայց գիտցուք թէ իրաւացի ըլլայ, ճշմարիտ ազգասէր անձ մ' ինչպէս պիտի դատէ, լաւագո՞յն պիտի դատէ ազգին հասարակութիւնը տգէտ՝ անգրագէտ պահել, ու միայն մեռեալ — կենդանի բարբառով անգործածելի լեզու մը պահպանել. քանզի ինչպէս որ ըսինք ազգիս ընդհանրութեան անհնար է որ իւրաքանչիւր անհատ Գրաբար ուսնելու կարող լինի։

Եւ նախ՝ իգական սեռին նորահասակներն, որոց փափուկ և տկար կազմուածքը չներէր այնպիսի ծանր և ցամաք աշխատութեան. և ազգիս մէջ ալ ուսումնասիրութիւն կամ ընթերցասիրութիւն չմըտնէ պիտի, մինչեւ որ մայրերն ուսումնական և ընթերցող չըլլան. որպէս զի անոնց զաւակաց կազմութեանը մէջ ուսումնասիրութիւն տարրանայ, և շատ կանուխ ուսման յարգն ու կարեւորութիւնն ճանչեն, մանաւանդ թէ բանական էակի մ'անոր հետեւիլ անհրաժեշտ պարտաւորութիւն ըլլալն զգան և հանապազօրեայ օրինակով համոզուին. ու այսպէս ազգիս յաջորդող սերունդն լուսաւորեալ և գիտուն ըլլայ.

Երկրորդ՝ այսօր բազմաթիւ պատանիներ և երիտասարդներ կան՝ որ կփափաքին ուղիղ խօսիլ և ուղիղ գրել, բայց իրենք զբաղեալ են առեւտրական գործոց մէջ, և կամ իրենց ապրուստ հայթայթելու, և պատեհութիւն չունին երկար ժամանակ Գրաբար ուսնելու, ինչպէս պիտ՝ հասնին իրենց փափաքանացը, պէտք է ազէ՞տ մնան որ Գրաբար ուսնելու կարող չեն.

Երրորդ՝ երբոր օտարազգի մ' որ Հայերէն խօսելու և գրելու կամք կընէ, ի՞նչ ընելու է, ինքը չուզեր Գրաբար ուսնիլ. և գիտէ որ ուսնի ալ քիչ նպաստ պիտ՝ ընդունի իր նպատակին հասնելու. ո՞րչափ տարժանելի աշխատութիւն է առանց քերականութեան լեզու մ'ուսնիլ. Այս դժուարութենէն ստիպեալ Ամերիկացի Միսիոնար Պատ. Ե. Րիկզ, որուն քերթողական արուեստին քաջահմուտ տեսութենէն մեք ալ օգնութիւնն ընդունած ենք այս գործոյս մէջ, երբոր դժուարութեանց հանդիպելով խորհրդակցութեան կարօտ էինք. ինքն Անգղիերէն բացատրութեամբ Հայերէն Աշխարհաբար լեզուի համառօտ քերականութիւն մ'յօրինեց միայն ութ մասանց բանի. Արդ քերականութիւն չունեցող լեզու մ'Եւրոպացւոց առջին ո՞րչափ համարում կունենայ. քանզի լեզու մ'որ՝ քերականութիւն չունի, ըսել է հաստատեալ կանոններ չունի, և կրթեալ կոչուելու յարգանքէն զուրկ է իրաւամբ.

Բայց թողունք օտարազգիներն, բուն մեր ազգայինք ոչ սակաւաթիւք, որ դժբաղդաբար իրենց Հայկական լեզուն կորսնցուցած են իզարուց հետէ, և այսօր կփափաքին իրենց բուն լեզուն սովրելու, ասոնք զաւկներն ալ մանչերն ու աղջըկներն Գրաբար ուսնելո՞ւ ստիպենք որ Հայերէն ուսնին. ի՞նչ ծանր ու ձանձրալի աշխատութիւն է այդ. և միանգամայն ի՞նչ տարօրինակ պահանջումն — բուն լեզուն չգիտցած՝ անոր գրոց բարբառն ուսցընել. բազում աշխատութիւն և սակաւ արդիւնք տալ չէ՞. և հարիւրին քանի՞ն յանձնառու պիտ՝ ըլլայ այն դժուարաքիրտն աշխատութեան. Ապաքէն ազգին Կրօնական և Ուսումնական արդոյ ժողովներն բոլոր սրտիւ կփափաքին որ այն ազգայնութեան երեւելի յատկութենէն զրկեալներուն ամէն կերպիւ օգնեն, և դիւրացնեն իրենց լեզուն գիտնալու և խօսելու ուսումն. որ ասիկա իբրեւ աղ-

գաւիրական պարտաւորութիւն մ՚ յանձն առած են անտարակոյս, բայց կատարելու ի՞նչպէս կարող պիտի լինին, եթէ յատուկ անոնց համար պատրաստ չունենան քերականութիւն մը նոյն լեզուին ։

Մեր միտք ունինք անոնց ուսման դիւրութեանը նպաստելու համար Թրքերէն լեզուով համառօտ քերականութիւն մ՚ի լոյս ընծայել. եթէ այս երկասիրութիւնս սիրով ողջունուի մեր սիրելի ազգայնոցմէ, և այս դիտաւորութեամբ հոլովմանց և խոնարհմանց և օրինակաց Թրքերէններն չդրինք այս գործոյս մէջ ։

Ըսինք թէ ազգիս ընդհանրութեանն անկարելի է Գրաբար ուսնիլ. քանզի մէկ դպրոցին մէջ թէոր հարիւր աշակերտ կայ հազիւ թէ անոնց քսան կամ քսանուհինգ ուսումնական լինելոյ տաղանդն ունին, թող յիսուն լինին, մնացած կէսն բոլորովին տգէտ պիտի մնան. և թէոր տարի մը կամ աւելի Գրաբար քերականութիւն կարդալով ուրիշ արհեստի պարապին, ինչ օգուտ պիտ՚ընէ այն, տակաւին կարող չեն ըլլար ուղիղ ոճով նամակ մը կամ կարճ յօդուած մը գրելու. ուսածնին անգործածելի լեզու մը լինելով շուտով պիտի մոռնան անոր կանոններն ։

Այսօր ազգային դպրոցաց ամենուն մէջ առհասարակ քերականութեան դասատուութիւն չկայ, այլ ո՛ւր որ գիտութեան վարժապետ կգտնուի. իբրև թէ քերականութիւնն ալ գիտութիւն մ՚է. իրաւ է որ ազգերնուս մէջ քսանուհինգ երսուն տարի առաջ գիտութիւն ըսելով քերականութիւն կամ թէ շատշատ Ճարտասանութիւն և Տրամաբանութիւն կհասկցուէր. բայց այսօր ալ ա՞յնպէս կհասկնայ արդեօք ազգը. չեմ կարծեր քանզի հիմա կլսէ թէ Բնական գիտութիւն, Մաթեմաթիքական գիտութիւն, Բարոյական գիտութիւն. Տնտեսական գիտութիւն, Երկրագործութեան գիտութիւն. Մեքենական գիտութիւն, ։, կան և գիտութեան դպրոց կամ ուսումնարան ըսելով՝ յիշեալ գիտութեանց ուսմունքն կայ կհասկցուի ։ Թէպէտ լեզուներու ուսումն ալ գիտութիւն մ՚է. և կերեւի թէ մեր ազգին մէջ ալ քերականութիւնը գիտութիւն սեպուած է անոր համար, որ տարբեր լեզու մ՚ունենալու համար կկարդան. բայց այնպիսի գիտութիւն մը չէ ։ որ միտքը կզարգացնէ, բնական՝ բարոյական կամ մտաւոր կատարելութիւն յառաջ կբերէ ։ Եւրոպական դպրոցաց մէջ առհասարակ ո՛ւր որ տղաք Այբբենարան կկարդան, հոն ևս քերականութիւն կկարդան, ինչպէս որ Բնական՝ Բարոյական և Մաթեմաթիքական գիտութեանց տարերքներն ալ, Սաղմոս՝ Նարեկ կարդալու տեղն ։

Նոյն օրինակին հետեւելով մեր Նախակրթական դպրոցներուն մէջ բոլոր աշակերտաց և աշակերտուհեաց երկրորդ կամ գոնէ երրորդ դասագիրքն՝ Աշխարհաբար լեզուի քերականութիւնն

պարտի լինել առձեռարակ. այն դիտաւորութեամբ քերականութեանս առաջին և երկրորդ մասերն այնպիսի փոքրիկ տղոց ընդունակութեանն յարմարցուած են, զանց առնելով ծանօթութիւններն և յաւելուածն, որ երկրորդ անգամ կարդալուն պէտք է ուսնին զանոնք։ Այս ընթացքով աշակերտ մ'երբոր կպատրաստուի բարձրագոյն դպրոց կամ ուսումնարան մտնել, քերականութեան արուեստին ինչ ըլլալուն բաւական հմտացած լինելով, հոն միայն Գրաբար Հայերէն ուսնելու կուտայ միտքը. հարկաւ պիտի կարդայ Գրաբար քերականութիւն, բայց ոչ թէ քերականութեան արուեստն ուսնելու, այլ միայն Գրաբարի կանոններն գիտնալու համար. որով մեծ դիւրութիւն կզգայ աշակերտն, քան թէ լեզուն և քերականութիւնը միանգամ ուսնէր։ Բոլոր լեզուագիտութեան ուսուցիչներն համոզուած են, որ եթէ մէկ աշակերտ մ' իր մայրենի լեզուին քերականութիւնն ուսած չէ, մեծ դժուարութիւն կկրէ օտար լեզու մ'ուսնելու. եթէ այս ճշմարիտ է, նոյնը խորհելու ենք ուրեմն Գրաբար Հայերէն ուսնելու համար ևս։

Երբոր ազգիս ընդհանուր նախակրթական դպրոցներն ուսման այս ընթացքը բռնած են, այսինքն՝ իւրաքանչիւր աշակերտ և աշակերտուհի այնպիսի ընթացք մ'ունենայ ուսման, որ թէ Բնական՝ Բարոյական և Մաթեմաթիքական և այլ ուսմանց տարերքն իրենց մայրենի լեզուովն ուսնելով գիտուն լինին, և թէ ազգային գործածական լեզուին քերականութիւնն ուսնելով կարող լինին ըստ կանոնի գրութիւն ընել. ահա այն ատեն միայն յոյս կայ որ ընդհանուր ազգը գրագէտ և մտացի ժողովուրդ մը, և հետևապէս հնարագէտ՝ ճարտար և գործունեայ լինի։

Արդ՝ փափաքելով սիրելի ազգիս ընդհանրութեանն յառաջադիմութեանը, որպէսզի իւրաքանչիւր տղայ կամ պատանի, աղջիկ կամ օրիորդ ուսումնականութեան առաջին քայլն առնելու բնաւ դժուարութիւն չունենէ, քերականութիւնը Փիլիսոփայութեան կամ Աստուածաբանութեան կարգէն բարձր գիտութեան ըմբռնումով մը չխրտուի, ջանացինք որչափ որ կարելի է պարզ ոճով այս քերականութիւնս պատրաստել։ Առաջին և երկրորդ մասերուն մէջ լեզուին պարզ կանոններն աւանդելով, յաւելուածին ու հետևեալ մասերուն մէջ զարտուղութիւններն և զանազան կարևոր գիտելիքներն դասեցինք, որ ուսանողն քայլառքայլ յառաջ երթալով ուսումը դիւրին և միանգամայն զուարճալի ըլլայ իրեն.

Այս քերականութեանս և յաւէտ առջի երեք մասերուն այն վարդապետութիւններն որ նոյն են թէ՛ Գրաբարին և թէ Աշխարհաբարին, Պատուելի Գարագաշեանին "Նոր Քերականութեան" կարգովն և ոճովն գրուած են ըստ մեծի մասին՝ միայն քանի մը փոփոխութիւններով. այսինքն՝ Ածականը զատ Մասն բանի չընելով Մակրային հետ մէկ դասեցինք, և երկուքը մէկ

տեղ ՄԸՐՐԷՅ անուանեցինք ։ Այսպէս Մասունք բանին գարձեալ ութ մնաց ըստ հին գրութեան, ինչպէս Թրակիթ անյայտ ըռած է, ''Քերթողք զամենայն բան յութ մասն ժողովեցին''* ։ Ածականն Անուան հետ չէինք կրնար խառնել, քանզի բառ մը թէ որ Ածական է, Անուան մակդիր է. և միեւնոյն բառն մակդիր անուան և միանգամայն Անուն է ըսելն չփոթ խօսք մ'է ։ Ուրախ ենք որ մեր Քերականութիւնն հրատարակուելէն առաջ, յիշեալ Պատուելին ուղղեց այս սխալն իր Նոր Քերականութեանը մէջ. կյուսանք թէ մեր Մակրայի հետ դասելով երկուքը մեկանց ՄԸՐՐԷՅ անուանելնիս ալ տարօրինակ և մեղադրելի բան մը չերեւի պիտի, ինչպէս որ Նորայուր իրաց բաղդն է ընդհանրապէս ։ Քանզի ուրիշ պատճառ ինչ կայ մեղադրուելու, քանի որ այս երկու տեսակ բառերն նոյն պաշտօն կըվարեն, միայն թէ մէկ տեսակն իբեւու՝ և միւսն գործողութեան որպիսութիւնն եւայլն՝ յայտնող են. մեք ալ նոյնքան տարբերութիւն յայտնեցինք երկուքի բաժնելով, և Ածականը Մակդիր անուան՝ ու Մակրայն Մակդիր բայի կոչելով ։

Հին Քերականութեանց մէջ Միջակ անուն կոչուածներն մեք ըստ Անգղիական Քերականութեանց Գերանուան գլխոյն տակ աւանդեցինք ՅՈՐՈՒՄ Գերանուն կոչելով, բայց ինթուականներէն որ Մակդիր անուան գլխոյն տակ դրինք զանիկա ։

Արդարեւ այս երկասիրութեանս մէջ ոչ այնչափ փափաք ունեցանք նոր հեղինակութիւն մ'ընել, որչափ որ ջանացինք մեր Գրաբար Քերականութիւններէն Աշխարհաբար Հայերէն լեզուի Քերականութիւն մ'ԻՐՐԻՆ ընծայել. այսպէս երկու եբեւելի քերդողներուն գործերն միշտ աչքերնուս առջին պահեցինք — Բագրատունի և Գարագաշեան Պատուելիներուն — առաջնոյն ընդարձակ և երկրորդին Նոր Քերականութիւնն. և անոնց առաջնորդութիւնովն Հայկաբանութեան կանոններուն ուշ ունել ջանացինք, որչափ որ կներէր Աշխարհաբար արդի լեզունիս, ըստ Կուինտիլիանոսի որ կըսէ, ''Հին բաներն մասնաւոր վսեմութիւն մ՚ և կրնամ ըսել թէ կրօնքի նման յարգութիւն ունին . . . բայց խօսելու արուեստին նկատմամբ սովորութիւնն է ամենէն վստահանալի ուսուցիչն'' ։ Եւ թէպէտ մէկերկու նոր տեսութիւններ ունեցանք քերականական եղբերու նկատմամբ, այն ալ մեր մտաց համոզմանն համեմատ ուղիղն ուսցընելու փափաքովն ընել պարտաւոր էինք.

Քերականութեանս գրեթէ բոլոր օրինակներն արդի հասարակութեան ընդունելի եղած հրատարակութիւններէն և գիրքերէն քաղուած է, ինչպէս է Բազմավէպ օրագիրն և Աշխարհաբար Աստուածաշունչն և ուրիշ այնպիսի գրուածքներ ։ Որոնք մասնաւոր հոգ ունեցած են Աշխարհաբար լեզուն մաք-

---

*Թրակ. Քերականութիւն, [illegible] ։

րել և կոկել․ ուստի և քերականութեանս կանոններն անոնցմէ հանուած են․ ինչպէս որ Գերմանացի մեծ քերթող Ակարլիճր սահման կուտայ քերականութեան, «քերականութիւնը սովորութեան համեմատ խօսելու գիտութիւնն է», կըսէ, «քանզի անիկա սովորութեան կանոնով խօսելու կերպն գիտցողներուն համար կանոններ չտար, այլ սովորութեան հաստատուն և յաճախակի գործածութենէն կժողվէ խօսելու ընդհանուր ձեւերն, որ ուսանողներուն աւանդէ»։

Այսու ամենայնիւ հոգ տարինք ինչոր քերականական սըխալ երեւցաւ մեզ ընդհանուր գրուածոց մէջ՝ չիտկել․ զոր օրինակ, շատերն [illegible] [illegible] որ կգրեն, մեք ուղիղ գրուածոց հետեւելով՝ [illegible] ըսինք․ քանզի Բացառականի տեղ Սեռական կամ Տրական գործածել ուղիղ չէ։ Բայց բառերուն ուղղագրութեան կանոն չէինք կրնար հաստըրակաց հնչումն բռնել, ինչպէս որ մինչև ցարդ ուղղագրութեան ուշադիր և ուսմնկ խմբագիր կամ մատենագիր մը նոյնօրինակ գործած է։ Ուստի հիմա լաւ գրութեանց մէջ բնաւ չենք տեսներ, անկաճ, մէնծ, [illegible]․ հար, ախպար, [illegible], [illegible], [illegible], [illegible]․ [illegible], ռամկական հնչմամբ․ բայց կգրուի՝ ականջ, մեծ, [illegible], հայր, եղբայր, [illegible], [illegible], [illegible], [illegible], [illegible]։ Արդ որովհետեւ այս սկըզբունքն ընդունուած է, որ Գրաբարի ուղղագրութեան համեմատ գրուելու է բոլոր Գրաբարէն առնուած բառերն․ ուստի նոյն սկզբանց համեմատ գործելով այնպիսի բառերն և հոլովներն ու բայից խոնարհումներն ջանացինք Գրաբարի ուղղագրութեան յարմարել։ Ուստի Ես Դերանուան տրականն [illegible] կամ [illegible], և յոգնակին [illegible] գրինք, Գրաբարին համեմատ, և ոչ [illegible], [illegible], ինչպէս որ մեծ կգրենք և ոչ մէնծ։ Իր Դերանուան յոգնակի սեռականն [illegible] ըսինք և ոչ [illegible]. [illegible], [illegible], [illegible], [illegible], գրեցինք ըստ Գրաբարին և ոչ՝ [illegible], [illegible], [illegible], [illegible], ինչպէս որ, հայր, եղբայր, կգրենք, և ոչ հար, եղբար։ [illegible], [illegible], [illegible], [illegible], [illegible], [illegible], գրինք նոյն Դերանուններուն հետ, քանզի իբրեւ գոյական առնք կգործածուին հիմա շատերէն։ [illegible] և [illegible], բառերուն սեռականներն [illegible], [illegible], գրինք և ոչ՝ [illegible], [illegible], քանզի սխալ է Գրաբարի ուղղագրութեան նայելով։ Բայց ինչո՞ւ համար [illegible], [illegible] չըսինք, նմանապէս՝ [illegible] գործածեցինք և ոչ [illegible]․ պատճառն որ Աշխարհաբար լեզուին մէջ բառերուն վերջի ըն կրճատել․ և մէջէն ձայնաւոր գիր՝ առաւելապէս – ղեղչելն ընդհանուր սովորութիւն եղած է և ամենուն հաճելի, մանանկ որ աշխարհաբար գրութեանց մէջ չըտեսնուիր [illegible], [illegible]։ [illegible], [illegible] կամ [illegible], [illegible], [illegible], [illegible], [illegible] [illegible]․ հոլովեցինք, քանզի այնպիսի բառերն նոյն կանոնով կհոլովին Գրաբարին մէջ են Ե կամ Է փոխուելով։ Նմանապէս [illegible], [illegible], [illegible], [illegible]․ [illegible], [illegible], [illegible],

հոլովեցինք, և ոչ տուն, տունէ, տունով, տուներ, լոյս, լոյսէ. քանզի Գրաբար հոլովմանց համեմատ չէ, և խորթ է ու ռամկական. Ըսեմ, ըսեցի. ճանչեմ, ճանչցի. հարցնեմ, հարցի. ցուցնեմ, ցուցի. աւելի շիտակ է ըսինք, քան թէ՝ ըսեմ, ըսէ. ճանչնամ, ճանչցայ. հարցնեմ, հարցուցի, ցուցնեմ, ցուցուցի. քանզի առաջին ձեւով խոնարհումներն են Գրաբարին համեմատ։

Այսպէս փափաքելի էր մեզ ամէն Բառերու շիտակ հոլովներն և խոնարհումներն ցուցընել, բայց առիկա Բառգիրքի գործ լինելով և ոչ Քերականութեան, ուսանողներն հիմըկուհիմա, քանի որ այնպիսի Բառգիրք մը կպակսի տակաւին ազգիս մէջ, ուղղագրութեան նախանձաւոր գրութիւններն դիտողութեամբ կարդալով ուսուցիչներուն առաջնորդութեամբը, մանաւանդ յղկեալ և յստակ լեզուով օրագրերն միշտ կարդալով, որոց խմբագրերն մեծ փոյթ ունին Հայկական լեզուն զտելու և լաւացնելու միջոց լինիլ, ու այսպիսի գովելի խնամով իրենց հանապազօրեայ վաստակը կրկնապատիկ օգտակար ընել, աղա այսպիսի մտադիր ընթերցասիրութեամբ հմտանալու են ինչպէս ուղիղ հայկաբանութեան ոճոյն, նոյնպէս հոլովմանց և խոնարհմանց և ամէն բառից ուղղագրութեանը, ու լաւ կրնան ճշմարիտ ընել ուղեւորով վարժութիւն ընելու են ուղղագրութեան և շարագրութեան, նախ բառեր գրելով ու ետքը խօսքեր և յօդուածներ։

Քերականութեանս առաջին և երկրորդ մասերն փոքրիկ տղոց համար պատրաստուած է ըսինք, երրորդ և չորրորդ մասերն անոնց համար են որոնք կարող չեն Գրաբար Քերականութիւն ուսնիլ, և կրաղձան Քերականական արուեստին վրայով աւելի հմտութիւն ստանալ, և ըստ արժանւոյն վայելուչ գրութիւն ընել։ Եւ տեսնելով որ այնպիսի ուսումնասէր պատանիք և օրիորդներ կան, որոնք մինչեւ անգամ քերթուածներ՝ երգեր գրելու ձեռնամուխ են առանց Գրաբար ուսնելու, ուստի չորրորդ մասին մէջ գլուխ մ'աւանդեցինք Տաղաչափութեան վրայ. քանզի Պատուելի Գարագաշեան ալ իր "Նոր Քերականութեան Ներածութեանը" մէջ կվկայէ, թէ "Տաղաչափութիւնը Քերականութեան արուեստին մէկ մասն համարուած է"։ Եւ անոր կանոններն ըստ մեծի մասին Հիւմիւրզեան վարդապետին "Առ ձեռն տաղաչափութիւն" գրքուկէն և Բագրատունի վարդապետին Վիրգիլիոսի քերթուածին թարգմանութեան յառաջաբանէն քաղուած են։

Արդ եթէ այս երկասիրութեանս միջոցով ազգիս սիրելի մանկանցն՝ ուսումնականութեան և ճշմարիտ իմաստասիրութեան որ յԱստուածգիտութիւն կառաջնորդէ, ճամբայ բացուած տեսնելուն բաղդն վայելենք, աղա այն ժամանակն է որ լիովին վարձատրեալ պիտ՝ համարիմք մեզ զմեզ.

# ՀԱՅԵՐԷՆ

# ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

## ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԼԵԶՈՒԻ

### ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ

1. Քերականութիւնն ուղիղ խօսելու և ուղիղ գրելու կանոններն կուսցնէ ։

2. Խօսքն, որ բան ալ կըսուի, բառերով կըլլայ. բառը վանկով, վանկը տառով՝ որ գրով կգրուի. Այս գիտունն աշխատասէր կըլլայ, չորս բառով խօսք մըն է. Այս, մէկ վանկ մ' ու բառ է. կըլլայ, երկու վանկով, գիտունն, երեք վանկով, ու աշխատասէր, չորս վանկով բառեր են ։ Երկու կամ երեքէն աւելի վանկ ունեցող բառերն բազմավանկ կկոչուին ընդհանրապէս ։

3. Հայերէն այբուբենն, որ Մեսրովպեան նշանագիր կկոչուի *, երեսուն և վեց գիր ունի. և երեք ձեւով կգրուի. Երկաթագիր կամ Գլխագիր, Բոլոր գիր և Նոտր գիր ։

Երկաթագիր ։

Ա · Բ · Գ · Դ · Ե · Զ · Է · Ը · Թ · Ժ · Ի · Լ · Խ · Ծ · Կ ·
Հ · Ձ · Ղ · Ճ · Մ · Յ · Ն · Շ · Ո · Չ · Պ · Ջ · Ռ · Ս · Վ ·
Տ · Ր · Ց · Ւ · Փ · Ք ։

* Մեսրովպ անուամբ երեւելի վարդապետն յամի Տեառն 400 հնարեց նոյն գրերն ։

## Բոլոր գիր :

ա Ա · բ Բ · գ Գ · դ Դ · ե Ե · զ Զ · է Է · ը Ը · թ Թ ·
ժ Ժ · ի Ի · լ Լ · խ Խ · ծ Ծ · կ Կ · հ Հ · ձ Ձ · ղ Ղ ·
ճ Ճ · մ Մ · յ Յ · ն Ն · շ Շ · ո Ո · չ Չ · պ Պ · ջ Ջ ·
ռ Ռ · ս Ս · վ Վ · տ Տ · ր Ր · ց Ց · ւ Ւ · փ Փ · ք Ք :

## Նօտր գիր :

ա · բ · գ · դ · ե · զ · է · ը · թ · ժ · ի · լ · խ · ծ · կ · հ ·
ձ · ղ · ճ · մ · յ · ն · շ · ո · չ · պ · ջ · ռ · ս · վ · տ · ր ·
ց · ւ · փ · ք · օ · ֆ :

4. Ուրիշ երկու գրեր ալ կան ետքէն մտած, օ ու ֆ. որ մեր նախնիք օ ին տեղը աւ կգրէին. և ֆ ին տեղը փ : Նմանապէս ուրիշ գիր մ'ալ կայ, և, որ ե ու ւ գրերէ միացած նշանագիր մըն է, ու ինքնիրեն մինակ գրուած ատենը վայելուչ է գործածել, որ բուն այն մտքով հնարուած ալ է. բայց բառերու մէջ զատ զատ իր գրերովը գրել պէտք է այսպէս, արեւ, երեւելի * :

5. Այս գրերէն ութ հատը, ա, ե, է, ը, ի, ո, ւ, օ, ձայնաւոր են. որ մինակ, առանց ուրիշ գրի օգնութեան, կրնան արտաբերուիլ : Մնացած երսունը բաղաձայն կկոչուին, քանզի առանց ձայնաւորի մ' օգնութեան չեն կրնար արտաբերուիլ :

6. Քերականութիւնս չորս մաս ունի :

7. Առաջին մասն կուսցնէ, թէ բառերն քանի

---

* Այսպէս զատ զատ գրելով համբակներն նոյն բառերուն տողադարձն առանց տարակուսելու անսխալ կրնան գրել այսպէս, երե ւելի :

տեսակ են, և ինչ փոփոխութիւններ կկրեն. որ է Բառագիտութիւն։

8. Երկրորդն՝ թէ բառերն խօսքի մէջ ինչ պաշտօններ կկատարեն, և այն պաշտօններն ցուցընելու համար իրարու հետ ինչպէս կհամաձայնին. և այս է Համաձայնութիւն։

9. Երրորդն՝ թէ բնական կարգէն զատ ինչ ձևաւոր դասաւորութիւն կրնան ունենալ բառերն խօսքի մէջ. այս է Շարադասութիւն։

10. Չորրորդ մասին մէջ կցուցուի համառօտիւ թէ Քերականութեան ուսմունքն ուրիշ ինչ հմտութիւններ ալ կպարունակէ. այսինքն, Ուղղագրութիւն, Ստուգաբանութիւն և Տաղաչափութիւն։

# ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

## ԲԱՌԱԳԻՏՈՒԹԻՒՆ

11. Բառերն ութ տեսակ են. Անուն, Դերանուն, Բայ, Դերբայ, Մակբայ, Նախադրութիւն, Շաղկապ, Ձայնարկութիւն. Ասոնք Մասունք բանի կկոչուին, քանզի խօսքն ասոնցմէ կշինուի։

### ԳԼՈՒԽ Ա

### ԱՆՈՒՆ

12. Անունն, որ գոյական ալ կըսուի, անձ մը կամ

իր մը կցուցնէ. հաց, քաղաք, գետ, հոգի, իմաստութիւն, գոյական անուններ են ։

13. Անունն երկու տեսակ է. Հասարակ և Յատուկ ։

14. Քաղաք, գետ, լեռ, հասարակ անուն են. ամէն քաղքի՝ քաղաք, ամէն գետոյ՝ գետ, ամէն լերան՝ լեռ կրնանք ըսել. ասոր համար հասարակ կըսուին ։

15. Փարիզ, Եփրատ, Արարատ, յատուկ անուն են. ամէն քաղքի՝ Փարիզ, ամէն գետոյ՝ Եփրատ, ամէն լերան՝ Արարատ չենք կրնար ըսել. մինակ Փարիզ քաղքին Փարիզ, մինակ Եփրատ գետին Եփրատ, մինակ Արարատ լերան Արարատ կրնանք ըսել. ասոր համար յատուկ կըսուին ։

16. Անունն երկու փոփոխութիւն կունենայ. Թիւ և Հոլով ։

17. Թիւն երկու է. Եզակի ու Յոգնակի ։

18. Եզակին՝ անուան նշանակած բանին մէկ հատ ըլլալն կցուցնէ. ինչպէս, քաղաք, գետ. մէկ քաղաք, մէկ գետ կնշանակեն ։

19. Յոգնակին՝ անուան նշանակած բանին մէկէ աւելի ըլլալն կցուցնէ. ինչպէս, քաղաքներ, գետեր. այսինքն՝ մէկէ աւելի քաղաք, մէկէ աւելի գետ ։

20. Երբոր բառը միավանկ է, եր դնելով ծայրը յոգնակի կըլլայ. և երբոր երկավանկ կամ բազմավանկ է, ներ դնելով. ինչպէս, այծեր, ոչխարներ, մեծատուններ, եպիսկոպոսներ ։

21. Հոլովն՝ անուան մը վերջաւորութեանը կամ ծայրին փոխուիլն է ։

22. Հոլովն Հայերէնի մէջ վեց է. Ուղղական, Հայցական, Սեռական, Տրական, Բացառական և Գործիական ։

23. Անուան վերջը փոխուելուն հոլովել կըսուի ։

24. Հայերէնի մէջ ամէն անուն մէկ կերպով չհոլովիր, այսինքն՝ անուններն իրենց վերջերն զանազան կերպով կփոխեն. և այս հոլովելու կերպերն Հոլովմունք կկոչուին։

25. Աշխարհաբար լեզուին մէջ շատը՝ միայն եզակի սեռական հոլովը կերպ կերպ կըլլայ, ուրիշ հոլովներն ընդհանրապէս նոյն են. ու ինը կանոնաւոր, երեք ալ անկանոն հոլովմունք կան։

26. Ամէն անուն եզակին մէջ տարբեր կերպով կհոլովի. բայց յոգնակիին հոլովումը մէկ կերպ է. ուստի միայն առաջին հոլովման յոգնակիին օրինակ մը կուտանք, որուն վրայ հոլովելու է միւս հոլովներուն յոգնակիներն։

27. Բաղաձայնով վերջացած բառերուն վերջին վանկին ձայնաւորներն ա, է, ե, ու երկբարբառներն * եա, իա, իւ, ոյ, ոա, կփոխուի վերջահոլովներուն ** մէջ այսպէս։

Ի, ՈՒ, և երբեմն ալ Ա, կփոխուի բնական Ը ի ***. գէր, գրի. ջուր, ջրի. բերան բերնի։

Է, կփոխուի Ե, Ի. եղէգ, եղեգի. Երուսաղէմ, Երուսաղեմայ. Սէր, սիրոյ։

ԻԱ, մինակ՝ կփոխուի ԻՈ, յատուկ անուններուն վերջը. Անգղիա, անգղիոյ. Ռուսիա, ռուսիոյ։

ԻՒ, մինակ՝ կփոխուի ՈՒ, հովիւ, հովուի. Թիւ, Թուոյ. բայց տողադարձ ըլլայ նէ կգրուի, Թըւոյ.

---

* Երկբարբառ կըսուի երկու ձայնաւոր մէկ ձայն՝ մէկ վանկով որ ըլլայ. ինչպէս, ոա, եա, եւ, իւ.

** Վերջահոլով կըսուին այն հոլովներն որոց ծայրն փոխուած է.

*** Բնական ը կըսուի ը՛ հնչումն որ չգրուիր, ու երկու բաղաձայնի մէջ հարկաւ զգալի է. ինչպէս վերի օրինակներուն մէջ կտեսնուի։

ԵԱ՝, կփոխուի Ե, Է. կեանք, կենաց. քրիստոնեայ, քրիստոնէի. հրեայ, հրէի։

ՈՅ, կփոխուի ՈՒ. լոյս, լուսոյ. կոյր, կուրի։

28. Այս փոփոխութիւններն բառագրքի օգնութիւնով կամ ուրիշ միջոցով ուսնիլ ջանք ընելու են աշակերտներն, որով մեր լեզուին գեղեցկութիւնն և անուշութիւնը կպահուի։

29. Կանոնաւոր հոլովմանց պատկերն հետեւեալն է. այս պատկերին մէջ մինչեւ հիմա թուոյ և հոլովման վրայ ինչ որ ըսինք՝ յայտնի կտեսնուին։

## 30. Ա ՀՈԼՈՎՈՒՄ

| | Եզակի. | Յոգնակի. |
|---|---|---|
| Ուղղական. | Հաց | Հաց—եր |
| Հայցական. | Հաց, զհաց * | Հաց—եր |
| Սեռական. | Հաց—ի | Հաց—երու |
| Տրական. | Հաց—ի | Հաց—երու |
| Բացառական. | Հաց—է | Հաց—երէ |
| Գործիական. | Հաց—ով | Հաց—երով |

Թագաւոր, րի, րով. Լէճ, լճի, լճով.
Փաղաք, ղքի, ղքով. Իսրայէլ, Իսրայէլի.
Հունտ, հնտի, հնտով. Վէմ, վեմի, վեմով ** ։

* Զ նախդիրը կըսուի, որ աշխարհաբար լեզուին մէջ միայն հայցականը կառնու հարկին ու վայելչութեանը նայելով. որուն վրայ իր տեղը պիտի խօսինք համաձայնութեան մէջ,

** Բոլոր այն բառերն որոց վերջին վանկի ձայնաւորն է ե, հոլովելու ատեն, ե ի կփոխուի, թէ որ գրաբարին մէջ է ի փոխուածներն չգործածուին աշխարհաբարին մէջ ալ. զորօրինակ, Արտաշէս, Արտաշէսի. Մովսէս, Մովսէսի.

## 31. Բ. ՀՈԼՈՎՈՒՄ

Եզակ.

Ո. Սէր
Հ. Սէր, զՍէր
Ս. Սիր—ոյ
Տ. Սիր—ոյ
Բ. Սէր—է, Սիրոյ *
Գ. Սիր—ով

Յոգնակի. Սէր—եր, եւն, որ շատ չգործածուիր.
Լոյս, լուսոյ, լուսով.
Յոյս, յուսոյ, յուսով.
Կարին, Կարնոյ Կարնով.
Անգղիա, ղիոյ, ղիով.

## 32. Գ. ՀՈԼՈՎՈՒՄ

Եզակ.

Եկեղեցի
Եկեղեցի, զԵկեղեցի
Եկեղեց—ւոյ
Եկեղեց—ւոյ
Եկեղեցի—է
Եկեղեց—ւով

Յոգնակի. Եկեղեցի—ներ. եւն.

Որդի, դւոյ, դւով.
Հոգի գւոյ, գւով.
Բագրատունի, նւոյ, նւով.
Օսմանցի, ցւոյ, ցւով **.

Մարդ եւ Աստուած բառերն քիչ մը տարբեր կհոլովին Բ. հոլովման տակ.
Եզ. Մարդ, մարդոյ (կամ մարդու), մարդով, մարդէ.
Յոգ. Մարդիկ, մարդոց, մարդոցմով, մարդոցմէ.
Եզ. Աստուած, Աստուծոյ, Աստուծով, Աստուծմէ.

33. Իով վերջացած բառերն Գ. հոլովման տակ կեր-

---

Յովսէփ, Յովսէփի. Երուսաղէմ, Երուսաղեմայ, Գուրգէն, Գուրգենի. Հանգէս, հանգիսի.

* Ի եւս նախդիր է, որ աշխարհաբար լեզուի մէջ բացառական ու տրական հոլովներն կառնուն երբեմն, զոր օրինակ ի պատիւ, ի պաշտօնէ. այս նախդիրն բառէն զատ ետին մակակետով կգրեն շատերն. բայց որովհետեւ ուրիշ նախդիր գրերն բառին կից կգրուին առանց մակակետի, հարկ չկայ միայն Ի նախդրին համար յատուկ օրէնք մ'ունենալու.

** Այս հոլովման յոգնակի սեռականը կըլլայ նաեւ Եկեղեցեաց. եւ անոր վրայ հոլովուած բառերուն ոմանց յոգնակի սեռականը կըլլայ նաեւ որդւոց, հոգւոց, օսմանցւոց.

թան, բայց չէ թէ միավանկերն. քանզի անոնք ինչպէս Տէր, Ձէր, շիտակը Բ հոլովման տակ հոլովելու են Տէրոյ, Ձէրոյ. բայց հիմակուան գործածութիւնն եօթներորդ հոլովման տակ կհոլովին. Ձէրոջ, Տէրոջ.

| 34. Դ ՀՈԼՈՎՈՒՄ | 35. Ե ՀՈԼՈՎՈՒՄ |
|---|---|
| Եզակի. | Եզակի. |
| Ո. Տուն | Գիշեր |
| Հ. Տուն, զտուն | Գիշեր, զգիշեր |
| Ս. Տ—ան | Գիշեր—ուան |
| Տ. Տ—ան, տուն * | Գիշեր—ուան |
| Բ. Տն—է | Գիշեր—ուընէ, —է |
| Գ. Տն—ով | Գիշեր—ով |
| Յոգնակի. Տն—եր, եւ։ | Յոգնակի. Գիշեր—ներ, եւ։ |

| | |
|---|---|
| Գարուն, րնան, րնով. | Մահ, հուան, հով. |
| Կնիկ, կնկան, կնկով. | Ամառ, մառուան կամ մրան, մրուընէ. |
| Դուռ, դրան, դռնով. | Առտու, տուան, տուընէ. |
| Կործանում, նման, նումով։ | Ցերեկ, կուան, կուընէ։ |

* Տեղ և ժամանակ նշանակող անուններուն տրական հոլովներն կրնայ նաեւ շատ անգամ ուղղականի պէս. զորօրինակ. [illegible]. [illegible]. Եօթներորդ օրն հանգստացաւ։

Ասոնք թէեւ զօրութեամբ Տէրդ է նախադրութեան հայցական խնդիր են ըսենք, աւելի շիտակ է, ինչպէս Եւրոպական լեզուներուն մէջ. բայց վերջին օրինակին չյարմարիր, և անոր ալ ուրիշ բան մ'ըսելու էինք, որ տղոց շփոթութիւն պիտի պատճառէր։

## 36. Զ ՀՈԼՈՎՈՒՄ

Եզակի.

Ո. Փրկութիւն
Հ. փրկութիւն, զփրկութիւն
Ս. փրկութ—եան
Տ. փրկութ—եան
Բ. փրկութ—ենէ
Գ. փրկութ—եամբ, փրկութիւն—ով

Յոգնակի. փրկութիւն—ներ, եւն.

Այսպէս կհոլովին ամէն —ութիւն վերջացած բառեր, եւ իւն վերջացածներէն ոմանք. ինչպէս,
Արիւն, րեան, րիւնով.
Անկիւն, կեան, կիւնով.

## 37. Է ՀՈԼՈՎՈՒՄ

Եզակի.

Ծով
Ծով, զծով
Ծով—ու
Ծով—ու, ծով
Ծով—է
Ծով—ով

Յոգնակի. Ծով—եր, եւն.

Հայ, յու, յով. Յոգն. Հայոց.
Մանչ, չու, չով. — մանչոց.
Տղայ, ղու, ղով. — տղոց.
Էշ. էշու, էշով.
Շաբաթ շաբթու կամ շաբթուան, շաբթով.

## 38. Ը ՀՈԼՈՎՈՒՄ

Եզակի.

Ո. Հայկ
Հ. Հայկ, զՀայկ
Ս. Հայկ—այ
Տ. Հայկ—այ
Բ. Հայկ—է
Գ. Հայկ—ով

Անունք յատուկ ըլլալնուն համար յոգնակի չունին.

Տրդատ, տայ, տով.
Ակն, նայ, նով.

## 39. Թ ՀՈԼՈՎՈՒՄ

Եզակի.

Կարգ
Կարգ, զկարգ
Կարգ—ի
Կարգ—ի
Կարգ—է
Կարգ—աւ, Կարգ—ով

Յոգնակի. կարգեր, եւն.

Ազգ, գի, գաւ.
Հրաման, նի, նաւ.

Յեսու , ուայ , ուով . Ժամանակ , կի , կաւ .
Եսայի , յեայ , յիով ։ Աստիճան , նի , նաւ ։

40 . Երեք անկանոն հոլովումներ կան որ ըսինք , ա-
նոնց ալ պատկերն հետեւեալն է ։

## ԱՆԿԱՆՈՆ ՀՈԼՈՎՄՈՒՆՔ

### 41 . Ա ՀՈԼՈՎՈՒՄ

Եզակի .

Ո . Հայր
Հ . Հայր , զհայր
Ս . Հօր
Տ . Հօր
Բ . Հօրմէ
Գ . Հայրով

Յոգնակի . Հայրեր , եւն ։

### 42 . Բ ՀՈԼՈՎՈՒՄ

Եզակի .

Քոյր
Քոյր , զքոյր
Քրոջ
Քրոջ
Քուրէ , քրոջմէ
Քուրով , քրոջմով

Յոգնակի . Քուրեր , եւն ։

Մայր , մօր , մայրով .
Եղբայր , եղբօր , եղբայրով .
Կին , կնոջ . Տալ , տալոջ .
Ներ , ներոջ . Տէր , տիրոջ ,
կամ տէրոջ , տէրով* ։

### 43 . Գ ՀՈԼՈՎՈՒՄ

Եզակի .

Ո . Օր
Հ . Օր , զօր
Ս . Աւուր , օրուան .
Տ . Աւուր , օրուան
Բ . Օրէ
Գ . Օրով

Յոգն . Օրեր , եւն ։

* Գրաբար գործիականն , որ է տերամբ , եչով որ կըլլայ , անշուշտ աշխարհաբարն ալ , տերոջ , տերոջմէ , տերով , տերոջմով , պէտք է եչով ըլլալ ։

## ԱՆՈՒՆՆԵՐՈՒՆ ԹՈՒՈՅՆ ՎՐԱՅ ԳԻՏԵԼԻՔ

44. Աշխարհաբար լեզուին յոգնակի շինողը Ներ կամ եր մասնիկներն են ըսինք, բայց երբեմն գրաբարի ք յոգնականացուցիչը կգործածուի. ինչպէս, Հայք, տղաք, որդիք, Օսմանցիք։

45. Մէկ քանի բառերու յոգնակիին մէջ -- մասնիկ կմըտնէ ըթով. աչք, աչքեր և աչ--ըներ. մատ, մատեր և մատ--ըներ. ձեռք, ձեռքեր և ձեռ--ըներ. ոտք, ոտքեր և ոտ--ըներ։

46. Անձայն յ վերջացած բառերն բաց իմիավանկերէն, որ Ներ մասնիկ կառնուն, յոգնակի կըլլան վերջի յն ձգուելով. ծառայ, ծառաներ. զըոյ, զըոներ։

## ԳԼՈՒԽ Բ

### ԴԵՐԱՆՈՒՆ

47. Դերանուն կըսուի այն բառն, որ անուան տեղ կդրուի նոյնը շատ անգամ չկրկնելու համար. զոր օրինակ.

Աստուած արդար է, -Նէէ- յանցաւորները կըպատժէ.

Ու Յիսուս ալ՝ որ Աստուծոյ աջ կողմը կայներ էր.

Այս խօսքերուն մէջ -Նէէ-, որ, դերանուն են. քանզի առջինը՝ Ա------ը կցուցնէ, երկրորդը՝ Յ-----ը։

48. Դերանունն ալ անուան պէս Հոլով և Թիւ ունի. Հոլովն ու Թիւն ինչ ըլլալը տես Թիւ 16—19։

49. Դերանունը վեց տեսակ է. Անձնական,

Ցուցական , Ստացական , փոխադարձ , Յարաբերական և Անորոշ :

## Ա. ԱՆՁՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ :

49. Անձնական կըսուին այն դերանուններն որոնք ԴԷՄՔ կցուցնեն :

50. ԴԷՄՔՆ երեք է. ԱՌԱՋԻՆ , ԵՐԿՐՈՐԴ , ԵՐՐՈՐԴ : Առաջին դէմքը խօսողն է. ինչպէս՝ ԵՍ կըսեմ: Երկրորդ դէմքն անիկա է , որուն խօսքը կուղղուի. ինչպէս՝ ԴՈՒՆ ես: Երրորդ դէմքն նա է , որուն վրայով կխօսուի. ինչպէս ԻՆՔՆ է :

51. Անձնական դերանուններն ասոնք են. ԵՍ , ԴՈՒՆ , ԻՆՔՆ և ԻՒՐ կամ ԻՐ. որ կհոլովին հետեւեալ կերպով.

| | Ա ԴԷՄՔ | Բ ԴԷՄՔ | Գ ԴԷՄՔ |
|---|---|---|---|
| | ԵԶԱԿԻ. | ԵԶԱԿԻ. | ԵԶԱԿԻ. |
| Ո. | Ես | Դու , դուն | Ինքն , ինք |
| Հ. | Իս , զիս | Քեզ , զքեզ | զԻնքն , զինք |
| Ս. | Իմ | Քու | Իւր , իր , իրեն |
| Տ. | Ինձ , ինձի | Քեզ , քեզի | Իրեն |
| Բ. | Ինէ , ինձմէ | Քենէ , քեզմէ | Իրմէ |
| Գ. | Ինձմով | Քեզմով | Իրմով |
| | ՅՈԳՆԱԿԻ. | ՅՈԳՆԱԿԻ. | ՅՈԳՆԱԿԻ. |
| Ո. | Մեք , մենք | Դուք | Իրենք |
| Հ. | Մեզ , զմեզ | Ձեզ , զձեզ | զԻրենք |
| Ս. | Մեր | Ձեր | Իրենց |
| Տ. | Մեզ , մեզի | Ձեզ , ձեզի * | Իրենց |
| Բ. | Մենէ , մեզմէ | Ձենէ ձեզմէ | Իրենցմէ |
| Գ. | Մեզմով | Ձեզմով | Իրենցմով |

* ԻՆԾԻ , ՔԵԶԻ , ԴՈՒՆ , ՁԵԶԻ , ՄԵԶԻ , [illegible] , ասոնք թէեւ սխալ

50. Ինք և էր մէկտեղ իբրև մէկ բառ կհոլովին ու հայցականն ինքը կկրկնուի, ուղղական չունի. Ինքզինք, ինքիր կամ ինքիրեն, ինքիրեն, ինքիրմէ, ինքիրմով. Իրենքզիրենք, իրենքիրենց, իրենքիրենց, իրենքիրենցմէ, իրենքիրենցմով։

## Բ. Ցուցական Դերանուն։

51. Ցուցական դերանուն կկոչուին սա, դա, նա, այս, այդ, այն, կամ ասի, ատի, անի, կամ ասիկա, ատիկա, անիկա, բառերն, որ ամէնն ալ երրորդ դէմք կցուցնեն. սակայն կարգ մը կորոշեն. ինչպէս, սա, այս կամ ասի, խօսողին մօտ եղածը կցուցնէ. դա, այդ կամ ատի, խօսողին դիմացինին մօտ եղածը. իսկ նա, այն կամ անի, հեռուն կամ ներկայ չեղող բան մը կցուցնէ։

52. Ասոնք ալ հետեւեալ կերպով կհոլովին.

ՍԱ, ԴԱ, ՆԱ

| | Եզակի. | Յոգնակի. |
|---|---|---|
| Ո. | ՝Սա | ՝Սաոնք |
| Հ. | ՝Սա | ՝Սաոնք |
| Ս. | ՝Սաոր, Նորա | ՝Սաոնց |
| Տ. | ՝Սաոր | ՝Սաոնց |
| Բ. | ՝Սակէ, Նակից | ՝Սաոնցմէ |
| Գ. | ՝Սաով | ՝Սաոնցմով * |

է, բայց տակաւին գործածական ըլլալուն համար դրինք. կյուսանք թէ քիչ ժամանակէն պիտի ա՛լ չգործածուի. նմանապէս սա, դա, նա, ցուցականներն, և այլն ։

* Հասարակաց գործածութիւնն է տեղտեղ, Նըսր, Նըսմ, Նըմէ, Նըմէց, Նըսնք, Նըսնց, Նըսնցմէ, Նըսնցմով։

## ԱՅՍ, ԱՅԴ, ԱՅՆ

| | Եզակի. | Յոգնակի. |
|---|---|---|
| Ո. | Այն, ան | Անոնք |
| Հ. | Այն, զայն | Անոնք, զանոնք |
| Ս. | Անոր | Անոնց |
| Տ. | Անոր | Անոնց |
| Բ. | Անկէ, անկից | Անոնցմէ |
| Գ. | Անով | Անոնցմով |

Ս–, դ–, կհոլովին Ն–ին պէս. զոր օրինակ. Սա, սաոր, սակէ, սակից, սաով. Սաոնք, սաոնց, սաոնցմէ, սաոնցմով:

Դա, դաոր, դակէ, դակից, դաով. Դաոնք, դաոնց, դաոնցմէ, դաոնցմով *:

Այ– կամ ––, –յդ կամ –դ, կհոլովին –յնին պէս. զոր օրինակ. Այս, ասոր, ասկէ, ասկից, ասով. Ասոնք, ասոնց, ասոնցմէ, ասոնցմով:

Այդ, ադոր, ադկէ, ադկից, ադով. Ադոնք, ադոնց, ադոնցմէ, ադոնցմով:

Ա–է, –դէ, –նէ. ––էն–, –դէն–, –նէն–, ասոնք ալ կհոլովին –յնին պէս:

53. Ս, դ, ն, այս երեք գրերն, որ էական և ցուցական դերանուններուն արմատն են, յօդ կկոչուին, ու ընդհանրապէս հոլովական բառերուն վերջը կկըպչին այսպէս, սիրելիս, սիրելիդ, սիրելին:

54. Աշխարհաբար լեզուին մէջ ն յօդին տեղը ը կգործածուի երբոր յօդ առած բառին վերջին գի–

* Դ թէոր Բ ի պէս չհնչուի, դի մօտ հնչում կունենայ, և այնատեն շիտակ գրած կըլլանք. Տես Ուղղագրութիւն Տառերու վրայ. Մասն Դ.

րը բաղաձայն է. ինչպէս, մարդը, քաղաքը, փոխանակ ըսելու, մարդն, քաղաքն։

55. Յօդ ունեցող բառի հոլովման օրինակ մը դնենք։

| | Եզակի. | Յոգնակի. |
|---|---|---|
| Ո. | Տուն | Տներ |
| Հ. | Տուն | Տներ |
| Ս. | Տան | Տներու |
| Տ. | Տան | Տներու |
| Բ. | Տնէ | Տներէ |
| Գ. | Տնով | Տներով |

## Գ. Ստացական Դերանուն։

56. Ստացական դերանուններն Անձնական դերանուններուն սեռականներն են, որ ուղղական ըլլալով կրկին կհոլովին անուան կանոնաւոր հոլովմանց առաջին օրինակին պէս, բայց վերջն յիշեալ յօդերէն մէկն առնելով. այսինքն՝ առաջին դէմքի դերանուան եզակին ս յօդ, երկրորդ դէմքի դերանուան եզակին դ, և երրորդ դէմքի դերանուան թէ՛ եզակին և թէ յոգնակին, ու առաջին և երկրորդ դէմքի դերանուանց յոգնակիններն ն կամ ն ին տեղը ը յօդ առնելով։

Ու կհոլովին հետեւեալ կերպով։

ԻՄՍ կամ ԻՄԻՆՍ. ՔՈՒԿԴ կամ ՔՈՒԿԻՆԴ. ՄԵՐՆ կամ ՄԵՐԻՆԸ.

| | Եզակի. | Եզակի. | Եզակի. |
|---|---|---|---|
| Ո. | Իմս, իմինս | Քուկդ, քուկինդ | Մերն, մերինը |

| | | | |
|---|---|---|---|
| Հ. | Իմս, իմինս | Քուկդ, քուկինդ | Մերն, մերինը |
| Ս. | Իմինիս | Քուկինիդ | Մերինին |
| Տ. | Իմինիս | Քուկինիդ | Մերինին |
| Բ. | Իմինէս | Քուկինէդ | Մերինէն |
| Գ. | Իմինովս | Քուկինովդ | Մերինովը. |

| | Յոգնակի. | Յոգնակի. | Յոգնակի. |
|---|---|---|---|
| Ո. | Իմիններս | Քուկիններդ | Մերիններն |
| Հ. | Իմիններս | Քուկիններդ | Մերիններն |
| Ս. | Իմիններուս | Քուկիններուդ | Մերիններուն |
| Տ. | Իմիններուս | Քուկիններուդ | Մերիններուն |
| Բ. | Իմիններէս | Քուկիններէդ | Մերիններէն |
| Գ. | Իմիններովս | Քուկիններովդ | Մերիններովը |

### ՁԵՐՆ կամ ՁԵՐԻՆԸ. ԻՐՆ կամ ԻՐԵՆԸ:

| | Եզակի. | Յոգնակի. |
|---|---|---|
| Ո. | Ձերն, ձերինը | Ձերիններն |
| Հ. | Ձերն, ձերինը | Ձերիններն |
| Ս. | Ձերինին | Ձերիններուն |
| Տ. | Ձերինին | Ձերիններուն |
| Բ. | Ձերինէն | Ձերիններէն |
| Գ. | Ձերինովը | Ձերիններովը |

| | Եզակի. | Յոգնակի. |
|---|---|---|
| Ո. | Իրն, իրենը | Իրեններն |
| Հ. | Իրն, իրենը | Իրեններն |
| Ս. | Իրենին | Իրեններուն |
| Տ. | Իրենին | Իրեններուն |
| Բ. | Իրենէն | Իրեններէն |
| Գ. | Իրենովը | Իրեններովը |

### Դ. Փոխադարձ Դերանուն.

57. Փոխադարձ դերանուն կկոչուին մէկմէկու և

իրարու բառերը։ Ասոնք դէմք չունին, բայց երբ դէմքի յոգնակի անուան կամ դերանուան վրայ ալ կրնան ըսուիլ. ինչպէս, մենք կսիրենք մէկզմէկ. իրար սիրեցէք. անոնք մէկզմէկ կսիրեն։

58. Ասոնք անուան եօթներորդ հոլովման տակ կերթան, որ հետեւեալ կերպով կհոլովին։

| | ՄԷԿՄԵԿՈՒ | ԻՐԱՐՈՒ |
|---|---|---|
| | Եզակ. | Եզակ. * |
| Ո. | Չունի | Չունի |
| Հ. | Մէկզմէկ | Իրար, զիրար |
| Ս. | Մէկմէկու | Իրարու |
| Տ. | Մէկմէկու | Իրարու |
| Բ. | Մէկմէկէ | Իրարմէ |
| Գ. | Մէկմէկով | Իրարմով |

## Ե. Յարաբերական Դերանուն.

59. Յարաբերական դերանուն կըսուի որ բառն. և ասի ալ դէմք չունի, բայց ամէն դէմքի անուն և դերանուն կրնայ յարաբերել կամ ցուցնել։ Օրինակի համար կրնանք ըսել, ես որ կկարդամ. դուն որ կկարդաս. նա կամ Պետրոս որ կկարդայ։

60. Յարաբերականին հոլովման ձեւն այս է։

ՈՐ

| | Եզակ. | Յոգն. |
|---|---|---|
| Ո. | Որ | Որոնք |

* Այս դերանունները ձեւով եզակի են, բայց նշանակութիւնով յոգնակի։

| | | |
|---|---|---|
| Ու. | Որ, զոր | Որոնք, զորոնք |
| Ս. | Որուն | Որոց, որոնց |
| Տ. | Որուն, որում | Որոց, որոնց |
| Բ. | Որմէ | Որոցմէ, որոնցմէ |
| Գ. | Որով | Որոցմով, որոնցմով |

61. Որ յարաբերականը կրկնուելով կգործածուի շատ անգամ, և այն ատեն միայն առաջինը կհոլովի՝ ն յօդ առնելով, այսպէս. Որն որ, զորն որ, որուն որ, որուն որ կամ որու որ, որմէ որ, որով որ. Որոնք որ, զորոնք որ, որոց որ, որոց որ, որոցմէ որ, որոցմով որ:

## Զ. Անորոշ Դերանուն:

62. Անորոշ դերանուններն անձի մը կամ իրի մը վրայ, ինչ կամ քանի հատ ըլլալն անորոշ կերպով կիմացընեն. զոր օրինակ. ամէն մարդ, ուրիշ մարդ, մարդ մը:

Անորոշ դերանուններն են

| | | |
|---|---|---|
| Ամէն, ամէնք | Ոք * | Իւրաքանչիւր |
| Ուրիշ | Մը, մըն | Որ, և [illegible], որն որ |
| Միւս | Մէկ մը | Ով, ով որ |
| Մէկալ | Ինչ | Նոյն |

63. Ասոնք հետեւեալ կերպով կհոլովին:

Ամէն, ամէնք, ամենը, ամենուն, ամենէն.
Ուրիշ, ուրիշի, ուրիշէ, ուրիշով. Ուրիշներ, ուրիշներու, ևն:

* Ոք աշխարհաբարի մէջ մինակ չգործածուիր, բայց ուրիշ դերանուան հետ կըլլայ, ամէն ոք, իւրաքանչիւր ոք, և ոչ ին հետ, ոչ ոք:

Միւս, միւսը, միւսին, միւսէն, միւսով. Միւսներ, միւսներուն, ևն։

Մէկալ, մէկալը, մէկալին, մէկալէն, մէկալով. Մէկալոնք, մէկալոնց, մէկալոնցմէ, մէկալոնցմով։ Կըլլայ նաեւ. Մէկալներ, մէկալները, մէկալներուն *, ևն։

Մը, մըն, չեն հոլովիր։

Ինչ. Հայց. ինչ. ուրիշ հոլով չունի։

Մէկ մը, մէկու մը, մէկէ մը, մէկով մը. Յոգնակի չունի։

Ոք, չհոլովիր աշխարհաբարին մէջ, միայն յոգնակի ուղղ. և սեռ. կըգործածուի, Ոմանք, ոմանց։

Ո՞ր, ո՞րը, որո՞ւ, որմէ՞ **, որո՞վ. Որո՞նք, որո՞ց, ևն։ Յարաբերականին պէս կրկնուելով կըլլայ ո՛ր ո՛ր, և անոր պէս կհոլովի։

Ո՞վ, մասնաւոր հոլովում չունի, և ո՞ր հարցականին հոլովներն կառնու, միայն հայցական կըլլայ, ո՞վ, զո՞վ։

Նոյն, զնոյն, նոյնը, նոյնին, նոյնէն, նոյնով. Նոյներ, նոյներու, ևն։ Եզակի սեռականը կըլլայ նաեւ նորին, երբոր իշխանութեան տէր եղողի մը պատուանունին հետ կըսուի. ինչպէս, Նորին Վսեմութիւնը։

## ԳԼՈՒԽ Գ

### ԲԱՅ

64. Բայ կըսուին այն տեսակ բառեր, որոնք ընել

* Այս հոլովմանց մէջ որուն վերջին որ յօդ դրուած է, առանց յօդի չըլլար, քանզի չըսուիր [illegible], [illegible], ևն։

** Որէ՞ն, որմէ՞ն, կըգործածուին որմէ՞ ըսելու տեղ։

կամ ըլլալ կցուցնեն. ինչպէս, կսիրեմ, կերթամ, եմ, կհանգստանամ, կմեռնիմ:

65. Բայերն նշանակութեան նայելով երեք տեսակ են. Էական բայ, Ներգործական բայ, Չէզոք բայ:

66. Էական բայն է, եմ, ես, է, են:

67. Ներգործական կըսուին ընել ցուցնող այն բայերն որոնք հայցական հոլով մը կունենան. ինչպէս, կսիրեմ, կխօսիմ, կբանամ, կթողում. Հայրս կսիրեմ. դուռը կբանամ:

68. Ամէն ներգործական բայ կրաւորական ունի, ու վերջաւորութիւնն ինչ որ է, կփոխուի ուիմ կըլլայ. ինչպէս վերի ներգործական բայերուն կրաւորականներն են, կսիրուիմ, կխօսուիմ, կբացուիմ, կթողուիմ:

69. Ներգործական ձեւն գործողութիւն մ'ընել կնշանակէ, կրաւորական ձեւն գործողութիւն մը կրել կնշանակէ, ուստի ինչպէս որ ներգործական բայն հայցական հոլով մը կունենայ, նոյնպէս կրաւորականն ալ բացառական հոլով մը կունենայ:

70. Չեզոք բայերէն ոմանք ընել կնշանակեն. ինչպէս. կերթամ, կմտնեմ. ոմանք ալ ըլլալ կնշանակեն. ինչպէս. կհանգստանամ, կմեռնիմ:

71. Չեզոք բայերն թէեւ ընել ցուցնեն ալ, հայցական հոլով չեն կրնար ունենալ: Ուրեմն չեզոք բային նշանը հայցական չունենալն է. ինչպէս որ ներգործական բային նշանն ալ հայցական ունենալն է:

72. Բայերն ունին Թիւ, Դէմք, Ժամանակ և Եղանակ:

73. Թիւն եզակին և յոգնակին է. զորօրինակ. կսիրեմ եզակի է, կսիրենք յոգնակի է:

74. Դէմքն երեք է, ու՝ ես, դու, ինք կամ նա դերանուններով կըլլայ. ինչպէս. ես եմ, դուն ես, նա կամ ինքն է. մենք ենք, դուք էք, անոնք են:

75. Ժամանակն ալ երեք է. Ներկայ, անցեալ, ա-

դառնէ: Ներկայ, կսիրեմ, որ հիմա կսիրեմ ըսել է: Անցեալ, որ անցած բանի մը վրայ կխօսի. որ եթէ չլմնցած է՝ Անկատար կըսուի, ինչպէս. կսիրէի. թէ որ լմնցած է՝ Կատարեալ կըսուի. ինչպէս. սիրեցի: Ապառնի, սիրեմ կամ պիտի սիրեմ. որ գալու ժամանակի մէջ սիրել կնշանակէ:

76. Եղանակն հայերենի մէջ երեք կերպ է. Սահմանական եղանակ, Հրամայական եղանակ, Ստորադասական եղանակ:

77. Սահմանական եղանակը գործողութիւնն իբր ըստոյգ և հաստատուն կպատմէ, զորօրինակ. կսիրեմ, սիրեցի, պիտի սիրեմ:

78. Հրամայականն հրաման և կամք կցուցնէ. զորօրինակ. սիրէ, գնա:

Հրամայականը մինակ երկրորդ դէմք ունի. քանզի հրամայել միայն դիմացինին կըլլայ, որ երկրորդ դէմք է:

79. Ստորադասականն ուրիշ գործողութենէ մը կախում կցուցնէ, և սովորաբար որ, թէ որ, նէ, շաղկապներով ուրիշ բայի մը հետ կկապուի. զորօրինակ. կհրամայէ որ երթայ. կարդամ նէ, կամ թէ որ կարդամ կիմանամ *:

80. Բայերն աս ամէն բանը կցուցնեն իրենց վերջաւորութեան կերպ կերպ փոխուելովը, որ Խոնարհում կըսուին:

81. Կան երեք դերբայ ալ, այսինքն բայի տեղ դրուողներ, որք են Անորոշ դերբայ, Անցեալ դերբայ, Ապառնի դերբայ:

82. Անորոշ դերբայ, որ ինքնիրեն դէմք, ժամանակ

* Մեր Ստորադասականն յատուկ կազմութեան ձեւ մը չունի իրեն, բայց Մակդիր բայիւ կամ Շաղկապով մը կըլլայ:

կամ եղանակ չյայտներ, հապա պարզապէս ըլլալ կամ ընել մը կցուցնէ. զորօրինակ. ըլլալ, ընել, երթալ:

83. Անցեալ դերբայ, որ եղած կամ ըրած անցածը կցուցնէ. ինչպէս. եղած, եղեր. գնացած, գնացեր. ըրած, ըրեր:

84. Ապառնի դերբայ, որ ըլլալիքը կամ ընելիքը կցուցնէ. զորօրինակ. ըլլալու, երթալու, ընելու:

85. Ամէն բայ միեւնոյն կերպով չխոնարհիր. բայց չորս տեսակ կանոնաւոր խոնարհման ձեւ կայ, որոնք լծորդութիւն կկոչուին:

Առաջին լծորդութեան բայերուն սահմանական ներկայ եղակի առաջին դէմքը ամ կվերջանայ. զոր օրինակ կորսամ:

Երկրորդինը եմ. զորօրինակ. կգործեմ:

Երրորդինը իմ. զորօրինակ. կխօսիմ:

Չորրորդինը ում. զորօրինակ. կթողում:

86. Աս բայերուն խոնարհման օրինակներն կարգաւ դնենք. և

Նախ էական բային օրինակն, որ ուրիշ ամէն բայերուն արմատն է. և

Ապա կանոնաւոր բայերուն չորս լծորդութեանց օրինակներն. և վերջապէս

Անկանոն բայերուն խոնարհման պատկերն դնենք: Այս բայերն ինչպէս անունէն յայտնի է, անկանոն կըսուին, քանզի թէպէտ չորս լծորդութեանց մէկուն վերջաւորութիւնն ունին, բայց քանի մը ժամանակներուն, սովորաբար սահմանական ժամանակներուն մէջ անկանոն ձեւ մ'ունին:

## 87 · ԷԱԿԱՆ ԲԱՅ

ԴԷՄՔ Սահմանական Եղանակ·

| | Եզակի· | Յոգնակի· |
|---|---|---|
| Ա· | (Ես) Եմ | (Մենք) Ենք * |
| Բ· | (Դուն) Ես | (Դուք) Էք |
| Գ· | (Նա) Է | (Անոնք) Են |

Սահ· Անկատար·

| | | |
|---|---|---|
| Ա· | (Ես) Էի | (Մենք) Էինք |
| Բ· | (Դուն) Էիր | (Դուք) Էիք |
| Գ· | (Նա) Էր | (Անոնք) Էին |

Սահ· Կատարեալ·

| | | | |
|---|---|---|---|
| Ա· | Եղայ, կամ | Եղէ | Եղանք |
| Բ· | Եղար | Եղեր | Եղաք |
| Գ· | Եղաւ | Եղեւ | Եղան |

Սահ· Ապառնի·

| | | |
|---|---|---|
| Ա· | Ըլլամ | Ըլլանք |
| Բ· | Ըլլաս | Ըլլաք |
| Գ· | Ըլլայ | Ըլլան |

* Ոմանք գրաբարին պէս Եմք կգրեն, բայց որովհետեւ միւս ժամանակներուն յոգնակիներն մ ով չըսուիր Էիմք, Եղամք, ուստի ուզեցինք նոյնաձայն պահել յոգնակիներն. մանաւանդ որ մ և ն լծորդ են, և գրաբարի մէջ ալ իրարու տեղ շատ գործածուած։ Ուրիշ բան մ'ալ կայ. որ ն ին հնչումն աւելի դիւրին և քաղցր է, և այս ալ՝ ըստ մեր կարծեաց նըկատելու արժան կէտ մըն է նոր լեզուի մը հեղինակներուն համար։

Հրամայական Եղանակ.

| | | |
|---|---|---|
| Բ. | Եղիր<br>մ'ըլլար | Եղէք<br>մ'ըլլաք |

Աներեւոյթ Դերբայ. Ըլլալ
Անցեալ Դերբայ. Եղած, եղեր
Ապառնի Դերբայ. Ըլլալու

## ԿԱՆՈՆԱՒՈՐ ԲԱՅԵՐ

### Ա. Լծորդութիւն.

88. Առաջին լծորդութեան բայերն երկու ձեւ ունին ամ և անամ կամ նամ. զորօրինակ որսամ, խմանամ, կարօտնամ։

| | Ա. Ձեւ. | Բ. Ձեւ. |
|---|---|---|
| ԴԷՄՔ | Սահ. Ներկայ. | |
| Եզ. Ա. | Կորս ամ * | Կխմ անամ |
| Բ. | Կորս աս | Կխմ անաս |
| Գ. | Կորս այ | Կխմ անայ |

* Բայերուն ներկայ և անկատար ժամանակներուն կ մասնիկը սովորութիւն եղաւ վերջին տարիներն ը ով, և ձայնաւոր սկզբնատառ ունեցող բայերուն առանց ը ի ապաթարցով զատ գրել բայէն այսպէս՝ կը փորձեմ, կ'ուտամ. ասիկա ինչ զօրաւոր պատճառով ալ որ գրեթէ ընդհանուր եղաւ, մեք հայկական բառակազմութեան օրէնքին հակառակ տեսնելով, որ բնաւ մէկ ածանցեալ բառ մը չունինք մասնիկը բառէն ուրոյն գրուած, թէ բառին սկիզբն ըլլայ այն և թէ վերջն. ուստի նոյն կ մասնիկը բային կից գրինք առանց ը ի. քանզի Հայերէն լեզուին մէջ ը կհնչուի ընդհանրապէս առանց ը գրելու, նաեւ նոյն օրինակ մասնիկ ունեցող բառերուն մէջ ալ. զոր օրինակ, տղեա, ըղէտա։

ԴԻՄՔ

| | | |
|---|---|---|
| | Ա. կորս անք | կիմ անանք |
| Յգ. | Բ. կորս աք | կիմ անաք |
| | Գ. կորս ան | կիմ անան |

Սահ. Անկատար.

| | | |
|---|---|---|
| | Ա. կորս այի | կիմ անայի |
| Եզ. | Բ. կորս այիր | կիմ անայիր |
| | Գ. կորս ար | կիմ անար |
| | Ա. կորս այինք | կիմ անայինք |
| Յգ. | Բ. կորս այիք | կիմ անայիք |
| | Գ. կորսային | կիմ անային |

Սահ. Կատարեալ.

| | | |
|---|---|---|
| | Ա. Որս ացի | Իմ ացայ |
| Եզ. | Բ. Որս ացիր | Իմ ացար |
| | Գ. Որս աց | Իմ ացաւ |
| | Ա. Որս ացինք, որս ացանք. | Իմ ացանք |
| Յգ. | Բ. Որս ացիք | Իմ ացաք |
| | Գ. Որս ացին | Իմ ացան |

Սահ. Ապառնի.

Ա. Որս ամ     Իմ անամ *

* Ապառնի կըլլայ նաև պիտի որսամ, պիտի իմանամ, ինչպէս որ Գիտելիքին մէջ պիտի տեսնես, որ հոս խոնարհման կարգը չդրինք. որովհետև խոնարհումը բուն բային կազմութեանը փոփոխութիւնն է իր վրայ, և չէ թէ ուրիշ

| | | |
|---|---|---|
| Եզ. Բ. | Որս աս | Իմ անաս |
| Գ. | Որս այ | Իմ անայ |
| Ա. | Որս անք | Իմ անանք |
| Յգ. Բ. | Որս աք | Իմ անաք |
| Գ. | Որս ան | Իմ անան |

## Հրամ. Եղանակ.

| | | |
|---|---|---|
| Եզ. | Որս ա<br>մ' որս ար | Իմ ացիր<br>մ' իմ անար |
| Յգ. | Որս ացէք<br>մ' որս աք | Իմ ացէք<br>մ' իմ անաք |

| | | |
|---|---|---|
| Աներեւ Դերբայ. | Որս ալ | Իմանալ |
| Անցեալ Դերբայ. | Որս ացած, ացեր | Իմ ացած, ացեր |
| Ապառնի Դերբայ. | Որս ալու | Իմ անալու |

Ասոնց պէս կխոնարհին

### ՙՆերգործական բայեր

| | |
|---|---|
| Կաղ — ամ | Կմոռ — նամ |
| Կլու — ամ | Կստ — անամ |
| Կհաւտ — ամ | Կխոստ — անամ |

### Չեզոք բայեր

| | |
|---|---|
| Կխաղ — ամ | Կամչ — նամ |

---

բայերու հետ ընկերանալը. ինչպէս որ հոլովումն ալ անուան իր վրայ եղած փոփոխութիւնն է, որ թէ՛ դէմք, թէ՛ թուեր, թէ՛ ժամեր, ասոնց հոլով չենք ըսեր.

Եւ առանց պէտք օժանդակին ապառնի կըլլայ. զորօրինակ. Այդ նիւթին վրայ վաղը խօսինք. Նոր լրագրերն ղրկէք ինծի:

| | |
|---|---|
| Կխնդ — ամ | Կքն—անամ |
| Կարտոր — ամ | Կր—նամ * |

89 . Կխաղամ , Կարդարամ , բայերուն հրամայականն այս երկու ձևերուն պէս ալ կըլլայ · ինչպէս · խաղա և խաղացէք · արդարա և արդարացէք · Նմանապէս Ջանամ բայինը · Ջանա և Ջանացէք : Սնամ բային հրամայականը կըլլայ միայն , Ծացէք :

Կդառնամ բայն Բ ձևւին պէս կխոնարհի, միայն թէ տառի փոփոխութիւն կըլլայ · ինչպէս · Կդառնամ · դարձայ , դարձէր , դառնալ , դարձած , դարձեր , դառնալու :

## Բ Լծորդութիւն

90 . Այս լծորդութեան բայերն ալ երկու ձև ունին , եմ և ցնեմ · օրօրինակ , Կգործեմ , Կվերցնեմ :

| | Ա ՁԵՒ | Բ ՁԵՒ |
|---|---|---|
| ԴԻՄՔ | Սահ . Ներկայ . | |
| Եզ . Ա . | Կգործ եմ | Կվեր ցնեմ ** |
| Բ . | Կգործ ես | Կվեր ցնես |
| Գ . | Կգործ է | Կվեր ցնէ |

---

* Այս բային Սահմ . Ներկայ և Անկատարն կ մասնիկ չառնուր , քանզի չըլլար կ կընամ կ կընայի :

** Այս ցնեմ վերջաւորութեամբս բայ կամ դերբայ , երբոր պէտք կըլլայ ձայնաւոր գիր դնել ց ին առջևը . այնատեն ա դնելու է և ոչ ը . զօրօրինակ . Լցանեմ , Անցանելով . որովհետև գրաբարներն Լցուցանեմ , Անցուցանելովէ . որ այբ չեղչեալ կըլլայ , Լցուցնեմ , Անցուցնելով . որոց հնչումը դժուար ըլլալով ց երն ալ զեղչեալ՝ կըլլայ , Լցանեմ , Անցանելով . Վերջինը թէ որ գրուի Անցնելով , նշանակութիւնը չէզոքի կփոխուի :

| | | | |
|---|---|---|---|
| | Ա. | Կգործ ենք | Կվեր ցնենք |
| Յգ. | Բ. | Կգործ էք | Կվեր ցնէք |
| | Գ. | Կգործ են | Կվեր ցնեն |

Սահ. Անկատար.

| | | | |
|---|---|---|---|
| | Ա. | Կգործ էի | Կվեր ցնէի |
| Եզ. | Բ. | Կգործ էիր | Կվեր ցնէիր |
| | Գ. | Կգործ էր | Կվեր ցնէր |
| | Ա. | Կգործ էինք | Կվեր ցնէինք |
| Յգ. | Բ. | Կգործ էիք | Կվեր ցնէիք |
| | Գ. | Կգործ էին | Կվեր ցնէին |

Սահ. Կատարեալ.

| | | | |
|---|---|---|---|
| | Ա. | Գործ եցի | Վ̀եր ցուցի |
| Եզ. | Բ. | Գործ եցիր | Վ̀եր ցուցիր |
| | Գ. | Գործ եց | Վ̀եր ցուց կամ վեր ցոյց |
| | Ա. | Գործ եցինք կամ գործ եցանք | Վ̀եր ցուցինք կամ վեր ցուցանք |
| Յգ. | Բ. | Գործ եցիք | Վ̀եր ցուցիք |
| | Գ. | Գործ եցին | Վ̀եր ցուցին |

Սահ. Ապառնի.

| | | | |
|---|---|---|---|
| | Ա. | Գործ եմ | Վ̀եր ցնեմ |
| Եզ. | Բ. | Գործ ես | Վ̀եց ցնես |
| | Գ. | Գործ է | Վ̀եր ցնէ |

| | | |
|---|---|---|
| | Ա. Գործ ենք | Վեր ցնենք |
| Յոգ. | Բ. Գործ էք | Վեր ցնէք |
| | Գ. Գործ են | Վեր ցնեն |

## Հրամայական Եղանակ.

| | | |
|---|---|---|
| Եզ. Բ. | Գործէ | Վեր ցու* |
| | մի գործեր | մի վեր ցներ. |
| | Գործեցէք | Վեր ցուցէք |
| Յոգ. Բ. | մի գործէք | մի վեր ցնէք |

| | | |
|---|---|---|
| Աներեւ Դերբայ. | Գործել | Վեր ցնել |
| Անցեալ Դերբայ. | Գործած, եր | Վեր ցուցած, ցուցեր |
| Ապառնի Դերբայ. | Գործելու | Վեր ցնելու ** |

Նոյնպէս կը խոնարհին

## Ներգործական Բայեր

| | |
|---|---|
| Կգր—եմ | Կսեւ—ցնեմ |
| Կճանչ—եմ | Կհեծ—ցնեմ |
| Կզրկ—եմ | Կբնակե—ցնեմ |

* Շատերն Վերցուր կըսեն վերջը ր ով, բայց այս լծորդութեան Հրամայականն կատարեալին երրորդ դէմքին վերջի ց ն ձգելով կըլլայ, ինչպէս, Գործեց կըլլայ Գործէ. Նմանապէս Վերցուց կըլլայ Վերցու, եւ ոչ Վերցուր. Դարձեալ՝ գրաբարն Վերցուր է, որ աշխարհաբարի դառնալով Վերցու եղած է, ինչպէս, Գործեցայ, Մոռցայ, աշխարհաբար լեզուին մէջ՝ Գործեցի Մոռցայ, կըսուի.

** Հայերենի մէկ յատկութիւնն է որ ամէն չէզոք բայ այս ձեւով ներգործական կըլլայ, ինչպէս, Կքնանամ, Կքնացնեմ. Կերթամ, Կերթալցնեմ. Կմեռնիմ, Կմեռցնեմ. Կհասնիմ, Կհասցնեմ. բայց այս ձեւ ներգործականներուն շատերն կրաւորական չունին.

Չէզոք Բայեր — Այս ձեւով չէզոք բայ չկայ

Կվազ—եմ
Կմեղանչ—եմ
Կտիր—եմ

91. Այս լծորդութեան երկրորդ ձեւին, այսինքն ցնեմ վերջացածներուն տակ այս երկու բայերն կցուցնեմ և կհարցնեմ կխոնարհին, որոց վերջաւորութիւնը նեմ է, և ոչ թէ ցնեմ, քանզի գրաբար ցուցանեմ և հարցանեմ բայերն են, որ աշխարհաբարի սովորութեան համեմատ այբ զեղջեալ է, ուր յայտնի կերեւին թէ անոնց մէջի ց երը արմատական բառերուն է, և չէ թէ բայ շինող մասնիկներուն *։

## Գ. Լծորդութիւն

92. Այս լծորդութեան բայերն ալ երկու ձեւ ունին, առաջին ձեւն իմ վերջաւորութիւն ունի, բայց երկրորդ ձեւն ունի նիմ, անիմ, իմ և չիմ վերջաւորութիւններն, զօրօրինակ, Կխօսիմ, Կհագնիմ, Կծըծանիմ, Կսկսիմ, Կփախչիմ։

---

* Ցուցնեմ և Հարցնեմ բայերուն կատարեալներն շիտակը պիտի ըլլայ. Ցուցի, ցուցիր, ցուցուց. Ցուցինք, ցուցիք, ցուցին. Հարցի, հարցիր, հարցուց. Հարցինք, հարցիք, հարցին, և հրամայականներն. Ցոյց, ցուցէք, և Հարց, հարցէք, որ այս ուղիղ խոնարհումներն գործածական ըլլալ փափաքելի է։

| | | Ա ՁԵՒ | Բ ՁԵՒ |
|---|---|---|---|
| | ԴԷՄՔ | **Սահ. Ներկայ.** | |
| Եզ. | Ա. | Կխօս իմ | Կհագ նիմ |
| | Բ. | Կխօս իս | Կհագ նիս |
| | Գ. | Կխօս ի | Կհագ նի |
| Յոգ. | Ա. | Կխօս ինք | Կհագ նինք |
| | Բ. | Կխօս իք | Կհագ նիք |
| | Գ. | Կխօս ին | Կհագ նին |

**Սահ. Անկատար.**

| | | | |
|---|---|---|---|
| Եզ. | Ա. | Կխօս էի | Կհագ նէի |
| | Բ. | Կխօս էիր | Կհագ նէիր |
| | Գ. | Կխօս էր | Կհագ նէր |
| Յոգ. | Ա. | Կխօս էինք | Կհագ նէինք |
| | Բ. | Կխօս էիք | Կհագ նէիք |
| | Գ. | Կխօս էին | Կհագ նէին |

**Սահ. Կատարեալ.**

| | | | |
|---|---|---|---|
| Եզ. | Ա. | Խօս եցայ | Հագ այ |
| | Բ. | Խօս եցար | Հագ ար |
| | Գ. | Խօս եցաւ | Հագ աւ |
| Յոգ. | Ա. | Խօսե ցանք | Հագ անք |
| | Բ. | Խօսե ցաք | Հագ աք |
| | Գ. | Խօսե ցան | Հագ ան |

### Սահ. Ըղձակ.

| | | | |
|---|---|---|---|
| Եզ. | Ա. | խօսիմ | Հագնիմ |
| | Բ. | խօսիս | Հագնիս |
| | Գ. | խօսի | Հագնի |
| | Ա. | խօսինք | Հագնինք |
| Յոգ. | Բ. | խօսիք | Հագնիք |
| | Գ. | խօսին | Հագնին |

### Հրամայական Եղանակ.

| | | | |
|---|---|---|---|
| Եզ. | Բ. | խօսէ<br>մի՛ խօսիր | Հագիր<br>մի՛ հագնիր |
| Յոգ. | Բ. | խօսեցէք<br>մի՛ խօսիք | Հագէք<br>մի՛ հագնիք |

| | | |
|---|---|---|
| Անորոշ Դերբայ. | խօսիլ, ել | Հագնիլ, նել |
| Անցեալ Դերբայ. | խօսած, եր | Հագած, եր |
| Ապառնի Դերբայ. | խօսելու | Հագնելու |

Ասոնց պէս խոնարհող Ներգործական բայ քիչ կայ, իսկ Չէզոքը՝ շատ ։

### Ներգործական բայեր

Շահ—իմ
Խորշ—իմ
Խոստով—անիմ
Ծն—իմ, ծն—անիմ,
Սկս—իմ

### Չէզոք բայեր

Բնակ—իմ
Անց—նիմ

Կյոգն—իմ   Կփախ—չիմ, փախ այ, փախիր
Կդադր—իմ   Կդըպ—չիմ, դպ այ, դպ իր

93. Կհանգչիմ չէզոքը Ա. ձեւին պէս կխոնարհի, որ կըլլայ, հանգչեցայ, հանգչէ։

94. Քանի մը նէմ վերջաւորուած բայեր նէմ վերջաւորուածներուն պէս կխոնարհին, օրինակ Կգըտնեմ, Կիջնեմ, Կմըտնեմ, կատարեալը կըլլայ, գտայ, իջայ, մտայ. և հրամայականը, գտիր, իջիր, մտիր։

## Գ. Լծորդութիւն

ԴԷՄՔ   Սահ. Ներկայ.

| | Եզակի. | Յոգնակի. |
|---|---|---|
| Ա. | Կթող ում | Կթող ունք |
| Բ. | Կթող ուս | Կթող ուք |
| Գ. | Կթող ու | Կթող ուն |

Սահ. Անկատար.

| | | |
|---|---|---|
| Ա. | Կթող ուի | Կթող ուինք |
| Բ. | Կթող ուիր | Կթող ուիք |
| Գ. | Կթող ուր | Կթող ուին |

Սահ. Կատարեալ.

| | | |
|---|---|---|
| Ա. | Թող ի, Թող ուցի | Թող անք, Թող ուցինք |
| Բ. | Թող իր, Թող ուցիր | Թող իք, Թող ուցին |
| Գ. | Թող աւ, Թող ուց | Թող ին, Թող ուցին |

Սահ. Ապառնի

| | | |
|---|---|---|
| Ա. | Թող ում | Թող ունք |

| | | |
|---|---|---|
| Ի. | *Թող ուս* | *Թող ուք* |
| Գ. | *Թող ու* | *Թող ուն* |

Հրամայական Եղանակ

| | | |
|---|---|---|
| Ի. | *Թող* <br> *մի թող ուր* | *Թող էք* <br> *մի թող ուք* |

Անորոշ Դերբայ. *Թող ուլ*
Անցեալ Դերբայ. *Թող ած, թող եր*
Ապառնի Դերբայ. *Թող նելու* *,

95. Նոյն *պէս կխոնարհի* առանձին *ներգործական բայն, որ ն գիրը արմատական ժամանակներուն մէջ կկորսնցնէ, ինչպէս* Հ*ագնիմ բային խոնարհման ձեւին մէջ տեսար. զորօրինակ,* Ա*ռ—նում*, Կատ, *առ—ի*, Հրմ. *առ*, Անց. Դեր. Ա*ռ—ած, առ—եր*։

---

## ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԲԱՅԵՐՈՒՆ ԿՐԱՒՈՐԱԿԱՆԸ

96. Ի*նչպէս օրինակներուն մէջ կտեսնուի, ամէն լծորդութեան տակ ներգործական բայեր կգտնուին*։
97. Ա*րդ՝ ներգործական բայն կրաւորական կըլլայ* իլ *վերջաւորութիւնով, այսինքն՝ ինչ լծորդութեան բայ որ ըլլայ, անոր պարզ կամ ա-*

---

* *Ասիկա գրաբառ* Թողնել *բային ապառնի դերբայն է, քանզի Թողուլին ապառնի դերբայն որ* Թողլու *պիտի ըլլայ, ընդհանրապէս չգործածուիր*։

ծանցական արմատին ւէմ * վերջաւորութիւնը դնե-լով կըլլայ կրաւորական , զորօրինակ . Կգործէմ , կը-գործւէմ . Կվերցնէմ, կվերցւէմ . Որսացայ , կորսացւէմ . Իմացայ , կիմացւէմ . Կխօսէմ , կխօսւէմ . Կհագնէմ , կհագնւէմ . Կթողում , կթողւէմ : Նոյնք կխոնարհին ճիշդ Գ . Լծորդութեան Ն ձեւին պէս , որ է , Խօսիմ , խօսեցայ , եւ . միայն թէ բոլոր եղանակներուն մէջ ւ մասնիկ ունենալով . զորօրինակ . Կգործւէմ , կգոր-ծւէի , գործւեցայ , գործւէմ , գործւէ , գործւէր , գործւած , գործւէր , գործւելու :

---

## ԱՆԿԱՆՈՆ ԲԱՅԵՐ

98 . Վերի խոնարհմանց պատկերներն կանոնաւոր խոնարհման ձեւ են . բոլոր կանոնաւոր բայեր անոնց պէս կխոնարհին :

99 . Բայց կան բայեր որոնք գլխաւորաբար ար-մատական ժամանակներուն մէջ կանոնաւոր ձեւէն տարբեր խոնարհում ունին , ու անոր համար անկանոն կըսուին , որոց աղիւսակ մը կդնենք հոս աշակերտաց դիւրութեան համար , որուն մէջ անոնց զարտուղի ժամանակներն ամբողջ գրուած են , իսկ կանոնաւոր ժամանակներուն մինակ առաջին դէմքը նշանակուած է :

---

* Ոմանք այս վերջաւորութիւնը վէմ կգրեն վով . բայց պէտք է գիտնալ թէ Հայերէն տառից ուղղագրութեան հա-մեմատ բաղաձայն գրերէն ետեւ վ գիր չգրուիր բնաւ , այլ նոյն հնչումն ւ և ով կգրուի , ինչպէս որ Քերականու-թեանս Գ . Մասին մէջ պիտի ցուցուի . զորօրինակ . Ջու-րակ , Մատուակ , Ցրւեմ , Դրդւիմ , Դիպւած , Շատ-րւան :

Ներգործական Անկանոն բայերուն Կրաւորականը կանոնաւոր խոնարհում ունի, որ կխոնարհի Գ. Լծորդութեան Ա. ձեւին պէս։

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ներկ. | կուտամ | կուլամ | կուգամ * | կերթամ |
| Անկ. | կուտայի | կուլայի | կուգայի | կերթայի |
| Անց. Կտր. | Տուի | Լացի | Եկայ | Գնացի ** |
| | Տուիր | Լացիր | Եկար | Գնացիր |
| | Տուաւ | Լացաւ | Եկաւ | Գնաց |
| | Տուինք | Լացինք | Եկանք | Գնացինք |
| | Տուիք | Լացիք | Եկաք | Գնացիք |
| | Տուին | Լացին | Եկան | Գնացին |
| Ըղձ. | Տամ | Լամ | Գամ | Երթամ |
| Հրմ. | Տուր | Լաց | Եկու | Գնա |
| | մի տար | մի լար | մի գար | մ' երթար |
| | Տուէք | Լացէք | Եկէք | Գնացէք |
| | մի տաք | մի լաք | մի գաք | մ' երթաք |
| Անոր. Դեր. | Տալ | Լալ | Գալ | Երթալ |
| Անց. Դեր. | Տուած, տուեր | Լացած, լացեր | Եկած, եկեր | Գնացած, գնացեր |
| Ապ. Դեր. | Տալու | Լալու | Գալու | Երթալու |
| Կրաւ. | կտրուիմ | . . . | . . . | . . . |
| Ներկ. | կըլլամ *** | կընեմ | կդնեմ | կըսեմ |
| Անկ. | կըլլայի | կընէի | կդնէի | կըսէի |

* Կայ գաւառական լեզուներու մէջ կտամ, կլամ, կգամ, բայց խորթ կսեպուի։

** Սովորաբար կըսուի, Գացի, գացիր, գացինք, գացիք, գացին, բայց շիտակ չէ։

*** Կգործածուի նաեւ գրաբարին պէս, Կլինիմ. լինիս, եղայ, եղար, եղաւ. լինիմ, լինիլ, որ շիտակն այս է։

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ստր. Կտր. | Եղայ | Ըրի | Դրի | Ըսի |
| | Եղար | Ըրիր | Դրիր | Ըսիր |
| | Եղաւ | Ըրաւ | Դրաւ | Ըսաւ |
| | Եղանք | Ըրինք | Դրինք | Ըսինք |
| | Եղաք | Ըրիք | Դրիք | Ըսիք |
| | Եղան | Ըրին | Դրին | Ըսին * |
| Ապռ. | Ըլլամ | Ընեմ | Դնեմ | Ըսեմ |
| Հրմ. | Եղիր | Ըրէ | Դիր | Ըսէ |
| | մ'ըլլար | մ'ըներ | մի դներ | մ'ըսեր |
| | Եղիք | Ըրէք | Դրէք | Ըսէք |
| | մ'ըլլաք | մ'ընէք | մի դնէք | մ'ըսէք |
| Անոր. Դեր. | Ըլլալ | Ընել | Դնել | Ըսել |
| Անց. Դեր. | Եղած, եղեր | Ըրած, ըրեր | Դրած, դրեր | Ըսած, ըսեր |
| Ապռ. Դեր. | Ըլլալու | Ընելու | Դնելու | Ըսելու |
| Կր. | . . . | . . . | Կդրըուիմ | Կըսուիմ |
| Ներգ. | Կբերեմ | Կզարնեմ | Կթքնեմ | Կպագնեմ |
| Անց. | Կբերէի | Կզարնէի | Կթքնէի | Կպագնէի |
| Ստր. Կտր. | Բերի | Զարկի | Թքի | Պագի |
| | Բերիր | Զարկիր | Թքիր | Պագիր |
| | Բերաւ | Զարկաւ | Թքաւ | Պագաւ |
| | Բերինք | Զարկինք | Թքինք | Պագինք |
| | Բերիք | Զարկիք | Թքիք | Պագիք |
| | Բերին | Զարկին | Թքին | Պագին |
| Ապռ. | Բերեմ | Զարնեմ | Թքնեմ | Պագնեմ |
| Հրմ. | Բեր | Զարկ | Թուք | Պագ |
| | մի բերեր | մի զարներ | մի թքներ | մի պագներ |
| | Բերէք | Զարկէք | Թքէք | Պագէք |
| | մի բերէք | մի զարնէք | մի թքնէք | մի պագնէք |

* Կխոնարհի նաև կանոնաւոր ձևով, Ըսեցի, ըսեցիր, ըսաց. ըսեցինք, ըսեցիք, ըսեցին. որ աւելի չիտակ է։

| | | | | |
|---|---|---|---|---|
| Անոր. Դեր. | Բերել | Ջարնել | Թքնել | Պագնել |
| Անց. Դեր. | Բերած, բերեր | Ջարկած, զարկեր | Թքած, Թքեր | Պագած, պագեր |
| Ապռ. Դեր. | Բերելու | Ջարնելու | Թքնելու | Պագնելու |
| Կր. | կըբերուիմ | կզարնուիմ | . . . | կպագնուիմ |
| Ներկ. | կտեսնեմ | կելնեմ | կուտեմ | Գիտեմ * |
| Անկ. | կտեսնէի | կելնէի | կուտէի | Գիտէի |
| Սահմ. Անց. | Տեսայ | Ելայ | Կերայ | Գիտցայ |
| | Տեսար | Ելար | Կերար | Գիտցար |
| | Տեսաւ | Ելաւ | Կերաւ | Գիտցաւ |
| | Տեսանք | Ելանք | Կերանք | Գիտցանք |
| | Տեսաք | Ելաք | Կերաք | Գիտցաք |
| | Տեսան | Ելան | Կերան | Գիտցան |
| Ապռ. | Տեսնեմ | Ելնեմ | Ուտեմ | Գիտնամ |
| Հրամ. | Տես | Ել, ելիր | Կեր | Գիտցիր |
| | մի տեսներ | մ'ելներ | մ'ուտեր | մի գիտնար |
| | Տեսէք | Ելէք | Կերէք | Գիտցէք |
| | մի տեսնէք | մ'ելնէք | մ'ուտէք | մի գիտնաք |
| Անոր. Դեր. | Տեսնել | Ելնել | Ուտել | Գիտել կամ գիտնալ |
| Անց. Դեր. | Տեսած, տեսեր | Ելած, ելեր | Կերած, կերեր | Գիտցած, գիտցեր |
| Ապռ. Դեր. | Տեսնելու | Ելնելու | Ուտելու | Գիտնալու |
| Կր. | կտեսնուիմ | . . . . | կուտուիմ | կգիտցուիմ |
| Ներ. | կտանիմ | կըլնում | կզբօսնում | կերգնում ** |
| Անկ. | կտանէի | կըլնուի | կզբօսնուի | կերգնուի |

---

* Ձըլլար կգիտեմ, կգիտէի :

** Զբօսնում և Երգնում, կըլլայ նաեւ, կզբօսնում, կզբօսնուի, եւն. կերգաըննում, կերգաըննուի, եւն :

| | | | | |
|---|---|---|---|---|
| Անց. Կտր. | Տարի | Լցի | Զբօսցայ | Երդուընցայ |
| | Տարիր | Լցիր | Զբօսցար | Երդուընցար |
| | Տարաւ | Լցաւ | Զբօսցաւ | Երդուընցաւ |
| | Տարինք | Լցինք | Զբօսցանք | Երդուընցանք |
| | Տարիք | Լցիք | Զբօսցաք | Երդուընցաք |
| | Տարին | Լցին | Զբօսցան | Երդուընցան |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ապ. | Տանիմ | Լնում | Զբօսնում | Երդնում |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Հրմ. | Տար | Լից | Զբօսցիր | Երդուիր |
| | մի տանիր | մի լնուր | մի զբօսնուր | մ'երդնուր |
| | Տարէք | Լցէք | Զբօսցէք | Երդուընցէք |
| | մի տանիք | մի լնուք * | մի զբօսնուք | մ'երդնուք |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Անոր. Դեր. | Տանիլ | Լնուլ | Զբօսնուլ | Երդնուլ |
| Անց. Դեր. | Տարած, | Լցած, | Զբօսցած, | Երդուընցած, |
| | տարեր | լցեր | զբօսցեր | երդուընցեր |
| Ապ. Դեր. | Տանելու | Լցունելու | Զբօսնալու | Երդուըննալու |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Կր. | Կտարուիմ | Կլցուիմ | . . . | . . . |

100. Հետեւեալ երկու չեզոք բայերն ալ Պակասաւոր են որոնք միայն այսչափ կգործածուին ։

| | | |
|---|---|---|
| Ներ. | Պարտիմ | Կամ |
| | Պարտիս | Կաս |
| | Պարտի | Կայ |
| | Պարտինք | Կանք |
| | Պարտիք | Կաք |
| | Պարտին | Կան |
| Անց. | Պարտէի | Կայի |
| | Պարտէիր | Կայիր |
| | Պարտէր | Կար |

* Կըլլայ նաեւ, Կլցուննել . Լցուցի , Լցուցիր , Լցուց . Լցուցինք , Լցուցիք , Լցուցին . Լցուր , ևն ։

| | |
|---|---|
| Պարտէինք | Կայինք |
| Պարտէիք | Կայիք |
| Պարտէին | Կային |

## ԲԱՅԻՑ ԽՈՆԱՐՀՄԱՆ ՎՐԱՅ ԴԻՏԵԼԻՔ.

101. Ա. Բայերուն խոնարհումը դիւրաւ ըմբռնելու համար, բային արմատը գտնելն շատ կօգնէ. բայց որովհետեւ արմատներն բայերուն կատարեալին մէջ յայտնի կերեւի, ուստի կատարեալին կազմութիւնն աղէկ գիտել և ունիլ պէտք է, որ ուրիշ եղանակներն ու ժամանակներն ամէնն ալ՝ կամ սահմանականի ներկայէն կամ կատարեալէն կկազմուին, ինչպէս որ խոնարհմանց պատկերներուն մէջ տեսնուեցաւ։

102. Բ. Այն անցեալ կատարեալի երրորդ դէմքերն որ ածանցական արմատ են, ընդհանրապէս վերջի ց-ն կորսնցնելով կ'ըլլան հրամայական. զորօրինակ, [illegible], կ'ըլլայ [illegible]. ՓՈՐՁԵՑ, կ'ըլլայ ՓՈՐՁԷ. [illegible], կ'ըլլայ [illegible]։ Յոգնակի հրամայականներն անցեալ կատարեալի յոգնակի երկրորդ դէմքերն են, վերջին վանկի ձայնաւորն է ի փոխելով. զորօրինակ. ԳՐԵՑԻՔ, կ'ըլլայ ԳՐԵՑԷՔ, ԽՄԵՑԻՔ, կ'ըլլայ ԽՄԵՑԷՔ։ Արգելական հրամայականներն միշտ սահմանականի ապառնիին երկրորդ դէմքերն են, միայն թէ եզակին ս-ն ր ի փոխուելու է. զորօրինակ. ԳՐԵՍ, կ'ըլլայ Մ'ԳՐԵՐ. ԳՐԷՔ, կ'ըլլայ Մ'ԳՐԷՔ։ Ասոնց գիտողութիւն ընելն բայից խոնարհումներն կդիւրացնէ։

103. Գ. Չորս լծորդութիւններու բայերն երկու տեսակ են, ՊԱՐԶ և ԱԾԱՆՑԵԱԼ։ Պարզ են անոնք՝ որոց պարզ արմատին ըստ հոլովյ փոփոխելէն ետքը, կցուած է, ԱՄ, ԵՄ, ՈՒՄ և ԻՄ. ինչպէս, Գործ, գործեմ

Խաղ, խաղամ. Թող, թողում. Նիստ, նստիմ: Ընծանցեալ՝ կերպ կերպ կան, բայց խոնարհումներուն տեղեկութեանը պէտք եղածը սա է, որ պարզ արմատին կամ ց, եց, ածանցական արմատներուն մինակ կամ կրկնածանց ըլլալով, կցուած է ամ, եմ, ում, իմ, այս մասնիկներով ն, ան, են, ուն, չ, նչ, ու, և կըվերջանայ նամ, անամ, ենամ, նեմ, անչեմ, նում, անիմ, նիմ, չիմ, ուիմ. ինչպէս, այս արմատներէն, Մոռ, մոռնամ. Յղի, յղանամ. Որբ, որբենամ. Տես, տեսնեմ. Մեղք, մեղանչեմ. Առ, առնում. Ծին, ծնանիմ. փախ, փախչիմ. Ապրեց, ապրեցնեմ. Իմաց, իմացուիմ:

104. Դ. Ամէն բայերուն սահմանական եղանակի ժամանակներն ստորադասական եղանակ կըլլան բայէն ետքը նէ * շաղկապ դրուելով, և անկատար ու ապառնի ժամանակներն՝ սկիզբն կը դրուելով ալ կըլլայ. անկատար ժամանակն կըլլայ նաև առանց է մասնկան. ինչպէս որ հետեւեալ օրինակին մէջ կըտեսնուի.

### Ստորադասական Եղ.

| | Եզակ. | Յոգնակ. |
|---|---|---|
| Ներ. | Կորսամ (նէ) | Կորսանք (նէ) |
| | Կորսաս (նէ) | Կորսաք (նէ) |
| | Կորսայ (նէ) | Կորսան (նէ) ** |

---

* Ոմանք նէ մասնիկով ստորադասականը ռամկական սեպելով չեն գործածեր գրութեան մէջ. բայց ըստ տեղւոյն գործածելն վայելուչ է. ինչպէս որ կերեւի աղէկ գրութեանց մէջ ալ.

** Առոր կազմութիւնը ներկայի ձեւ ունի, բայց միտքը ապառնի է.

| | | |
|---|---|---|
| Անց. | Կորսայի (նէ) | Կորսայինք (նէ) |
| | Կորսայիր (նէ) | Կորսայիք (նէ) |
| | Կորսար (նէ) | Կորսային (նէ) |
| | Կամ | |
| Անց. | Որսայի (նէ) | Որսայինք (նէ) |
| | Որսայիր (նէ) | Որսայիք (նէ) |
| | Որսար (նէ) | Որսային (նէ) |
| | Կամ | |
| Անց. | (որ) Որսայի | (որ) Որսայինք |
| | (որ) Որսայիր | (որ) Որսայիք |
| | (որ) Որսար | (որ) Որսային |
| Կտր. | Որսացի (նէ) | Որսացինք (նէ) |
| | Որսացիր (նէ) | Որսացիք (նէ) |
| | Որսաց (նէ) | Որսացին (նէ) |
| Ապռ. | Որսամ (նէ) | Որսանք (նէ) |
| | Որսաս (նէ) | Որսաք (նէ) |
| | Որսայ (նէ) | Որսան (նէ) * |
| | Կամ | |
| Ապռ. | (որ) Որսամ | (որ) Որսանք |
| | (որ) Որսաս | (որ) Որսաք |
| | (որ) Որսայ | (որ) Որսան |

105. Ստորադասական եղանակ բայ կըլլայ նաեւ, ով որ, թէ որ, թէպէտ, և ուրիշ ասոնց պէս բառերով, ինչպէս որ Յաւելուածին մէջ օրինակներովը պիտի ցուցուի։

106. Ա. Օժանդակ բայ կըսուին, Եմ, ըլլամ, ունիմ կամ ունենամ, պէտք, և Թող. և եղէր, օժանդակ

* Նէ, շաղկապ է ինչպէս, ալ, ոչ. ուստի սխալ է բային հետ կցել իբրեւ մասնիկ.

գերբայ է․ ասոնք բայերու կամ գերբայներու հետ ընկերանալով ոմանք անցեալ կամ ապառնի ժամանակ մը միայն կկազմեն․ և ոմանք ամբողջապէս կխոնարհին։

107․ Օ․ Պէտք, որ գործողութիւնն ետքն ըլլալ կցուցնէ, և Թող, որ աղաչանք ըլլալու կամ կամքն յայտնելու համար կգործածուի, ասոնք ապառնի ժամանակ կկազմեն․ բայց Եղեր որ գործողութիւնն անցեալ ժամանակի մէջ եղած կցուցնէ, անցեալ ժամանակ կըկազմէ․ զորօրինակ․ Պէտք գործեմ, կնշանակէ, տակաւին գործած չեմ, ասկէ ետքը կգործեմ․ Թող շնորհք գտնեմ, աղաչանք ըլլալն է շնորհք գտնելու, Թող երթայ, կամքն յայտնել է որ երթայ․ Կգործեր եղեր․ կամ Պէտք գործեր եղեր, կնշանակէ, անցած ժամանակի մէջ, ասկէ առաջ գործեր եմ, կամ պիտի գործեմ եղեր։

108․ Եղեր, միշտ բայէն ետքը կգրուի, իսկ միւսներն թէ՛ առաջ և թէ ետքը կգրուին։

109․ Ասոնք որ բայի օժանդակ կըլլան, հետևեալ օրինակին մէջ գրուած են, իսկ անոնք որ գերբայի օժանդակ են, գերբայի գլխոյն մէջ կգտնուին։

| | Եզակի․ | Յոգնակի |
|---|---|---|
| Ապ․ Ըղձ․ | Պիտի գործեմ * | Պիտի գործենք |
| | Պիտի գործես | Պիտի գործէք |
| | Պիտի գործէ | Պիտի գործեն |
| | Կամ | |
| | Գործեմ պիտի, եւլն. | Գործենք պիտի, եւլն. |

* Ոմանք պէտք գործեմ, ըսելու տեղը կգրեն պէտ՛ որ գործեմ, իբրև թէ պէտք որ գործեմ. բայց օժանդակ բայ մը իր բային հետ համաձայնելու համար շաղկապի կարօտութիւն չունի․ ինչպէս, Թող գործէ, Կգործեր եղեր, գործած եմ, գործած էի․ ուստի իբրև խորթ սովորութիւն մը զանց կընենք։

Անց. Անկ. Պիտի գործէի    Պիտի գործէինք
Պիտի գործէիր    Պիտի գործէիք
Պիտի գործէր    Պիտի գործէին
կամ
Գործէի պիտի, եւլն.  Գործէինք պիտի, եւլն.

Անց. Կշէ. Կգործեմ եղեր    Կգործենք եղեր
Կգործես եղեր    Կգործէք եղեր
Կգործէ եղեր    Կգործեն եղեր

Անց. Թող գործեմ    Թող գործենք
Թող գործես    Թող գործէք
Թող գործէ    Թող գործեն
կամ
Գործեմ թող, եւլն.  Գործենք թող, եւլն.

Անց. Անկ. Թող գործէի    Թող գործէինք
Թող գործէիր    Թող գործէիք
Թող գործէր    Թող գործէին
կամ
Գործէի թող, եւլն.  Գործէինք թող, եւլն.

110. Գործե՛մ պէտք, գործե՛ք պէտք, ասոնք իբրեւ հրամայական եղանակ ալ կվարուին:

111. Ծն. Ժխտական եղանակաւ զուգուածքներուն մէջ բային սահմանական ներկային եւ անկատարին սկիզբը պարզապէս Չ դրուելով Չգործեմ, չգործէի, ըսելու տեղը, նոյն բային անորոշ դերբային վերջի ԵԼը ՐԻ փոխելով, եւ օժանդակն կընկերանայ հետը, ու Չ առնելով կըսուի, Չեմ գործեր, չէի գործեր. բայց ներկային երրորդ դէմ եւ միւս ժամանակներն ու դերբայներն մինակ Չով կըլլայ, այսպէս.

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ներ․ | Չեմ գործեր* | Չենք գործեր |
| | Չես գործեր | Չէք գործեր |
| | Չգործեր | Չեն գործեր |
| Անց․ | Չէի գործեր | Չէինք գործեր |
| | Չէիր գործեր | Չէիք գործեր |
| | Չէր գործեր | Չէին գործեր |

Կատ․ Չգործեցի **․ Ապռ․ Չգործեմ․

Դեր․ Չգործել, — չգործած, — չգործելու ։

112․ Էական բայն Եմ, նաեւ Կամ, Ունիմ, բայերն մինակ չ կընդունին․ զորօրինակ․ Չեմ, չես, եայլն․ Չկամ, չկաս, եայլն․ Չունիմ, չունիս, եայլն ։ Գիտեմ բայն երկու կերպով ալ կըլլայ․ Չգիտեմ, չգիտես, եայլն․ չգիտէի, չգիտէիր ***, եայլն․ եւ՝ Չեմ գիտեր, չես գիտեր, եայլն ։

* Շիտակը պիտի ըլլայ չեմ գործել․ ինչպէս՝ որ, Կրնամ երթալ ըսելու տեղը ռամկաց բերանը կըսուի, կրնամ երթար, որ սխալ է ։ Այս ոճով կխօսին հիմա Պարսկաստանցի մեր ազգայինք, որ կըսեն գնում եմ, չեմ գնում, որ ըսել է կերթամ, չեմ երթար․ և գնում անորոշ դերբայի նշանակութիւն ունի․ այսինքն գնել ։

** Ոմանք սկզբնատառը բաղաձայնով բայերու կամ դերբայներու վրայ չ բացասական գրած ատեններին, ը ով կամ ի ով չը կամ չի կգրեն այսպէս․ չը գործեմ, չի կայ․ բայց որովհետեւ ասիկա մեր գրաբարի ոճն է չ բացասական մինակ գնել կից բային, հարկ մը չկայ աշխարհաբարի դառնալուն համար ը կամ ի աւելցնել ։

*** Սովորաբար կըսուի․ Չգիտեմ, չգիտես, չգիտէ, չգիտենք, չգիտէք, չգիտեն․ Չգիտէի, չգիտէիր, չգիտէր, չգիտէինք, չգիտէիք, չգիտէին ։

# ԳԼՈՒԽ Դ

## ԴԵՐԲԱՅ

113. *Աս բառերս ֆորձել, ֆորձած, ֆորձեր*, ֆորձելու, դերբայ կըսուին, ինչպէս տեսար խոնարհմանց պատկերներուն մէջ, վասն զի անուն են և բայ, ու շատ անգամ բայի տեղ կամ իբրեւ բայ կգործածուին։*

114. *Ասոնք անուան պէս կհոլովին, և անորիշ դերբայն միայն եզակի թուով կհոլովի այսպէս.*

| | | | |
|---|---|---|---|
| Ա Լծ. | Աղալ, | աղալու**, | աղալով. |
| | Իմանալ, | իմանալու, | իմանալով. |
| Բ Լծ. | Գործել, | գործելու, | գործելով. |
| | Վերցնել, | վերցնելու, | վերցնելով. |
| Գ Լծ. | Խօսիլ, | խօսելու, | խօսելով. |
| | Հագնիլ, | հագնելու, | հագնելով. *** |

---

* Ասիկա գրաբար ֆորձեալ դերբային աղաւաղեալն է. որ աշխարհաբարի սովորութեան համեմատ այր զեղչելով՝ եղած է ֆորձել, և ր իբրեւ լծորդ լ ի փոխուած եղեր է, ֆորձեր. ինչպէս, գուլպա, Գուրպա, Պելիալ, Բելիար. Տես Նոր Բառգիրք Ր տառ։

** Բուն սեռականն է աղալոյ, գործելոյ, վերցնելոյ, բայց ընդհանրապէս չգործածուիր, քիչ կտեսնուի տակաւին աշխարհաբար գրութեանց մէջ։

*** Չըլլար խօսիլու, հագնիլով։

Դ Լծ. Թողուլ, Թողնելու, Թողնելով *։

115. Ընցեալ դերբայն ած վերջաւորութեամբ թէ՛ եզակի և թէ յոգնակի կհոլովի այսպէս.

Ա Լծ. Որսացած, որսացածի, որսացածով. որսացածներ, ևն.
խմացած, խմացածի, խմացածով. խմացածներ, ևն.

Բ Լծ. Գործած, գործածի, գործածով. գործածներ, ևն.
Վերցուցած, վերցուցածի, վերցուցածով. վերցուցածներ ևն.

Գ Լծ. Խօսած, խօսածի, խօսածով. խօսածներ, ևայլն.
Հագած, հագածի, հագածով. հագածներ, ևայլն.

Դ Լծ. Թողած, Թողածի, Թողածով. Թողածներ, ևայլն։

116. Էր վերջաւորութեամբ անցեալ դերբայն և ապառնի դերբային եզակին չեն հոլովիր.

Օրն. Ըղալուներ. մոռնալուներ. գործելուներ. վերցնելուներ. խօսելուներ. հագնելուներ. Թողնելուներ։

117. Ած վերջաւորութեամբ անցեալ դերբայն, ԷՄ, ԷԼԼԱՄ և ՈՒՆԷՄ, օժանդակ բայերուն հետ, և էր վերջաւորութեամբը միայն էմ էականին հետ մէկտեղ շատ անգամ կգործածուին եռեւ կամ առաջ. ու ինչ տեսակ բայի դերբայ ըլնէ, նոյն նշանակութիւնը կպահեն. ԷԼԼԱՄ և ՈՒՆԷՆԱՄ օժանդակներու հետ սովորաբար ա-

* ԹՈՂԼԸ, ԹՈՂԼՈՒ, ԹՈՂԼՈՎ, ատոնց ուղղականը ԹՈՂԼ է, որ է գրաբար ԹՈՂՈՒԼ այր զեղչեալ, բայց որովհետև չըլլար ԹՈՂՈՒԼԸ, ԹՈՂՈՒԼՈՎ, անոր համար Թողնելին հոլովումը դրինք, Թողուլին շիտակ հոլովումն է, ԹՈՂԼԱՅ, ԹՈՂԼՈՎ, որ դեռ քիչ կգործածուի աշխարհաբար գրութեանց մէջ։

*նոնց եղանակին ու ժամանակին պէս կնշանակեն, բայց էմ և ունէմ օժանդակներուն հետ առաւել անցեալ ժամանակ կցուցնեն։ Նոյնք ամէնն հետեւեալ օրինակներուն մէջ յայտնի կերեւին։*

### Ներգործական

| | Եզակի. | Յոգնակի. |
|---|---|---|
| Սահ. | Գործած *կըլլամ* | Գործած *կըլլանք* |
| | Գործած *կըլլաս* | Գործած *կըլլաք* |
| | Գործած *կըլլայ* | Գործած *կըլլան* |
| Ըղձ. | Գործած *կըլլայի* | Գործած *կըլլայինք* |
| | Գործած *կըլլայիր* | Գործած *կըլլայիք* |
| | Գործած *կըլլար* | Գործած *կըլլային* |
| Կտր. | Գործած *եղայ* | Գործած *եղանք* |
| | Գործած *եղար* | Գործած *եղաք* |
| | Գործած *եղաւ* | Գործած *եղան* |
| Անց. | Գործած *եմ* | Գործած *ենք* |
| | Գործած *ես* | Գործած *էք* |
| | Գործած *է* | Գործած *են* |

Կամ

| | |
|---|---|
| Գործեր *եմ* | Գործեր *ենք* |
| Գործեր *ես* | Գործեր *էք* |
| Գործեր *է* | Գործեր *են* |

| | | |
|---|---|---|
| Գերկտր․ | Գործած էի | Գործած էինք |
| | Գործած էիր | Գործած էիք |
| | Գործած էր | Գործած էին |

Կամ

| | |
|---|---|
| Գործեր էի | Գործեր էինք |
| Գործեր էիր | Գործեր էիք |
| Գործեր էր | Գործեր էին |

| | | |
|---|---|---|
| Ըղձ․ | Գործած ըլլամ | Գործած ըլլանք |
| | Գործած ըլլաս | Գործած ըլլաք |
| | Գործած ըլլայ | Գործած ըլլան |

| | | |
|---|---|---|
| Հրմ․ | Գործած եղիր | Գործած եղիք |
| | գործած մ՚ըլլար | գործած մ՚ըլլաք |

Սահմ․ Անց․ Գործած եմ (նէ) եւն․ Գործած ենք (նէ) եւն․

Անց․ Անկ․ Գործած էի (նէ) եւն․ Գործած էինք (նէ) եւն։

Ըղձ․ Գործած ըլլամ (նէ) եւն․ Գործած ըլլանք (նէ) եւն․

Կամ

(որ) Գործած ըլլամ եւն․ (որ) Գործած ըլլանք եւն․

Դեր․ Գործած ըլլալ․ — գործած եղեր․ — գործած ըլլալու։

Դերբայն առջը գրուած․ Ըլլամ գործած․ ըլլայի գործած․ եղայ գործած․ եմ գործած․ էի գործած․ եմ գործեր․ էի գործեր․ ըլլամ գործած․ եղեր գործած․ ըլլալ գործած։

## Ներգործակա՛ն

| | Եզակի. | Յոգնակի. |
|---|---|---|
| Ներ. | Գործած ունիմ | Գործած ունինք |
| | Գործած ունիս | Գործած ունիք |
| | Գործած ունի | Գործած ունին |
| | կամ | |
| | Գործած կունենամ | Գործած կունենանք |
| | Գործած կունենաս | Գործած կունենաք |
| | Գործած կունենայ | Գործած կունենան |
| Անկատ. | Գործած ունէի | Գործած ունէինք |
| | Գործած ունէիր | Գործած ունէիք |
| | Գործած ունէր | Գործած ունէին |
| | կամ | |
| | Գործած կունենայի | Գործած կունենայինք |
| | Գործած կունենայիր | Գործած կունենայիք |
| | Գործած կունենար | Գործած կունենային |
| Կատ. | Գործած ունեցայ | Գործած ունեցանք |
| | Գործած ունեցար | Գործած ունեցաք |
| | Գործած ունեցաւ | Գործած ունեցան |
| Ապա. | Գործած ունենամ | Գործած ունենանք |
| | Գործած ունենաս | Գործած ունենաք |
| | Գործած ունենայ | Գործած ունենան |
| Հրամ. | Գործած ունեցիր | Գործած ունեցէք |
| | գործած մ՚ունենար | գործած մ՚ունենաք |

Դեր. Գործած ունենալ. — Գործած ունեցած. — գործած ունենալու ։

Դերբայն ետքը դրուած, Ունիմ գործած. Ունէի գործած. Ունեցայ գործած. Ունենամ գործած. Ունեցիր գործած. Ունենալ գործած ։

118. Ասանկ կըլլան Կրաւորական և Չեզոք բայերն ալ. Գործուած կըլլամ. Գործուած եմ. Գործուեր եմ. Գործուած ունիմ. Ինկած կըլլամ. Ինկած եմ. Ինկեր եմ. Ինկած ունիմ. Եւայլն ։

119. Օժանդակ բայերն ալ նոյնպէս իրարու հետ, կամ իրենք իրենց այսպէս կընկերանան. Եղած կըլլամ. եղած ունիմ. Ունեցած կըլլամ. եղած եմ. ունեցած էի. Եւայլն ։

120. Ապառնի դերբայն սովորաբար, Եմ, Ըլլամ, օժանդակ բայերուն հետ կ՚առնի. ու ինչ տեսակ բայի դերբայ է նէ՝ նոյն նշանակութիւնը կպահէ.

Սիրուն օրինակ մը դնենք հոս ։

Սահմանական

| | Եզակի. | Յոգնակի. |
|---|---|---|
| Ներ. | Գործելու կըլլամ | Գործելու կըլլանք |
| | Գործելու կըլլաս | Գործելու կըլլաք |
| | Գործելու կըլլայ | Գործելու կըլլան |
| Անկ. | Գործելու կըլլայի | Գործելու կըլլայինք |
| | Գործելու կըլլայիր | Գործելու կըլլայիք |
| | Գործելու կըլլար | Գործելու կըլլային |

| | | |
|---|---|---|
| Կտր. | Գործելու եղայ | Գործելու եղանք |
| | Գործելու եղար | Գործելու եղաք |
| | Գործելու եղաւ | Գործելու եղան |
| Ապռ. | Գործելու ըլլամ | Գործելու ըլլանք |
| | Գործելու ըլլաս | Գործելու ըլլաք |
| | Գործելու ըլլայ | Գործելու ըլլան |
| | Կամ | |
| | Գործելու եմ | Գործելու ենք |
| | Գործելու ես | Գործելու էք |
| | Գործելու է | Գործելու են |
| Ապռ. Անց. | Գործելու էի | Գործելու էինք |
| | Գործելու էիր | Գործելու էիք |
| | Գործելու էր | Գործելու էին * |
| Հրմ. | Գործելու եղիր | Գործելու եղէք |
| | գործելու մ'ըլլար | գործելու մ'ըլլաք |

Ստոր. Ապռ. Գործելու ըլլամ (նէ) ևն. Գործելու ըլլանք (նէ) ևն.

Կամ

Գործելու եմ (նէ), ևն. Գործելու ենք (նէ) ևն.

Ապռ. Անց. Գործելու էի (նէ). ևն. Գործելու էինք (նէ) ևն.

Դեր. Գործելու ըլլալ. գործելու եղած

Ասանկ կըլլան Կրաւորական և Չէզոք բայերն ալ. Գործուելու կըլլամ. գործուելու կըլլայի. գործուելու

---

* Գործելու եմ, գործելու էի. և Պէտք գործեմ, պէտք գործէի, միևնոյն տեղ կ'անին.

եղայ. գործուելու ըլլամ. գործուելու եմ. գործուելու էի. գործուելու եղեր. գործուելու ըլլալ. գործուելու եղած. Բնակելու կըլլամ. բնակելու կըլլայի, բնակելու եղայ. բնակելու ըլլամ. բնակելու եմ, բնակելու էի. բնակելու եղեր. բնակելու ըլլալ. բնակելու եղած.

---

# ԳԼՈՒԽ Ե

## ՄԱԿԴԻՐ

121. Մակդիրն երկու տեսակ է. Մակդիր անուան և Մակդիր բայի *.

## Ա. ՄԱԿԴԻՐ ԱՆՈՒԱՆ

122. Մակդիր անուան կամ Ածական այն տեսակ բառերն են որ անուան հետ կերթան, ու երկու տեսակ են. Որակական և Քանակական.

123. Որակական կըսուին այն ածականներն, որոնք անձի մը կամ իրի մ' ինչպիսի ըլլալն կցուցնեն. զոր-

---

* Այս տեսակ բառերուն որ մեր քերականութիւններն ոմանց առաջին տեսակ բառերուն հետ ածական դրած են, և ոմանց մակբայ անուն տալով անկէ զատ կդնեն. մեք տեսնելով թէ երկուքը միևնոյն բնութիւն ունին, այսինքն՝ գոյականի և գործողութիւն նշանակող բառերու հետ՝ անոնց մէկ հանգամանքը կյայտնեն, այս տեսակ բառերն Մակդիր անուանելով մէկ գլխոյ տակ առանդեցինք. և կյուսանք թէ անբանաւոր պիտի չդատուի, քանի որ շատ ածական բառածներ պարզաբար և կամ ուրիշ ձևով մակբայօրէն կրանին ընդհանրապէս. զորօրինակ. Մեծ տուն. Գեղ խօսիլ. Աղէկ գործ. աղէկ ընել. Նոր լուր. Նոր կերել.

օրինակ․ ինչպիսի մարդ՝ կամ ծառ՝ կամ տուն ըլլալն ցուցնելու համար կըսենք․ Բարի մարդ, Կանաչ ծառ, Մեծ տուն․ և ահա՝ բարի, կանաչ, մեծ, Մակդիր անուան են, քանզի մարդուն, ծառին, տանն, ինչպիսի ըլլալը կցուցնեն։

124․ Բառի մ՚ Որակական ածական ըլլալը, Ինչ-պէս կամ Ինչոր հարցմամբ դիւրաւ կճանչցուի․ զոր-օրինակ․ Բարի մարդ․ Հարցում․ Ի՞նչպէս մարդ․ Պատասխան․ Բարի մարդ։

125․ Թուական Մակդիր անուններն որ համրանք կըցուցնեն, երկու տեսակ են․ Բացարձակ և Դասական։

126․ Բացարձակ Թուականներն պարզ համրանք կցուցնեն, այսինքն քանի հատ ըլլալն․ ինչպէս․

| | |
|---|---|
| Մէկ | Տասնուչորս․ |
| Երկու կամ երկուք * | Տասնուհինգ․ |
| Երեք․ | Քսան |
| Չորս․ | Երեսուն․ |
| Հինգ․ | Քառասուն․ |
| Վեց․ | Յիսուն․ |
| Եօթն, եօթը, | Վաթսուն․ |
| Ութ․ | Եօթանասուն․ |
| Ինն, ինը․ | Ութսուն․ |
| Տասն, տասը․ | Իննսուն․ |
| Տասնումէկ․ | Հարիւր․ |
| Տասնուերկու․ | Երկու հարիւր․ |
| Տասնուերեք․ | Հազար․ |

* Երկու՝ գոյականի հետ կգլուցուի․ ինչպէս, Երկու հոգի․ բայց Երկուք գոյականաբար մինակ կգործածուի միշտ։

Հազար հարիւր. Միլիոն կամ հարիւր բիւր.
Բիւր կամ տասն հազար. Մէկ միլիոն ու հարիւր* ևն.

127. Դասական թուականներն կարգ կցուցնեն, այսինքն՝ քանիերորդ ըլլալն. և բացարձականներուն ծայրը րորդ կամ երորդ կցելով կշինուին. ինչպէս.

| | |
|---|---|
| Առաջին** | Տասնեւեօթներորդ. |
| Երկրորդ. | Տասնեւութերորդ. |
| Երրորդ. | Տասնեւիններորդ. |
| Չորրորդ. | Քսաներորդ. |
| Հինգերորդ. | Երեսներորդ. |
| Վեցերորդ. | Քառասներորդ |
| Եօթներորդ. | Յիսներորդ. |
| Ութերորդ. | Վաթսներորդ. |
| Իններորդ. | Եօթանասներորդ. |
| Տասներորդ. | Ութսներորդ |
| Տասնումէկերորդ. | Իննսներորդ. |
| Տասնեւերկրորդ. | Հարիւրերորդ. |
| Տասնեւերրորդ. | Հազարերորդ. |
| Տասնեւչորրորդ. | Տասնհազարերորդ. |
| Տասնեւհինգերորդ. | Միլիոներորդ. |
| Տասնեւվեցերորդ. | Վերջին. |

128. Մակդիր անուաններն թէպէտ հոլովական բառեր են, բայց աշխարհաբար լեզուին մէջ գոյակա-

* Կըլլայ նաև մէկմէկ, երկերկու, երեքերեք, չորսչորս, և այլն, որոնք առանց կրկնուելու ական մասնկով ալ նոյն նշանակութիւնն ունին. ինչպէս. երեքական, չորսական, հնգական, և այլն. քիչ կգործածուի, Մէկական, Երկական,

** Մէկերորդ մինակ չգործածուիր, բայց կըսուի քսանմէկերորդ, հարիւրմէկերորդ.

նի հետ չեն հոլովիր. գոյականաբար մինակ գործածուած ատեն կհոլովին միայն, և այն ալ յատուկ հոլովում չունին։

129. Որակական ածականներէն շատն անուանց առաջին հոլովման պէս կհոլովին. ու՛ կայ նաև միւս հոլովմանց պէս հոլովողներ.

Ա Հոլովում. Անոյշ. անոյշէ, անոյշով. անոյշներ.
Բ Հոլովում. Սուրբ. սրբոյ, սրբով. սրբեր.
Գ Հոլովում. Բարի, բարւոյ, բարիով. բարիներ.
Դ Հոլովում. Դժուար, դժուարէ, դժուարաւ.

130. Բացարձակ և դասական թուականներն ամէնքն ալ առաջին հոլովման պէս կհոլովին. միայն՝ Մէկ, կհոլովի Է՛ հոլովման վրայ. Մէկ, մէկու. մէկ, մէկով*. Յոգնակի չունի, և առաջին ու վերջին, կհոլովին Բ՛ հոլովման վրայ։

Երկու կամ երկուք, երկուքի, երկուքէ, երկուքով, երկուքներ. չըլլար, երկուի, երկուով, երկուներ.

Եօթն կամ եօթը, եօթնի, եօթնէ, եօթնով. եօթններ. չըլլար, եօթի, եօթէ, եօթեր։

Ութ, ութի, ութէ, ութով. ութեր։

Ինն կամ ինը, ըննի, ըննէ, ըննով. իններ։

Տասն կամ տասը, տասնի, տասնէ, տասնով. տասներ. չըլլար, տասի, տասէ, տասեր։

Երսուն, երսնի, երսնէ, երսնով. երսուններ։

Քառասուն, քառսնի, քառսնէ, քառսնով՝ քառասուններ։

Յիսուն, յիսնի, յիսնէ, յիսնով. յիսուններ։

Առաջին, առաջնոյ, առաջնէ, առաջնով. առաջիններ։

---

* Վերջահոլովներն եով պիտի ըլլան Մէկու, Մէկով, Մէկէ, քանզի գրաբար Մէկին, որ Մէկէն ածանցեալ է, եով է։

Երկրորդ, երկրորդի, երկրորդէ, երկրորդով. երկրորդներ :

Վերջին, վերջնոյ, վերջնէ, վերջնով. վերջիններ :

---

## Բ. ՄԱԿԴԻՐ ԲԱՅԻ

131. Մակդիր բայի կամ Մակբայ՝ այն տեսակ բառերն են, որ բային մէկ որպիսութիւնը կամ եղանակը կյայտնեն. Զորօրինակ. Խիստ աշխատիլ. Անկեղծ սիրել. Խիստ և անկեղծ, Մակբայ են, և աշխատելուն ու սիրելուն որպիսութիւնը կցուցնեն :

132. Մակդիր բայիներն չորս տեսակ են. Որակական. Տեղական. Ժամանակական ու Քանակական.

133. Որակական մակբայներն բուն բային կամ գործողութեան որպիսութիւնը, ինչպէս ըլլալն կցուցնեն : Աղէկ առիք. Աղէկ որակական մակբայ է. և ինչպէս կամ ինչպէր հարցման պատասխան է :

Հարցում. ի՞նչպէս առիք. Պատասխան. Աղէկ :

134. Որակական մակբայներուն գլխաւորներն ասոնք են. Զուր, գաղտնի, յայտնի, միայն, մինակ, աղէկ, ուրուր, հարևանցի, արմատապէս :

135. Ամէն պէս, բար և օրէն վերջաւորուած մակբայ՝ Որակական մակդիր բայի է. զորօրինակ. Նոյնպէս, մեծապէս, չարաբար, քաջաբար, յունարէն, ևայլն :

136. Մակդիր անուններն ալ երբոր բային կամ գործողութեան որպիսութիւնը կցուցնեն. Որակական մակդիր բայի են. զորօրինակ. Քիչ գիտեմ. Շատ խօսիլ. Աղէկ մը կարդալ. Երկար մնալ :

137. Տեղական մակդիր բայերն գործողութեան տեղը, ո՛ւր ըլլալն կցուցնեն. Վեր ելնել. Վեր տեղական մակբայ է, և ո՛ւր հարցման պատասխան է։

Հարց. Ո՞ւր ելնել. Պատ. Վեր։

138. Տեղական մակբայներուն գլխաւորներն են, Հոս, հոդ, հոն, վեր, վրայ, դուրս, ներս, մօտ. հեռու, ներքեւ, եւայլն։

139. Ժամանակական մակբայներն գործողութեան ատենը, ե՞րբ ըլլալն կցուցնեն. Միշտ կուսնիմ. Միշտ ժամանակական մակբայ է, և երբ հարցման պատասխան է։

Հարց. Երբ ուսնիլ. Պատ. Միշտ։

140. Ժամանակական մակբայներուն գլխաւորներն ասոնք են. Հիմա, ետքը, այսօր, վաղը. կանուխ, ուշ. երէկ, հերու, իրիկուն, երբ, նախ, դեռ, եւայլն։

141. Քանակական մակբայներն գործողութեան քանակութիւնը, ո՛րչափ ըլլալն կցուցնեն. Խիստ յոգնիլ. Խիստ քանակական մակբայ է. և ո՛րչափ հարցման պատասխան է։

Հարց. Ո՛րչափ յոգնիլ. Պատ. Խիստ։

142. Քանակական մակբայներուն գլխաւորներն են. Աղէկ, շատ, քիչ, խիստ, երբեմն, մանաւանդ, ա-ւելի. եւայլն։ Քանակական մակբայ են նաեւ. Այսչափ, այդչափ, այնչափ, այսքան, այնքան, միանգամ. երկանգամ, բազմանգամ, դարձեալ, վերստին, կրկին, եւայլն։

143. Այս չորս տեսակ մակբայներէն զատ կան հետեւեալ մակբայներն.

Ոչ, չէ, ու, մի, ասոնք բացասական մակբայ կըսուին։

Ինչո՞ւ, ինչպէս, ո՞ւր, եւայլն, ասոնք Հարցական մակբայ կըսուին։

144. Անուններ ալ մակդիր բայի պէս կվարուին. զօրօրինակ. Գիշերանց, առաւօտանց կելնէ. Արդարօրէն ըննենք. Սրտանց սիրել. Գէշ [illegible] գնել. Ատեն [illegible] բացուիլ։

145. Ընուններ և մակդիր անուաններ՝ մը անորոշ դերանունով միկտեղ մակդիր բայի կըլլան. զորօրինակ. Ատեն մը ապրեցաւ. Գիշեր մը հանգչեցաւ, Կէսօր մը հանգցուց. Պահ մը համբերէ, Ժամ մը փախաւ։

146. Մակդիր բայերն Բայէն զատ, Ածականի և ուրիշ Մակբայի մը որպիսութիւնն ալ կցուցնեն. զորօրինակ. Շատ աղէկ, Խիստ չար. Բոլորովին հանդարտ. Շատ վեր, Խիստ չարաչար, Բոլորովին ձրի. Այս օրինակներուն մէջ, Շատ, Խիստ, Բոլորովին, Մակդիր բայերն, աղէկ, չար, հանդարտ, Ածականներուն, ու վեր, չարաչար և ձրի, Մակբայներուն որպիսութիւնը կը ցուցնեն։

---

## ԳԼՈՒԽ Զ

### ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

147. Նախադրութիւն կըսուին այն տեսակ բառեր, որոնք, Մակբայներուն պէս, բային կամ գործողութեան մը որպիսութիւնը, տեղը, ժամանակը, նաև պատճառը և ուրիշ պարագաներն ցուցնելու կծառայեն.

148. Մակբայի ու Նախադրութեան մէջ եղած տարբերութիւնը սա է, որ Մակդիր բային առանց ուրիշ բառի մինակ ըման միտք կուտայ, բայց Նախադրութիւնը քովը ուրիշ հոլովական բառ մը կուզէ, որ անոր խնդիրը կըսուի։

149. Նախադրութիւններէն ոմանք խնդիրէն առաջ կդրուին. ինչպէս ասոնք. Մինչև, առանց, բաց ի, զատ

դէպ, դէպի*, փոխանակ, իբր: Բայց շատերն խնդիրէն ետքը կդրուին, ինչպէս. Համար, համեմատ, չափ, շուրջ, առաջ, մօտ, դէմ, վրայ, ետեւ, ներս, հետ, ի վեր, շուրջ դէմ, բոլոր**, եւայլն:

150. Նախադրութիւններէն ոմանք՝ Սեռական խնդիր կուզեն. ինչպէս. Անոր համար:

Ոմանք՝ Տրական, ինչպէս. Դէպ ինձ:

Ոմանք՝ Բացառական, ինչպէս. Դռնէն դուրս:

Քիչ անգամ՝ Հայցական և Գործիական, ինչպէս, Քան զինքն, Օր առաջ, Լեռն ի վեր, Քան [illegible], Իբրեւ դերմամբ:

---

# ԳԼՈՒԽ Է

## ՇԱՂԿԱՊ

151. Շաղկապ կըսուին այն տեսակ բառեր, որոնք երկու բառ կամ երկու խօսք իրարու հետ կըկապեն:

152. Գլխաւոր Շաղկապներն հետեւեալներն են. Եւ, ու, թէ, եթէ, որ, թէեւ, թէպէտ, կամ, բայց, սա-

---

* Ոմանք դէպի կգրեն ի նախդիրն դէպին կից, որ սխալ է. քանզի ի զատ նախդիր է, ու պէտք է խնդրոյն հետ կցուի. զոր օրինակ. դէպ ի տուն:

** Այս տեսակ բառերն գրաբարին մէջ շատը խնդիրէն առաջ դրուելուն համար Նախադրութիւն ըսուած է. բայց աշխարհաբար լեզուին մէջը շատը խնդիրէն ետքը կդրուի և անոր համար Նախադրութիւն անուն տալ այնչափ յարմար չէ ալ նէ, որ յաւէտ յետադրութիւն ըսելու է անոնց Բագրատունի վարդապետին ըսածին պէս, բայց մենք ընդհանուր անունը պահեցինք:

սակայն, թէպէտ, եթէոր, քանզի, վասնզի, ուրեմն, հապա, որովհետեւ, քանզի*, այսինքն, մինչեւ, մանաւանդ, ապա թէ :

## ԳԼՈՒԽ Է

### ՁԱՅՆԱՐԿՈՒԹԻՒՆ

153. Ձայնարկութիւն կըսուին այն տեսակ բառեր, որոնք հոգւոյն մէկ կիրքը կյայտնեն · ինչպէս, վախ, զարմանք, բարկութիւն, զզուանք, արհամարհութիւն, տրտմութիւն կամ ուրախութիւն, եւայլն :

154. Գլխաւոր Ձայնարկութիւններն հետեւեալներն են. Ո՛հ, ա՜հ, ա՜յ, վա՜յ, վա՜խ, ո՛ւհ, ափսո՜ս, աւա՜ղ, հա՛պա, ա՜խ, է՛հ, է՜, հա՜յ, օ՜:

* Վասնզի, Քանզի, Եթէոր, իբրեւ բարդ բառեր կից դրինք այն սկզբունքով, որ քանզի և եթէոր կգրուի :

# ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

## ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ

155. Որովհետեւ խօսքը բառերուն ըստ կանոնի շարուելովը և կապուելովը կըլլայ, ուստի այս մասին մէջ պիտի ցուցնենք թէ բառերն խօսքի մէջ ինչ կանոնով կկապուին իրարու՝ հետ, և ինչ պաշտօններ կկատարեն։

156. Բառերուն խօսքի մէջ կատարած պաշտօններն են,

1. Տէր բայի և Բայ.
2. Խնդիր և Խնդրառու.
3. Բացայայտիչ և Բացայայտեալ.
4. Մակդիր անուան և Անուն.
5. Կոչական։

## ԳԼՈՒԽ Ա

### ՏԷՐ ԲԱՅԻ ԵՒ ԲԱՅ

157. Բայն, ինչպէս ըսինք (64), ընել կամ ըլլալ կցուցնէ. Տէր բային ընողն կամ ըլլողն է, անոր համար միշտ ուղղական կըլլայ. զորօրինակ. Ես ստեղծեցի զքեզ. Մովսէսին հետ խօսեցաւ Աստուած. այս խօսքերուն մէջ Ես, Աստուած, Տէր բայի են։

158. Տէր բային գտնելու դիւրին կերպ մը՝ **ո՞վ** կամ ի՞նչ բան հարցնելու է. զորօրինակ. **Մովսէսին հետ Աստուած խօսեցաւ**. հարց. ո՞վ է խօսողը. պատասխան. Աստուած. ուրեմն **Աստուած** Տէր բայն է։ **Երկինքն իմ աթոռն է**. հոս երկու ուղղական կայ, եւ որն է Տէր բային գտնելու համար պէտք է հարցնել, աթոռ եղողն ինչ բան է, պատասխան, Երկինքը. ուրեմն **Երկինքը** Տէր բայն է։

159. Տէր բայ կըլլան Անունը, Դերանունը, գոյականաբար * առնուած Մակդիր անուան մը, Անորոշ եւ Անցեալ Դերբայներն, երբեմն նաեւ Մակդիր բայի մը, Շաղկապ մը, Նախադրութիւն մ' իր խնդրովը, Հոլոված բառ մ' իբրեւ ուղղական, եւ Դիմաւոր Բայ մը. զորօրինակ.

ՏԷՐ ԲԱՅԻՆ

| | |
|---|---|
| **Յիսուս** պատասխան տուաւ. | **Անուն.** |
| **Դուն** կըսես. | **Դերանուն.** |
| Աստուծոյ **ընդդիմանալն** չար է. | **Անորոշ դեր բայ.** |
| **Մեռեալներն** պիտի յառնեն. | **Անցեալ դեր բայ.** |
| **Անզգամը** խրատը կմերժէ. | **Մակդիր անուան.** |
| **Մեղաց համարն** մատուցուեցաւ. | **Նախադրութիւն խնդրովը.** |
| Ձեր **այոն** այո ըլլայ. | **Մակդիր բայէ.** |
| **Քանզին** խօսքին պատճառն կցուցնէ. | **Շաղկապ.** |
| **Անոր** ձեռքովն ըսել է. | **Հոլոված բառ.** |
| **Մի գողնար** Աստուծոյ հրամանն է. | **Դիմաւոր բայ.** |

* **Գոյականաբար** առնուած կըսուի Մակդիր անուան մը, երբոր խօսքին մէջ մինակ առանց գոյականի է, կամ գոյական մը լռելեայն կիմացուի։

160․ Երբոր Տէր բային պարզ* է, Բայն անոր հետ թուով ու դէմքով կհամաձայնի․ զորօրինակ․

| | |
|---|---|
| Ես կնընջեմ․ | Մենք գիտենք․ |
| Դուն կըսես․ | Դուք չէք գիտեր․ |
| Անի տեսաւ․ | Անոնք չիմացան․ |

161․ Երբոր Տէր բային բաղադրեալ է, բայն յոգնակի կդրուի․ և երբեմն ալ եզակի, մանաւանդ թէ որ յետադաս ըլլան բային, և կրնայ ըլլալ որ անոնց մէջ յոգնական ալ գտնուի․ զորօրինակ․

Մովսէս ու Ահարոն մտան փարաւոնին։
Անատենը Սեդրաք, Միսաք ու Աբեդնագով կրակին մէջէն ելան։
Ոտքի վրայ ելաւ Թագաւորն և կուսակալն ու Բերենիկէն, և անոնք որ իրենց հետը նստեր էին։

162․ Յոգնակի անուն բայիին երրորդ դէմ բայն երբեմն եզակի ալ կըլլայ, մանաւանդ երբոր եմ, կամ և ըլլամ բայեր են․ զորօրինակ․

Այս ամէն բաներն եղաւ։
Իմաստունին աչքերն իր գլխոյն վրայ է։
Փառք ու վայելչութիւն կայ անոր առջին։
Ու կնոջն երկու թեւեր տրուեցաւ։

---

* Պարզ կըսուի Տէր բային, երբոր եզակի կամ յոգնակի մէկ բառ է․ ինչպէս․ Դուն սիրեցիր․ Անոնք գնացին։
Բաղադրեալ կըսուի Տէր բային, երբոր երկու կամ աւելի եզակի կամ յոգնակի բառեր են, ինչպէս (161) օրինակներուն մէջ պիտի տեսնես։

Ու քու հոգւոյդ ցանկացած պտուղներն քեզմէ գնաց։

163. Երբոր բաղադրեալ Տէր բային տարբեր դէմքի անուններէ բաղկացած է, բայն յոգնակի կդրուի, ու դէմքով պատուաւոր* դէմքին հետ կհամաձայնի. զորօրինակ.

Ես ու իմ հայրս մէկ ենք։
Երբոր դուն ու անի մինակ էք։

164. Անորոշ և Անդէմ դերբայներն ալ ուղղական Տէր բայի կառնուն ընդհանրապէս. զորօրինակ.

Բանաւորելուն ընթանալուն որ քիչ ժամանակ ունի։
Որդին հայրը բանի մը օգտակար ըլլալուն օրինակովը։
Դեռ արծաթէ թելը կտրուած, ու ոսկիէ բաժակը փշրուած, և սափորն աղբիւրին քովը կոտրուած, ու ջրհորին վրայ անիւը կոտրուած։

165. Առաջին և երկրորդ դէմ բայերուն Տէր բայիներն, որ ես, դուն, դերանուններն են, շատ անգամ ըմբռնելով կիմացուին, նմանապէս երրորդ դէմքինն ալ երբոր դերանուն է։

* Պատուաւոր է առաջին դէմքն երկրորդէն, և երկրորդն երրորդէն։

# ԳԼՈՒԽ Բ

## ԽՆԴԻՐ ԵՒ ԽՆԴՐԱՌՈՒ

166. Խնդիր կըսուին այն բառերն որոնք ուրիշ բառի մը քով դրուելով՝ անոր իմաստը կորոշեն կամ կամբողջացնեն։

Սա՝ Մշակներն այգին ղրկեց. Աստուծոյ արդարութիւն. Ստեղծուածներէն ամէնքը. Վարձքի արժանի. Խաղաղութեան համար. խօսքերուն մէջ, մշակներն, այգին, Աստուծոյ, ստեղծուածներէն, վարձքի, խաղաղութեան բառերն խնդիր են։ Առանց այս բառերուն, ղրկեց, արդարութիւն, ամէնքը, արժանի, համար, որոշ կամ կատարեալ իմաստ մը չեն տար։

167. Խնդիր ունեցող բառն խնդրառու կկոչուի. վերի օրինակներուն մէջ, ղրկեց, արդարութիւն, ամէնքը, արժանի, համար, բառերն խնդրառու են։

168. Խնդիր առնող բառերն են Անունը, Մակդիր անուանը, Անորոշ և Ցուցական Դերանուններն, Նախադրութիւնն ու Բայն և Դերբայն։

## ՅՕԴՈՒԱԾ Ա

### Անուան խնդիրներն

169. Անունը կամ գոյականաբար առնուած Մակդիր անուան մը և Անորոշ Դերբայն՝ սեռական հոլով խնդիր կառնուն, որուն հայերէն Յատկացուցիչ ըսել

սովորութիւն եղած է. ինչպէս որ սեռական հոլով խնդիր առնող բառն ալ Յատկացեալ կկոչուի։

Ինչպէս, Աշխարհին լոյսը. Ազգին գլխաւորներն. Կնկանը գիտնալովը, խօսքերուն մէջ, աշխարհին, ազգին, կնկանը, յատկացուցիչ են. լոյս, գլխաւորները, գիտնալովը, յատկացեալ կկոչուին։

170. Յատկացուցիչն՝ որո՞ւն, (ինչի՞ն) հարցման պատասխան է. վերի խօսքերուն մէջ այս հարցումը կրնանք ընել.

Որո՞ւն լոյսը. — Աշխարհին. Որո՞ւն գլխաւորներն. — Ազգին. Որո՞ւն գիտնալովը. — Կնկանը։

171. Աշխարհաբար լեզուին մէջ սովորաբար Յատկացուցիչը Յատկացեալէն առաջ կդրուի, ինչպէս վերի օրինակներուն մէջ տեսնուեցաւ. ու նաեւ մէկը շատերու կըլլայ. զորօրինակ.

Անոր կանոններն՝ պատուիրանքներն՝ դատաստաններն ու վկայութիւնները պահես։
Իր Յեսուի սափորն։
Արմաւենիին ոստն ու կնիւնը։

172. Երբոր Յատկացեալն մակդիր կամ ուրիշ իրեն վերաբերեալ բառ ունի, անիկա մէջ մտնելով մէկմէկէ կզատուին. զորօրինակ.

Աստուծոյ փառաւորեալ անունը։
Քրիստոսի՝ խաչին դառն մահուանը հնազանդութիւնն։

## ՅՕԴՈՒԱԾ Բ

### Մակդիր անուաններուն խնդիրները։

173. Մակդիր անուններն, ինչպէս նաև Անցեալ և Ապառնի Դերբայներն, որոնք իբր ածական կգործածուին, ամէն հոլով խնդիր կառնուն, նաև Նախադրութիւնով մէկտեղ. զորօրինակ.

**Ուղղական**. Ձեռքը լեցուն. Մարդ եղողն. Առաջինը Սիմոն՝ Պետրոս ըսուածը. Պահապան դրուելու տեղ մը։
**Հայցական**. Օրէնքը ուժովցնողը. Հացն առնելիք ծակ մը։
**Սեռական**. Երկինքին ու երկրին ստեղծողը. Հոգւոյ պահապան. Ապականիչ և խռովարար բոլոր Հրեաներուն։
**Տրական**. Գիտութեան հմուտ. Ամենուն ողորմած։
**Բացառական**. Մեղքէն ազատ. Մէկ կողմէն միւսը թափանցիկ։
**Գործիական**. Հինգ բթաչափ թանձրութեամբ կլոր. Մտքով ապուշ։
**Նախադրութիւնով**. Երկնից աստղերուն չափ շատ. Ձիւնի պէս ճերմակ։

174. Թուական մակդիր անուններն ու Անորոշ Դերանուններն՝ Բացառական, Սեռական և Գործիական հոլով, իսկ Ցուցական Դերանուններն՝ միայն բացառական խնդիր կառնուն, նաև Մէջ կամ Մէջէն Նախադրութիւնով մէկտեղ. զորօրինակ.

Մեզմէ մէկը · Գերի ծառաներուն տասը · Թուով քառասուն · Անոնցմէ ուրիշներուն պիտի ըլլայ · Խելացիներէն ոմանք · Այդ գերդաստանէն քանի մը հոգի · Ձեր իւրաքանչիւրին · Բարեկամներուն ամէնքը · Օրէնքներուդ մէջ ո՛րը · Անոնց մէջէն հինգը · Թագաւորներէն անոնք գովութեան արժանի են ·

## ՅՕԴՈՒԱԾ Գ

### ԲԱՅԵՐՈՒ ԽՆԴԻՐՆ

### Չէզոք բայ

175. Չէզոքական բայն [illegible] ամէն հոլով խնդիր կառնու հայցականէն զատ*. զորօրինակ.

176. Ուղղական · Եզակի Տէր բայի ունեցողներն եզակի կառնուն, յոգնակի Տէր բայի ունեցողներն, թէ որ գոյական է Ուղղական խնդիրն, յոգնակի ալ կըլլայ՝ եզակի ալ. բայց թէ որ Մակդիր անուան է, ու գոյականի տեղ դրուած չէ, միշտ եզակի կըլլայ. զորօրինակ.

Ես եմ Աստուած:
Թէոր դուք շիտակ մարդիկ էք:
Դուք էք աշխարհի լոյսը:
Անոր թղթերն ծանր ու զօրաւոր են. չըլլար ծանրեր, զօրաւորներ:

* Հայցականն յատկապէս ներգործական բային խնդիրն է, և ուրիշ բայերու քով գրեթէ չգրուիր.

177. Զափի ու կշիռքի անունններն ալ որ Ուղղական կդրուին, միշտ եզակի կըլլան Բային Թուոյն չնայելով. զորօրինակ.

Բարձրութիւնը վաթսուն կանգուն էր։
Բամպականերն երեք հարիւր լիտր էին։
Ներկած տեղուանքն եղան ամէնը մեկանց հարիւր երեսուն գրկաչափ՝ չըլլար, լիտրեր, գրկաչափներ.

178. Սեռական, Տրական, Բացառական, Գործիական խնդիրներ.

Խորհուրդն ու խոհականութիւնն ինծ է։
Ամենն ալ հասկցողին ուղիղ են. ու գիտութիւնը գտնողներուն շիտակ են։
Օրէնքով եղած էր։
Մեր փրկութիւնը քեզմէ է։
Ամէն բան անով եղաւ։
Տակաւին գիտողներն տանը էին։

Տանը, Տրական խնդիր է. և որովհետև Ուղղականին նման է, Տրական ըլլալը որոշելու համար, հարցնելու է, ո՞ւր. զորօրինակ. ո՞ւր էին. Պատ. տանը էին։ Այսպէս ամէն հոլով խնդիրներն ալ բուն բային խնդիրն ըլլալը ստոյգ գիտնալու համար բառն ինչ հոլով որ է, նոյն հոլովով հարցնելու է բային հետ. եթէ Սեռական է, որո՞ւն (ինչի՞ն), եթէ Տրական. որո՞ւն (ինչի՞), եթէ Բացառական. որմէ՞. եթէ Գործիական. որո՞վ. կամ, ի՞նչ, ինչո՞ւն, ինչէ՞ն, ինչո՞վ, կրնաս հարցնել։

## Ներգործական Բայք և Դերբայք.

179. Ներգործական Բայերն ու Դերբայներն Հայցական հոլով խնդիր կառնուն, որն որ գործողութիւնը կրողն է. զորօրինակ.

> Փնտռեցէք զանիկա, որ Բաղմատեղը և Հայկը շինեց:
> Ընկերը սիրելով: Ինքզինքդ մտածելու հետ ըլլաս:

180. Այս հայցականը Հայերէն քերականութեանց մէջ սեռի խնդիր կկոչուի:

181. Այն Հայցական խնդիրներն որոնք առանց յօդի են, ու նախդիր չունին անորոշ Հայցական սեռի խնդիր կըսուին. զորօրինակ.

> Հաց առաւ օրհնեց.
> Տեսիլներ՝ երազներ պիտի տեսնեն.
> Ի՞նչպէս տուն պիտի շինէք ինձի.
> Պճղնաւոր պատմուճան մը հագած.

182. Հայցական խնդիրն ճանչելու համար, որովհետեւ Ուղղականի ձեւն ունի, պէտք է հարցնել, ո՞րը կամ ի՞նչը. զորօրինակ, Հաց առաւ. Հարց. ի՞նչը առաւ. Պատ, հացը. յայտնի եղաւ թէ հացը Հայցական խնդիր է: Պետրոսը բռնեցին. Հարց. ո՞րը բռնեցին. Պատ, Պետրոսը:

183. Հայցական խնդիրն, երբոր խօսքը շփոթ պիտի հասկցուի, զ նախդրով պէտք է դնել. զորօրինակ.

> Երբոր իմացաւ թէ Հռովմայեցի է, և որովհետեւ զանիկա կապեր էր:

Ու ամէն կողմէն շունչը բռնկցուց, բայց անիկա չգիտցաւ. շունչը այրեց, բայց անիկա իր սրտին մէջ չդրաւ։
Հոն Պարսիկը կչարչարէր զՀայն։

184. Սեռի խնդիր կըլլան Անունը, Դերանունը, Դերբայն, գոյականաբար առնուած Մակդիր անուանը, երբեմն նաեւ Մակդիր բային, Նախադրութիւնն իր խնդրովը, Շաղկապը, Հոլոված բառ մը և Դիմաւոր Բայ մը. զորօրինակ.

ՍԵՌԻ ԽՆԴԻՐ.

| | |
|---|---|
| Առաւ մանեակը. | Անուն. |
| Քեզ տեսայ. | Դերանուն. |
| Սովրեցնելը կսիրեմ. Լսածդ մի մոռնար. | Դերբայ. |
| Տէրն կսիրէ արդարը. | Գոյականաբար առնուած Մակդիր անուան. |
| Առանց խորհելու այս կամ ան մ'ըսեր. | Մակդիր բայի. |
| Մեղքէ հեռուն մնացուցէք. | Նախադրութիւն խնդրովը. |
| Բայցի տեղ ալ ան կրնաս գնել. | Շաղկապ. |
| Խաչի յետեւը զատեց. | Հոլոված բառ. |
| Ես ձեզ կ'ըսեմ ճանչնալուն լսել շատ սոսկալի է. | Դիմաւոր բայ. |

Կրաւորական Բայ և Դերբայ

185. Ներգործական բայով եղած խօսք մը կրաւորականով ալ կրնայ բացատրուիլ. բայց այնատեն ներգործականին Սեռի խնդիրն Տէր բայի, և Տէր բային՝ Բացառական հոլով կդրուի, երբեմն ալ Գործիական. զորօրինակ.

Ներգործական. Հայրն ինծի տուաւ ամէն բան.
Կրաւորական. Ամէն բան ինծի տրուեցաւ իմ Հօրմէս.
Ներգործական. Իմիններս զիս կճանչնան.
Կրաւորական. Ես կճանչուիմ իմիններէս.
Ներգործական. Որ մենք ձեզի քարոզեցինք, այսինքն, զոր։
Կրաւորական. Որ մեզմով ձեզի քարոզուեցաւ.
Ներգործական. Սուրբ Հոգին նորոգելով զանիկա.
Կրաւորական. Անիկա Սուրբ Հոգւով նորոգուած է.

## Չէզոք Բայք և Դերբայք։

186. Չէզոք Բայերն սովորաբար Հայցական խնդիր չեն ունենար (71), այս պատճառաւ երբոր Ներգործական Բայ մ' առանց սեռի խնդրոյ է, չէզոքաբար առնուած կըսուի. զորօրինակ.

Միշտ կուտեն։ Ոչ կտեսնեն ո՛չ ալ կլսեն։

Այս օրինակներուն մէջ, Կուտեն, Կտեսնեն, Կլսեն, Ներգործական Բայերն առանց գործողութեան առարկայի, այսինքն, առանց Հայցականի, լոկ ուտելու, տեսնելու, լսելու, գործողութիւնը ցուցնելու համար՝ չէզոքաբար առնուած են։

187. Կրաւորական բայերն ալ շատ անգամ չէզոքաբար կառնուին, և այնատեն Բացառական խնդիր չեն ունենար. զորօրինակ.

Անոր երկու որդիքն ալ սպաննուեցան։
Երկնից թագաւորութիւնն ուժով կառնուի։
Որոմը կժողվուի ու կրակի մէջ կայրի։

Այս օրինակներուն մէջ սպաննուեցան, կառնուի,

կծկծուի, կայծէ, բայերն ալ ըլլալ մը կնշանակեն, անոր համար Կրաւորական չեն՝ այլ Չեզոք:

188. Ինչպէս որ Հայցական հոլովը Ներգործական Բայերուն սեռի խնդիր կկոչուի, ասանկ ալ ուրիշ հոլովներն, ինչպէս, Ուղղականը, Տրականը, Բացառականը, Գործիականն և Նախադրութիւններ իրենց խնդրովը մէկտեղ, ամէն տեսակ Բայերու խնդիր են. օրինակ.

Քեզ փարաւոնին տուած ըլլի:
Թագաւոր օծուելով:
Այս ճամբին պէս նրան կորեցաւ:
Քեզի կիմացնեմ:
Աչերդ դեղ դիր:
Քաղաք գնացած տունը:
Անոնց մէկէն պիտի չուտէք:
Անոր կեանքը երկրէն կվերցուի:
Հօրմէն եկայ:
Իմ անունովս ինչ որ խնդրէք:
Ծանրագին իւղերով կօծուին:
Ծառայեցէք Տէրոջն ուրախութեամբ:
Զանոնք իմ ձեռքերուս վրայ վերակացու դիր:
Քրիստոսի համար չարչարուիլը:
Մեր հետ եկու:

} Տրական խնդիր:

189. Քանի մ՝ անուններ կամ Դերբայներ՝ երբոր նոյն հոլովով մէկ բայի խնդիր են, երբեմն միայն վերջինը պէտք եղած հոլովը կդրուի, ու առջինները Ուղղական կմնան. օրինակ.

Որ հեռուն շատ գեղեցիկ լեռնային երկիր մը կար, անտառներ՝ այգիներ՝ ամէն տեսակ պտուղներ՝

Ծաղիկներ՝ ողկոյզներ և պտուղներով զարդա-
րուած . այսինքն , անտառներով, այգիներով, դա-
շտերով, ծաղիկներով, ողկոյզներով։
Խորհիլ , կարդալ , գրելով իմաստուն կըլլայ մարդ .
այսինքն , խորհելով, կարդալով՝
Եկած գնացածին աղէկ նայիս . այսինքն , եկածին ։

190 . Յօդով յոգնակի Բացառական խնդրոյ տեղ Սեռական կգործածուի, բայց սխալ է , ու պէտք է չհակուիլ . զորօրինակ .

Հազիւ թէ ձեռքերնուն փրցուց ։
Ձայներնուն ճանչնալով ․
Գլխուն ճամբեր են ․
որ պիտի ըլլայ շիտակը , ձեռքերնէն , ձայներնէն , գլխէն ։

## ԳԼՈՒԽ Գ.

### ԲԱՑԱՅԱՅՏԻՉ ԵՒ ԲԱՑԱՅԱՅՏԵԱԼ

191 . Բացայայտիչ կըսուի այն բառն՝ որն որ ուրիշ բառ մը աւելի յայտնի ճանչցնելու կամ ուրիշներէն որոշելու համար՝ անոր քովը կդրուի , և միւսն ալ կըսուի Բացայայտեալ . զորօրինակ . Դաւիթ Թագաւոր . Յորդանան գետ ։

Դաւիթ , Յորդանան , Բացայայտիչ են . և Թագաւոր , գետ , Բացայայտեալ ։

192 . Բացայայտիչ և Բացայայտեալ կըլլան Անուն ,

Դերանուն, գոյականաբար առնուած Մակդիր անուան, երբեմն Բայ ու Մակդիր բայի, երբեմն ալ ամբողջ խօսք մը։ Այս վերջիններուն օրինակներն միայն հոս դնենք։

Այս հիւանդութիւնն ամենատեն ցերեկ գիշեր զիս կնեղէ. Մակբայ Մակբայի։
Չէր տոյն երկնից Տէրոջ պատուէրն՝ ագահութեան յաղթելու զօրաւոր խօսք մըն է. Ամբողջ խօսք Բացայայտիչ։

193. Բացայայտիչն երբոր նախադաս է Բացայայտեալին՝ ու անմիջապէս քովը, անփոփոխ կմնայ, Բացայայտեալն ինչ թիւ և հոլով որ ըլլայ. զորօրինակ.
Մեծն Լեւոնէն. Աշխէն թագուհւոյն. Նոյն ծառաներուն Կիրակէ օրերն։

194. Երբոր Բացայայտիչն յետադաս է, թէ՛ մօտ ըլլայ և թէ հեռու, համաձայն կըլլայ միշտ հոլովով և թուով. զորօրինակ.

Յովսեփի որդւոյն Մանասէի տոհմէն։
Հապա Տէրոջն Իսրայէլի Սուրբին պիտի ապաւինիս։ Ներէ ինձի ծառայիդ։
Ձեզմէ շինողներէդ անարգուած։
Որուն մօտենալով այն կենդանի քարին։
Ինձմէ Սամարացի կնկէ մը։

195. Բացայայտչին հետ մեկնական բառեր երբեմն յայտնապէս կդրուին. զորօրինակ.

Այս երեք հարուածներէն մարդոց երրորդ մասը մեռան, այսինքն, կրակէն ու ծուխէն ու ծծմբէն։
Նոր Պղատոնէն՝ ըսել կուզեմ իմ վարդապետէս։
Բայց եղբն իր փափաքը լցուեցաւ Աստուծոյ սահմանած այն միմիայն սովորական ընթացքովը, այսինքն, Աստուծոյ խօսքն ու իր սիրտը քննելով։
Ինքզինքնիդ զգոյշ պահեցէք փարիսեցւոց խմորէն, որ է կեղծաւորութիւն։
Խօսք ցամքեցաւ, որ ըսել է մեռաւ. Նայ Նայի Բացայայտիչ։

196. Մարդու և ուրիշ անուններն Բացայայտիչ կըլլան նաև անուն կամ անունով բառով մեկտեղ՝ միշտ անփոփոխ մնալով. օրինակ.

Սիմոն անուն կաշի բանողի մը տունը։
Ծիրանավաճառ կին մը Լիդիա անուն.
"Ասիկա վերջին անգամն է" անունով տետրակը կարդալէն։

197. Երբեմն Բացայայտիչը Սեռական հոլով կը դրուի Բացայայտեալին՝ Յատկացուցչի պէս. օրինակ.

Հաւատքին վահանն առէք. Հայոց ազգը. [illegible] անապատէն անցած ատենս. Մովսէս ամսէն եղբըր։ Որ կիմացուի, այն վահանն որ հաւատքն է. այն ազգն որ է Հայն. եւն.

198. Թէ որ Բացայայտեալն Նախադրութեան խնդիր է, պէտք չէ կրկնել Նախադրութիւնն երկուքին ալ. բաւական է միայն մէկուն հետ դնել, թէ՛ Բացայայտիչ ըլլայ և թէ Բացայայտեալ. ինչպէս.

Դէպ յԵրուսաղէմ Սուրբ քաղաքը ճանբայ ելանք ։
Քու ծառայիդ Դաւթին հետ ,
Առանց Յիսուս Քրիստոսի մեր միակ միջնորդին ։

---

## ԳԼՈՒԽ Գ

### ՄԱԿԴԻՐ ԱՆՈՒԱՆ ԱՆՈՒՆԻ ՀԵՏ

199 · Մակդիր անուան , որ ըսել է Անուան վրայ դրուող , միշտ գոյականի հետ գործածուող , առանց գոյականի ալ կրնայ գործածուիլ · որ անատենը գոյականաբար առնուած է ըսինք , թէ և միշտ գոյական մը զօրութեամբ կիմացուի հետը · զորօրինակ ·
Մեծը պզտիկին պիտի ծառայէ · այսինքն , մեծ եղբայրն պզտիկ եղբօրն ։

200 · Մակդիր անուանն ընդհանրապէս Անունէն առաջ ու անմիջապէս քովը կդրուի անփոփոխ , առանց նայելու Անուան թուոյն և հոլովին · զորօրինակ ·

Իմաստուն կնիկներ ·
Աստուծոյ կենդանի ու մշտնջենաւոր խօսքովը ·
Սուրբ մարգարէներուն ։
Սրբատաշ , մեծամեծ , գեղուն ու սեւ քարերով ·

201 · Անունը շատ անգամ Մակդիր անուանի տեղ կգործածուի · զորօրինակ ·
Երկաթ մարդ · Արծաթ գդալ · Ասեղէն խօսք · Քար սիրտ · Տաղանդի տէր մարդ ։

202 · Չափ , տեսակ , և ասոնց պէս նշանակութիւն

ունեցող գոյականներ Թուականներու և Անորոշ Դերանուններու հետ մէկտեղ ընդհանրապէս իբրեւ Մակդիր անուան կըլլան . զորօրինակ .

Մէկ դրամ ծծումբ . Մէկ մղոն ճամբայ . Քանի կաթիլ գինի . Այն տեսակ Թռչուններէն . Գրպանի մ' աւետարան . Ինչ աստիճան պատիւ ունէր ։

203 . Նոյն մտքով կգործածուին ոմանք կրկնուած Անուններ . ինչպէս .

Գունդ գունդ զօրքերով . Տեսակ տեսակ* ապրանքներ ։

204 . Մակդիր անուան կըլլան նաեւ Ցուցական Դերանուններն , Այս , այդ , այն , սա , դա , նա , և Անորոշ Դերանուններն , ինչ , մը կամ մըն , որ , քանի մը , ուրիշ , միւս , ոմանք , իւրաքանչիւր , ամէն , նոյն ։ Նաեւ Անցեալ ու Ապառնի Դերբայներն իբրեւ Մակդիր անուան կգործածուին Գոյականի հետ . զորօրինակ .

Քանի բանուորներ , ինչ լեզուով , ուրիշ ոչխարներ ալ , միւս աշակերտներն , ոմանք հեղինակներ , իւրաքանչիւր տուն , ամէն Թագաւորութիւն , նոյն փառքով , այս պատուէրս , նա անպիտանը , այդ ծառաներէն . [illegible] անուն մը , [illegible] խօսքս ։

205 . Անորոշ Դերանուններուն մէջ մինակ մը յետադաս Մակդիր կըլլայ միշտ՝ եզակի անուան . զորօրինակ .

Մարդ մը , Խօսքով մը , Սուրբ հրեշտակէ մը ։

---

* Ասոնք թէ որ կից գրուին գունդգունդ , տեսակտեսակ իբրեւ բարդ Մակդիր անուան , աւելի շիտակ է ։

206. Մէկ և մը շատ անգամ մէկտեղ կգործածուին միեւնոյն Անուան հետ, առաջինը նախադաս, մանաւանդ երբոր խօսքը մասնաւորած է. զորօրինակ. Եղբայրս մէկ տուն ունի, կըսուի. բայց մասնաւոր կերպով խօսելով, աւելի վայելուչ է ըսել, Ես ինչու մէկ տուն մը չունեցի.

Ինձի մէկ եղէգ մը տրուեցաւ։
Մէկ հարուածով մը։

207. Անուններ և գոյականաբար առնուած Մակդիր անուններ պարզ Թուականներու հետ ընդհանրապէս եզակի կգործածուին. զորօրինակ.

Երկու մարդ տաճարն ելան.
Որ ունէր եօթը գլուխ և տասն եղջիւր։
Հազար մղոն ճանբայ գնաց։
Տասը լծավար այգի։
Տասնուերկու կողմ լեցուն։

Ուստի խորթ է ըսել եօթը գլուխներ, հարիւր մղոններ. և բնաւ չըսուիր տասը լծավարներ, տասնուերկու կողմներ*։

208. Բայց երբոր ուրիշ ածական Դերանուն մ'ալ հետը Մակդիր ունենայ նէ, վայելչաբար յոգնակի կը դրուի Անունը. զորօրինակ.

---

* Մեր գրաբարին մէջ ալ ընդհանրապէս սանկ կգործածուի երբոր յետադաս է Անունը. զորօրինակ. [illegible]. Զեօթն օր և զեօթն գիշեր. [illegible]. [illegible]. [illegible]։

Երբոր մեր տան աշակերտներն լսեցին։
Այս երկու ընկերներէն զատ՝ ուրիշ երկու օգնա-
կաններ ալ ունէր հետը։

209. Ոե կամ ո, Անորոշ Դերանունն՝ է Իային հետ եւով կապուած՝ Սակդրի պէս Անուան հետ կը գործածուի. ու կնշանակէ, ամէն ինչ. զորօրինակ.

Ո՛րեւէ կացութեան մէջ կրնաս երջանիկ ըլլալ։
Ո՛եւէ պաշտօնեայ մը հաւատարիմ և գործունեայ։

---

# ԳԼՈՒԽ Ե

## ԿՈՉԱԿԱՆ

210. Կոչական կըսուի այն բառն՝ որ կցուցնէ անձ մը կամ անձնաւորեալ իր մը. առ որ խօսք մ՝ ուղղուած է. զորօրինակ.

Սիմոն, քեզի բան մ՝ ունիմ ըսելու։
Որդեակ, այս ի՞նչ բան էր որ դուն մեզի ըրիր։
Իրաւէկամ, վեր ելիր։
Բժիշկ, քու անձդ բժշկէ։

211. Կոչականն Հայերենի աշխարհաբարին մէջ շատ անգամ ո՛վ և ո՛յ բառերուն հետ կգործածուի. զորօրինակ.

Ո՛վ Իսրայէլացի մարդիկ, ինչո՞ւ զարմացեր էք ասոր
վրայ։

Ո՛վ անհաւատ և մոլորեալ ազգ, մինչեւ ե՞րբ հետերնիդ պիտի ըլլամ ։

Ո՛վ անխելքներ ու սրտով ծանրածներ հաւատալու ։

Ա՛յ անզգամ, ինչպէս համարձակեցար այս բանն ընելու ։

Ա՛յ խեղճ ծնող, ետքը պիտի ողբաս անհոգութեանդ վրայ ։



# ՅԱՒԵԼՈՒԱԾ

## ՈՒԹ ՄԱՍԱՆՑ ԲԱՆԻ ՎՐԱՅ ԳԻՏԵԼԻՔ ՉԱՐԳԱՑԵԼՈՑ ՀԱՄԱՐ

### ԳԼՈՒԽ Ա

#### ԱՆՈՒԱՆ ՎՐԱՅ

212. Անանկ անուններ կան որ եղական ձայնով շատուորութիւն կցուցնեն, ու հաւաքական կըսուին. զորօրինակ. Ազգ, Հօտ, Բանակ:

213. Անուններն կրկնուելով երբեմն ամէնմէկ կը-նշանակեն. զորօրինակ.

| | | |
|---|---|---|
| Տուն տուն, | այսինքն, | ամէն մէկ տուն |
| Գեղ գեղ, | " | ամէնմէկ գեղ |
| Դուռ դուռ, | " | ամէնմէկ դուռ |

214. Երբեմն շատ կամ այլ և այլ կնշանակեն. զոր-օրինակ.

| | | |
|---|---|---|
| Գունդ գունդ, | այսինքն | շատ գնդեր. |
| Կարգ կարգ, | " | շատ կարգեր |
| Տեսակ տեսակ, | " | այլեայլ տեսակ |
| Տեղ տեղ, | " | այլեայլ տեղ |

215. Միավանկ բառերն որ էր յոգնակի շինող մասնիկ կառնուն և ոչ նէր, անոնք բարդութեան *

* Բառից բարդութեան վրայ տես Ստուգաբանութեան գըլխոյն մէջ. Մասն Դ.

մէջ ալ նոյն մասնկով յոգնակի պիտի ըլլան . զորօրինակ . Գիր, լրագրեր . Շունչ, աստուածաշնչեր . Տէր, տանուտէրեր :

216 . Կան բառեր որ գրաբարի մէջ անեզական են, այսինքն՝ մինակ յոգնակի կհոլովին . նոյն ձեւով աշխարհաբար լեզուին մէջ կգործածուին . որ շիտակն այն է . զորօրինակ . Փառք, փառաց, փառօք . Կարծիք, կարծեաց, կարծեօք . Գիրք, գրոց : Երկինք, երկնից . ռամկական է ըսել, գիրքի . փառքի, եւն .

217 . Երբեմն Անուններուն թէ՛ եզակի և թէ յոգնակի Սեռականներն կամ Գործիականներն գրաբարի ձեւով հոլոված կգործածուի աշխարհաբարի մէջ . զորօրինակ .

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Եզ . | Կաթ | Սեռ . | կաթին | | |
| | Կայսր | „ | կայսեր | | |
| | Եսայի | „ | Եսայեայ | | |
| | Կերպ | . | . | Գործ . | կերպիւ |
| | Տէր | „ | տեառն | „ | տերամբ |
| Յոգն . | Տեարք | „ | տեարց | | |
| | Հարք | „ | հարց | | |
| | Եղբարք | „ | եղբարց | | |
| | Ոտք | „ | ոտից * | | |
| | Վարձք | „ | վարձուց | | |

218 . Յատուկ Անուններն սովորաբար յոգնակի չունին, բայց երբեմն այն անուններն ունեցողներն կամ նմաններն ըսել պէտք ըլլայ նէ, յոգնակի կըլլան ու կհոլովին . զորօրինակ . Յուդայ, Յուդաներ . Սիմոն, Սիմոններ . Գրիգոր, Գրիգորներ :

* Ոտքին եզակին աշխարհաբարի մէջ չգործածուիր, ինչպէս յետքինն ալ, որ է, ոտն, յետն :

219. Երբեմն Անուններն ու Մակդիր անուան-ներն ալ մասնիկով մը յոգնակի կըլլան, ու անկէ մասնաւոր Սեռական մ՚ ալ կունենան ոմանք. զորօրինակ.

| Եզ. | Յոգն. | Սեռ. | Բաց. |
|---|---|---|---|
| Կնիկ | կնկտիք | կնկտոց | կնկտոցմէ: |
| Քոյր | քրուըտանք | քրուըտոց | քրուըտոցմէ |
| Մարդ | մարդիկ | մարդկանց | մարդկանցմէ |
| Կին | կանայք | կանանց | |
| Գիրք | գրեանք | գրեանց | |
| Անձ | անձինք | անձանց | |
| Աղջիկ | աղջկունք | աղջկանց | |
| Մանուկ | մանկտիք | մանկտեաց | |
| Տեղ | տեղուանք | | |
| Վանք | վանորայք | | |
| Աւագ | աւագանիք | | |

220. Գործիական և Բացառական հոլովներն՝ իբրև Մակդիր անուան Անուան հետ, և իբրև Մակդիր բայի Բայի հետ շատ կգործածուին. զորօրինակ.
Համով կերակուր, Խելօք տղայ, Քարէ սանդուխ, փայտէ աման, Ճամբով պիտի գայ, Մեղմով յորդորել, Ուրախութեամբ կվկայեմ, Հեռուէն լսեցի, Իրաւ հաւտացինք: Ասանկներուն ածանցեալ* ըսելն աւ շիտակ է քան թէ հոլովեալ:
221. Հոլովեալ Անուն մը կրկին կրնայ հոլովիլ, Սեռականներն շատ անգամ. զորօրինակ.

Թէ՛ առաջին և թէ երկրորդ Կարգիններէն:

* Տես Ստուգաբանութեան գլխոյն մէջ, Մասն Դ:

Մարդերնուդը կպարծենայ :
Խաչի ձեռովին նոյնը չինէ :

222 · Սեռականը կրկին կհոլովի ն կամ ը յօդ առնելով զորօրինակ · Իմինէ , իմինինը , իմինինին , իմինինէն , իմինինով :

---

## ԳԼՈՒԽ Բ

## ԴԵՐԱՆՈՒԱՆ ՎՐԱՅ

### ա · Անձնական Դերանուն

223 · Ես, դուն, մեք, դուք, Անձնական դերանուններն՝ և նա , անոնք, ցուցականներն ինքն Դերանունով իրենց Մակդիր բայիւ և անձամբ Անունով մէկտեղ կգործածուին այսպէս · Ես ինքս կամ ինքնին , դու ինքդ, նա ինքն , մեք ինքնին , դուք ինքնին , անոնք ինքնին , ես անձամբ , դու անձամբ :

224 · Այսպէս ինքն Դերանունն իբրև Մակդիր անուան կգործածուի անուններու հետ բուն ըսելու տեղը. ինչպէս ·

Ինք Թագաւորն հրաման ըրաւ ·
Գրագիրն ինքն ստորագրեց ·
Որ ըսել է , բուն Թագաւորն , բուն գրագիրն :

### բ · Անորոշ Դերանուն

225 · Այլ անորոշ Դերանունը կգործածուի ինքն

և սա, այդ, այն, Դերանուանց հետ այսպէս ՝ Նոյն ինքն, սա նոյնը, այդ նոյնը, այն նոյնը, կամ նոյն անձը։

## Է. ՈՐ ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ

226. Յարաբերական Դերանունն յառաջմնէ ըսուած բառն և խօսք ալ յառաջ կբերէ, որ անիկա կըսուի յարաբերեալ, ու անկէ ետքը կդրուի անմիջապէս քովը՝ բոլոր իրեն վերաբերեալ բառերովը, թըւով ընդհանրապէս համաձայն անոր, սակայն հոլովով ինչ որ իր Բայն կամ Անունը կպահանջէ. և սովորաբար իրմով կապուած խօսքին սկիզբը կդրուի. զորօրինակ.

Աստուծոյ որ ամենուն դատաւորն է։
Գառնուկն որ աթոռին մէջն է, պիտի հովուէ զանոնք։
Չէ՞ որ մեղանչողներէն՝ որոց ոսկորներն անապատին մէջ ինկան։
[illegible], որոնց կըհետեւի մեծ հարուածներ ու պատուհասներ։
Փառք [illegible], որն որ մեծ աշխատութիւն է։

227. Բայց կըլլայ որ Յարաբերականը քիչ կամ շատ բառերով Յարաբերեալէն հեռու կմնայ, ու իրմով կապուած խօսքին մէջ տեղն ալ կդըրուի երբեմն ուղղական հոլով. զորօրինակ.

Երկնից մէջ զԱստուած կփառաբանեն՝ որ դատեց պոռնիկը։
Երանելին [illegible], թագաւորներուն

թագաւորն ու տէրերուն Տէրն , որ ինքը միակ ունի անմահութիւն՝ անմերձենալի լուսոյ մէջ բնակած , որն որ մարդոցմէ մէկը չտեսաւ , ոչ ալ տեսնելու կարող է , որուն պատիւ և զօրութիւն յաւիտեանս . ամէն ։

Հաւատքով Նոյ պատգամ առնելով Աստուծմէ՝ դեռ չերեւցած բաներուն համար , վախնալով տապանը շինեց իր տունը փրկելու համար . որով աշխարհս դատապարտեց ։

Օրէնքը չորս հարիւր տարիէն ետքն որ տրուեցաւ , չկրնար խափանել . այսինքն , օրէնքը որ չորս հարիւր , եւն ։

228 . Շատ անգամ յոգնակի մտքով եզակի կըգրուի , մանաւանդ Ուղղական և Հայցական հոլովներն . զորօրինակ .

Վկայ ըլլալու այն բաներուն որ տեսար . այսինքն զորոնք .

Եւ Ղեւեայ որդիներէն եղածներն որ քահանայութիւն կառնուն . այսինքն . որոնք ։

229 . Ուղղական որ՝ սովորաբար ամէն հոլովի տեղ կբանի , ու շատանգամ ետեւէն պէտք եղած հոլովովը Դերանուն մը կաւելցուի . զորօրինակ .

Օրհնեցէք զանիկա որ անոր անունովը փրկուեցանք . այսինքն . որուն անունովը ։

Ամէն կերակուր որ սիրտդ չզարշիր անկէ , առանց խտրութիւն ընելու կեր . այսինքն . որմէ սիրտդ չզարշիր ։

Այն բաներուն մէջ որ իմ խղճմտանքես չեմ

դատապարտուիր, ազատութեամբ կգործեմ. այսինքն որով*։

230. Որ Յարաբերականին յարաբերեալն կամ անոր Բացայայտիչը շատանգամ ինչ հոլով որ պիտի գրուի, այն չգրուիր, հապա Ուղղական կմնայ, ու շատ տեղ բուն իրեն գրուելիք հոլովովը այն դէմքին Դերանունը կաւելցուի։ Ճիշդ անոր նման, ո՛ր որ, ի՛նչ որ, ով, ով որ, Անորոշ Դերանուններուն յառաջ բերած Անուններն ալ, որոնք շատ տեղ Յարաբերականի զօրութիւն ունին. զորօրինակ.

> Քանզի այն Մովսէսն որ մեզ Եգիպտոսի երկրէն հանեց, չենք գիտեր ինչ եղաւ անոր։

որ պիտի ըլլայ. այն Մովսէսին. որովհետեւ Յարաբերականն իրեն վերաբերեալ մասերովը միջանկեալ խօսք մ՚ է, որ զատելով, գլխաւոր խօսքն է, Քանզի այն Մովսէսն չենք գիտեր ինչ եղաւ անոր. յայտնի կըլլայ թէ պիտի ըլլայ, այն Մովսէսին չենք գիտեր ինչ եղաւ. և անոր աւելորդ գրուած է։

Այսպէս են հետեւեալ օրինակներն ալ.

> Թագաւոր մը՝ որուն ականջն անիրաւութեան խօսքերու բաց է միշտ, անոր քովը գտնուողներուն ամէնքն ալ անօրէն մարդիկ են. այսինքն. Թագաւորէ մը քովը։
> Այն անզգամն՝ որ կյանդգնի ապստամբութիւն յարուցանել, անանկ մարդոյն անունն ալ ջըն-

* Որ, երբոր Յարաբերականի զօրութիւն ունի, շաղկապ չըսուիր, ինչպէս որ տեսար վերի օրինակներուն մէջ. Տես Տարերք Քեր. Թու. 630—637։

ջնցէք. որ կիմացուի, անանց մարդոյն այսինքն այն անձանցն ։

Եւ մեր ազգն՝ որուն շատ կերպով, ինչպէս մօտաւորութեամբ՝ լեզուագիտութեամբ . . . աւելի դիւրին է, և ոչ մտքերնին կպլտըտի Հայաստան. այսինքն, մեր ազգին մտքերն ։

Մայրն կամ Եղբէն, որն որ նաՀատակուէր, երկինքն անթառամ պսակ պատրաստուած էր անոր. այսինքն, մօրն կամ եղբօրն ։

Նեղութեան, Հալածանք և զրկանք, ինչ որ քաշեցինք, ո՞ւր մօտ է ազատութիւնը. այսինքն, Նեղութեան, Հալածանքին և զրկանաց ազատութիւնը ։

Աշխատաւորն կամ գործէնք, ... կամ ... , ով որ Հաւատայ, անոր միայն փրկութիւն խոստացուած է. այսինքն, աշխատաւորին կամ գործէնքին, ... կամ ... ։

Եղբայրը, քոյրը, մայրը, ո՞վ տեսնեմ նէ, բանն եղածին պէս պիտի պատմեմ. այսինքն, եղբօրը, քրոջը, մօրը պիտի պատմեմ ։

---

## ԳԼՈՒԽ Գ

### ՅՕԴԻ ՎՐԱՅ

231 . Այս գրերն, ս, դ, ն, ինչպէս որ առաջին մասին մէջ ըսինք, ցուցական յօդ կըսուին. և բուն Յօդերն այս երեքն են ։ Բայց որովՀետև բաղաձայն վերջնատառ ունեցող բառերուն ն յօդն ը կՀընչուի, և աշխարՀաբարի մէջ ընդՀանուր է ը վերջացած բա-

ներուն նուն չհնչել · ինչպես , Հէծ , Խործանուն , սո-
վորաբար կըսուի , Հէմ , Խործանում , կամ Հէմը , Խործա-
նումը ։ Ուստի , Լուսինն պայծառ է , Եղանակն ցուրտ
է , ըսելու տեղը , Լուսինը պայծառ է , եղանակը ցուրտ
է կըսուի · ու այսպես չորրորդ յօդ մը կըլլայ ը* ։

232 · Ը երբեմն յօդ շատ անգամ կգործածուի ն ի տեղ , բայց առ կանոնով . երբոր յօդ առնելու բառին վերջնատառն ձայնաւոր կամ նայ գրերէն ւ կամ ղ ե ր կամ — ըլլայ , կամ անոր հետեւեալ բառին սկզբնատառն ձայնաւոր , և կամ հ և յ գրերն ըլլան , որ ատոնք ալ ճիշդ բաղաձայն չեն , այն ատեն վայելչապէս ն յօդ պէտք է դնել , և ոչ ը · զորօրինակ ·

Ոչ Եղիան և ոչ Մարգարէն .
Ամէն օր անոր զուարճութիւնն էի .
Ուրախութիւն լրերուն ազգասիրաց սիրտը բերկրեցնելու .
Ինքնակալին բարձր հաւանութիւնն ստանալով .
Մէկն որ մեր վիճակն հասկնայ .
Խորագէտն յարմար ժամանակը կգիտէ .
Առանկ ըլլալն չէր գիտեր .
Ունայնութիւն ունայնութեանց բսաւ Ժողովողն .
Անգգամներն խրատը կարհամարհեն .
Պատուաբեր է այս ծառն ։

Այս կանոնով ը՛ հնչումը և վանկ մը կպակսի ու լեզուն արագութիւն կառնու ։ Բայց մենք կյուսանք թէ քանի որ աշխարհաբար լեզունիս զտուի և կոկուի , բուն Յօդը պիտի գործածուի միշտ ն միայն ։

233 · Այս յօդերն Էական և Ցուցական Դերանուններու ոյժ ունին , ինչպես որ օրինակներուն մէջ պիտի տեսնուի ետքը ։

Բայց երբոր յոգնակի մեր , ձեր , նոցա կամ իրենց , նշանակութիւնով պէտք ըլլայ գործածել , այն ատեն նէ մասնկին հետ կմիանան , որ կըլլայ , նէս , նէդ , նէն . ու այնպէս եզակի և յոգնակի անուններուն վերջը կդրուին , բայց իմիավանկ բառերէն , որոց

* Տես Ուղղագրութեան գլխոյն մէջ Յօդերու վրայ , Մասն Գ ։

նոյն Յօդերն առած ատեննին կաւելցուի յոգնակա-նացուցիչ եր մասնիկ , ու այնատեն թէ՛ եզակի և թէ յոգնակի մէջ կունենան . զորօրինակ ։

Աշկերտնիս , ըսել է , մեր աշկերտը ։
Ծառանիդ , ըսել է , ձեր ծառան .
Տներնին , ըսել է , անոնց տունը կամ տներն .
Տէրերնիս , մեր տէրն կամ տէրերն կնշանակէ ։
Ասանկ համանկացեալ յօդ ունեցող բառերու հոլովմանն օրինակ մը տանք .

Յոգնակի

Ո . Աչքերնիս , աչուըննիս
Հ . Աչքերնիս , աչուըննիս
Ս . Աչքերնուս , աչուըննուս
Տ . Աչքերնուս , աչուըննուս
Բ . Աչքերնէս
Գ . Աչքերովնիս

Այսպէս կհոլովին

Աչքերնիդ կամ աչուըննիդ , աչքերնուդ , աչքեր-նէդ , աչքերովնիդ .
Աչքերնին կամ աչուըննին , աչքերնուն , աչքեր-նէն , աչքերովնին ։

234 . Յօդերն , ինչպէս որ ըսուեցաւ , շատանգամ իմ , քու , անոր կամ իր . ես , դուն , այս , այդ , այն , Դերանուններն կցուցնեն . զորօրինակ .

Ձեռքէդ պիտի բռնեմ . այսինքն քու ձեռքէդ ։
Երկնցած բազուկովս . այսինքն իմ բազուկովս ։

Որ չըլլայ թէ գայ՝ զարնէ զիս, ու մայրն տղաքնե-րովը․ այսինքն, իր կամ անոր տղաքներովը։
Լսէ մեղաւորիս ձայնին․ այսինքն, իմ ձայնիս որ մե-ղաւոր եմ։
Մէնքս քու ծառաներդ ենք․ այսինքն, մենք ա-մէնքս։
Մենուդ կըսեմ․ այսինքն, ձեզի ամենուդ։
Երկիրս բարիքներով լեցուն է․ այսինքն, այս եր-կիրս։
Գեղիդ օդը ինչպէս է․ այսինքն, քու գեղիդ։
Արաբացի Թուսին հանդերձներն պատռած, ու գլխուն վրայ հող դրած․ այսինքն, այն Թուսին, իր հանդերձներն, իր գլխոյն։

235․ Նմանապէս անուն ալ կցուցնէ․ զորօրինակ․

Ծեր դալար փայտին ասանկ կընեն, հապա չո-րին ինչ պիտի ըլլայ․ այսինքն, չոր փայտին։
Ինչո՞ւ Յովհաննեսին աշակերտներն շատ անգամ ծոմ կպահեն, և քուկիններդ կուտեն ու կխմեն․ այսինքն, քուկին աշակերտներդ
Մէկն հին գինին խմելէն ետեւ անմիջապէս նորը չուզեր․ քանզի կըսէ՝ թէ հինն աւելի ախոր-ժելի է․ այսինքն, նոր գինի, հին գինին։

236․ Ն, և ը, յօդերն յատուկ որոշող յօդեր են․ այսինքն, կդրուին չէթէ միայն անոր նշանակելու հա-մար, այլ շատ անգամ այն անուան, որ առաջուց յայտնի է կամ խօսուեր է վրան։

Ինչպէս երբոր անյայտ և անորոշ տկի, ջրի և տղու վրայ խօսուի, կըսուի,
Տիկ մը ջուր առաւ․ Որ տղայ պիտի սնուցանէ։

Բայց երբոր մէկմը առաջուց խօսուած կամ գիտցուած տկին, ջրոյն ու տղուն վրայ նորէն խօսուի, կըսուի .

Տկէն ջուրն հատաւ . Եւ տղան մեծցաւ ։

237 . Ս և Ն կամ ը Յօդերն աշխարհաբարի մէջ երբեմն ոչ Դերանուն և ո՛չ Անուն կցուցնեն, այլ միայն վայելչութեան համար կդրուին անանկ բառերու, որ անձերուն կամ իրերուն բոլոր սեռը կամ տեսակը կցուցնեն . զորօրինակ .

Մարդս պատւոյ մէջ էր ու չգիտցաւ .
Գինին ուրախ կընէ, իւղն զուարթ .
Մրջիւնն աշխատասիրութեան օրինակ է, գառն ու աղաւնին հեզութեան ու խոնարհութեան .
Անզգամներն խրատը կարհամարհեն .
Իմաստութիւնն իր տունը շինեց .
Սիրտը չոր ու խաբեբայ է ։

238 . Անանկ յօդ ունեցող անուններն կըսուին որոշեալ անուն, ինչպէս չունեցողներն կըսուին անորոշ ։

239 . Յատուկ անուններն մանաւանդ մարդու անուններն ինքնին որոշեալ ըլլալով, սովորաբար առանց յօդի կըսուին իբրև Տէր բայի · զորօրինակ .

Ու Եզեկիա նամակը դեսպաններուն ձեռքէն առաւ .
Պօղոս մտքը դրաւ որ · Ան մեծ քաղաք մ'է .
Ու Երուսաղէմ ազգերուն ոտից կոխան պիտի ըլլայ .

240 . Բայց իբրև Խնդիր միշտ յօդ կպահանջեն, մանաւանդ Հայցականներն . զորօրինակ .

Բռնեցին Յիսուսը. Գտանք Մեսիան.
Մարկոսը առնես քու հետդ բերես.
Ետքն ըսաւ Թովմասին.
Եւ շատ ժողովուրդ իր ետեւէն կերթային՝ Գալիլեայէն ու Դեկապոլիսէն եւ Երուսաղէմէն, ու Հրէաստանէն, եւ Յորդանանին մէկալ կողմէն:

241. Ասանկ յատուկ Անուններն կրնան նաեւ յօդ առնուլ իբրեւ Տէր բայլ. Բայց Աստուած, Քրիստոս, Յիսուս, ընդհանրապէս առանց յօդի կըսուին.

Սկզբէն Աստուած երկինքն ու երկիրն ստեղծեց.
Յիսուս տաճարէն դուրս ելաւ.
Քրիստոս մեզ ծախու առաւ օրէնքին գործքերէն. չըլլար բնաւ, Աստուածն ստեղծեց. Յիսուսը դուրս ելաւ, Քրիստոսը ծախու առաւ:

242. Միայն՝ թէ որ բանով մ՚ որոշեալ ըլլան, կամ թէ ազգութիւնով մը ցուցնել ուզենք, նոյն այն, նոյն ինքն, ըսելու պէս, այնատեն կառնուն յօդ. զորօրինակ.

Բոլոր երկրին Աստուածը:
Ու ըսեն թէ ես եմ Քրիստոսը:
Ասիկա Յովսեփին որդին Յիսուսը չէ՞:
Անոր քարոզած Քրիստոսն է որ մենք կըքարոզենք:

243. Մը եւ ինչ անորոշ Դերանուններուն հետ Անուններն յօդ չեն ընդունիր. զորօրինակ.

Աշակերտ մը սովրիլն օգտակար է:
Իշխան մ՚ իր առաքինութիւններուն համար կըգովուի:

Տուն մը շինուեցաւ. Ինչ խօսք էր այն.
չըսուիր, արուեստ մը, ինչ խօսք, ևն։

244. Դերանուն և կամ յօդաւոր Յատկացուցիչ ունեցող Անուններն յօդ կառնուն. զորօրինակ.

Քու ականջդ իմ հանճարիս տուր։
Ձեր ամսագլուխներէն ու տօներէն կզզուի իմ
հոգիս։
Իր որդւոյը։ Անոնց ձեռքերն։
Պատերազմին պտուղը մահ է։
Մարդուս ՝բարկութիւնը։

245. Առանց յօդի Յատկացուցիչներուն յատկացեալներն իբրև անորոշ առանց յօդի, և իբրև որոշեալ յօդ առնլով կըսուին,

Ազնուականի տնէ ելած. Ես ձեզ ծառայութեան տնէն դուրս բերի։
Անիկա Կիլիկիոյ ծով կըսուի. Կիլիկիոյ ու Պամփիլիոյ ծովուն մէջ տեղէն։
Իմաստութեան խօսքեր կխօսէր. Իմաստութեան խօսքերն օգտակար են ընկերութեան։

246. Ես, դու, ինք, Դերանուններուն իրենց մօտն եղած Բացայայտիչը կամ Գոյականն և կամ Մակդիր անուաններն ընդհանրապէս յօդ կառնուն. զորօրինակ.

Ես իմաստութիւնս սրամտութեան հետ կբնակիմ։
Յետիններ ըրաւ մեզ առաջեալներս։
Քեզ Ամենակալ Աստուծոյդ։
Քեզի արդար դատաւորէդ։

Մա՛րդն ի՛նքն ալ զարմացաւ․
Ե՛ս տկարս․ Ի՛նչ մեղաւորիս․ Մե՛նք ամէնքս․
Դո՛ւք առողջներդ․ Ձեզի՛ երկուքիդ։

247․ Քիչ անգամ առանց յօդի կզըրուցուի։

Ես Յովհաննէս ձեր եղբայրն․
Ես Սահակ Մամիկոնեան կխոստանամ․
Պօղոս ինքն ալ կըհաստատէ․

248․ Մակդիր անուան և Անուն մէկտեղ՝ թէ որ յօդ առնուն, ընդհանրապէս Անունին կդրուի յօդը․ զորօրինակ․

Քրիստոսի քաջ զինուորն․
Հիւանդ ծառան բժշկուած գտան․
Հաւատարիմ բարեկամը չխաբեր բնաւ։

249․ Բայց թէ որ յատուկ Անունն յետադաս Մակդիր ունենայ, յօդը միայն Մակդրին վրայ կդրուի, իբր թէ երկուքը մէկ սեպելով, ու Բացայայտչի պէս զօրութեամբ՝ դուն որ ես, այն որ է, էր, եւն, իմացուելով․ զորօրինակ․

Որ էր Ղազարոս մեռեալն․ այսինքն, այն որ մեռեալ էր․
Աբգար Սուրեննեան․
Հօրը քով բարեխօս ունինք Յիսուս Քրիստոս արդարն։
Աստուծոյ ամենակալիդ․ այսինքն, որ ամենակալ ես․
Շմաւոն Նախանձայոյզը։

250․ Քիչ անգամ Նախադաս Ածականին կդրուի յօդը․

Մեծն Աղեքսանդր. Երանելին Յովսէփ.
Սուրբն Աստուած արդարութենով պիտի փառաւորուի:

251. Դոյականաբար առնուած Մակդիր անուանները ընդհանրապէս յօդ կառնուն. զորօրինակ.

Թէ որ արդարն դժուարաւ կփրկուի, հապա ամբարիշտն ու մեղաւորն ո՞ւր պիտի երեւի.
Մեծ է ամէն բան ստեղծողն, որ յիմարին վարձք կուտայ, և յանցաւորներուն վարձք կուտայ.
Աղքատին տուողն կարօտ չըլլար.

252. Այս, այդ, այն, աս, դա, նա, Դերանուններուն հետ Անուններն միշտ յօդ կառնուն. զորօրինակ.

Այս տեղս պիտի դարձնեմ*. Այդ գործիդ մէջ. Այս ժողովրդին. Այն աղուեսին. Այդ մարդը չեմ ճանչնար. Այս ոճդ. Այն գրուածքս. Այն հարցմանդ պատասխան չտրուեցաւ. Աս տղան, Աս խօսքս մի մոռնար. Աս պատասխանիդ հաւնեցայ. Դա գիրքս բեր. Դա գլխանոցդ վար առ. Նա թռչունն ինչ գեղեցիկ է:

253. Ինչպէս որ տեսար, Ես Դերանուան ու իր հոլովներուն հետ գրուած Անուններուն յօդը միշտ ս կըլլայ. Դու Դերանուան և իր հոլովներուն հետ գրուած Անուններուն յօդը՝ դ կըլլայ. բայց թէ՛ Ես և թէ Դու Դերանուններուն յոգնակի սեռականներն

* Այսօր կամ ասօր, Այսպիսի, Այստեղ, և ուրիշ ասանկ Անուններ, որ յօդ չեն առած, անոնք իբրեւ Մակդիր բայի են, որ Դերանուան հետ իբրեւ մէկ բառ կից գրուելու են. ինչպէս գրաբարն, այսօր.

իբրեւ Յատկացուցիչ, իրենց Յատկացեալներուն յետը միշտ ՚ն կամ ը կ'ըլլայ ։

254. Ս․․, դ․․․, Դերանուններուն հետ Ինք կամ Ինքն միշտ յետ կ'առնու.

Ս․․ ինքն՝ ալ ինծի պարտք կ'ուզէր.
Դ․․․ ինքնըդ ես իմ թագաւորս.

255. Այական եւ ցուցական Դերանուններն, եւ անորոշ Դերանուններէն, ոմն, ոմն ոք, ինչ ոք, նմանապէս փոխադարձ Դերանուններն՝ բնաւ յետ չեն առնուր. սակայն առաջիններուն սեռականներն երբոր մինակ են եւ ական Նայի քով, սովորաբար յետ կ'առնուն.

Յանցանքն իմս է. այսինքն, իմ յանցանքս է ։
Այդ ձուկներն քուկդ են, այսինքն, քու ձուկներդ են ։
Ժառանգութիւնն սորն էր, անորն եղաւ. այսինքն, սոր ժառանգութիւնն էր*. եւն ։

256. Ստացական Դերանուններն իմ, իմին, քու, քուկին, մեր, մերին, ձեր, ձերին, իր, իրենց, անոր, եւն, միշտ յետ կ'առնուն իրենց բոլոր հոլովներուն ալ. եւ որ Յարաբերականին սեռականն ու տրականը միշտ ՚ն յօդ կ'առնու, ինչպէս տեսար Դերանուան հոլովմանց մէջ. զորօրինակ.

Իմինս պիտի առնու. Քուկինովդ կգործէին.
Իրենին տէր կ'ըլնէր. Անոնցը բան մը չէ.
Որուն գալն. Որուն պատասխանեցի ։

---

* Տղոցը միտքը չշփոթելու համար այս սեռականներն եւ-

257. Իսկ անորոշ Դերանուններն , Ո՞վ, Ով, ամենայն, Ոմն, Մի, Միւս, Իւրաքանչիւր, Նոյն, գոյականաբար առնուած միշտ յոգ կառնուն. զորօրինակ.

Հրուեց ամէնքն ալ.
Ոմն մէկն իր տեղէն ելնելով եկաւ.
Մէկն երբէք զԱստուած տեսած չէ.
Միւսն ելաւ առաւ, նոյնը կըհաստատէր.
Մէկը բանեցին, մէկալն թող տուին.
Իւրաքանչիւրն յաւէտ իր ընկերին շա՛տ կփընտրէր.
Նոյնը խոստացաւ ամենուն ալ.

258. Ոչ Յարաբերականն երբար կրկնուի, և Ով Թուականն որ յարաբերականին հետ, միշտ յոգ կառնուն. զորօրինակ.

Որն որ մարդոյմէ մէկը չտեսաւ.
Մէկն որ բարեկամի յարգը չճանչեր. չըլլար, ոչ ոչ, Ով ոչ.

259. Ընդհակառակն ու ապառնի Դերբայներն իբրև Եալ գործածուած՝ միակ կամ ուրիշ Եալի հետ, բնաւ յոգ չեն առնուր. սակայն որ մերժով անցեալ ու ապառնի Դերբայներն իբրև Անուն գործածուած կառնուն յոգ.

260. Այն Յատկացուցիչներն որ յայտնի Յատկացեալ չունին, և եական Եալի քով ստորոգականներն

---

կան Եալին ինդիր է բոլոր համաձայնութեան մէջ. քանզի երբոր հարցնենք, որո՞ւնն էր. ուղղակի կրնանք պատասխանել, անոր էր. և առոր համար ինդիր ալ կրնանք ըսել. բայց աւելի յիտակ է ըսել, Յատկացուցիչ գործութեամբ Յատկացեալին.

երբեմն կրկին յօդ կառնուն · որուն առաջին յօդն ո_րոշեալ անուն կընէ , և միւսն զօրութեամբ Յատկա_ցեալն կցուցնէ · զորօրինակ ·

Առաջ գտածուրին առակը բացատրէ , ետքն ալ տեսածինը · այսինքն , տեսածին առակը ·
Նստելու տեղն որ գիտէ , խօսելուն ալ գիտէ · այսինքն , խօսելու տեղն ։
Ես իմ սիրականիս եմ · (Երգ երգոց) ·
Այն որ կայսրինն է կայսրին տուէք · այսինքն , սի_րականիս սիրելին եմ · կայսրին սակն է ։

261 · Նախադրութիւններն որ սկիզբը կդրուին , և ետքը՝ գրուածներէն ալ՝ համար , իբր , դէպ · ետէ , դէմ , համեմատ , նման , աւելի * , առաջ , հետէ , ի՞ , յօդ չեն առ_նուր ։ Որիշ Նախադրութիւններն , էմ և ... , Գոյա_կաններուն հետ՝ ... , ... , յօդ կառնուն մէջը · բայց ու_րիշ Գոյականներու , և յօդ ունեցող կամ չունեցող Անուններու հետ բոլոր փոխելութեան կրնան յօդ առ_նուլ կամ չառնուլ · զորօրինակ ·

Իմ հետս · Քու ետևէդ · Մեզի հետ · Մեր հետը · Անոր վրան · Պարգևի տեղ · Մէկզմէ_կու վրայ · Հինգ ժամ հեռուն · Տնէն հեռու · Մարդու քով · Թագաւորին քովը · Թշնամիներուն ետևէն · Օրէնքէն ետքը · Կրակին ետին · Խորանին ներսը ։

* Աւելի բառին չափութիւն է · Աւել նմանը չեմ տեսած · ասանկ խօսքերու մէջ · աւելի նման ,* որ յօդ առած են , յայտ_նի է որ Ածականի անուան են , և իրենց Բայերն Տէր բայի կամ խնդիր են , և չէ Նախադրութիւն ։

262. Երբեմն ինչուիցէ Մասն բանի Անուան պէս առնուելով, ինչպէս որ հոլովով, անանկ ալ յօդով կվարուի. զորօրինակ.

Այոն այո, և ոչն ոչ.
Քանզին բանին պատճառն կցուցնէ.
Աղօթքի ժամանակի վրայով քեզի կանոն ամէն ատենն ու ստէպ ստէպն ըլլայ.
Քու անունդ սուրբ ըլլան՝ բոլոր առաքինութիւններուն հիմն է.
Քու ընկերդ քու անձիդ պէս սիրեան արքունական օրէնք կոչուած է.

---

## ԳԼՈՒԽ Դ

### ԲԱՅԵՐՈՒ ՎՐԱՅ

263. Մակդիր անուաններն ըլլալ բային հետ մէկտեղ իբրեւ մէկ Բայի նշանակութիւնով կրանին այսպէս, Ուրախ ըլլալ, Հեռի ըլլալ, Արժանի ըլլալ. որ նոյն է ըսել, ուրախանալ, հեռանալ, արժանանալ:

Նմանապէս ընել բային հետ մէկտեղ շատանգամ կգործածուին, և ցնել վերջաւորութիւնով ներգործական Բայի նշանակութիւնը կունենան. զորօրինակ. Տխուր ընել. Սուրբ ընել. Արժանի ընել. Հնազանդ ընել. որ ըսել է, տխրեցնել, սրբացնել, արժանացնել, հնազանդեցնել:

264. Չեզոք Բայերն երբեմն Կրաւորականի կազմութեամբ կըսուին՝ յաւէտ երրորդ դէմքերն. զորօրինակ.

Կելնուի , Կմտնուի , Կանցնուի . Այդ ճամբէն չերթուիր . ասոնք չէթէ Կրաւորականի, բայց կարողական եղանակի նշանակութիւն ունին. որ ըսել է, կարելի չէ այդ ճամբէն երթալ , և կելնուի , կարելի է ելնել , ևն.

265 . Աշխարհաբար լեզուին Կրաւորականն որ մասնիկ ունի էմ ընդդութեան հետ , երբեմն առանց նոյն մասնկին գրաբարի պէս կգործածուի . զորօրինակ .

Ի . աշխատաւորներէն մեղրով կերակրին . փոխանակ , կկերակրուին .

Այսպէս հալածի . փոխանակ , կհալածուի .

Կործանիմ , կործանեցայ . Սպանիմ , սպանեցայ . փոխանակ , կործանուիմ , կործանուեցայ . սպանուիմ , սպանուեցայ :

Բայց ստորադասական հրամայականը չըլլար , սպանէ , կործանէ , այլ՝ սպանուէ , կործանուէ :

266 . Սահմանականի ներկայ Դէմքերն ապառնւոյ նշանակութիւնով ալ կվարուին , մանաւանդ խօսման և հարցման մէջ . զորօրինակ .

Ես գրեմ . կհասկցուի , Հիմա կգրեմ , կամ ետքը կգրեմ .

Ես կուգամ . Հիմա կուգամ , կամ ետքը կուգամ .

Դուն հիմա գնա , երբոր պատեհութիւն ըլլայ քեզ կկանչեմ .

Կուգա՞ս առնուլ . կհասկցուի , Հիմա կամ ետքը .

Տեսութեան կերթա՞ս . Հիմա կերթա՞ս , կամ ետքը կերթա՞ս : Թէպէտ աւելի աղէկ է որ առանց կը մասնկի ըսուին ապառնի * Դէմքերն :

* Մէկ երկու հեղինակներ Ներկայ և Անկատար ժամանակ-

267. Ստորադասական եղանակ կըլլայ Բայն նաեւ, ինչպէս որ ըսինք (105), ով որ, ինչ, ինչ որ, քանի որ, ուրկէ՛, որչափ, երբ, երբոր, թէ որ, թէեւ, թէպէտ, երանի՛ թէ, ո՛հ թէ, և ասոնց պէս միտք ունեցող բառերով, քանզի այնատեն խօսքն չէ թէ հաստատուած, այլ կախ իմաստ մը կունենայ, և ուրիշ Բայի կկարօտի. օրօրինակ.

Ո՛վ որ կարդայ, թող հասկնայ.

Ո՛վ որ հաւատարիմ աշխատի, գովութիւն կառնուր.

Ինչ ու տաս իրեն, կընդունի սիրով.

Ինչ որ խնդրեց՝ առաւ.

---

ներուն կը մասնիկը բոլորովին վերցնել միտք ունին, կերեւի թէ լեզուն Գրաբարի մօտեցնել, կամ Նորամուտ մասնիկ մը լեզուին մէջէն դուրս ձգել կփափաքին։ Այս յարգի ուսումնականներն կարելի է կխորհին թէ ինչպէս որ կոր մասնիկը չգործածելով վերցաւ գրութեանց մէջէն, նմանապէս կը ալ պիտի վերնայ։ Բայց կը մասնիկը կորին չնմանիր. Ա. կոր՝ Թրքերէն մասնիկ մ՚ էր, և սեպհական չէր Հայերէնին, Բ. Ընդհանուր չէր, միայն Պոլսեցիք կգործածէին, անկէ դուրս հազիւ թէ գաւառի մը մէջ ընդհանուր գործածուած էր, Գ. Մեծ տարբերութիւն չըներ՝ կերթամ և կերթամ կոր՝ ըսելն, Բայց այս կը մասնիկը՝ նախ որ օտար չէ, բուն Հայաստանէն ելած է, Բ. Ընդհանուր է. միայն թէ տեղ տեղ գը կը կրսեն, վերջը գնելով մասնիկը, Բայց՝ Գ. մեծ տարբերութիւն կընէ խօսելու մէջ. օրօրինակ. թէ որ ըսեմ, Աստուած շնորհէ քեզ, և դուն իրեն ծառայես. ով կրնայ հասկնալ թէ ես պատմական ձեւով ըսել կուզեմ, Աստուած շնորհք կուտայ քեզի, և դուն իրեն կծառայես։ Բայց բոլոր լսողներն պիտի հասկնան թէ ես անանկ փափաք ունիմ, որ Աստուած շնորհք տայ քեզի և դուն անոր ծառայես այսուհետեւ. Թէ որ լեզուն մարդուս մտքին խորհուրդներն հասկցնելու միջոցն է, ուրեմն հասարակութիւնն ինչ բառով կամ մասնիկով և ոճով որ շիտակ հասկնայ, նոյնը գործածել իմաստութիւն է։ Եւ դարձեալ՝ լեզուի մը մէջ նոր բան չմտցունելու ջանքը լեզուին յառաջադիմութեանն արգելք ըլլալ է։

Քանի՛ որ մեղքին մէջ կկենաք, փրկութեան յոյս չէք կրնար ունենալ.
Մեկնիլը աչքովս տեսնէի, ալ սիրտս կհանգչէր.
Որչափ աշխատիս, այնչափ յառաջ պիտի երթաս.
Երբոր յանդիմանեն զինքը, հեզութեամբ մտիկ կընէ.
Թէպէտ ես եկած ու անոնց խօսած ըլլայի, անոնք մեղք չէին ունենար.
Երանի՛ թէ տրտմութիւնը մեղքէն յառաջ գար.
Ո՜հ թէ յանկարծ հաշտութեան լուրն առնէինք.
Թէեւ կամ թէպէտ համբերէ ալ, իր ճանբէն չըդառնար.
Եթէ մահու արժանի բան մը գործեմ, մեռնելէն չեմ փախնար։

---

## ԳԼՈՒԽ Է

### ԴԵՐԲԱՅԻ ՎՐԱՅ

268. Դերբայն որ Բայի տեղ կգործածուի ըսած ենք (113), հիմա հետեւեալ համարներուն մէջ քանի մ'օրինակներ կուտանք, որոց մէջ պիտի տեսնուի թէ Դերբայն ինչպէս կրնայ դիմաւորի փոխուիլ։

269. Անորոշ Դերբային հոլովականներն մինակ, կամ Վրայ, ետեւ, համար, ատեն, չափ, Նախադրութիւններու հետ կգործածուին, որ, քանի, քանի որ, երբոր, երկայն, թէ՛ (հեմ), որչափ որ, որովհետեւ, թէպէտ, մինչեւ որ, ըսելու տեղը դիմաւոր Բայով. զորօրինակ.

Մեռնելու պատրաստ էր. Պտըտիլ գնաց. այսինքն, պատրաստ էր որ մեռնի. գնաց որ պտըտի.

Դուք Քրիստոնէից զաւկներ ըլլալով, Քրիստոսի ծառայութեանը նուիրուած էք· այսինքն, որովհետեւ Քրիստոնէից զաւկներ էք.

Գիտութիւն ստանալու համար ամէն բան զոհ կընէ· այսինքն, զոհ կընէ որ գիտութիւն ստանայ.

Երթալով պիտի ծաղկի· այսինքն, քանի երթայ.

Ուտելով չկըշտանար· այսինքն, որչափ որ ուտէ.

Աղօթելէն չէր ձանձրանար· այսինքն, որչափ որ աղօթէր.

Բաւական գիտութիւն ունենալով ալ՝ տակաւին չէր համարձակեր· այսինքն, թէպէտեւ կամ թէեւ բաւական գիտութիւն ունէր.

Տունը տեղը թողլով ելաւ հեռուէն ընկաւ· այսինքն, մինչեւ որ տունը տեղը թողէ.

Քալելու ատենն ալ մտքին մէջ իր գործերն կըկարգադրէր· այսինքն, երբոր քալէր.

Ընկղմելու վրայ էր նաւը· այսինքն, քիչ մնաց պիտի ընկղմէր.

Խօսելով կերթայինք· այսինքն, թէ (հեմ) կխօսէինք և թէ կերթայինք.

Այս խօսքը ըսելուն պէս ամէնքը լռեցին· այսինքն, երբոր այս խօսքը ըսեց։

270. Գործիականը կրկնուելով, կամ Սեռականը հետ Նախադրութիւնով՝ գործողութեան շարունակութիւնը կամ սաստկութիւնը կցուցնէ. զորօրինակ.

Լալով լալով սիրտը կակուղցեր է· այսինքն, շարունակ կամ շատ լալով.

Տալով տալով ստացուածքը փճացուց· այսինքն, շարունակ կամ շատ տալով.

Ինքը խօսելու հետ էր· այսինքն, շարունակ կխօսէր։

271. Հայցական Գերբայն ն յօդով՝ կամ մը ա-

նորոշ Դերանուան ձեւ՝ խօսքին հաստատութիւն կամ զօրութիւն տալու համար կգործածուի իր դիմաւորին հետ. զորօրինակ.

[illegible] չահեցան, թէ որ բանելն գիտեն. այսինքն, [illegible] կամ [illegible] չահեցան.
[illegible] կերթայի, մինչդեռ եա դառնալն դժուար է. այսինքն, [illegible] կերթայի.
[illegible] մը կերգէր որ լողն կըմայլէր. այսինքն, [illegible] կերգէր որ.
[illegible] մը ծախեց որ զարմացանք. այսինքն՝ [illegible] ծախեց որ.

272. Առնիշ Դերբայն շատանգամ ալ Անուան տեղ կգործածուի իբրեւ Բայանուն*. զորօրինակ.

[illegible] մը փրցուց. այսինքն՝ [illegible] մը.
Անոր [illegible] կասկած ունիմ. այսինքն՝ [illegible].
Սատահութիւնն [illegible] մը, եւ ըսածնուն հաւանութիւն [illegible] մը կայ հիմա։

273. Երբեմն յոգնակին ալ կըսուի, մանաւանդ [illegible] ընդդութեան Դերբայներուն. զորօրինակ.

Ընկերոսի մէջ մեկնեղ կրնալ [illegible] վրայ.
Աղէտորմ արցունքներն ու իր անձին վրայ [illegible].
Անանկ ողէկ ողէկ [illegible] սիրտ չէր դիմանար։

274. Անցեալ Դերբայն դիմաւոր Բայի հետ կը-

* Բայանուն կըսուին այն տեսակ անուններն, որ Անուն են ու Բայի նշանակութիւն ունին. զորօրինակ. [illegible], այսինքն, [illegible]. [illegible], այսինքն, [illegible]. [illegible], այսինքն, [illegible]։

դրուի առաջ կամ ետեւ, ու քովի Բային պէս կառնուի իբրեւ դիմաւոր, կամ անորոշ Դերբային գործիականին պէս · զորօրինակ ·

Ծնկան վրայ եկած ու Թեւերնին տարածած աղօթք ըրին · այսինքն, եկան, տարածեցին ·
Դաս սորված ալ կուանի · այսինքն, սորվան ալ ·
Զարմացեր մտիկ կընէի · այսինքն, զարմանալով ·
Ցուն հասած չհասած բանեցին զինքը · այսինքն՝ հասնա չհասնա ·

275 · Ած վերջով Դերբայն երբեմն ներկայի նշանակութիւն ունի · զորօրինակ ·

Կարդացածդ կհասկնաս արդեօք · այսինքն, այն որ կկարդաս հիմա ·
Բռնածներս մի մոռնար · այսինքն, այն որ հիմա կբռնեմ ·
Ունեցածս քեզի տամ · այսինքն, ինչ որ ունիմ ։

276 · Ասիկա իբրեւ Մակդիր անուան կգործածուի շատանգամ Անուան հետ կամ մինակ, ու այնատեն Բայածական* կըսուի և ոչ Դերբայ ·

Զգաստացած մարդիկ համեստ են ·
Գլխու եկածը շատ խրատներէն աւելի կներգործէ ·
Այն Թափուած՝ աստուածային արիւնովն է միայն քաւութիւնը ։

* Բայածական կըսուին այն Մակդիր անուանններն որոնք Բայէ նշանակութիւն ունին · զորօրինակ · Գործող, գործելու, գործեալ, երեւ, որ ըսել է փոկող ·

277. Նոյն Բայածականն երբեմն գրաբարի պէս եալ վերջաւորութեամբ կըլլայ. զորօրինակ.

Ասիկա բաղադրեալ նիւթ մը չէ.
Ննջեալ հոգիներին. Օրհնեալ է Աստուած։

278. Ապառնի Դերբայն ալ Անգդիր անուանի պէս կգործածուի միշտ Անուան հետ, որ Բայածական կըլլայ. զորօրինակ.

Սովրելու աշկերտը ջանքէն ու կարողութենէն կճանչցուի.
Ձանրայ ընելու մարդը պէտք չէ անտըննալ։

279. Նոյն Դերբայն մինակ առանց գոյականի զրուցել, կամ վերջահոլով պէտք ըլլայ նէ, լիք վերջաւորութեամբ բայածականը քով կգործածուի, ու կնըշանակէ ընելու կամ ըլլալու կամ ըլլուելու բանը. զորօրինակ.

Տակաւին յաղթելիք ունի. այսինքն, յաղթելու բան.
Ըսելիքին առջեւն կընա՞ս առնուլ. այսինքն. ըսելու բանին.
Ի՞նչ ուտելիք ունիք. այսինքն, ի՞նչ ուտելու բան

280. Այսկերպ բայածականը Դոյականի հետ ալ կգործածուի. զորօրինակ. Շինելիք տունը, Ըսելիք խօսքս, Գնալիք ճանբադ։

281. Շատանգամ ալ ունիմ կամ ունենամ օժանդակ Բային հետ ապառնի Բայի տեղ կգործածուի. զորօրինակ.

Ընելիք ունի նէ ել.
Յառաջ ելլելիք ունի՞ արդեօք.

Գուն լուռ չընալէ պանէ.
Ընկեր մեզի հրաման տուլէ պանէ.

այսինքն, թէոր պէտէ ընել. յառաջ երթա՞յ պէտէ. լուռ պէտէ չընել. հրաման պէտէ տայ:

282. Ներգործական անցեալ եւ ապառնի Դերբայ- ներն՝ եմ Լծական եւ եղեալ Չեզոք օժանդակ Բայե- րուն հետ հայցական Խնդիր կառնուն, որովհետեւ իրենց սեռը չփոխուիր. զորօրինակ.

Թէ որ անօգուտ քաներն յէ-ծ է.
Ինքն ալ աչքովը տեսեր էր ըռնէլ.
Մինչեւ անգամ ամէն բարի գործերն ըրած ալ ըլլայ:
Նորբոր դէն տեսնելու ըլլայ:

283. Յարաբերականով դիմաւոր Բայն, որ աշխար- հաբար լեզուին մէջ ող, ած, ու եւ ելէ վերջաւորու- թեամբ բայածականներու կդառնայ սովորաբար, ասոր վրայ Կարագաշեան Պատուելին իր "Ներականական Լուծում" Դասագրքին մէջ հետեւեալ դիտողութեան արժանի կանոնն կաւանդէ, որ մեր ուսանողներուն գիտնալ կարեւոր ըլլալուն համար հոս կդնենք.

"Յայտնի է որ աշխարհաբար լեզուին մէջ Յարա- բերականով բերուած Նախադասութիւն * մը Ընդու- նելութիւնով ** կրնայ բացատրուիլ. ուստի կըսենք.

---

* Դիմաւոր Բայ մը իրեն Տէր բային ու Խնդրովը [illegible], Նա- խադասութիւն կկոչուի:

** Մեր Դերբայ կամ Բայածական կոչածներն մինչեւ հի- գինակն Ընդունելութիւն կկոչէ հին քերականութիւններուն լեզուովը:

Իր տկարութիւնը ճանչցող մարդը. փոխանակ ըսելու, Մարդն որ իր տկարութիւնը կճանչնայ:

"Բայց մեզի կերեւի թէ աշխարհաբարի մէջ ալ Յարաբերականով բերուած ամէն խօսք, առանց իմաստի այլայլութեան ընդունելութիւնով չկրնար բացատրուիլ:

"Վերը բացատրուած տարբերութեան* նայելով՝ մինակ բացորոշական միջանկեալ նախադասութիւններն, այսինքն երբոր Յարաբերականին յարաբերեալն անհատի իմաստ ունի, ընդունելութեամբ կրնայ բացատրուիլ: Իսկ մեկնողական միջանկեալ նախադասութիւններ, որոց Յարաբերականին յարաբերեալն ընդհանուր իմաստ ունի, միշտ Յարաբերականով ու դիմաւոր Բայով բացատրուելու են. ապա թէ ոչ խօսքին ընդհանուր իմաստը կայլայլի, այսինքն կմասնաւորի: Ուստի վերը բերուած երկու օրինակներէն մինակ առաջինին միջանկեալ նախադասութիւնը կրնանք ընդունելութեան դարձնել, այսպէս.

> Աստուածային մեծագործութեան արտաքին գահն է բնութիւնը. անոր մտախոհ ու խելամուտ եղող մարդը՝ տակաւ տակաւ ամենակարողութեան ներքին գահը կամբառնայ:

"Եթէ երկրորդ օրինակին միջանկեալ խօսքն ալ այսպէս ընդունելութեան դարձնենք, իմաստը կայլայլենք. զորօրինակ.

> Աստուած ամէն լուսոյ և ամէն իմացականութեան միակ աղբիւրն, անսահման կարողու-

---

* Այս "բացատրուած տարբերութիւնը" Կետադրութեան յօդուածին մէջ ետքը պիտի տեսնուի Դ մասին մէջ.

թեամբ տիեզերքն ու արարածոց տեսակներն ամբողջապէս կվարէ. այն իմացականութեան հազիւ մէկ չափաւորն ունեցող մարդը, միայն սահմանաւոր կարողութիւն ունի։

"Այս վերջի խօսքն այսպէս բացատրելով՝ խօսքին ընդհանուր իմաստը կպարզի. քանզի կնշանակէ թէ Սահմանաւոր կարողութիւն ունեցողն ոչ թէ բոլոր մարդիկ են, այլ այն իմացականութեան հազիւ մէկ չափաւորն ունեցող մարդն է։

Ցուցադրութեան համար տանք մ' օրինակներ.

"Կրնանք ըսել,

Ամենէն չափաւոր մեծնալ ուզող շահասիրութիւնը՝ շահասիրութեան եթէ ոչ գովելի, գէթ ամենէն ներելի տեսակն է։

"Բայց ըսելու ենք։

Շահասիրութիւնն, որ մեր ոճիրներուն իբրեւ ուղեկիցն կը մեղադրուի, շատանգամ՝ մեր բարեգործութիւններուն իբրեւ շարժառիթը գովուելու է։

"Հոս եթէ ըսելու ըլլանք, Մեր ոճիրներուն իբր աղբիւրն բամբասուող շահասիրութիւնը, և, ոչ ընդհանուր շահասիրութիւն կիմացուի, այլ այն շահասիրութիւնն, որ մեր ոճիրներուն իբր աղբիւրն կբամբասուի, ուր այս ամբաստանութիւնն ընդհանուր շահասիրութեան վրայ է։

"Կրնանք ըսել. քանի որ խօսքը մասնաւոր յովազի մը վրայ է։

Մեր տեսած կենդանի յովազը վայրագ դէմք,
խռովայոյզ աչուըներ, անգութ նայուածք,

յանկարծական շարժմունք ու բարկութեան փրթած մեծ շան մը գոչմանը նման գոչիւն մ' ունի։

"Բայց ըսելու ենք.

Շնչրին, որ իմացական կարողութեամբ շնէն ու կապկէն վեր է, տակաւին խօսողութեան գրեթէ հաւասար ձիրք մը բնութենէն ընդունած է։

"Քանի որ խօսքը շնչրի կոչուած կենդանւոյ տեսակին վրայ է, չենք կրնար ըսել, իմացական կարողութեամբ շնէն ու կապկէն վեր է շնչրին. ապա թէ ոչ ըսել կրնայ, թէ Իմացական կարողութեամբ շնէն ու կապկէն ստորին չեղող շնչրիներ ալ կան։

"Կրնանք՝ ըսել.

Ոճրագործներու հետ՝ երկնային աւելորդ աշխուժութիւնը խեւութենէ շատ հեռու չէ։

"Բայց ըսելու ենք.

Բնութիւնը, որ Մակեդոն մեծ մարդն բնաւ բան մը չուզեր, խիստ կանուխ իմացուց թէ զԱրիստոտէլ վստահակից և թարգման ընտրած էր։

"Կրնանք ըսել.

Իր կեանքը ցամաքի վրայ հեծեալներու նուաճող Արաբացին ճանբորդութեանց տառապանացը մէջ մանկութենէ խստանալու է։

"Բայց ըսելու ենք.

Աստուած միայն անցեալն՝ ներկան ու ապագան գիտէ. անիկա ամէն ժամանակաւան է. մարդս,

որուն տեւողութիւնը ժամ մը հազիւ է, մինակ այն վայրկեանները գիտէ":

---

## ԳԼՈՒԽ Զ

### ՄԱԿԴՐԻ ՎՐԱՅ

#### Ա. Աստիճաններ:

284. Մակդիր անունը կամ Ածականն երեք աստիճանի կբաժնուի. որ է Դրական, Բաղդատական և Գերադրական.

285. Դրական Ածականը Գոյականին որպիսութիւնը պարզաբար առանց բաղդատութեան կցուցնէ. զոր օրինակ.

Լաւ խօսքեր բաւ.
Բարի ընկեր մ' էր անի.
Դուն ազնուական մարդ ես:

286. Բաղդատական Ածականն երկու բան իրարու հետ բաղդատելով՝ անոնց իրարու հաւասար կամ իրարմէ աւելի ըլլալն կցուցնէ:

287. Հաւասարութիւն ցուցնելու համար դէմ՝ Նախադրութիւնը տրական խնդրով կգործածուի. զորօրինակ.

Ընտանեաց դէմ դիմաց եղէք. մէկ դէմ մէկալին:

288. Առաւելութիւն ցուցնելու համար Ածականին

վրայ, ալ, աւելի, Մակբայներն կդրուին. երբեմն ալ՝ գոյն վերջաւորութիւն կառնու. զորօրինակ.

> Ա՛լ մեծ էր. Աւելի գեղեցիկ երիտասարդ մը. Լաւագոյն ճանբայ։

289. Նաեւ Բաղդատական կըլլայ՝ Ածականին բացառական կամ սեռական խնդիր մը տալով. զորօրինակ.

> Վարդէն գեղեցիկ. Անոր մեծը. Մեղրէն անուշ։ Կըսուի նաեւ, Անկէ աւելի մեծ, Մեղրէն աւելի անուշ։

290. Գերադրական Ածականը Դրականին որպիսութիւնը վերջին աստիճանի հասած կցուցնէ այս սաստկացուցիչ բառերով, շատ, խիստ, յոյժ, ամենայն, ամէն, վերջինը կցելով Ածականին. զորօրինակ.

> Շատ գէշ, Խիստ մեծ, Յոյժ բարի, Ամենայն բարի, Ամենագեղեցիկ։
> Կամ, ամենէն, դնելով Ածականին քովը. զորօրինակ. Ամենէն գեղեցիկներն. Ձեզմէ ամենէն ընտիրներն. Ձեր մէջէն ամենէն պզտիկը։

291. Դարձեալ Ածականը կրկնելով, թէ՛ կցուած իրարու, և թէ զատ զատ, Գերադրական կըլլայ. զորօրինակ. Մեծամեծ, չարաչար, ծանր ծանր, մանր մանր, շատ շատ։

292. Ող, իչ, ել. վերջաւորութեամբ Մակդիր անուններն և ասոնց պէս ուրիշներ ալ բայածական կըսուին, որովհետեւ գործողութիւն կնշանակեն. ել և իչ վերջացածներն Բայերուն ներկայէն, և ող վերջացածներն թէ՛ ներկայէն և թէ անցեալ կատարեա-

չեն կշինուին. ինչպէս. Սիրելէ, յարգելէ, տալէ. Բա-րողէն, Բնակէն, որբէն. Խօսող, տանող, լուացող, հար-կացող։

293. Ող վերջացած Բայածականն աշխարհաբարի մէջ քիչ կգործածուի, և այն ալ իբրև անուն։

Ող վերջացածներն ընդհանրապէս իբրև Ածական անուան կամ Անուն կգործածուին, ու Գերբայի պէս խնդիր չեն առնուր. երբոր Խնդիր առնուլ պէտք ըլլայ նէ, վերջը + ով կգործածուի. օրօրինակ.

Փառաւորողին ինչ ընծայելիք հիմա պիտի տեսնես։

Բ. Մակբայ Բայ.

294. Ալ, Եւս, Մակբայ են. օրօրինակ.

Որոնք ոչ կտեսնեն, ոչ կլսեն, ոչ ալ բան մը գիտեն։

Անգործութիւնն ինչպէս հոգւոյն՝ նոյնպէս մարմնոյն համար ալ ախտ մի է։

Նիւթական վնասէն զատ քանի մ' հոգի եւս կեանքերնին կորուսին։

295. Գուցէ, Թերեւս, Մակբայներն անխտիր իրարու տեղ գործածել աղէկ չէ։

Գուցէ. կգործածուի, երբոր գործողութեան կատարուիլը չենք ուզեր ու կվախնանք թէ կըլլայ. օրօրինակ.

Եթէ Աստուած բուն ճիւղերուն չխնայեց, գուցէ քեզի ալ չխնայէ։

Գուցէ մահ հասնի վրադ քու փնտրած պատեհութիւնդ ձեռք չբերած։

Խիստ շատ մ՚ երթար բարեկամիդ, ֆո—ցէ ձանձ-
րացնես զանիկա ու ատէ քեզ ։
Ու զանոնք անօթի արձակել չեմ ուզեր, ֆո—ցէ
ճանբան մարին ։

296. Ասոր հակառակ՝ Ֆէրէ—, կգործածուի, երբոր գործողութեան ըլլալն կուզենք, և կյուսանք թէ պիտի ըլլայ․ զորօրինակ․

Ժամանակ դրաւ զԱստուած փնտռելու, որ Ֆէ-
րէ— փնտռեն զանիկա ու գտնեն ։
Թէրէ— անոր սիրոյն յաղթուած յանձն առնու
հաշտուիլ ։
Պէտք էր իրեն չարութիւններէն դարձի գալ,
Ֆէրէ— թողութիւն գտնէր Աստուծմէ ։
Ամէն գործի մէջ կմըտնէ ու սաստիկ կաշխատի,
որ Ֆէրէ— աւուր հացին ստակը ճարէ ։

297. Ու, Ն և Գ, Բացասական Մակբայ են. Ու Բայի հետ չգործածուիր աշխարհաբարի մէջ, բայց մինակ չէ ըսելու տեղն․ զորօրինակ․

Այսօր մեկուն վնաս մը տուի՞ր, տղաս․ Ու, Մայր
պատասխան տուաւ Յակոբ ։
Տասնաբանեային դէմ մե՞ղք մըն է ասի, ոչ․

298. Չ, կգործածուի Բային ամէն ժամանակնե-րուն հետ բաց ի հրամայականէն․ և Գ, կգործածո-մինակ արգելական Հրամայականին հետ․ զորօրինակ․

Թէ որ արգելք մը չունենամ ։
Դու Տէր Աստուածդ չփորձես ։
Տէր, Թէոր հոս ըլլայիր՝ իմ եղբայրս չէր մեռնէ ։

Հաւատարմութեան դէմ բան մը ըրա՞ւ երբէք;
Մեզ անգութը կը զրկեր.
Կուռք կը շինէք ու զանիկա կը պաշտէք.

299. Ինչպէս որ առաջին մասին մէջ տեսար, շատանգամ հօլված բառ մը Նախադրութեան հետ կամ միայն Տաճկայօրէն կգործածուի. զորօրինակ.

Պէնտէն, Սէնտէն, Սապահտան պէրի, Համանա-տէն, Իքինտիտէն, Նէրէտէն, Հէրէտէ, Հի-մաճտայտէ, Իչնէ.

300. Մը, անորոշ Դերանուան հետ Ընաւններ ու Տաճկերէն անուններ՝ ուղղական կամ գործիական հո-լով երբեւ Տաճկերէն բայի կգործածուին շատանգամ. զորօրինակ.

Պաք մ' հոկելով. Ըտէկ մը գիտեցի.
Ըտէն մ' աղջած մայց. Իչէ մ' համբերէ.
Պէչէր մ' հանգիստ ըլլայ. Կէրէկ մ' հանգցուց.
Զէօլ մը կյարգէինք զինքը.

301. Բանի մը Նայեր, օր, թէ, Տաղկայներով, կամ ուրիշ բառով մէկտեղ, և կայ որ միայն, երբեւ Տաճկերէն բայի կրանին, ինչպէս գրաբարին մէջ, ...թէ, ...ջէ. որ կըսուի Տաճկայօրէն զուգուածք. զոր-օրինակ.

Ըլլայ թէ դարձի գայ. փոխանակ ըսելու, թէրէ...
Հրամերէ եղաւ. փոխանակ ...ի.
Զըլլայ օր խօսքէն ետ դառնայ. փոխանակ ...ջէի.
Սէպէ թէ ըմբցաւ.
Ըսէնք թէ խոնարհի.

Պէյզատէ Բէ բոլորն դէմ կենան.
Սաբնամ չթողու քեզ.
Ո՛չ Քէօտէ ինչ պիտի ըսէ.
Գէօտէն Բէ չըզգար.
Կարծէն Բէ ինքն էր ապրանքի տէրն.
Ինճէ-Էօյէ թէօր դուն կսիրես.
Նատիրաճ Հընէ որ քեզ թողում.
Քէչէ հօսզ որ իմ ոտքերս պիտի ծռէին. ու մաղ հօսզ որ իմ քայլերս գայթակղէին.
Քիչ մ' առնեն Նոյէ Օֆելիան բարկացած ներս մտաւ.
Միթէ Աստուած իր ժողովուրդը մերժեց, Թօ-ւէշէ*.

---

# ԳԼՈՒԽ Է

## ՆԱԽԱԴՐՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

302. Կան քանի մը Նախադրութիւններ, որ երկու հոլով մէկտեղ խնդիր կառնուն. զորօրինակ.

Մինչեւ ... Բացառական և Տրական.
Հարբեր ինչուան հարբեր ... զուրուշ.

---

* Լէօյէ. գրաբար Բայ է, որ կնշանակէ ըսէ. եւ Թօ-ւէշէ, ըսել է, ...

Այսոյսմ ամենք հայկարանութիւն է, ինչպէս, Պէյզատէ Բէ, Թօ-ւէշէ, Ինճէ-Էօյէ. որ անխտիր կրնանք գործածել. բայց շատերն Թուրքերէն գրուցուածքի թարգմանութիւն է. որ ուսումնականներն կզգուշանան հիմա գործածել, և կախորժեն հայկական ոճով խօսիլ. փոխանակ Նոյէ ըսելու, կրնան ... Բի ըսելու տեղը Բէրէ... թէ ըսելու տեղը ...

Շուրջէն երկու կողմ առաջ. Բացառական և Հայցական.
Աթոռանէն ինն հարիւր կողմ հեռու.
Յիսուն տարիէն ասդին մը վար չըլլար.

---

# ԳԼՈՒԽ Ը

## ՇԱՂԿԱՊԻ ՎՐԱՅ

303. Քանի մը Բայեր մինակ, կամ ուրիշ բառով միկտեղ իբրև Շաղկապ առնուելով կգործածուին, ինչպէս գրաբարին մէջ, Թող թէ, Թող զի, կգործածուի մանաւանդ չէի և առաւել ևսի տեղ. և ինչպէս որ, է կամ չէ, էական Բայով՝ սովորաբար գործածուած է այս Շաղկապներն, Մանաւանդ, ըսէ, չէ, ուրեմն է, որ է. օրինակ.

Գոնէ որ՝ դատաւորն այն կողմէն բռնուած էր. որչափ, ըսելու տեղ.
Մանաւ որ՝ կանխիկ վճարելու էինք ու չէինք կըրնար. Թող, ըսելու տեղ.
Ինչու զի որ՝ ժամանակն հասած չէ. ուստի, ըսելու տեղ.
Ո՛ր մանաւ որ՝ ինքն ալ արդէն խօսք տուած էր. մանաւանդ որ, ըսելու տեղ.
Որ Թողունք որ՝ հոգւոյ ու մարմնոյ առջևն ալ դայթակղութիւն ու կորուստ կայ. մանաւանդ, ըսելու տեղ.
Կամ չէ՝ կրակն երէ, կամ չէ՝ ինչ կըլլայ նէ ըլլայ. թէ, ըսելու տեղ.

փառք կըսեմ, ուրախութիւն կըսեմ, հանգստութիւն կըսեմ. այսինքն, թէ փառք, թէ ուրախութիւն, եւն:

Ես, կըսեմ նէ, զարմանալի ծերու մը ձեռք ընկայ. ես ալ, ըսելու տեղ:

Ըսել կ՚ուզէ՞ թէ՝ աշխարհ Աստուծոյ թշնամի է. այսինքն, ըսելու տեղ:

## ԳԼՈՒԽ Թ

### ԶԱՅՆԱՐԿՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

304. Բայեր և Անուններ, մինակ կամ ուրիշ բառով մէկտեղ իբրև Զայնարկութիւն կգործածուին. զորօրինակ.

Ողջո՛յն, բարի և հաւատարիմ ծառայ.
Ողջե՛ք, տղաքս, աղէկ օգնութիւն ըրիք.
Շատ ողջոյն, հիմա հանգչեցայ.
Մեղա՜յ, ուր կորսուեցաւ.
Տէ՛ր ողորմեա, այս ինչ բան է.
Աստուած տա՛յ որ շուտով անցնի.
Ո՜ւր էր որ դու ալ որդիս ըլլայիր.
Աղէ՛կ որ տեսար.
Մե՛ծ բան, որ հնազանդեցաւ.
Ամօ՛թ աղնուական անունիդ.
Մե՛ղք ընդունած շնորհքներուդ.
Օրհնա՜նք այդ մարդոց ըրածին.
Սքանչելի՜ որ չես մեռեր.

305. Այս առումներն, իբրեւ Մակբայ կամ Շաղկապ կամ Ձայնարկութիւն, երկու կերպով կըլայ լուծել. մէկ մը՝ ըստ ձեւոյն, բուն ինչ մասն բանի է նէ, նոյն անունը տալ իւրաքանչիւր բառին. և երկրորդ՝ ըստ իմաստին, իբրեւ Մակբայ, Շաղկապ կամ Միջարկութիւն առնուած ըսել քանի բառ որ կայ ամէնը մէկտեղ. օրօրինակ. Որ ժամ որ, ինքն ալ արդէն խօսք տուած էր: Թէ որ ըստ բառին լուծենք. — որ, Մակբայ. — ժամ, Նայ. — որ, Շաղկապ է. Թէ որ ըստ իմաստին լուծենք. — որ ժամ որ, Շաղկապ է ամէնը մէկտեղ, փոխանակ, մանաւանդ Եէի:

# ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

## ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ

### ՆԱԽԱ՛ԴԻՏԵԼԻՔ

306. Այս մասին մէջ խօսք մը կազմող բառերուն՝ խօսքի մէջ ինչ կարգով շարուելուն վրայ պիտի խօսինք, որ երկու կերպ կըլլայ. մէկը՝ Բնաբանական, և երկրորդ՝ Ձեւաւոր:

307. Եւ ՝Նախ՝ պէտք է գիտնալ, թէ որեւիցէ խօսք՝ մէկ կամ աւելի նախադասութենէ կըբաղկանայ:

308. Ա. ՝Նախադասութիւն այն է՝ որուն մէջ դիմաւոր Բայ մը կայ. և դիմաւոր Բայ մ' եղած տեղ հարկաւ յայտնի կամ լռելեայն Տէր բայի մ' և ուրիշ Ուղղական հոլով մը կայ Խնդիր. զորօրինակ. սա խօսքերն,

Աստուած արդար է. Դուն մեծ ես.

նախադասութիւններ են. և ամէն մէկուն մէջ դիմաւոր Բայ մը, է, ես, և Տէր բայի մը, և ուրիշ Ուղղական հոլով մը կայ Խնդիր:

Երբոր Բայն էական Բայէն զատ ուրիշ Բայ մ' է, ուղղական Խնդիրն էական Բային հետ միացած կըլլայ. զորօրինակ. ՝Ննջեմ, ննջող եմ. Սիրեմ, սիրող եմ, ըսել է:

309. Գ. Խօսքի մը մէջ քանի դիմաւոր Բայ կայ այնքան նախադասութիւն կայ. զորօրինակ.

Իմաստունը կը վախնայ, ու չարութենէ կը խորշի:
Թէ որ թշնամիդ անօթի է, անոր հաց կերցուր,
ու թէ որ ծարաւ է, անոր ջուր խմցուր:

Այս խօսքերուն առջինին մէջ՝ երկու նախադասութիւն կայ, երկրորդին մէջ՝ մէկ։

310. Գ. Թէպէտ նախադասութեան մ' էական մասերն երեք են, Տէր բային, Բայն և ուղղական Խնդիրն, բայց շատ անգամ նախադասութեան մէջ այս երեքէն զատ ուրիշ բառեր ալ կգտնուին։ Այսինքն՝ նախադասութեան մը մէջ կրնան գտնուիլ, Մակդիր մը, Բացայայտիչ մը, Յատկացուցիչ մ' և ուրիշ խնդիրներ. որ կըսուին Լրացուցիչ. որ Տէր բային և ուղղական խնդրոյն կամ Բային իմաստը լրացնելու (ամբողջացնելու, որոշելու) կծառայեն. օրինակ.

Ճշմարիտ Աստուածն երկնի և երկրի արարիչն է.

Այս խօսքին մէջ ճշմարիտ Մակդիրն լրացուցիչ է Աստուած Տէր բայինն. երկնի և երկրի Յատկացուցիչներն ալ արարիչ ուղղական խնդրոյն լրացուցիչն են։

Դուն քու սենեակդ մէջ միշտ կխորհիս.

Այս խօսքին մէջ, քու սենեակդ մէջ, միշտ, խնդիրներն լրացուցիչ են խորհիլ Բային։

Անիկա հիմա տրտմեցաւ.

Այս խօսքին մէջ ալ՝ հիմա Մակդիրն լրացուցիչ է Բային։

Արդ՝ նախադասութեան մը բառերն քերականական կամ բնական կարգաւ շարուած է, երբոր

311. Առաջին, Նախադասութեան մը Տէր բային ամենէն առաջ դրուի, ետքը ուղղական խնդիրն, և ետքը Բայն։

Ես հովիւ եմ. Դու վէմ ես. Անոնք միաբանե-
ցան. Դաւիթ թագաւոր էր։

Այս նախադասութիւններուն կարգը բնական կամ քերականական է։

312. **ԵՐԿՐՈՐԴ**, երբոր նախադասութեան մը Տէր բային կամ Բային կամ ուղղական խնդիրն եթէ լրացուցիչ մ' ունին, նոյն լրացուցիչն անմիջապէս լրանալի բառէն առաջ դրուի։

Օրինակ, եթէ Տէր բային Մակդիր մը կամ Բացայայտիչ մը կամ Յատկացուցիչ մ' ունի. ասոնք Տէր բայիէն անմիջապէս առաջ կդրուին. Բային կամ ուղղական խնդրոյն համար ալ նոյն բան է. օրինակ.

Այն մարդը մեծատուն էր.
**Պետրոս** առաքեալ վէմ կոչուեցաւ.
**Յովսէփին** եղբայրներն Եգիպտոս իջան.
Ինքն **այն** երկրին իշխանն էր.
Ու անիկա **խիստ** տրտմեցաւ.
Քեզ **Եղիշէին** **տունը** տեսայ։

Այս խօսքերուն մէջ ալ կարգը բնական է. քանզի լրացուցիչ բառերն լրանալի բառերուն անմիջապէս քովն և անոնցմէ առաջ դրուած են։

313. **ԵՐՐՈՐԴ**, երբ բառ մ' որ երկու լրացուցիչ ունի, օրինակ՝ Ածական մ' և Բացայայտիչ մը, կամ Ածական մ' և Յատկացուցիչ մը, բառէն անմիջապէս առաջ Ածականը դրուի իր քովն, ու Բացայայտիչը կամ Յատկացուցիչն Ածականէն առաջ դրուի. օրինակ.

Սողոմոն **անոր** **բոլոր** հարցումներն բացատրեց.

Պօղոս սուրբ *Առաքեալն Հեթանոսներուն գնաց։*

*Այնպէս նաեւ բառ մ' որ երկու խնդիր ունի, սեռի եւ բնութեան, սովորաբար բառէն առաջ նախ բնութեան խնդիրն ու ապա սեռի խնդիրը կդրուի անմիջապէս քովը. օրինակ.*

Հ*երովդէս* սուրբ Յովհաննէսը *սպաննեց։*
Մ*արդն* անիրաւութեամբ հաստատութիւն *չունենար։*

314. Չորրորդ՝ *երբոր լրացուցիչն ալ ուրիշ լրացուցիչ ունի, օրինակ, Յատկացուցիչ մ' ուրիշ Յատկացուցիչ, կամ խնդիր մ' ուրիշ խնդիր մը, միշտ լրացուցիչը լրանալի բառէն առաջ դրուի. օրինակ.*

Անոր լեզուին *կապերն քակուեցան.*
Իր ծառաներէն երկուքը *կանչեց.*

*Բոլոր այս օրինակներուն մէջ շարադրութեան կարգը բնական է. քանզի ամենուն մէջ ալ նախ Տէր բային, ետքն ուղղական խնդիրն է, ու ետքը Բայն. երկրորդ՝ լրացուցիչներն լրանալի բառերէն անմիջապէս առաջ դրուած են։*

315. *Խօսքի կամ նախադասութեան մը կարգը* յետադարձ *է, երբ սա երեք բաներէն մէկը կայ. որ է* Յեղաշրջութիւն *կամ* Արտադրութիւն, Զեղչում *եւ* Աւելադրութիւն։

---

## ԳԼՈՒԽ Ը

### ՑԵՂԱՇՐՋՈՒԹԻՒՆ

316. *Երբոր նախադասութեան մը բառերն բնա-*

կան կամ քերականական կարգէն տարբեր կերպով շարուած են, այնպիսի նախադասութիւն մը Զեւաւոր է, և խօսքին այն մասն կամ բառն որ այսպէս իր քերականական դիրքը փոխած է, ծեղծեղուլ կամ ճռճռան կըսուի։ Եւ ասի կըլլայ՝ խօսքն ականջի անոյշ, կամ աւելի ազդու կամ բացայայտ ընելու համար։

317. Այսպէս՝ թէ՛ Տէր բային և թէ Խնդիրն, փոխանակ առաջ դրուելու, շատանգամ ետեւ կդրուին, կամ միջանկեալ բառերով կամ ամբողջ խօսք մէջ մտնելով կհեռանան Բայէն՝ նախադաս կամ յետադաս. օրօրինակ.

Ահա կմեռնիմ ես՝ և ի՞նչ օգուտ պիտի ընէ ինձ այս անդրանկութիւնը, ըսաւ Եսաւ։

Երկիրը խիստ մութ էր ու մթին. փոխանակ. մութ ու մթին էր։

Եւ այն հանդերձը, որուն մէջը բորոտութեան ախտ կայ, թէ՛ բրդէ հանդերձ ըլլայ և թէ քթանէ հանդերձ, քթանեղէնի կամ բրդեղէնի առէջի կամ թեզանի մէջ կամ մորթի մէջ և կամ մորթէ շինուած ամէն բանի մէջ, այսինքն՝ թէ որ հանդերձի կամ մորթի մէջ՝ կամ առէջի կամ թեզանի մէջ կամ մորթէ շինուած ամէն բանի մէջ քիչ մը կանաչ կամ կարմրած նշան ըլլայ, բորոտութեան ախտ է, քահանային պէտք ցուցուի։

Վասն զի թէոր այն խօսքն որ հրեշտակներուն ձեռքովը զրուցուեցաւ, հաստատուն եղաւ։

Ալքնեն իմին աչուըներէս
Արցունք գետի մը պէս։

318. Նմանապէս Գոյականներուն և Բայանուններ-

ռուն ու Բայածականներուն Խնդիրներն ալ երբեմն ետեւ կդրուին, կամ միջանկեալ բառերով կզատուին. զորօրինակ.

> Եւ ձուլածոյ կուռքերուն՝ դուք մեր աստուածներն էք՝ ըսողներն ետ պիտի դառնան։
> Ինքը զզուելով անոր խորամանկութենէն և հպարտութենէն ձգեց բարեկամութիւնը։
> Տղայութեան հասակին մէջ, ինչպէս որ միշտ ալ, գէշ կիրքերն փախչելու խորշելու է։
> Նկարագրուած է իբրեւ թշնամութեան և ապստամբութեան Աստուծոյ դէմ։
>
> Ձեռք հասնելու ճարն հատած տեսնելով,
> Սկսաւ թափել քարով ու փայտով։

319. Պէտք և Թող Օժանդակներուն և իրենց Բային մէջտեղն այլեւայլ բառ կամ խօսք կմտնէ, և անով կզատուին իրարմէ երբոր նախադաս են. զորօրինակ.

> Դուն պէտք Թագաւորին հրամանին հնազանդիս անշուշտ։
>
> Պէտք թեւերուդ շուքին տակ նստիմ,
> Թող քու անհուն ողորմութիւն
> Իմ յոյսս հաստատէ։
> Թող բըժըշկող ձայնդ՝ ցնծութիւն
> Սրտիս մէջ տարածէ.
> Թող այն ջուրն և արիւնը
> Որ կողէդ, Տէր, կըվազէ.
> Հոգիիս ամէն մեղքերն
> Մաքրելով իս թեթեւցնէ։

320. Որ Յարաբերականը թէպէտ սովորաբար իր-

մով կապուած խօսքին գլուխը, ու Յարաբերականէն ետքը պէտք է դրուիլ, բայց երբեմն ինք խօսքին մէջ տեղը կդըրուի, ու Յարաբերականն խօսքին վերջը. որ երբեմն զօրութեամբ ալ կիմացուի երբոր Դերանուն է. զորօրինակ.

Ասիացիներ որ կըսուէին Հրէից մէջ, անոնք պատերազմի շարունեցան. փոխանակ, անոնք որ ասիացիներ կըսուէին, պատերազմի շարունեցան։
Մեղի օրէնքի ուսուցիչներ որ էին, անոնց մոլորութեանն ետեւէն ծռեցան. փոխանակ, անոնք որ մեղի օրէնքի ուսուցիչներ էին։

321. Յատկացուցիչն երբեմն յետադաս կըլլայ Յատկացեալին՝ մեր գրաբարի ոճովը. կամ միջանկեալ բառերով կզատուին իրարմէ, Յատկացուցիչն յետադաս կամ նախադաս. զորօրինակ.

Մարդ Աստուծոյ. Որդի մարդոյ. Տէր իմ. Ով թագաւոր ազգաց. Գործք առաքելոց. Գիրք Յոբայ։
Ինչու այն թողութեանն անկեղծութեանը։
Բնական կայարան մը կայ մէջն երաժշտաց։
Ապառնի երջանկութեան յոյսը մշտնջենաւոր աղբիւր մ'է մխիթարութեան. փոխանակ. մխիթարութեան աղբիւր մ'է։
Խեղճ կնկան՝ սրտին այլայլութեներէն լեզուն կապուեր էր. փոխանակ, խեղճ կնկան լեզուն։
Որոնք պատճառ կըլլան թերեւս իրենց քեզ անտես ընելուն և մինչեւ անգամ մեղադրելուն. փոխանակ, ընելուն, մեղադրելուն պատճառ։

322. Մակդիր անուաններն երբեմն յետադաս կըլ-

լան Անուան, ու մէջտեղն ուրիշ բառեր մտնելով կը-զատուին ալ, որ ընդհանրապէս եղակի Սեռական կը-դրուին. բայց Թուական Ածականներն ու Դերա-նուններն կհամաձայնին հոլովով. զորօրինակ.

Տէր ամենակալ. Հոգին սուրբ.
Հոն երեք խաչքար կայ կարմիր քարէ մարպես
  շինուած. փոխանակ. շինուած երեք խաչքար:
Ասկից զատ գրեր ալ կան մէջ փորուած կամ
  տեղն խոր. փոխանակ. խոր գրեր:
Գրոշներն բանեցին մէկերկուք:

Եկու ազատ խնձորենեան
Ինչ որ քեզ արգիլէ:
Այս տաւր խմին աչուըններուս,
Որ չընընջեմ ծնողն անյայտ:

փոխանակ, խնձորենեան ազատ, անյայտ ծնողն:
Դեղձենիներէն ալ առին ամենմէկէն զատ զատ.
փոխանակ, ամենմէկ դեղձենիներէն:
Ամբար մը լեցուն ցորեն. Աման մը լեցուն հալւա.
  այսինքն, լեցուն ամբար մը ցորեն. լեցուն ա-
  ման մը հալւա: Ամբար մը, աման մը, Մակ-
  դիր են իրենց քովի Անուններուն:

323. Բայց երբոր յատուկ Անուան յետադաս Մակդիրն անմիջապէս իր Անունին քովն է, շատան-դամ միայն Մակդիրն կհոլովի իբրև երկուքը մէկ սեպելով, կամ Բացայայտչի պէս առնելով Մակ-դիրն. զորօրինակ.

Սողոմոն իմաստունին առակներն սորվեցէք բերնուց:
Հոգին Սուրբին նորոգուած:
Սարգիս մեծին:

Տէրտէն Ներսէսեանէն :
Վասն Արծրունեայն գրուած :

324. Թէեւ անգամ նախադաս Աճկդիրն ալ իր Անուանէն զատուած կրնայ միջանկեալ բառով, զոր օրինակ :

Որեւէ ամենեւին չէր կամ հնարին չէն երեւ- ւիր · փոխանակ, ուրիշ չէնք կամ շնութիւն ամենեւին չէն երեւիր :

325. Նախադրութիւնը կզատուի իր խնդրէն մէջտեղը Նայ կամ խնդրոյն լրացուցիչներն մտնելով, եւ միշտ նախադաս ըլլալով յետադաս Նախադրութիւններն ալ. զոր օրինակ.

Նայ Խթագաւորին անհաւատարիմ Քրոմուէլէ :
Անոնց իր մեղքերուն համար գլխում մը ցու- ցնելու :
Մինչ էգարեր անցնելէն ետեւ գուշակուած հան- գստութիւնը :
Մէջ կգասեմ զանոնք դէտերէն եւ խոնարհներէն :
Փոխանակ այնչափ հոգերով կրած նեղութիւնը :
Մոր կըրնեմ իմ ամէն պատուական բաներէս :
Օրս պահեցէք մնացած ամէն տխրութիւններէն :

326. Աճկդիր բային ու Նայն միջանկեալ խօսքով կզատուին երբեմն, զոր օրինակ.

Ու ինքզինքն այնպիսի զօրեղ ցուցուց, որպէս որ թէ որ բուն իսկ Հերակլէս ինքն ըլլար, Նըր- նոր. փոխանակ, որչափ որ կրնար, թէ որ բուն, եւն :

327 · Բայց շաղկապը թէպէտէն ետքը դրուելու տեղն առաջ ալ կդրուի · զորօրինակ ։

> Բայց մեք թէպէտ իշխաններն բամբասելու հրաման չունինք, անոնց Աստուծոյ ճշմարտութեան դէմ ապստամբութիւնն ալ չենք կրնար գովել · փոխանակ, մեք թէպէտ իշխանները բամբասելու հրաման չունինք, բայց անոնց, եւլն ։
>
> Բայց թէպէտեւ անէծքի պատճառով ցաւ աշխարհք մտաւ, ուրիշ պատճառներ ալ կան · փոխանակ, թէպէտեւ անէծքի պատճառով ցաւ աշխարհք մտաւ, բայց ուրիշ, եւլն ։

328 · Ուրեմն, անանկէնէ, մանաւանդ, շաղկապները, որ խօսքին սկիզբը պիտի դրուին, կրնայ տեղը փոխել, զորօրինակ ։

> Շատ հաստատութեամբ կպահեն ուրեմն օրէնքը · փոխանակ, ուրեմն շատ հաստատութեամբ կըպահեն օրէնքը ։
>
> Պարապ տեղն աշխատած եմ անանկէնէ ես, փոխանակ, անանկէնէ պարապ տեղն աշխատած եմ ։
>
> Դուն ալ ուրեմն ծռած ես այն կողմը, փոխանակ, ուրեմն դուն ալ, եւլն ։
>
> Որոնք Աստուծոյ ձեռքին օգնութեանը կարօտ են մանաւանդ · փոխանակ, մանաւանդ Աստուծոյ ձեռքին օգնութեանը, եւլն ։
>
> Գովութեան արժանաւոր ես մանաւանդ, ու չէ թէ մեղադրանքի · փոխանակ, մանաւանդ գովութեան արժանաւոր ես ։

329 . Աշխարհաբար լեզուի մէջ Յեղաշրջութիւն կամ Արտաղութիւն կըլլայ նաև Յօդի ։

Այսպէս ապառնի և —ծ վերջով անցեալ Դերբայներն՝ իբրև Ածական՝ Անունէն առաջ գրուած, իրենց վերաբերեալ Յօդը Անունին կդըլլուի . զորօրինակ.

Վախցած օր— քեզի պիտի յուսամ , փոխանակ, վախցած— օրը , և ըսել է , այն օրն որ եկվախնամ , չէթէ՝ իմ օրս կամ՝ այս օրս ։
Պետացւոց տալու քաղաքներուդ . փոխանակ, տալուդ քաղաքներուն . որ ըսել է , այն քաղաքներուն որ դու— Պետացւոց պիտի տաս ։

Ասանկ հասկցիր հետեւեալներն ալ .

Բանգլի կայնած տեղդ սուրբ է . փոխանակ, կայնածդ տեղը ։
Իմ պատրաստած տեղս տանի քեզ . փոխանակ, պատրաստածս տեղը ։
Բոլոր յափշտակած բաներնին ետ դարձուցին . փոխանակ, բոլոր յափշտակածնին բաներն ։

Բայց ամէն ապառնի և անցեալ Դերբայ Ածական ունեցող Անուններուն դիմորոշ Յօդերն ասանկ հասկնալու չէ ։

## ԳԼՈՒԽ Բ

### ԶԵՂՉՈՒՄ

330 . Զեղչումն է պէտքի բան մը պակաս դնել կամ կրճատել, խօսքը կարճ ու կտրուկ ընելու կամ վայելչութեան համար, զանց ընելով գիր մը կամ բառ մը կամ բառին մէկ մասը, որ ինքնիրեն դիւրաւ կիմացուի զօրութեամբ ։

### Զեղչումն Դերանուան Տէր բայէ

331 . Առաջին և երկրորդ դէմքի Բայերուն Տէր բային, ես, դու, մենք, դուք, սովորաբար կզեղչուին . Ուստի կըսուի ·

Կուզենք Յիսուսը տեսնել · փոխանակ, մենք կուզենք ։

Զանոնք կանչեցի · փոխանակ, ես զանոնք կանչեցի ։

Գացէք սովրեցէք · փոխանակ, դուք գացէք սովրեցէք ։

Քանի որ կարդամ · փոխանակ, ես քանի որ կարդամ ։

Բայց շատանգամ հարկ կըլլայ զանազան պատճառներով այս Դերանունները դնել, զորօրինակ ։

Ես ու Հայրն մէկ ենք ։

Թէոր ես անիկա քեզի չբերեմ ։

Դուն եղիր անոր աշակերտ, մենք Մովսէսի աշակերտներն ենք ։

Առջի ծնած մարդը դո՞ւ ես ։

332. Երրորդ դէմքի Բայերուն Գերանուն Տէր բայիններն, նա, անի, անոնք, ինք, իրենք, սովորաբար կզեղչուին, այսինքն լռելեայն կիմացուին, երբ զեղչուած Տէր բային՝ նախընթաց Բային հետ միեւնոյն անձը կամ իրն է.

Զաքէոս կուզէր տեսնել՝ թէ ո՛վ է Յիսուսը, ու բազմութենէն չէր կրնար, ինչու որ հասակով կարճ էր։

Այս խօսքին մէջ չէր կրնար, էր, Բայերուն Տէր բային Զաքէոսն է. անոր համար այս Բայերուն վրայ նա Գերանուն Տէր բային կրկնել հարկ չէ. ուստի աւելորդ է ըսել,

Զաքէոս կուզէր տեսնել՝ թէ ո՛վ է Յիսուսը՝ ու բազմութենէն նա չէր կրնար, ինչու որ հասակով կարճ էր նա։

Բայց երբոր Բայի մը Տէր բային՝ նախընթաց Բային Տէր բայիին հետ միեւնոյն անձը կամ իրն չէ, ամէնմէկուն զատ զատ Անուն կամ Գերանուն Տէր բայի տալու է. զորօրինակ.

Ու ելաւ (պղտիկ որդին) իր հօրն եկաւ. և դեռ որ ինքը շատ հեռու էր, հայրը տեսաւ զանիկա՝ ու գութը շարժեցաւ, և վազելով՝ անոր պարանոցին վրայ ընկաւ, ու համբուրեց զանիկա։ Որդին ալ ըսաւ անոր. Հա՛յր, մեղանչեցի երկինքին դէմ ու քու առջեւդ, և ա՛լ արժանի չեմ քու որդիդ ըսուելու։ Բայց հայրը ըսաւ իր ծառաներուն. Հանեցէք առաջին պատմուճանն ու հագցուցէք անոր։

Այս խօսքին մէջ դնել Բային քովը հայցն, ըլլալ Բային քովը ուղղն, և վերջին ընել Բային քով դարձեալ հայցն չգրուէրնէ, խօսքը բոլորովին խառնուած պիտի ըլլար։

333. Երբեմն, երբ խօսքի մը մէջ Բայ մը Տէր բայի չունի, անոր Տէր բային նախընթաց Բային Տէր բայիին հետ միեւնոյն անձը կամ իրն կհասկցուի. ուստի ուր որ Բայի մը Տէր բային նախընթաց Բային Տէր բայէն տարբեր անձ կամ իր է, այն Բային Տէր բային ներգործութեամբ գրուելու է։

334. Բայց կրնայ ըլլալ որ երրորդ դէմք Բայի մը Տէր բային առաջ ալ յիշուած ըլլալով զօրութեամբ իմացուի. զորօրինակ.

> Տուէք ու ձեզի պիտի տրուի, կիմացուի, փոխա- րէնը ձեզի պիտի տրուի։
>
> Այն օրն եկան իր եղբայրներէն ու բարեկամներէն ալ. այսինքն, ոմանք իր եղբայրներէն ու բարեկամներէն։

## Ժխտական Բայ

335. Շատ տեղ Բայն չգրուիր ու կիմացուի ինքիրեն միայն կամ իր սարօքը մէկտեղ, Տէր բայովը, խնդրովը, ևն, մանաւանդ երբոր անգամ մը գրուած է. զորօրինակ.

> Քեզ ուրիշը գովէ, և չէ թէ քու բերանդ, օտարն և չէ թէ քու շրթունքդ. այսինքն, չէ թէ քու բերանդ գովէ, օտարն գովէ չէ թէ քու շրթունքդ գովէ։

Աղքատը կուզէ ըսուիլ մեծատուն,
Գեղացին իշխան՝ անխելքն իմաստուն.

այսինքն, գեղացին կուզէ ըսուիլ իշխան, անխելքն կուզէ ըսուիլ իմաստուն:

Պրուսանց եկեղեցւոյն չորս կողմն հինգ աստիճան կայ, ինչպէս Հայաստանի ուրիշ եկեղեցեաց եղերքն ալ. այսինքն, ինչպէս Հայաստանի ուրիշ եկեղեցեաց եղերքն ալ հինգ աստիճան կայ:

Քանզի երկինք երկրէ մեջերնին հեռաւորութիւն կայ. այսինքն, ինչպէս երկինք երկրէ հեռաւորութիւն ունի, այնպէս մեջերնին հեռաւորութիւն կայ:

Յիսուս Քրիստոսի յայտնութիւնն, որ Աստուած տուաւ. այսինքն, այս է Յիսուս Քրիստոսի յայտնութիւնն:

## Զեղչում Դերբայի

336. Անց վերջացած Դերբայի թէ՛ իբրեւ ածական եւ թէ իբրեւ Դերբայ, եւ անորոշ Դերբայի զեղչում կըլլայ ընդհանրապէս. զորօրինակ.

Թշնամեաց դէմ աղօթք. այսինքն, թշնամեաց դէմ ըրուած աղօթք:

Գործք առանց հաւատոյ. այսինքն, առանցհաւատոյ եղած գործք:

Կարդինալին դէմ գանգատներ. այսինքն, Կարդինալին դէմ եղած գանգատներ:

Ժամն երեքին հոս ըլլաս. այսինքն, ժամն երեք եղած ատենին, կամ ժամն երեքին եկուր:

Հռովմայեցւոց թղթին մէջ. այսինքն, Հռով-մայեցւոց գրուած թղթին մէջ։

Հաւատքով արդարութիւն. այսինքն, հաւատ-քով եղած։

Բահը ձեռքն երկրագործ մը կայներ էր. այսին-քըն, բահը ձեռքն բռնած երկրագործ։

Ճիտակը, ուզածդ անիրաւ բան է. այսինքն, ճիտակն ըսելով։

Փրկութեան յոյս. այսինքն, փրկութեան եղած։

Տաք ջրին ամանն ալ ձեռքը. այսինքն, տաք ջը-րին ամանն ալ ձեռքն ունենալով։

Կրնա՞ք խմել այն գաւաթն որ ես պիտի խմեմ. ըսին իրեն. կրնանք. այսինքն, կրնանք խմել։

### Զեղչուած Բայածական

337. Աս վերջացած Դերբային պէս ալ մասնկով Բայածական մը զանց կըլլայ շատանգամ. զորօրինակ.

Աչքը բաց մարդուն խօսքը. այսինքն, աչքը բաց եղող մարդուն խօսքը։

Խելքը գլուխը կնիկ մը. այսինքն խելքը գլուխն եղող կնիկ մը։

Կրակի բոցի պէս աչքեր ունի. այսինքն, կրակի բոցի պէս փայլող աչքեր։

### Զեղչուած Օժանդակ Բայեր

338. Անցեալ ու ապառնի Դերբայներուն Ըլլալ Օժանդակ բայն շատ տեղ չգըրուիր հետն, ու տե-ղէն կիմացուի բանին ու դէմքին համեմատ. կամ քա-նի մը Դերբայներուն հետ միայն մէկ անգամ կըսուի,

ու մէկալներուն հետ զօրութեամբ կիմացուի ։ Նոյնպէս՝ ըլլամ և ունիմ Օժանդակներն ալ Դերբայներուն հետ. զորօրինակ.

*Մարդ եկեր քեզ կսպասէր. այսինքն, եկեր էր ։*
*Սրան ալ գեղեցիկ կամարաշէն ձեւացուցած. այսինքն, ձեւացուցած էր ։*
*Լսեր չէ լսեր տարաձայներ է. այսինքն, լսեր է չէ լսեր ։*
*Հիմա չեմ ելներ ասանկ բան մ՝ անկէ խնդրեր, ու անոր տագնապը նորոգելու պատճառ ըլլար. այսինքն, անկէ չեմ խնդրեր, պատճառ չեմ ըլլար ։*
*Թէ որ ես եկած ու անոնց հետ խօսած ըլլայի. այսինքն, եկած ըլլայի ։*
*Հոն երթալու իր ձեռքէն առնելու էիր. այսինքն, հոն երթալու էիր ։*
*Ես անոր հետ բարեկամութիւն ըրած կամ ընկերացած՝ գործ տեսած չունիմ. այսինքն, բարեկամութիւն ըրած չունիմ, ընկերացած չունիմ ։*

339. Քանի մը Բայերու հետ երբոր միեւնոյն Օժանդակ Բայն պէտք է դնել, սովորաբար մէկանգամ կդրուի. զորօրինակ.

*Պիտի երթամ այս թուղթը տամ, և ձեր հրամանն ալ իմացնեմ. այսինքն, պիտի տամ, պիտի իմացնեմ ։*
*Թող երթայ, աշխատի, սորվի. այսինքն, թող աշխատի, թող սորվի ։*
*Շատ ժամանակ ուսման պարապեր է, և գե-*

ընցիկ գիտութիւններ ունեն է եղեր. այսին-քըն, պարապեր է եղեր։
Թող մարմինն հոգւոյն ծառայէ, և երկուքը մէկտեղ Աստուծոյ ծառայեն. այսինքն, Աստուծոյ Թող ծառայեն։

Մարդն անօրէն պիտի տեսնէ,
Իր ակռաներն ալ կըրճըտէ.
Սուրբ անունիդ ազգերն ամէն,
Պիտի փառք տան երկըրպագեն։

այսինքն, պիտի կըրճըտէ, պիտի՛ երկըրպագեն։

### Զեղչման Խնդրոյ

340. Բայերուն խնդիրներն ալ կզեղչուի, և ընդ-հանրապէս անորոշ Դերանուններն. զորօրինակ.

Մի դատէք՝ որ չդատուիք. այսինքն, մի դատէք մէկը, որ չդատուիք մէկէ մը։
Տուէք ու ձեզի պիտի տրուի. այսինքն, տուէք ուրիշին, ու ձեզի պիտի տրուի Աստուծմէ։
Ու անոր վրայ եղած Հոգիէն առաւ, այսինքն, Հոգիէն մաս մ՚ առաւ։
Քեզի հետ ժողովրդին ծերերէն առ. այսինքն, ծերերէն ոմանք առ։
Ժողովրդին ցած մարդիկներէն քրմեր ըրաւ. այսինքն, ցած մարդիկներէն ոմանք քրմեր ըրաւ։
Ու կպահեն ինչ որ անոնց մէջը գրուած է. այսինքն, կպահեն ամէնը ինչ որ, ևն։
Յաւիտենականութիւնը խորութիւն մ՚ է, որ երկ-

բաչափութիւնը չկրնար չափել, թուաբանութիւնը չկրնար հաշուել, երկրաչափութիւնը չկրնար ըմբռնել, ճարտասանութիւնը չկրնար ստորագրել. այսինքն, ոչ կամ ոչ չկրնար հաշուել, ոչ չկրնար ըմբռնել, ոչ չկրնար ստորագրել:

341. Անորոշ Դերանուններուն և Թուական ածականներուն խնդիրն երբեմն զանց կըլլայ. զորօրինակ.

Երկու մարդ եկան տաճարն աղօթք ընելու, մէկը փարիսեցի ու մէկալը մաքսաւոր. այսինքն, անոնցմէ մէկը, անոնցմէ մէկալը:

Անոնց այս ունայնութեան վիճակնին շարունակելնուն բոլոր պատճառներն չգիտենք ալ նէ, մէկ քանին կրնանք տեսնել. այսինքն, անոնցմէ մէկ քանին:

Ասոնցմէ հինգն իմաստուն էին և հինգն յիմար. այսինքն, և ասոնցմէ հինգն:

342. Երբոր քանի մը Նախադրութեան խնդիրն նոյն է, միայն մէկանգամ կդրուի խնդիրն, ու միւսներուն հետ կիմացուի նոյնն. զորօրինակ.

Մտածելով որ վագրին տեղը կամ հետը կըմեռցընեն տղան. այսինքն, վագրին տեղը կամ վագրին հետը:

Կենդանեաց հետ և պէս խօսիլն կմոռնայ. այսինքն, կենդանեաց հետ և կենդանեաց պէս:

Երկրիս տակն ու վրան՝ մէջն ու դուրսը միևնոյն բնութիւնը կգործէ. այսինքն, երկրիս տակն ու երկրիս վրան՝ երկրիս մէջն ու երկրիս դուրսը:

Բանակէն այսդին և անդին գիշերապահ զօրքեր կհսկէին. այսինքն, բանակէն անդին:

## Զեղչման Գերանուան

343. Անձական Գերանուններն շատանգամ զանց կըլլան դիմորոշ Յօդ ունեցողներուն քով, որ Յօդը կիմացնէ, ինչպէս ըսած ենք, և Յօդ չունեցողներունն ալ, որ բանէն կհասկցուի. զորօրինակ.

Ձեռք տուր ինձ. այսինքն, քու ձեռքդ տուր։
Հետ առ. այսինքն, քու հետդ առ։
Այսօր դուրսը չէր կրնար կենալ, ուստի շուտով տուն գնաց. այսինքն, իր տունը գնաց։
Պօղոս ոտքի վրայ կայնելով, ձեռքը շարժեց ու ըսաւ. այսինքն, իր ձեռքը շարժեց։

## Զեղչման Յատկացեալի

344. Երբոր միեւնոյն յատկացեալէն ետքը քանի մը Յատկացուցիչներ կան, յատկացեալն ամէն մէկ Յատկացուցչին քով չկրկնուիր. զորօրինակ.

Դուք էք այն մարգարէներուն որդիքն՝ և այն ուխտին. այսինքն, և այն ուխտին որդիքն։
Ադիկա Աստուծոյ ձայն է, ու չէ թէ մարդու. այսինքն, և չէ թէ մարդու ձայն։
Ես քեզի ըսեմ այն կնկանը խորհուրդը, ու այն գազանին՝ որ զանիկա վրան կկրէ. այսինքն, այն գազանին խորհուրդը։
Ու ամենուն մարմինները՝ թէ՛ ազատներուն և թէ ծառաներուն, թէ՛ պզտիկներուն և թէ մեծերուն. այսինքն, թէ ազատներուն մարմինները և թէ ծառաներուն մարմինները, թէ պզտիկնե-

րուն մորթիննէրն և թէ մեծերուն մորթիններն ։

## Զեղչումն Մակդիր անուանէ

345. Մէկ, թուականն, և մը, մին, անորոշ դերանուններն Անուան քով շատանգամ զանց կըլլան. օրօրինակ.

Հապա շաբաթն երկու անգամ ծոմ կպահեմ. այսինքն, մէկ շաբաթն.
Ամիսն երկու անգամ կանանց դատախարակութեան ժողովք կընէին. այսինքն, ամէն ամիսն երկու անգամ։
Տարին տասնուերկու ամիս է. այսինքն, մէկ տարին ։
Քաղքին մէջ մարդ չմնաց. այսինքն, մարդ մը չմնաց ։
Ասիկա ողջակէզ ու անուշահոտ պատարագ մըն է Աստուծոյ. այսինքն, ողջակէզ մը ու, եւ ։

## Զեղչումն Անուան

346. Մակդիր անուանին քով շատանգամ Անուանը զօրութեամբ կիմացուի, ըսած ենք. մանաւանդ երբոր անգամ մ'յիշուած է՝ չկրկնուիր սովորաբար. օրօրինակ.

Ես եօթն թագաւորներ են. հինգն ինկած են, մէկը կկենայ, և միւսը դեռ եկած չէ. այսինքն, հինգ թագաւորն ինկած են, մէկ թագաւորը կկենայ, միւս թագաւորը դեռ եկած չէ ։
Անոր բարեկամներն առաքինի մարդիկ էին, ծե-

ները ալ՝ երիտասարդները ալ. այսինքն, ծեր մարդիկներն ալ, երիտասարդ մարդիկներն ալ։

Մէկ տային և տասն հարուած առնուլն. այսինքն, մէկ հարուած տային։

Թէ բարոյական օրէնքով և թէ բնական. այսինքն, և թէ բնական օրէնքով։

Հարիւր քսանէն մինչեւ երկու հարիւր ոտք. այսինքն, հարիւր քսան ոտքէն մինչեւ, եւն։

Ժամանակը կշտացած ըլլար ըրած աւերմունքէն. այսինքն, իր ըրած աւերմունքէն։

## Զեղչում Անորոշ Բայի

347. Անկդիր բայերն Ն, Կ, շատ տեղ չեն կրկնուիր եւեւի Նային, նմանապէս\ուրիշ Անկրաւներ ալ մէկ մը գրուելով չեն կրկնուիր, կամ բոլորովին զանց կըլլան, ու կհասկցուին. օրօրինակ.

Այն որ իր խաչը չառներ ու իմ ետեւէս գար, ինծի արժանի չէ. այսինքն, ու իմ ետեւէս չգար։

Ալ մ' երթար ու անոր ձանձրութիւն տար. այսինքն, անոր ձանձրութիւն մի տար։

Անոր խաբեբայ հրամանին մտիկ չընէք, ու անորէն իշխաններուն ձեռքն ընկնիք. այսինքն, ձեռքն չընկնիք։

Դեռ արծաթէ թելը չփրրթած, ու ոսկիէ բաժակը չկոտրած, և սափորն աղբիւրին քով չփշրած, ու ջրհորին վրայի անիւը չկոտրած. այսինքն, դեռ ոսկիէ բաժակը չկոտրած, դեռ

սափորն . . . փշրած , գետ . . . անիւը կոտրած ։

Ինչո՞ւ ալ մէջտեղէն չվերցուց , չէ թէ կարող չէր , հապա որ մեծ բան մը չէր , երկրորդ՝ որ ետքի մարդոց անծանօթ պիտի ըլլար . այսինքն , հապա նախ՝ որ մեծ բան մը չէր , երկրորդ՝ որ , եւն ։

Զեղչումն Նախադրութեան ։

348 . Նախադրութիւններն շատանգամ մէկ մը դրուելով , միւս խնդիրներուն զանց կըլլայ . ետքը կամ ետեւ , մէջ , տակէն , Նախադրութիւններն երբեմն ալ ուրիշներն՝ ժամանակ ցուցնող Անուական և Բայական Անուններուն և անորոշ Դերբայներուն քով զօրութեամբ կիմացուին . օրինակ .

Բաղքին ամէն շէնքերուն ինչուան միջնաբերդին ալ վրայ կնայի . այսինքն , ամէն շէնքերուն վրայ ինչուան , եւն ։

Չէ թէ թլփատութեան մէջ , հապա անթլփատութեան . այսինքն , անթլփատութեան մէջ ։

Ու գնա արդարութեան՝ աստուածպաշտութեան՝ հաւատքի՝ սիրոյ՝ համբերութեան՝ ու հեզութեան ետեւէն . այսինքն , արդարութեան ետեւէն , աստուածպաշտութեան ետեւէն , հաւատքի ետեւէն , սիրոյ ետեւէն , համբերութեան ետեւէն ։

Մեկուն մեկալին հետ վիճաբանութիւն ընելով կհամոզէր . այսինքն , մեկուն հետ մեկալին հետ ։

Ալ ասկէ քիչ մ՚ ատենէն պիտի գայ . այսինքն , քիչ մ՚ ատենէն ետեւ ։

Վեց եօթն օրէն ամէն բան պատրաստուեցաւ. այսինքն, վեց եօթն օրէն ետքը:
Թէ ո՛ր ժամուն քու վրադ պիտի գամ. այսինքն, ո՛ր ժամուն ժը̃:
Ամէն հօլի ձայնին, ամէն տերեւի խարշափելուն կարծէ թէ հայրենասէր մը կուգայ. այսինքն, հօլի ձայնի տեղն, խարշափելուն տեղնը:
Ա՛այխոյն պիտի լինիմ. այսինքն, Ա՛այխոյն ժը̃:
Բան մը չերեւցաւ սկզբան. այսինքն, սկզբան տեղնը:

## Օրինակ Համառօտ

349. Համառօտներէն ալ ոմանք զանց կըլլան ու յայտնի կիմացուին: Նշ, ա, ոք, Թէ, Համառօտներն շատանգամ զանց կըլլան, և ուրիշ Համառօտներ ալ սովորաբար. զորօրինակ.

Մարդ ու անասուն, արջառ ու ոչխար բան մը չունին, չարածին ու ջուր չխմեն. այսինքն, անասուն և արջառ, չունին և չարածին:
Մեք հարցնենք մեր նախահարց, մեր գիւղացւոց, մեր գիտնոց ըրածներն. այսինքն, նախահարց — մեր գիւղացւոց — մեր գիտնոց, եւն:
Պէտք է բոլոր կիրքերն նուաճելով ըլլալ. այսինքն, պէտք է որ բոլոր, եւն:
Հոտով ժողվուեցան որ խորհին՝ ինչ պիտի ընեն. այսինքն, որ խորհին թէ ինչ պիտի ընեն:
Մեր եղբայրութիւնն հաստատ է՝ այն յայտնի է. այսինքն, Նշ թէ մեր եղբայրութիւնն, եւն:
Հոտ աշխատեցանք, չկրցինք բերել. այսինքն, աշխատեցանք բայց չկրցինք:

Եւ որովհետեւ դուք որդիք էք, Աստուած իր
  Որդւոյն Հոգին ձեր սրտերուն մէջ ղրկեց.
  այսինքն, ––տէ Աստուած . . . ղրկեց։
Բերան ունին, բայց չեն խօսիր. այսինքն, Թէ–
  պէտ բերան ունին։
Հինգ վեց օրուան պաշար հազիւ թէ մնացեր
  էր. այսինքն, հինգ կամ վեց օրուան։
Պալատին ներսը դուրսը բոլոր լուսաւորուած էր.
  այսինքն, պալատին թէ՛ ներսը և թէ դուրսը։

Օձերուան մանկէ կամ տանէ մը

350. Այսպէս աննշան մանկի կամ տառի մը զեղչում կըլլայ ընդհանրապէս, և մանաւանդ տաղաւոր գրուածքներու մէջ. զորօրինակ.

Մ' երթար, մ' ուզեր, մ' ըներ, մարդ մ' եկաւ,
  բան մ' որ. այսինքն, մի երթար, մի ուզեր, մի
  ըներ, մարդ մը եկաւ, բան մը որ։
Գալ շաբթու, գալ տարի. այսինքն, գալու
  շաբթու, գալու տարի։
Սանորոյ պէտ՝ ելնեմ ու երթամ անոր.
Եւ պէտ՝ աշխատիմ զանոնք գոհ ընել.
  այսինքն, պէտք ելնեմ, պէտք աշխատիմ։

Արշաւիր, կանչեց, ահա ժամն եհաս,
Դու Հայոց '–իմ տանս առաջնորդ ըլլաս.

  այսինքն, ե– իմ տանս։

Սիրելի տղաք, դուք խորհիլ կրնա՞ք
Առանց ցաւելու '– արցունք թափելու.

  այսինքն, ե– արցունք թափելու։

Իր սուրբ անունը խոստովանելով ,
Իր օրհնութիւնը տէր՝ առնուս , գիտցիր .

այսինքն , պիտի առնուս ։

Վաղիւ 'որ կռուինք քաջութեամբս մեծ .

այսինքն, պիտի կռուինք ։

Իշուն հետ ջորին օր մ' ընկերացած ,
Հարկ եղաւ մէջէն անդէ՛ դին անցնիլ ·

այսինքն, մը ընկերացած , անդիի դին ։

351 · Երբեմն ՝ կամ ը Յօդը զանց կըլլուի հետեւեալ բառն նոյն Յօդն ունենալուն համար · կամ երբոր քանի մ' Անուններու պէտք է Յօդ դնել, միայն վերջինին կդրուի · զորօրինակ ·

Ու Ամմոնի որդւոց ձեռքը մատնեց · այսինքն, որդւոցը ձեռքը ։

Մի վախնար երբոր մարդ մը հարստանայ , ու անոր տան փառքը շատնայ · այսինքն, անոր տանը փառքը * ։

Բարեկամութիւնը պէտք եղած ատենն օգնել , կարեկից ըլլալ , մխիթարել , յանդիմանել ու չգիտցածը սովրեցնելն է · այսինքն , օգնելն , կարեկից ըլլալն , մխիթարելն , յանդիմանելն ու , եւն ։

352 · Երբեմն ս և դ Յօդերն ալ կզեղչուին տաղաչափութեան մէջ · զորօրինակ ·

---

* Այսպէս շատ ը պիտի զեղչուի , երբոր աշխարհաբար լեզուն իսկ կոկուի և աւելի յստակուի ։

Բռած ճանբուս մէջ իմին անձիս դէմ
Յանցեր լարեցին իմ Թըշնամիներ ·

այսինքն, իմ Թշնամիներս ։

353. Սանկ տառի կամ վանկի զեղչում շատ կըլլայ բառերու մէջ ալ, և ասիկա յաւէտ Աշխարհաբար լեզուին մէջ գործածուած Գրաբար բառերուն -տառին, որուն տեղն երբեմն ը դնել հարկ կըլլայ · որով բառերն կկարճընայ և այբերն քիչնալով լեզուն աւելի կանուշնայ · զորօրինակ ·

Հաւտամ, ուտնիմ, սովրիմ, լուամ, ժողվեմ, ելնեմ, զատեմ, ապրեցնեմ, աշկերտ. առնեմ, ասեմ. որ է, հաւ–տամ, ուտ–նիմ, սո–վ–րիմ, լու–նամ, ժողո–վեմ, ել–նեմ, զատ–նեմ, ապրեց––ց–նեմ, աշ–կերտ, ընեմ, ըսեմ ։

Սանկ ըրէք՝ նանկ մ՚ընէք ըսելով պատուէր մը չկար · այսինքն, –սանկ ըրէք՝ –նանկ մ՚ընէք ։ Դ՚անկ բաներէն կզըզուիմ · այսինքն –դանկ բաներէն ։

---

## ԳԼՈՒԽ Գ

### ԱՒԵԼԱԴՐՈՒԹԻՒՆ

354. Աւելադրութիւնն՝ Զեղչման հակառակ բան մ՚ աւելի դնել կամ կրկնելն է՝ խօսքը զօրաւոր կամ բացայայտ և կամ զարդարուն ընելու համար ։

355. Բայց պէտք է, [illegible] Աւելադրութիւնը [illegible] Աւելադրութենէն որոշելու համար,

գիտնալ, որ Ճարտասանական Աւելադրութիւնն յաւէտ կրկնումն է նոյն բառին՝ և միևնոյն Բայի հետ կապակցութիւն չունի. զորօրինակ.

Ես եմ, ես եմ որ ձեզ կմխիթարեմ:
Աստուած իմ, Աստուած իմ, ինչո՞ւ զիս թողուցիր:

356. Իսկ Քերականական Աւելադրութիւնն է, որ միևնոյն Բային Տէր բային կամ Խնդիրն կկըրկնուի կամ տարբեր բառերով երկու անգամ կբացատրուի:

357. Այսպէս Դերանուններ՝ թէ դիմական և թէ ածական, երբեմն կրկնուած կամ աւելի դրուած կըլլայ. զորօրինակ.

Թէ դուք որ իմ ետևէս եկաք, միւսանգամ գալուստին երբոր Որդին մարդոյ իր փառաց աթոռը նստի, դուք ալ տասնուերկու աթոռներու վրայ պիտի նստիք:
Այն քարն որ շինողներն անարգեցին, անիկա անկիւնին գլուխ եղաւ:
Ես եմ ես՝ ի՞նչ պիտի ընեմ:
Դուն էիր դուն՝ առաջին անգամ խօսքը գըրգռողը:
Աստուած որ բոլոր տիեզերքը կխնամէ, նոյնը ձեր գերդաստանին պաշտպան ըլլայ:
Մէկ մարդ մը չկար՝ բնաւ մէկն որ անկէ քաշուէին:

358. Մը անորոշ Դերանուան Աւելադրութիւնը շատանգամ կերևի Մակդրի հետ. զորօրինակ.

Շատ մը խոիւ ժողվեց.
Քիչ մը բան ձեռք բերաւ:

Շուտ մ' իրար մ' անցնիք.
Անանկ մը կկենար որ մէկը չէր կասկածեր,
Աղէկ մը գիտեցի. Պինդ մը բանեց,
որ նոյն է ըսել, շատ խօսք, քիչ բան, անանկ կկե-նար, աղէկ գիտեցի, պինդ բանեց, շուտ իրար մ' անցնիք։

359. Էական բայն Յարաբերականով մէկտեղ, կամ ալ Շաղկապով, Աւելադրութիւնը կըլլայ վայել-չաբար շատանգամ, զորօրինակ.

Աստուած է որ կյաջողէ ամէն բան.
Ինքն էր որ խօսք տուաւ։
Ես եմ որ արդարութիւն կգործեմ։
Դուն ես որ սքանչելի բաներ կընես։

փոխանակ ըսելու, Աստուած կյաջողէ. ինք խօսք տուաւ. Ես արդարութիւն կգործեմ. Դուն սքանչելի բաներ կընես։
Այսպէս Հռետորականներն ալ,

Շատանգամ կըլլայ որ չար մարդիկներէն բա-րի կըլլան։
Երբեմն եղաւ որ մեք ալ անոր յարմարեցանք։

360. Նմանապէս էական Բայը մինակ, կամ անոր անցեալ Դերբայն եղած բառով, Աւելադրութեամբ կդըրուի. զորօրինակ.

Ես եղայ որ զարմանալի ծերու մը ձեռք ընկայ։

Ասոր ամէն բան մէջտեղ կեցած էր,
Խորվածներ եղեր, փիլաւներ եղեր,
Մեր գեղջուկն եղեր չիտէր ինչ ընէ։

Գլուխ մ՝ որ խելք բոռծ ծոնը չկայ։
Արդարեւ Քրիստոնեայ ընտանիք, որուն մէջ
խռովութիւն բոռծ ծոնք լսուած չէ։

361. Տաղերը բայերն ալ շատանգամ նշանակութիւնը սաստկացնել և կամ աւելցնելու համար աւելորդ կրկնուին նոյնը կամ նմանը. զորօրինակ.

Չէ, Տէր իմ, չէ։
Մի՛ դի խաբուիր, ըսաւ, բարեկամս։
Այս այս, համարձակ կրնամ ըսել։
Չոն՝ ձոն միայն ես ապահով։
Չէ՛ չէ, չըլլար ամենեւին։
Չոն այնտեղը պատիժը տուին։
Չեմ ձեմ ոլիտի բերես հոս։
Չո, Պարոն, կըսէ, տանէ է տանէ։

Մի՛ աչեր դի այն թռուման դէմքերուն,
Մի՛ դպիր դի այն ցուրտ անդամներուն։

362. Ոչ Շաղկապն երբեմն Անլադրութեամբ կըդրուի. զորօրինակ.

Եկեղեցւոյն մէջն որչափ ոչ պարզ է.
Քանի ոչ երթաս հոն։

# ՉՈՐՐՈՐԴ ՄԱՍ

## ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՏԱՂԱՉԱՓՈՒԹԻՒՆ

363. Այս մասին մէջ, ինչպէս խոստացանք իսկըզբան նախագիտելիքին մէջ, պիտի խօսինք Քերականական ուսման վերաբերեալ ուրիշ կարեւոր հմտութիւններուն վրայ, այսինքն Ուղղագրութեան, Ստուգաբանութեան և Տաղաչափութեան, որ երեք գլուխներու մէջ պիտի բովանդակենք:

---

## ԳԼՈՒԽ Ա

### ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

364. Ուղղագրութիւնն, որ Տառերու, և Կետադրութեան հմտութիւնը կպարունակէ, Քերականութեան կարեւորագոյն մէկ ճիւղն ըլլալով, պէտք եղածին չափ կատարեալ տեղեկութիւն տալ հարկ է. ուստի Տառերու վրայով Նագրատունի վարդապետին ընդարձակ Քերականութեան մէջ նոյն նիւթին վրայ գրած յօդուածէն քաղուածք ըրինք մէկերկու պզտիկ փոփոխութիւններով: Իսկ Կետադրութեան վրայ, Կաբագաշեան Պատուելիին „Քերականական Լուծում" դասագրքէն նոյն նիւթին վրայ գրած յօդուածն ամբողջապէս գրինք. որուն մէջ լաւագոյն և դիւրագոյն կանոններ աւանդուած է:

## ՅՕԴ Ը

### ՏԱՌԵՐՈՒ ՎՐԱՅ

365. Մարդկային խօսքին պարզ և արմատական տարրերն միայն տասնումէկ կամ տասներկու են. չորս ձայնաւոր, ա, է, ի, ո. եօթն կամ ութ բաղաձայն, բ, գ, դ, ւ, մ, ն, ր, ս, կամ շ. մնացածներն ասոնց կերպարերին հետևեալ երեսին վրայ գրուած ցուցակին համեմատ: ◌̇ գիրն հագագ (աբէբաբին) է:

Այս գիտութիւնը խիստ կարեւոր է լեզուի մը բառերուն ստուգաբանութեանն համար. և մենք ալ այս Քերականութեանս մէջ դրինք մեր ուսանողներն նոյն հմտութենէն զուրկ չթողնելու համար:

### ՁԱՅՆԱՒՈՐ ՏԱՌՔ

366. Ը ձայնաւորն բառերուն մէջ շատանգամ կհընչենք, բայց չենք գրեր. ինչպէս. Բժշկել, սխալ, տունս, ձեռքդ:

Եւ սկիզբը մինակ զ, շ, ս, գրերուն հետ չգրուիր. զորօրինակ. Զմարդ, զգեստ, շտապ, սկիզբն:

367. Բայց ոտանաւորներու մէջ երբոր պէտք չէ սղելով անցնիլ, ոտքը չըխալելու, և արձակ շարադրութեան մէջ տարակոյսը վերցնելու և բառերու միտքըն որոշելու համար, պէտք է իրօք գրել ը. զորօրինակ. Զըլացող. ըզլացող, Ընդ, բանըդ. Որդ, Որըդ. որ առանց ը գրելու նշանակութիւննին կըշփոթի իրարու հետ:

Ականջ դիր ինձի, միտք առ ամէն բան,
Որ հետաքըննին մանուկ բանասէր:

## ԳԱՑԿԵՐ ԱՐՄԱՏԱԿԱՆ ՏԱՌԻՑ ԵՒ ԼԾՈՐԴԱՑ

ա . է . ի . ո .    բ . գ . դ . լ . մ . ն . ր . ս կամ շ

ԼԾՈՐԴՔ { ե . յ . ով , օ .    պ . կ . տ .    ռ . ղ .    ժ { ժամանակ . ժահր

ը . ւ . ու .    վ . ք . թ } թուր , թօթափ . ց .    ղ { ղաման , ղընհեր

իւ .    փ . խ . ս } սուր , խօսափ    ձ .    ս

ֆ . ղ .    օըսման , օսման    ծ .    ց

ճ .    ձ

ջ .    ծ { ծիղ , ծկյթ , ծանեայ

ՀԱԳԱԳ ՁԱՅՆԱՒՈՐԱՑ    չ .    ճ { ճիղ , ճկյթ , ճանաչ

Հ    շ .    ջ

ժ .    չ

Ինքըն ըզգեցուց անոնց ամէնը
Պայծառանըշոյլ ճառագայթներով:

Յորուցեալ պատըսպարի և ընկեցեալ զդըրժող վահանն:
Խըլեալ վէմ մի աՀագին ձըգէ Հայկին ի սաղաւարտ.
Օ՜ր յայժմուցըս քըսան այր ի տեղւոջէն չկարէր խախտել.

Թող ըսպառնան մեզ հովերը սաստիկ.

Այս օրինակներուն մէջ յայտնի կտեսնուի որ ոտանաւորի մէջ ը ձայնաւորն երբոր առանց սղելու պիտի արտասանի, միշտ գրուելու է:

368. Այսպէս երբոր երեք, չորս բաղաձայն գիր առանց ձայնաւորի գըտնուին, այնատեն ը դնելու է [illegible] այն գրոյն քով, որ սխալ կարդացուելու վտանգէ ազատ ըլլայ. զորօրինակ. [illegible], [illegible], [illegible], [illegible], [illegible], որ ը չդըրուելով կրնայ կարդացուիլ, [illegible], [illegible], [illegible], [illegible], [illegible]:

369. Նմանկ բառերու մէջ որ վերջին վանկի ձայնաւորներն Հոլովելով փոխուած է ը ի, նոյն ձայնաւորին տեղն պէտք է գրել ը, որ սխալ տեղ ը՛ չՀընչուի. զորօրինակ. [illegible], [illegible] և ոչ [illegible], [illegible], [illegible] և ոչ [illegible]. [illegible], [illegible] և ոչ [illegible]. [illegible], [illegible]. [illegible], [illegible]:

370. Ս, Դ, Ն, Յօդերն բաղաձայն վերջնատառով բառերուն վերջն կՀընչուի, [illegible], [illegible], [illegible]. ինչպէս՝ [illegible], [illegible], [illegible]. բայց թէոր իրենց յաջորդ բառերուն սկզընատառն ձայնաւոր կամ անգիր ը ըլլայ

,

և կամ հ, յ, ըլլայ, որոց առաջինն հագագ է ու երկ-րորդը ձայնաւոր է գրի տեղ*, ու չէ թէ միշտ բաղաձայն տառեր են, այնատեն պէտք է նոյն Յօդերն սղելով հնչել առանց ը ի. զորօրինակ.

Գրիչ ո՛ւր է, Գինքդ առ, Լոյս առաւօտուն. Սախկոտ զգուշանայ պիտի. Մեղքերուդ եկու. Խօսքդ հատաւ. Գործդ յաջող գնայ. Իբրեւ թէ գրուած ըլլար, Գրիչ ո՛ւր է, գիրք տուր. եւն.

371. Նոյնպէս պէտք է սղել երբոր բառին վերջ-նատառն ւ և չ նոյ գրերէն մէկն է**. ինչպէս.

Աղօթել կոխրէ, Պտուղները բերին :

372. Մինչ թէ երբոր բառ մ' երկու երեք բա-ղաձայն տառ ունենայ իր վերջն, այնատեն բացառու-թիւն կըլլայ վիշեալ կանոններուն՝ հնչումը դժուար ըլլալուն համար :

373. Երբոր բառի մ' սկիզբն երկու բաղաձայն կայ, ու երկրորդ բաղաձայնը նոյ գիր է, այսինքն ւ (կամ ւ), մ, ն, չ, գրերէն մէկը, այն երկու գրերուն մէջ ը հնչումն չաւելցնելով յաջորդ ձայնաւորին հետ իբրեւ մէկ վանկ պէտք է հնչել. ինչպէս. Տղայ, Խլուրդ, Կմախք, Գնել, Պղնձուկ. ուրեմն սխալ է, Տըղայ, Խըլացած, Պըղպիսսու, եւն. հնչելն : Իսկ թէոր նոյ գրերէն զատ սկիզբն ունէ զոյգ բաղաձայն գրերն ալ այս կանոնով հնչենք, որ այն է շիտակը, այնատեն բառերն թեթեւ՝ արագ և սահուն կըլլան, և լեզուն

* Տես 6 Տառ., 385 :
** Տես Թուահամար 383 :

կայտառութիւն մը կառնու, կըսէ Գարագաշեան Պատուելին. Նախ զատ երկու բաղաձայն իրարմէ զատել ուրիշ լեզուի մէջ սովորութիւն չէ, կըլլայ նոյն հեղինակը.

374. Զ, Ս, շեշտական տառերն բառերու սկիզբն նայ գրերուն, նաեւ անոնց մօտ Ս, Ի. բաղաձայններուն հետ, կամ ը երբոր կրկնուի, ը կառնուն իրենցմէ ետքը, թէոր ը նախդիր կամ մասնիկ չէ. զորօրինակ. Զ (զըլանալ), այսինքն ուրանալ, Զ (զըղեար), Զ* (զըմուռս), Զ (զընդալ) այսինքն խնայել, Զ (զըրոյց), Զ (զըռալ), Զ (զըղուանք). Ս (սըլաք), Ս (սըղոխ), այսինքն շունչ, Ս (սըմբակ), Ս (սընդիկ), Ս (սըրահ), Ս (սըխալ), Ս (սըռինչք), այսինքն սուլելու ձայն.

375. Ուրիշ բաղաձայնի հետ սկիզբը կառնուն ը իրենցմէ առաջ, Ս (սըպրդիմ) բառէն զատ. ինչպէս. Զ (ըզգամ), Զ (ըզգօսանք), Ս (ըսպասեմ), Ս (ըստոյգ):

376. Բայց ասոնց հետ ալ ը կառնուն իրենցմէ ետքը, թէոր իրենց արմատին մէջ Ս կայ. զորօրինակ. Զ, զտել (զըտել). Ս, սգաւոր (սըգաւոր):

377. Շ, շեշտական տառն գրեթէ միշտ իրմէ ետքը ը կառնու. զորօրինակ. Շ (շըփոթ), Շ (շըռայլ), եւլն. այս բառերէն զատ, Շ (ըշտապ), Շ (ըշտեմարան).

378. Զ, Ս, տառերն պէտք չէ հնչել իբրեւ էզ կամ էս. զ կամ ս, ինչպէս ոմանք կ'ընեն, այլ զոց եւ ամփոփ բերնով պէտք է արտաբերել իբրեւ սուղ է

---

* Բացառութիւն է զմուռս բառն, թէոր ը մասնիկ չէ նա-յեւ Արաբերէն բառին.

*և օ, մանաւանդ բառերու մէջ. զորօրինակ.* Մեծ, Բերել, Բոլոր, Հոր: *Բառերուն սկիզբը նոյնպէս պէտք է արտաբերել, բայց քիչ մ' աւելի ամփոփ շրթունքներով իբրև սուղ* յե*, ւո, *զորօրինակ.* Երկիր (*յերկիր*), Երկու (*յեկու*), Ես եմ (*յես յեմ*). Որ (*ուոր*), Ոչ (*ուոչ*), Ով է (*ուով*) է, Որդի (*ուորդի*). *եթէ՝* երկիր, եկու, ես եմ, որ, ոչ, ով է, որդի:

379. Ւ *իբրև ձայնաւոր տառ հնարուած է* ւ (*ետւ*), ու *ձայներուն մօտ, բայց ժամանակ անցնելով* Վ *ի մօտեցուցած են, ու ասանկ կարտաբերի հիմա մանաւանդ ռամկին բերանը. բայց հմուտները զգուշանալու են բոլորովին չռամկանալու: Ուրեմն այս տառն երկու կերպով կգործածուի, ըստ տեղւոյն ձայնաւոր, և ըստ տեղւոյն բաղաձայն:*

380. Ւ *էն զատ ուրիշ ձայնաւորէ մ' ետքը* Վ *չգար. ուստի միշտ գրելու է,* աւ, եւ, իւ, *փոխանակ* ավ, էվ, իվ: *Իսկ բառերու մէջ բաղաձայնի մ' անմիջապէս քովը* Վ *ի տեղ* ու *կգրուի և ոչ միայն* ւ. *ինչպէս.* Լուալ, Գործուիլ, Թուին. *փոխանակ գրելու,* Լըվալ, գործվիլ, Թվին:

*Բայց տաղաչափութեան մէջ երկու վանկ արտասանելու և չըղելու, և արձակ շարադրութեան մէջ սխալ չկարդացուելու համար, միշտ* ու *ին տեղը* ըւ *գրելու է. զորօրինակ,*

*Դու փորձըւեալդ տուր օրինակ*
*Յաղթել ամէն չարեաց:*

*Աստըւած հարցըն մերոց:*

*Բայց տառեղք անգութք ապա, բախտ աննըւէր*
*սիրոյ սրտից:*

---

* *Ասոր կ'վկայեն* իրէկ *և* իրիկուն *բառերն, որոց ուղիղ գրուածքը և հնչումն է* երէկ, երեկոյ:

Ինչպէս որ եմ մեղքով լցուած,
Խեղճ մեղաւոր ու կորսուած.

Արաւորական կոնւոյ ՝Ներգործական անկատար կոն-ւոյ—ի չկարդացուելու համար՝ ը ով գրուելու է կոն-ուոյ. նմանապէս կորւոյ, կորւոյ չկարդացուելու հա-մար. և բոլոր ասոնց պէս բառերն. ՝Նաւը, Ծովուը-ւեր, Պատուըւեր, ասանկ բառերու մէջ երկրորդ ւոն ը գրելու է։

381. Ւ, երբոր նախադաս է ձայնաւորի կամ բա-ռին վերջը, կհնչուի աւ մէկ ձայնով մօտ վի հնչման. բայց չէ թէ վերի ակռաներն տակի շրթունքին զար-նելով ճիշդ իբրև վեվ հնչել. օրօրինակ. Աւանդ (աուանդ), աւերակ (աուերակ), ցաւեր (ցաուեր), նաւ (նաու), բերաւ (բերաու)։

382. Երկբարբառներն եա, իւ, եօ, եա, եէ, եաւ, ուա, ուէ, ուի, ասոնք մէյմէկ վանկ են, ուստի ա-նոնք կարդալու ատեն կամ ոտանաւորի մէջ երկու վանկի տեղ առնելով, ինչպէս, ե—ա, ի—ւ, ու—ա, ու—ի, զատ հնչելն սխալ է, և լեզուն ծանր ու դան-դաղ կընէ։ Ուստի զգոյշ ըլլալու է, Մարի—ամ, Գի—երի, աւանդ—էն, հնչելէն, այլ պէտք է իբրև մէկ վանկ սղելով հնչել։

### ԲԱՂԱՁԱՅՆ ՏԱՌՔ

383. Բաղաձայն տառերուն մէջ նուրբ կամ բա-րակ ու լերկ են ասոնք, պ, կ, տ, ծ, ճ, ղ, մ, յ, և կամ ւ, ն, շ, ս, ր։ Միջակ են ասոնք, բ, գ, դ, ձ, ջ, ժ, հ, զ. Թաւ կամ թանձր են ասոնք,

ժ, ծ, ճ, ջ, ւ, ի, ռ*. ու ասոնցմէ, ը (կամ ը՛),

---

* Այս օրօչումն յայտնի կցուցնէ թէ տարբերութիւն կայ տառից հնչումներուն մէջ, այսինքն՝ նուրբ տառերն նուրբ, միջակներն միջակ, և թանձրերն թանձր հնչուելու է. ուրեմն Բաու և Փաու, Գայլ և Քայլ, Դաաու և Թաաու, Հայր և Ցայր, Ձայն և Ցայն, Ձաա և Ջաար, Զէալէ և Սէանէլէ, Խաղալ և Ղայիլ, միևնոյն հնչումով արտասանելն ագիտութիւն մըն է. քանզի բառ մը կարծեաց՝ Հայկեան նախնի լեզուն բուն այս բառերն տարբեր հնչելուն համար զատ զատ գրեր հնարել հարկ եղած է.

Ես հիմա մենք թէ որ բաղդատութիւն մ՚ ընենք ռուսկաց կամ Հայաստանցւոց հնչմանցն ու արդի Պօլսեցի ուսումնականաց կամ կրթուածներուն հնչմանցն մէջ, աւելի պարզ պիտի տեսնուի թէ ինչուշ տարբերութիւն կայ եղեր մեր տառերուն նախնի հնչմանցը մէջ. որմէ առաջինք մէկ ծայրն ու երկրորդք միւս ծայրն չեղած են. զորօրինակ·

| Առաջիններուն հնչումն | Երկրորդաց հնչումն | Ուղիղ հնչումն |
|---|---|---|
| Պիերան | փէրան | Բերան |
| Կէշ | Քէշ | Գէշ |
| Տայեկ | Թայեկ | Դայեկ |
| Ծիեռք | Ցեռք | Ձեռք |
| Ճուր | Չուր | Ջուր |

Հաս գնենք – և ի ձայնաւորներուն չեղումն ալ.

| Ո–ւ–ղ––րմեա | Վ.ղօրմեա | Ողորմեա |
|---|---|---|
| Ըսէմ | Ըսէմ | Ըսէմ |

Արդ թէ որ Բագրատունի Վարդապետին աւանդած կանոնին նայինք, որ կըսէ. "Միջակքն բ, գ, դ, ձ, ջ, բառ ուղիղ արտաբերութեան հայրենեաց առաւել մօտ հնչելի են երրիցն լծորդաց պ, կ, տ, ծ, ճ, քան թէ ացն փ, ք, թ, ց, չ." Առաւել ուղիղ հնչում ունին, ըսել է, առուաները քան Պօլսեցի կրթեալք։

Ասոր երեւելի վկայութիւն են, Ծ——ծէ և ... բառերն որ է, Յուսաղեղ և ձոր, գլորել բային արմատը, որ թէ Պօլսեցիք և թէ Հայաստանցիք միակերպ նուրբ կհընչեն ջ և ձ միջակներն։

Ուսուցիչներն այս մասին քիչ մ՚ աշխատութիւն յանձն առնելու և անձանձիր վարժութիւն ընելու են աշակերտաց՝ հայկական քաղցր լեզուին ուղիղ հնչմունքն կենդանացնելու համար. որով կդիւրանայ տառերուն ուղղագրութիւնն ալ բառ մասին։

մ, ն, ր, նայ կըսուին, այսինքն փափուկ կամ կակուղ ։

384. Խ և Ղ տառերն պէտք է միշտ քաղցր ու մեղմ արտաբերել Յունարէն χ և γ տառերուն պէս, ու չէ թէ բարբարոսաբար թանձր ու կոկորդային ։

385. Յ գիրն է ձայնաւորին պէս կհնչուի ա, ո. ձայ-նաւորներէն ետեւ, որոց միայն կյետադասի այդ հընչ-մունքով ուրիշ բաղաձայնի կամ ձայնաւորի քով. ինչպէս. Այծ (աիծ), Լոյս (լոիս), Խայանք (կաիանք), Այս (աիս)։ Աղէ կերեւի թէ յ գրին ճիշդ հնչումն այս է, ո-րովհետեւ օտարազգի բառերն տառադարձութեամբ Հայերէնի փոխուած ատեն է գրի տեղ գրուած կ'ե-նենք. ինչպէս, Յօէլ, Յէսսէ, Յոնէ, փոխանակ, Իօէլ, Իէսսէ, Իոնէ։ Բայց արդի հնչումն թէոր բա-ռին սկիզբն է, իբրեւ Հ կհնչուի, և ուրիշ ձայնաւորի ալ կյետադասի. զորօրինակ, Մեծայոյս, Թորէյծոր, մըլայական։ Իսկ բառերուն վերջը սա՝ այ, էայ, Հայ, Քայ, Խայ, բառերէն զատ, բոլորովին անձայն է. ինչ-պէս, Ընծայ, Պարէտատեայ, Աստուծայ։ Բայց յ երբեմն Հի հնչում ունենալուն նայելով՝ անոր հետ լծորդ-ուելու չէ, Հն հագագ է, և միշտ իր հագագային ձայնը կպահէ. ուր յ՝ է ձայնաւորն է, և բառին ըս-կիզբը միայն, այն ալ թերեւս մինակ մեր արտաբե-րութեանը մէջ, Հի հնչման կմօտենայ։

486. ԳԻՏԵԼԻՔ Ա. Ինչպէս որ ըսինք իսկըզբան նախադիտելիքին մէջ, թէ Հայերէն այբուբենն ե-րեք ձեւով կգրուի, այսինքն Երկաթագիր, Բոլոր գիր, և Նոտր գիր։

387. Արդ Երկաթագիրն կգործածուի չէ թէ մի-այն ամէն տեներուն սկսուածքին, այլ նաեւ սրբազան և պատուոյ Անուններուն, ու անոնց տեղն գրուած

Դերանուններուն և Մակդիր անուններուն, ինչպէս նաև ամէն պարզ յատուկ Անուններուն և մականուններուն, կամ իբրև յատուկ գործածուած հասարակ անուններու սկզբնատառն Երկաթագրով պէտք է գրել · զորօրինակ ·

Տէր, Աստուած, Ստեղծիչ, Փրկիչ, Յիսուս, Քրիստոս, Ամենակալն, Նորին Վսեմութիւնը, Ձերդ Վեհափառութեան, Հրամանքնիդ, Տէրութիւնդ, Եման Եղրահացին, Միսակեան Ընկերութիւն, Արսէն Բագրատունի, Հայաստան, Լոնդոն, Սև ծով ։

Ասիկա ուրախացուց Դաւիթն երբոր ինք Մա-
հուան շուքի ձորին մէջն էր ·
Կարելի է որ Ուրացութեան քաղաքը բնակող
Մոլորեալն ըլլայ ·

388. Նաև տաղաչափութեան իւրաքանչիւր տողն գլխագրով պէտք է սկսիլ, ինչպէս որ մինչև հիմա տրուած ոտանաւոր օրինակներուն մէջ տեսնուեցաւ, և հետևեալն ·

Փառք Հօրըն և Որդւոյն
Սրբոց ժողովներէն.
Տըրուի նոյն փառքն ալ Սուրբ Հոգւոյն
Հիմա և միշտ. ամէն ·

389. Երկաթագրով կգրուին երբեմն պատուոյ համար, մասնաւոր գրուածքներու մէջ, ԱՍՏՈՒԱԾ, ՅԻՍՈՒՍ, ՔՐԻՍՏՈՍ, և անոնց վերաբերեալ ուրիշ անուններու ամբողջ գրերն · ինչպէս, Ես եմ ՈՐ ԷՆ · Նմանապէս, ՍՈՒԼԹԱՆ, ՎԻՔԹՈՐԻԱ, ՊԱՏՐԻԱՐԳ, և ասոնց պէս անուններն ։

390. Նոյն ձեւով կգրուին վերտառութիւններն կամ տիտղոսներն. զորօրինակ.

> Ու անոր վրան կնիք փորագրածնուն պէս ՍՐԲՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ փորագրես ։

391. ԳԻՏԵԼԻՔ Բ. Խօսքի մէջ երբոր մէկ կամ աւելի բառից ազդութիւն տալ պէտք ըլլայ, դիտողութեան առարկայ ընելու համար զայն, տարբեր ձեւ գրով կգրուի ։

392. Տպագրեալներուն մէջ նօտր* գրով կգրուի. և եթէ աւելի ազդութիւն տալ հարկ ըլլայ երկաթագրով կգրուի. զորօրինակ.

> Իրաւ, խօսելը շատախօսներն ու պարծենցողները կհաճեցնէ, բայց ընելն է որ Աստուծոյ հաճելի կընէ ։
>
> Բայց եթէ Քրիստոնէութիւնն ընդհանրական ըլլալու յատկութիւն ունի ։
>
> Վերջն ալ այս կաւելցնէ, "ամէն բան ձեզի ցուցուցի, եթէ այնպէս պէտք է աշխատիլ, ու տկարներուն օգնութիւն ընել" ։
>
> Պակասութիւններն մանկութեան ատեն դիւրադարձ, պատանեկութեան ատեն հաստատուն, չափահասութեան ատեն ԽՈՐՈՒՆԿ ԱՐՄԱՏԱՑԱԾ, և ծերութեան ատեն ԱՆԲՈՒԺԵԼԻ են ։

393. Ձեռագրերու մէջ արագագրութեան համար տարբեր ձեւ գիր գրելու տեղն՝ ազդութիւն տա-

---

* Հայերէն Աշխարհաբար լեզուի թարգմանուած Աստուածաշունչին մէջ նօտր գրով գրուածներն՝ չէթէ ազդութիւն տալու համար են, այլ կցուցնեն թէ բնագրին մէջ նոյն բառերն չկան ։

լու համար բառին տակն ուղիղ գիծ մը կը քաշեն, և աւելի ազդու ցուցնելու համար զոյգ գիծ. զորօրինակ.

[illegible], [illegible] [illegible]։

[illegible] ըլլայ։

[illegible] ( [illegible] ) [illegible] ըլլալ, [illegible]։

## ՅՕԴ · Բ

### ԿԵՏԱԴՐՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

394. «Կէտադրութիւն կըսուի այն արուեստն որ, կէտ կոչուած նշաններով՝ գրութեան մէջ կցուցնէ թէ ե՛րբ և ինչպէս՝ կարդալու ատեն հանգիստ ընելու է։

395. «Կէտադրութեան նշաններն են Բութը (՝)՝ Ստորակէտը (,)՝ Միջակէտը (·)՝ Վերջակէտը (:)՝ Պարոյկը (°)՝ Երկարն (´)՝ Կախումը (. . .)՝ Տաշը (—)՝ Չակերտն (")՝ ու փակագիծը ( )։

#### Ա · ԲՈՒԹ

396. «Բութն ամենէն կարճ հանգիստը ցուցնող կէտանշանն է։ Այս նշանը խօսքին մէջ խօսքին նոյնատեսակ մասերն իրարմէ զատելու համար կգործածուի։ Աստի բութը

Ա. «Միեւնոյն գոյականին վերաբերութիւն ունեցող ածականներն կամ ստորոգելիներն* զատելու կգործածուի։

Աշխարհիս վրայ լոյս՝ խաւար՝ ջերմ՝ ցուրտ՝ պինդ՝ լոյծ՝ ցնդելի բաներ խառն կգտնուին։

Տիւրացիք առաջադէմ՝ համբերող՝ աշխատասէր՝ մաքուր՝ առաջադէմ ու խնայող են։ Ասոնցմէ աւելի հաստատամիտ՝ աւելի անկեղծ՝ աւելի հաւատարիմ՝ աւելի պատուելի՝ աւելի օգտակար ժողովուրդ մ' երբեք եղած չէ։

Գ. «Բութը կգործածուի իրարմէ զատելու համար շատ մը Տէր բայեր, շատ մը սեռի կամ բնութեան խնդիրներ որոնք միեւնոյն Բայի, շատ մը Բայեր որոնք միեւնոյն Տէր բայի կվերաբերին, երբոր ասոնց ամէնն ալ մէյմէկ բառ, կամ խիստ կարճ են։

Անիրաւութիւնը՝ բռնութիւնը՝ ապստամբութիւնը՝ դաւերն՝ պատերազմներն Աստուծոյ սիրած այն երկրին մէջ իրենց անգութ և վարակեալ ձայնն երբեք լսել չեն տար։

Այս անբաւ երկրագունդն իր մակերեւութին վրայ մեզի կընծայեցնէ լեռներ՝ ձորեր՝ տափարակներ՝ ծովեր՝ ճահիճներ՝ անտառներ՝ գետեր՝ հրաբուխներ։ Իսկ անոր ներսիդին թափանցելու ըլլանք, կգտնենք տեսակ տեսակ մետաղներ՝ հանքեր՝ քարեր՝ ձիւթեր՝ ածուխներ՝ ցամաքային՝ ջրեր և ուրիշ նիւթեր։

Անիկա գեղջկաց տներուն այցելութիւն կըներ.

---

* Մեր Ուղղական խնդիր բառերն այս Հեղինակն Ստորոգելի ըսած է։

անոնց [illegible]՝ [illegible]՝ [illegible]՝ [illegible]՝ [illegible]՝ [illegible]՝ [illegible]՝ [illegible]՝ և [illegible] [illegible] [illegible] կտեղեկանար ։

Այս փիլիսոփան ուրախութեամբ կխոստովանէր թէ հոգին [illegible]՝ [illegible]՝ [illegible]՝ [illegible]՝ [illegible]՝ [illegible]՝ [illegible]՝ [illegible] ։

« Նոյնպէս Նթով կզատուին միեւնոյն օժանդակ Նայի վերաբերեալ ընդունելութիւն անցեալներ , միեւնոյն Նայի վերաբերեալ աներեւոյթներ* . զորօրինակ .

Եթէ կուզուի որ տղաք միշտ տղայ չմնան՝ այլ վարպետ ըլլան , հայրերն ու վարպետներն զանոնք խիստ կանուխ [illegible]՝ [illegible]՝ [illegible]՝ [illegible]՝ [illegible]՝ [illegible] ու [illegible] ըլլալու են ։

Աւրիշ ո՞վ երբեք Յուլիային պէս [illegible]՝ [illegible]՝ [illegible]՝ [illegible] ու [illegible] է ։

Գերագոյն ու կատարեալ կառավարութիւնը կառավարողներն կառավարելու մէջ կկայանայ . պէտք է զանոնք [illegible]՝ [illegible]՝ [illegible]՝ [illegible]՝ [illegible]՝ [illegible]՝ [illegible]՝ [illegible] ու միշտ իրենն ունել ։

Գ . « Նութ կգործածուի խօսքին մէջ հոն՝ ուր Նայ մը զեղչուած է . զորօրինակ .

փրանկներն , վայրենի ժողովուրդ , բանջարով՝ պտղով՝ արմատներով և ոսով մինակ կապրէին ։ Երեւն՝ լուսինը՝ լուսաւորներն՝ գետե-

* Մեր անցեալ Գերբայ բառին անցեալ ընդունելութիւն , և անորոշ Գերբային՝ աներեւոյթ կըսէ նոյն հեղինակը ։

րըն էին անոնց չաստուածներն. խոր անձաւներ՝ անոնց մեհեանները. աստեղաբաշխներ՝ բժիշկներ ու դատաւորներ՝ անոնց Դրուիդ կոչուած քրմերն. փայտէ ու կաւէ շինուած հիւղեր՝ անոնց քաղաքներն. իսկ առուտուրնին էր փոխանակութիւն։

Դ. "Բութով կզատուի խօսքին այն մասն որ դիմաւոր Բայ չունենալով՝ ամբողջ նախադասութիւն չէ, այլ ուրիշ նախադասութենէ մը կամ խօսքին դիմաւոր Բայ ունեցող մասէն կախում ունի. օրինակ.

[illegible] մէջ [illegible]՝ որոշեցի որ Սիկիլիա երթամ, քանզի լսած էի թէ հայրս ալեկոծութեամբ հոն ընկած էր։

[illegible]՝ սկսանք Արեւու կղզւոյն լեռներն նշմարել։

Թէոդոս՝ [illegible]՝ Արեւմտեանը Վաղենտիանոսի տուաւ։

[illegible]՝ հասկցանք որ մեր բոլոր ջանքերն վայրապար պիտի ըլլան։

[illegible]՝ սկսաւ ջերմ արտասուք թափել։

Ե. "Երբոր Տէր բային շատ մը յարակից մասեր ունի, և Բայն ալ Բութով կամ Ստորակէտով բաժնուելու մասեր չունի, բոլոր խօսքն առանց կետանշանի չըմնալու համար՝ Տէր բայիին մասը Բութով կբաժնուի որ շնչառութեան հանգիստ տրուի. օրինակ.

Իրենց նախնի աստուածութիւններն պահելու համար Ե-գիպտացւոց ամենէն գեղեցիկ մէկ հնարքն ալ՝ անոնց համար յատուկ տօնահանդէսներ սահմանելն էր. ասով աւանդութեանց բարոյական նշանակութիւնը՝ ժողովրդին մտքին մէջ կտըպաւորուէր։

## ՍՏՈՐԱԿԷՏ

397. «Ստորակէտը կդրուի խօսքին այն տեղն ուր աւելի հանգիստ ընել պէտք է։

«Գիտնալու համար թէ Ստորակէտն ո՛ւր և երբ գործածելու է՝ հետևեալ կանոններն միտք առնելու է։

Ա. «Երբոր խօսքի մը նոյնատեսակ մասերն, զորօրինակ Տէր բայիներ՝ Խնդիրներ՝ Ստորոգելիք միևնոյն օժանդակի վերաբերեալ Ընդունելութիւններ՝ միևնոյն Տէր բայի վերաբերեալ Բայեր՝ և ուրիշ ասոնց նման մասեր երկայն են, իրարմէ Ստորակետով կբաժնուին։

Ընծանօթ ամուսնութենէ մը ծնած, անպարկեշտ կնոջ մը խնամքովը սնած, հովիւներու մէջ մեծցած, յետոյ յելուզակներու ջոկատի մը գլուխ եղող իշխան մ՚ աշխարհիս մայրաքաղաքին առաջին հիմնարկուն եղաւ։

Եգիպտոս արդարեւ աշխարհիս ամենէն գեղեցիկ, իրնէ ամենէն առատ, արհեստիւ ամենէն լաւ մշակուած, ամենէն հարուստ, ամենէն հանգըստաւէտ, և իր թագաւորներուն խնամատարութեամբն ու մեծագործութեամբն ամենէն զարդարուն երկիրն էր։

Ո՛վ արժանաւոր որդիդ իմաստնոյն Ոդիսեայ

ըսաւ Տիմէօ, ես հօրդ կերպարանքին զգօնութիւնը, խօսակցութեանը շնորհալիութիւնը, պերճախօսութեանը զօրութիւնը, զգացումներուն ազնուութիւնը, մտածմանցն իմաստութիւնը քու վրադ կտեսնեմ։

Խօսակցութիւնը շարունակելով՝ սկսան խօսիլ դից ծագմանը՝ դիւցազանց՝ քերթողաց՝ ոսկեդարուն՝ ջրհեղեղին՝ մոռացման գետին ուր մեռելոց հոգիներն կընկղմին, Տարտարոսին սեւաթոյր վհին մէջ ամբարիշտներուն պատրաստուած յաւիտենական պատժոց, և այն երջանիկ խաղաղութեանը վրայ զոր Եղիսեան դաշտերուն մէջ արդարներն կվայելեն առանց երկիւղի՝ թէ կրնան երբէք կորսնցունել։

Փրանսուա Ա. Անգղիոյ թագաւորին հետ եղած դաշնադրութիւններուն հաստատութիւն տուաւ, Վենետացւոց ու Աւստրիայի Կարոլոս թագաւորին հետ նոր դաշնադրութիւններ ըրաւ, յետոյ Ալպեան լեռներն անցաւ, Հելուետիացւոց վրայ Մարինեանի քով մեծ յաղթութիւն մ՚ըրաւ, և այսպէս բոլոր Մեդիոլանու տէր եղաւ։

Գոլպէրի պաշտօնէութեան ատեն ամէն բան ուրիշ կերպարանք առաւ. անիկա վաճառականութիւնն ստեղծեց, մեծամեծ ճամբաներ նորոգել տուաւ, նոր պողոտաներ բացաւ, Լանկտոկի հռչակաւոր ջրմուղը կառոյց, ազատ նաւահանգիստներ կացոյց, վաղեմի գաղթականութիւններն ծաղկեցոյց, նոր գաղթականութիւններ կազմեց, և մանաւանդ ծովային զօրութեան հոգ տարաւ։

Բ. «Խօսքի մը մէջ սոսկ բացայայտիչ զօրութիւն

ունեցող միջանկեալ խօսքի մաս մը՝ երկու կողմէն Ստորակէտով կզատուի. զորօրինակ.

Այս աշխարհիս ամենէն մեծ պետութեանը, այսինքն Հռոմէական պետութեան, վրայ Աստուծոյ դատաստանները մեզի թագուն չեն ։
Անիկա ուզեց իս թողուլ երթալ, և գնաց. բայց աչէկոծութեամբ իմ վրէժս անկէ պահանջուեցաւ ։ Անոր նաւն, երկայն ատեն հովերուն խաղալիք ըլլալէ ետքը, ալեաց մէջ թաղուեցաւ ։
Ո՞վ է հայրդ, ըսաւ դիցուհին, զոր կփնտռես ։ Անիկա Ոդիսեւս կկոչուի, ըսաւ Դելեմաք. Տրովայի համբաւաւոր քաղաքը, տասնամեայ պաշարում մը ետքը, կործանող թագաւորներուն մէկն է ։
Տիւրացիք, երենց վաճառականութեանը պատճառաւ, զարթուցած էին Սեսոստրիս մեծ թագաւորն, որ Եգիպտոս կթագաւորէր, ու բազմաթիւ թագաւորներու տիրած էր ։ . . . Սեսոստրիս, անոնց ամբարտաւանութիւնը կոտրելու համար, միտքը դրած էր որ բոլոր ծովերու վրայ անոնց վաճառականութիւնը չփոթէ ։

“Այս օրինակներուն մէջ, ինչպէս կտեսնուի, նօտրագիր խօսքերն միջանկեալ մասեր են. և անանկ պարագայ մը կբացատրեն որ առանց իմաստին այլայլութիւն մը տալու՝ կրնայ զանց առնուիլ, և անոր համար է որ խօսքին մնացած մասէն Ստորակէտով կըբաժնուին ։ Ասոնց սոսկ բացատրիչ պարագայ մը, ուստի և միջանկեալ մաս ըլլալն հասկնալ դիւրին է. բայց յարաբերական Դերանունով բերուած միջանկեալ նախադասութիւններն աւելի ուշադրութիւն կըպահանջեն ։

398. “Յարաբերական Դերանունով բերուած միջանկեալ նախադասութիւններն երկու տեսակ են. ոմանք՝ բացորոշական, ու ոմանք՝ մեկնողական։ Բացորոշական միջանկեալներն գլխաւոր նախադասութենէն Ստորակետով չեն բաժնուիր, բայց մեկնողական միջանկեալներն Ստորակետով կբաժնուին։

399. “Կմնայ գիտնալ թէ բացորոշական ու մեկնողական միջանկեալ նախադասութիւններն ի՞նչպէս կճանչցուին։

400. “Յարաբերականով բերուած միջանկեալ նախադասութիւն մը բացորոշական է, երբոր Յարաբերականին յարաբերեալն անհատ կամ յատուկ բան մը կնշանակէ. բայց երբոր յարաբերեալն ընդհանուր իմաստ ունի, Յարաբերականով բերուած միջանկեալ նախադասութիւնը մեկնողական է։

401. “Այս վարդապետութիւնն օրինակով աղէկ կհասկըցուի։

ՕՐԻՆԱԿ

Աստուածային մեծագործութեան արտաքին գահն է բնութիւնը. այն մարդն որ անոր մտախոհ ու խելամուտ է, տակաւ առ տակաւ ամենակարողութեան ներքին գահը կամբառնայ։

“Այս խօսքին մէջ մարդ բառն մասնաւոր մարդ մը կնշանակէ, այսինքն անոր մտախոհ ու խելամուտ եղող մարդը, ոչ թէ ամէն մարդ կամ մարդկային ազգը։

ՈՒՐԻՇ ՕՐԻՆԱԿ

Աստուած, ամէն լուսոյ և ամէն իմացականութեան միակ աղբիւրն, անսահման կարողութեամբ տիեզերքն ու արարածոց տեսակներն ամբողջապէս կըվարէ. մարդս, որ այն իմացականութեան հայելի մէկ

շատաւորին ունի, նիւթոյ փոքրիկ մասերուն վրայ միայն սաՀմանաւոր կարողութիւն մ' ունի, և անՀատներուն միայն տէր է։

"Այս խօսքին մէջ մարդ բառը բոլոր մարդիկ կամ մարդ կոչուած էակը կնշանակէ։

"Առջի օրինակին մէջ ընդՀանուր ամէն մարդիկ չեն որ ամենակարողութեան ներքին գաՀը կամբառնան, այլ մինակ բնութեան մտախոՀ և խելամուտ եղող մարդն է։

"Երկրորդ օրինակին մէջ ընդՀանուր բոլոր մարդիկ կամ մարդ էակն է որ սաՀմանաւոր կարողութիւն մ' ունի։

402. "Մարդու ու տեղւոյ յատուկ անուններէն ետքն Յարաբերականով բերուած միջանկեալ նախադասութիւն մը միշտ մեկնողական է, անոր Համար Ստորակետով բաժնուելու է. զորօրինակ.

Կիննա, որ մինչեւ այն ատեն Հռոմի մէջ արհամարհուած էր, աՀագին եղաւ։
Կարմիր ծովն, որ Արաբիա վերին Եթովպիայէ և Եգիպտոսի մէկ մասէն կբաժնէ, երբեք Հարիւր քսուն մղոն երկայնութիւն ու քառասուն մղոն լայնութիւն ունի*։

---

* "Մեզի կերեւի թէ մարդոյ և տեղւոյ յատուկ անուններէ ետքը Յարաբերականով բերուած միջանկեալ նախադասութիւններն ալ Աշխարհաբարի մէջ ընդունելութեամբ բացատրելն աղէկ չէ. քանզի նոյնպէս իմաստը կայլայլէ։
Զորօրինակ՝ եթէ ըսելու ըլլանք. Հռոմի մէջ մինչեւ ան ատեն արհամարհուած Կիննան. կամ, Արաբիա վերին Եթովպիայէ և Եգիպտոսին մէկ մասէն բաժնող Կարմիր ծովը, կրնայ Հասկցուիլ թէ Հռոմի մէջ չարհամարհուած ուրիշ Կիննա մ' ալ, կամ ուրիշ Կարմիր ծով մ' ալ կայ։

"Եթէ յատուկ անունը ժողովրդի կամ ազգի մ' անուն է, Յարաբերականով միջանկեալ նախադասութիւնը կրնայ թէ՛ բացորոշական և թէ մեկնողական ըլլալ· և ըստ այնմ կետադրութիւնը վերի կանոնին պէս ըլլալու է. այսինքն երբոր Յարաբերեալն անհատ կամ մասնաւոր իմաստ ունի, միջանկեալին ու գլխաւոր նախադասութեան մէջ Ստորակէտ չդրուիր. իսկ եթէ յարաբերեալն ընդհանուր իմաստով է, միջանկեալն Ստորակետով կբաժնուի։

## ՕՐԻՆԱԿ ՄԱՍՆԱՒՈՐ ԻՄԱՍՏՈՎ

Այս պարտութեան լուրն բոլոր Իտալիոյ մէջ խռկեխռկ տարածուեցաւ : Հռովմայեցիք որ Վէյի ապաստանած էին, և բոլոր անոնք որ մօտակայ գիւղերն ցրուած էին, ժողովուեցան։
Կրետացւոց մէջ որոնք անոր հետ էին, երկու ծերունի կար։

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՄԱՍՏՈՎ

Հռովմայեցիք, որոնք յաղթող դարձան մէջ ճակատամարտին, այն գնդերն վաններին, ու մեծ բազմութիւն մը կորեաւ։
Կարքեդոնացիք, որոնք Ռեգուլոսին դէմ հանելիք բանակին յաղթական զօրավարներ չունէին, մինչև Լակեդեմոն մարդ ղրկելով՝ իրենց բանակին հրամանատարութիւնը Քսանթիպպոսին տուին, որ իր երկրին և բոլոր Յունաստանի մէջ անուանի զօրապետ էր։

Գ. "Բացադարձութեամբ եղած խօսք մը, կամ

Կոչական մը, խօսքին յաջորդ մասէն Ստորակէտով կբաժնուի. իսկ եթէ խօսքին մէջտեղն է, երկու Ստորակէտի մէջ կառնուի:

Ո՛վ Թագաւոր, ահա քու Թշնամիներուդ դէմ
քու վրէժխնդիրներդ:
Արժան է, ո՛վ որդեակ, որ քեզի յայտնեմ:

Դ. «Նոյնպէս երկու Ստորակէտի մէջ կառնըւին սա խօսքերն. կ–եմ, ը–––, պ––տ––ի–նեց, կր–նեց, եւ այլն:

Իմ դժբախտութիւններուս պատմութիւնն, ը–––, խիստ երկայն է:
Այս Տրովացիք, կ–եր, բոլոր Յունաց դէմ զայրացած են:
Բարեկամներս, շ–ր––ն–կեց, ինձի այնչափ սիրելի եղող այս զաւակը ձեզի կթողում. անոր մանկութեանը խնամ տարէք:

Ե. «Միջարկութիւններն ալ խօսքին մնացած մասէն Ստորակէտով կբաժնուին:

403. «Մինչեւ հիմա խօսածնիս՝ Նախադասութեան մ՝ այլեւայլ մասերուն կետադրութեանը վրայ էր. հիմա այլեւայլ Նախադասութիւններու կետադրութեան կանոններուն վրայ պիտի խօսինք: Քանզի խօսքի մը մէջ շնչի հանգիստ տալու եւ իմաստի շփոթութիւն չպատճառելու համար՝ ոչ միայն միեւնոյն Նախադասութեան մասերն իրարմէ բաժնել հարկ է, այլեւս առաւել բաժնել հարկ է խօսքին մէջ գտնուած այլեւայլ Նախադասութիւններն, որոնք իմաստին ամբողջ խօսք մը կազմելու կզուգընթանան:

404. «Խօսքի մը կամ պարբերութեան մը մասերն եղող նախադասութիւններուն կերտագրութեան կանոններն դիւրաւ և աղէկ միտք առնելու համար՝ հետեւեալ ծանօթութիւններն գիտնալ հարկաւոր է։

Ա. «Նախադասութիւն մը պարզ կկոչուի, երբոր Տէր բային կամ Ստորոգելին մէկ բառ է. զորօրինակ.

Արեւը լուսաւոր մի է. լուսինը լուսաւոր մի է.
Պետրոս կգըրէ. Պետրոս կխօսի։

Բ. «Նախադասութիւն մը բաղադրեալ կկոչուի, երբոր երկու Տէր բայի կամ երկու Ստորոգելի ունի։ Վերի պարզ նախադասութիւններն կրնանք բաղադրեալ նախադասութեան դարձնել, այսպէս.
Արեւն ու լուսինը լուսաւորներ են։
Պետրոս կգըրէ ու կխօսի։

«Երկու պարզ նախադասութիւն բաղադրեալ նախադասութեան մը դարձնելու համար, ինչպէս օրինակներէն կտեսնուի, պէտք է որ երկուքն ալ միեւնոյն Տէր բային և կամ միեւնոյն Ստորոգելին ունենան։

Գ. «Թէ պարզ և թէ բաղադրեալ նախադասութիւն մը բազմամասն կկոչուի, երբոր Տէր բային կամ Ստորոգելին այլեւայլ յարակից մասեր ունին, զորօրինակ, Ածական՝ Յատկացուցիչ Խնդիր, եւայլն։ Հետեւեալ նախադասութիւնը պարզ ու բազմամասն է.

Պետրոս՝ կորսուած դասի մը վրայով հիմա ստիպով իր հօրեղբօրն երկայն նամակ մը կգըրէ։

Դ. «Խօսք մը որ կբաղկանայ տարբեր Տէր բայի և տարբեր Ստորոգելի ունեցող երկու կամ շատ

նախադասութիւններէ, որոնք, թէպէտ առանձին առանձին ամբողջ իմաստ կարտայայտեն, բայց միեւնոյն խօսքը բացատրող անդամներ են, Բաղադրեալ Խօսք * կը կոչուի. ուստի հետեւեալ խօսքերն բաղադրեալ են.

Մարդս կառաջադրէ, և Աստուած կտրամադրէ.
Զգուշութիւնը շատ բաներու կկարօտի, բայց ագահութիւնն ամէն բանի կկարօտի.

Ե. «Բաղադրեալ խօսք մը պարբերութիւն է

«Նախ՝ երբոր խօսքին երկու անդամներն իրարմէ կախում ունին, և այս կախումը Շաղկապով մը կը-բացատրուի. այնպէս որ եթէ այն շաղկապը վերցունես, խօսքին մասերուն իրարմէ կախումը կամ իրարու հետ կապակցութիւնը չհասկըցուիր **: Այսպէս են հետեւեալ խօսքերն.

ՕՐԻՆԱԿՆԵՐ

Մինչ Մենդոր ու Հազայէլ կխօսէին, ոսկեփայլ ու կապուտագոյն թեփերով ծածկուած գլխիններ նշմարեցինք.
Եթէ սոխակն անտառներուն երգիչն է, դեղձանիկը խցերուն երաժիշտն է:
Եթէ մեղի մեր տկարութեանը վրայ գաղափար տուող բան մը կայ, մեր ծնընդեանէն անմիջապէս ետքը մեր գտնուած վիճակն է.

---

* «Որեւ իցէ նախադասութիւն, թէ պարզ և թէ բաղադրեալ, պարզ խօսք մըն է.

** «Պարբերութիւն չեղող խօսքի մ' անդամներն կապող Շաղկապը վերցունելու ըլլանք խօսքին կապակցութեանը վընաս չըլլար.

Երբոր մեր բարեկամներուն մեր վրայ ունեցած սէրն չափազանց կգովենք , ոչ այնչափ մեր շնորհակալութիւնն որչափ մեր արդիւնքն հռչակել կուզենք ։
Թէպէտ այս խօսքին խորին իմաստութիւնը տակաւին չէի հասկընար , բայց և այնպէս անոր մէջ մաքրութիւն ու վեհութիւն մը կզգայի ։
Որչափ աւելի պարտաւորութիւն մը մեծ ու տաժանելի է, նոյնչափ անոր հիմն զգալի և զօրաւոր ըլլալու է ։
Որովհետեւ յոյս չունինք որ մեր վրայ թագաւորէք, գէթ մեր օրէնքներին հաստատուն պահել տալու կարող թագաւոր մը գտնելու մեզի օգնեցէք ։
Անձնասիրութեան աշխարհին մէջ որչափ նոր տեղեր որ գտնենք, տակաւին շատ անծանօթ երկիրներ կմնան ։

"Երկրորդ՝ երբոր անիկա բաղադրող նախադասութիւններն իրարու հակադրեալ իմաստ կպարունակեն . զորօրինակ .

Երջանկութեան հասնելու համար բոլոր մարդիկ հարստութիւն կփընտռեն . բայց և այնպէս երջանիկ հարուստներ շատ քիչ կգըտնուին ։

"Այս խօսքը պարբերութիւն մըն է ։
"Երրորդ՝ բաղադրեալ խօսք մը պարբերութիւն է, երբոր անիկա բաղադրող նախադասութիւններուն մէկը մէկալին պատճառն է . զորօրինակ .

Աստուած անսահման կատարեալ , և անսահման

բարի է. հետեւաբար ոչ կրնայ խաբուիլ, ոչ ալ մեզ կխաբէ։

«Այս օրինակներէն և բացատրութենէն կտեսնուի որ պարբերութիւն մ՚ երկու մաս ունի. ուստի

Զ. «Պարբերութեան մը մասերն պարբերութեան երկու անդամներն են. որոշելու համար՝ պարբերութեան առաջի անդամը Նախընթաց, իսկ երկրորդն Հետեւորդ անդամ կկոչուի։

Է. «Երբոր պարբերութեան մը թէ՛ նախընթաց և թէ հետեւորդ անդամը մէյմէկ նախադասութենէ կբաղկանան, պարբերութիւնը Պարզ կկոչուի. ինչպէս են վերն բերուած երկու պարբերութիւններն։ Բայց երբոր պարբերութեան մ՚ երկու անդամներէն մէկն երկու կամ աւելի նախադասութենէ կբաղկանայ, պարբերութիւնը Բաղադրեալ կկոչուի. զորօրինակ.

> Մարդ իրեն հետ համամիտ և համակարծիք եղողներուն հետ երկայն ատեն գժտեալ չկըրնար մնալ. վերջապէս կհաշտուի։ Բայց իր զգացմանն ու կարծեացն հակառակ եղողներուն հետ սէր և միաբանութիւն ունենալու վայրապար կաշխատի. ասանկներն կանուխ կամ անագան իրարմէ կբաժնուին։

«Այս պարբերութիւնը բաղադրեալ է*։

405. «Այս ծանօթութիւնը տալէն ետքը՝ հիմա խօսք մը կամ պարբերութիւն մը կազմող այլեւայլ նախադասութեանց կետադրութեանը գանք։

---

* «Պարզ և բաղադրեալ նախադասութիւն, պարզ և բաղադրեալ խօսք, պարզ և բաղադրեալ պարբերութիւն իրարմէ տարբեր բաներ են։ Այս տարբերութիւնն աղէկ միտք առնելու է։

406. «Միեւնոյն նախադասութեան վերաբերեալ մասերն, այսինքն բաղադրեալ և բազմամասն նախադասութեան մը մասերն բաժնելու վրայ խօսեցանք երես (176)։ Նոյն երեսներուն մէջ (174, 175) խօսած ենք թէ միեւնոյն գոյականի վերաբերեալ Ածականներ կամ Ստորոգելիներ, միեւնոյն Բայի վերաբերեալ Տէր բայիներ կամ Խնդիրներ, միեւնոյն Տէր բայի վերաբերեալ Բայեր, և վերջապէս բուն նախադասութենէ կախում ունեցող և կամ միջանկեալ խօսքեր՝ ե՛րբ Բթով ու ե՛րբ Ստորակէտով բաժնուելու են. Նոյնպէս բացադարձութեամբ կեցած խօսքեր կամ Կոչական հոլովներ ու Բացայայտիչ խօսքեր ինչ կետանշանով բաժնել պէտք է։

## ԽՕՍՔԻ ԿԱՄ ՊԱՐԲԵՐՈՒԹԵԱՆ ՄԸ ՄԱՍԵՐՈՒՆ ԿԵՏԱԴՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐՆ

407. Ա. «Երբոր սոսկ խօսքի մը մէջ երկու կամ աւելի նախադասութիւններ կան, որոնք, թէպէտ առանց իրարմէ կախում ունենալու կամ իրարու հետ Շաղկապով մը կապուած ըլլալու՝ ինքնին ամբողջ իմաստ կյայտնեն, բայց ամէնը մէկէն բոլոր խօսքը բացատրելու կամ անոր այլեւայլ կերպարանքներն ու տեսութեան կէտերն երեւան հանելու կծառայեն, այն նախադասութիւններն իրարմէ Ստորակէտով բաժնելու է. զորօրինակ.

Տեսանք որ առողջութիւնը լոկ անուն մի է, կեանքը սոսկ երազ է, փառքը մինակ երեւոյթ մըն է, զուարճութիւններն ու հեշտութիւններն ուրիշ բան չեն եթէ ոչ վտանգաւոր զբօսանքներ։

Սպառնալիքներ կըլլան, մարդիկ կ՚լաղեն, օդը կհնծէ, սուրը կշողայ։

Բ. "Երբոր ասանկ բաղմաթիւ նախադասութիւններ նախընթաց խօսքի մը բացատրութիւն կամ իբր թուումն մասանց են, այն նախընթաց խօսքն ասոնցմէ Միջակէտով մը կբաժնուի. զորօրինակ.

Ամէն բան Գաղիոյ դէմ է. օտարներն գըրգռուած են, դաշնակիցք ստահակեալ են, բարեկամք վհատեալ են, յաղթուածներն քաջալերութիւն գտած են, նախանձողներուն զէնք տրուած է։

Պատերազմին յաջողանքներն միշտ աղետալի ու ատելի են։ Հոս ամենայն ինչ երկնաւոր իմաստութեան մը գործ է. ամէն բան զգօնութեամբ է, ամէն բան սրբութեամբ է, ամէն բան սիրոյ արժանի է, ամէն բան կցուցնէ անանկ հեղինակութիւն մ՚ որ մարդու հեղինակութենէն վեր է։

Երբոր Թագաւորաց սիրտը մարդոց ձեռքին մէջն է, բա՛րէ, կարծես թէ ամենայն ինչ զանոնք թիւրելու կմիաբանի. շողոքորթութիւնը զանոնք կապականէ, քաղաքականութիւնը զանոնք կխաբէ, չար խրատտուներն զանոնք կըգրաւեն, գէշ օրինակներն զանոնք կքարշեն, գործերուն զանազանութիւնն անոնց միտքը կցրուէ։

Գ. "Երբոր սոսկ խօսքի մը, այսինքն պարբերութիւն չեղող խօսքի մը անդամներն է—՝ ո—՝ կ—՛ է—՛ և ասոնց նման քանի մը Շաղկապներով կապուած

են, իրարմէ կբաժնուին Ստորակետով. մանաւանդ երբոր երկնկեկ են. զորօրինակ.

Կրսեմ, բայց չես հաւատար.
Տուր, ու առիր.
Մարդս կառաջադրէ, ու Աստուած կտրամադրէ.
Ընկեր ինձի հնազանդելու յորդորէ, կամ գէթ ինձի դէմ անհնազանդ ըլլալու մի դրդեր:

Դ. "Երբոր խօսք մը պարզ պարբերութիւն է և ոչ բաղադրեալ՝ ու անդամներուն մէկը մէկալէն կախում ունի, երկուքին մէջտեղն Ստորակէտ կդրուի. զորօրինակ.

Թէպէտ և դեռ պատանի եմ, բայց իմ գաղտնիքս չըսելու ունակութեան մէջ ծերացած եմ:
Ինչ նիւթի վրայ որ ճառեն, իրը բոլոր պարագաներովն եղածին պէս կբացատրեն:
Թէպէտ նկարչութիւնը շատ կողմանէ իրականին զօրութիւնը չունի, այսու ամենայնիւ ճշմարիտ է թէ անոր նկարներն մեզ հանդիսատես ընող տեսարաններ են:
Եթէ բարոյականն հաղիւ որոցէն եղած կթուի, պատճառն այն է որ մարդիկ գիտողութեամբ անոր ճշմարիտ սկզբունքներուն հասու չեղած՝ բարոյականի դրութիւն մը շինելու պարտաւորուեցան:

408. "Պէտք է գիտնալ որ ասանկ պարբերութիւն մը որուն նախընթաց և հետեւորդ անդամներն իրարմէ կախում ունին, միշտ այն երկու անդամներուն մէջտեղն Ստորակէտ կուզէ՝ և ոչ Միջակէտ:

Բայց երբոր նախընթաց և հետևեալ անդամն և կամ երկուքն ալ՝ իրենց մէջ ուրիշ բաժանումներ ունին, անոնք Բթով կբաժնուին իրարմէ. Ստորակէտը միայն նախընթաց ու հետևեալ անդամին մէջ կդրուի։ Եւ այս անոր համար է, որ պարբերութեան գլխաւոր անդամներն ու երկրորդական անդամներն անխտիր Ստորակէտով բաժնուելով՝ իմաստին շփոթութիւն չըլլար։ Ուստի վերի օրինակներն հոս երկրորդական բաժանումներով դնենք, ու ըստ այնմ կէտադրենք։

Ինչ նիւթի վրայ որ ճառեն՝ ինչ խորհուրդ որ իրենց մտացը մէջ ծնանի՝ ինչ զգացումներ որ իրենց հոգին գրաւեն, այս ամէնը բոլոր պարագաներովն եղածին պէս՝ և ամէն մէկուն հետ անբաժին եղող պատկերներով կբացատրեն։

Թէպէտ նկարչութիւնը շատ կողմանէ իրականին զօրութիւնը չունի, այսու ամենայնիւ ճըշմարիտ է թէ անոր նկարներն մեզ հանդիսատես ընող տեսարաններ՝ անոր պատկերներն մեր աչուըններուն առջին եղող օրինակներ են։

Եթէ բանաստեղծութիւնն՝ երկրաչափութիւնն՝ աստեղագիտութիւնն ու առհասարակ բոլոր գիտութիւնք աւելի կամ նուազ տարբերութեամբ իրենց կատարելութեանը կդիմեն՝ մինչդեռ բարոյականն հազիւ որոցէն ելած կըթուի, պատճառն այն է որ մարդիկ ընկերութիւն ձեւանալով իրենք իրենց օրէնք և բարոյական տալու ստիպուած ըլլալնուն համար՝ գիտողութեամբ բարոյականին սկզբունք-

ներուն հաստ չեղած՝ բարդականի դրութիւն մը շինելու պարտաւորութեան ։

## ՄԻՋԱԿԷՏ

409. Ա. «Միջակէտ կդրուի խօսքի մը անդամէն ետքը, երբոր հետեւեալ նախադասութիւններն անոր այլեւայլ պարագաներն կնկարագրեն, կամ անոր իբր թուումն մասանց են ։ Տես երես 180 ։

Բ. «Միջակէտով կբաժնուին պարզ պարբերութեան մը նախընթաց և հետեւորդ անդամներն, երբոր հետեւորդ անդամը նախընթացին հակադրեալ իմաստ ունի, և կամ երբոր նախընթացն հետեւորդին պատճառն է. զորօրինակ.

Բոլոր մարդիկ երջանկութեան հասնիլ կուզեն.
բայց և այնպէս երջանիկ հարուստներ շատ
քիչ կգտնուին ։
Բան մը չգիտնալն ամօթ չէ. բայց սորվիլ չուզելն ամօթ է ։
Աստուած անսահման կատարեալ և անսահման
բարի է. հետեւապէս ոչ կրնայ խաբուիլ, ոչ
ալ մեզ կխաբէ ։
Մեր թագաւորն բարեսիրտ և մարդասէր է.
ապա անոր գթութեանը կրնանք պաղատիլ ։

Գ. «Եթէ պարբերութիւն մը բաղադրեալ է, այսինքն նախընթաց կամ հետեւորդ անդամն և կամ երկուքն ալ երկրորդական անդամներ ունին ու երկրորդական անդամներն Ստորակէտով բաժնուած են, նախընթաց ու հետեւորդ անդամներն Միջակէտով կրնան բաժնուիլ. բայց երբոր երկրորդական ան-

դամները Միջակէտով բաժնուած են, պարբերութեան գլխաւոր անդամները՝ որ են նախընթացն ու հետեւորդը՝ Վերջակէտով կբաժնուին։ Օրօրինակ՝ հետեւեալ օրինակն երկու կերպով ալ կրնանք կէտադրել.

Մարդ իրեն հետ համամիտ և համակարծիք եղողներուն հետ երկայն ատեն զժտեալ չըկրնար մնալ, վերջապէս կհաշտուի. բայց իր զգացմանցն ու կարծեացն հակառակ զգացում և կարծիք ունեցողներուն հետ սիրով ու միաբանութեամբ ըլլալը փայրապար կաշխատի, ասանկներն կանուխ կամ անագան իրարմէ կբաժնուին։

Մարդ իրեն հետ համամիտ և համակարծիք եղողներուն հետ երկայն ատեն զժտեալ չկրնար մնալ. վերջապէս կհաշտուի։ Բայց իր զգացմանցն ու կարծեացն հակառակ զգացում և կարծիք ունեցողներուն հետ սիրով ու միաբանութեամբ ըլլալը փայրապար կաշխատի. ասանկներն կանուխ կամ անագան իրարմէ կբաժնուին։

“Այս խօսքն երկրորդ կերպով բաժնելն աղէկ է, քանզի ճշդիւ խօսելով՝ խօսքին մէջ երկու պարբերութիւն կայ. առջի մասը պարբերութիւն մըն է, քանզի երկու իրարու հակադրեալ իմաստ ունեցող նախադասութիւններէ կբաղկանայ։ Նոյնպէս է երկրորդ մասը։*

*Միջակէտը կգործածուի հիմա նաեւ կրճատեալ բառերուն առջեւ, որուն տեղն առաջ երկուօրեակ չեշտ (") կգործածուէր այսպէս, Մեկն", Հիմակուան սովորութիւնն է Մեկն. Մատթ. գլ. Ե. Ոսկ. Քար. յաղ. Զղջ. որ է, Մեկնութիւն Մատթէոսի գլուխ Ե. Ոսկեբերանի Քարոզք յաղագս Զղջման։

## ՎԵՐՋԱԿԷՏ

410. «Վերջակէտը կարդալու ատեն ձայնին բոլորովին կատարեալ հանգիստ մը տալու նշան է։ Բայց այս կատարեալ ու վերջին հանգիստը խօսքին մէջ ուր ըլլալն ճանչնալու համար՝ հետեւեալ կանոնը միտք առնելու է։

411. «Խօսք մ՝ որ Վերջակէտով կլրանայ կամ կգոցուի, Լրացեալ կամ ամբողջական խօսք կկոչուի։ Եւ գրութեան մը շարունակութեանը մէջ այն մասերն որոնք նոր տողով կսկըսին, տողաֆէր կկոչուին։

412. «Տողագիր մը կրնայ մէկ կամ աւելի լրացեալ խօսք պարունակել. ուստի և տողագրի մը մէջ որչափ Վերջակէտով լմնցած խօսք կայ, այնչափ լրացեալ խօսք կայ։

413. «Լրացեալ խօսք մը կրնայ մէկ կամ աւելի, զորօրինակ՝ երկու կամ երեք պարբերութենէ բաղկացած ըլլալ։ Պարբերութիւն ինչ ըլլալն արդէն բացատրեցինք, տես երես 177. Ե։ Ուստի

414. Կանոն. «Երբոր պարբերութեան մը նախընթաց ու հետեւորդ անդամներն իրարմէ Միջակէտով բաժնուած են, նոր պարբերութիւնը Վերջակէտէն ետքըն սկսելու է։ Բայց թէ որ պարբերութեան նախընթաց ու հետեւորդ անդամներն Ստորակէտով բաժնուած են, նոր պարբերութիւնը Միջակէտ դնելով կրնայ սկսուիլ։ Հետեւեալ օրինակներուն մէջ ասիկա բացայայտ կտեսնուի։

### ՕՐԻՆԱԿ Ա

Մարդիկ կուզեն որ արդարութիւնն իրենց ըլլայ և ոչ ուրիշին. անոր համար է որ բնաւ

*արդարութիւն չըլլար ։ Քանզի քանի որ արդարութիւն ընողն արդարութիւն պահանջողէն տարբեր է՝ ըստորում ոչ ոք իր դատին դատաւորն է, յայտնի է թէ ինչու համար աշխարհիս վրայ արդարութիւն չկրնար ըլլալ։*

## ՕՐԻՆԱԿ Բ

*Եթէ մեր նպատակներն կամ դիտաւորութիւններն ուղիղ և մաքուր ըլլան, յաջողելու մեծ յոյս կրնանք ունենալ. և եթէ չյաջողինք, անյաջողութեամբ ոչ թէ պատժուած՝ այլ զրկուած կըլլանք. բայց երբոր մեր նպատակներն թիւր և չար են՝ ու մեր յուսացած յաջողութիւնը մենէ կփախչի, միանգամայն թէ՝ զրկող և թէ պատժուած ենք. զրկող ենք, քանզի նպատակնիս անիրաւ էր. պատժուած ենք, քանզի անյաջողութիւնն որ մաքուր և ուղիղ դիտաւորութիւն ունեցողին առ առաւելն տրտմութիւն մը կբերէ՝ չարին ու անիրաւին նաև յուսահատութիւն է։*

«Ա Օրինակին մէջ առջի պարբերութենէն ետքը Վերջակէտ դրուած է, քանզի պարբերութեան նախընթաց և հետևորդ անդամը Միջակէտով բաժնուած է ։

«Իսկ Բ Օրինակին մէջ չորս պարբերութիւն կայ, քանզի ամէն մէկ պարբերութեան նախընթաց և հետևորդ անդամներն Ստորակէտով բաժնուած ըլլալուն համար՝ պարբերութիւններն իրարմէ Միջակէտով բաժնուած են.

415. «Օրանօրէնութիւն. Ամենևին կէտանշան չըգործածուիր,

Ա. «Երբոր երկու նոյնատեսակ բառ, զորօրինակ՝ միեւնոյն Գոյականի վերաբերեալ երկու Ածական, միեւնոյն Բայի վերաբերեալ երկու Տէր բայի, միեւնոյն Տէր բայիի վերաբերեալ երկու Բայ, և, ու, կամ բայց, և ուրիշ ասոնց նման Շաղկապներով կապուած են, և ուրիշ յարակից մասեր չունին. զորօրինակ.

Պատիժն ու մոլութիւնն անբաժանելի են։
Քու բոլորտիքդ եղողներուն կորուստը կամ փրկութիւնը քու կորուստէդ կամ փրկութենէդ կախում ունի։
Մարդուս կիրքերն անոր վնասակար բայց սիրած թշնամիներն են։
Մարդոց տկարութիւնն ամենէն յայտնի հոն կտեսնուի, ուր իրեն վնասակար մէկ ունակութիւնը կատէ, ու չկրնար թողուլ. առաքինութիւն մը կսիրէ, բայց չկրնար ստանալ։

Բ. «Երկնուած Շաղկապներով կամ Մակբայներով կապուած խօսքերն կետանշանով չեն բաժնուիր.

Ամեն տեղ հասած, ամեն տեղ ծաղկած կտեսնենք թէ՛ Բոմոնային պտուղներն թէ Ֆլորային ընծաներն։
Մի թողուր ո՛չ ագահութեան ոչ հպարտութեան որ քեզ քարշ ածեն։
Կա՛մ քաջ եղիր կամ քաջերուն հնազանդ։

Գ. «Եւ, Ու, Շաղկապներով կապուած խօսքեր նախընթաց խօսքէն չեն բաժնուիր կետանշանով, երբոր նախընթաց Բային խնդիր են. զորօրինակ.

Չենք ուզեր որ մէկը մեզ յանդիմանէ, քանզի ուղղուիլ չենք ուզեր։
Շողոքորթութենէ կխաբուինք, քանզի կկարծենք թէ ուրիշներն այնչափ կոյր են, որ մեր մոլութիւնները չեն տեսներ. կամ այնչափ տգէտ են, որ մեր մոլութիւններն առաքինութիւն կկարծեն։

ՀԱՐՑԱԿԱՆ ՈՒ ԶԱՐՄԱՑԱԿԱՆ ԿԷՏԵՐ

416. «Հարցական կէտն Հայերէն (՞) Պարոյկ կոչուած նշանն է, որն որ հարցում եղած բառին վրայ կդրուի։

Դո՞ւ ես թէ ուրիշի մը սպասենք։
Մարդուս սիրտը ո՞վ կրնայ գիտնալ։
Ձեզ ձեր հայրենիքը բերելու համար Աստուծոյ
ըրածներն մոռցա՞ք։ Եգիպտոսէն ի՞նչպէս ելաք։

417. «Հարցում՝ ուղղակի և անուղղակի կրնայ ըլլալ։ Ուղղակի է հարցումն երբոր հարցումն ընողին խօսքն անմիջապէս յառաջ կբերենք. իսկ անուղղակի՝ երբոր հարցում ընողին բուն խօսքն առանց յառաջ բերելու, միայն կյիշենք թէ այս ինչ հարցումն ըրաւ։ Առջի դիպուածին մէջ Պարոյկ կդրուի, երկրորդ դիպուածին՝ չդրուիր. զորօրինակ.

Հեկեսիպպոս հարցուց. Փիլոկղէս՝ կգիտե՞ն ո՞ր կողմը կբնակի։
Հեկեսիպպոս հարցուց թէ արդեօք Փիլոկղէս՝ կգիտեն ո՛ր կողմը կբնակէր։*

* Դիտելու է որ թէպէտ պարոյկ չդրուիր, բայց ձայն դնելու է։

« Առջինն ուղղակի հարցում է, և Նախընթաց խօսքէն Միջակէտով կբաժնուի:

« Երկրորդն՝ անուղղակի հարցում է, և Թէ Շաղկապով Նախընթաց խօսքին հետ կկապուի:

418. « Զարմացական կէտը հայերէն (՜) Երկար բռուած նշանն է, և հոգւոյն մէկ կիրքը նշանակելու համար կգործածուի. օրօրինակ.

> Ո՜վ երջանիկ օրեր. այնչա՜փ երջանիկ օրեր. օրե՜ր որոց ես յարգը չճանչցայ, օրե՜ր որ կարի արագ անցան. դուք՝ ա՜լ երբե՛ք պիտի չդառնաք. իմ աչուըներս ասո՞նք ա՜լ բնա՜ւ պիտի չտեսնեն:

ԿԱԽՄԱՆ ԿԷՏ

419. « Կախման կէտը սա նշաններով (. . .) կը նշանակուի, ու կգործածուի կա՛մ քիչ մ՝ երկայն հանգիստ և կանգ առնելու համար, և կամ խօսքը պակաս և կիսկատար մնացած ըլլալն ցուցնելու համար:

> Մեզ այնպէս յոգնած ու անօթի տեսնելով՝ ըսաւ. Եթէ բլրոյն անդիի դին գացած ըլլայիք, աւելի աղէկ ընդունելութիւն կգըտնէիք . . . կգըտնէիք խաղաղ բնակութիւն մը . . . մարդասէր մարդիկ . . . բարի մարդիկ . . . :
>
> Ո՜վ Գեղեմաք, քու երկունքդ հօրդ երկունքէն աւելի են. գոռոզ Թշնամին փոշւով վարակեալ քու սրոյդ տակ կհեծէ. պղնձէ դռներն, անմատչելի մարտկոցներ քու առիցըդ առջեւը կիյնան: Ո՜վ դիցուհիդ մեծ,

ղ՞ը հայրը . . . . : Պատանի դու, դու պի-
տի տեսնես վերջապէս . . . : Այս բառերուն
գալով՝ խօսքը բերնին մէջ կմեռնի, և ինք լի
հիացմամբ ակամայ լռութեան մէջ կմնայ։

«Այս օրինակներէն առջինին մէջ կախման կէտերն մինակ երկնկեկ հանդիստ ցուցնելու համար են. իսկ երկրորդին մէջ խօսքին շարունակութեանն ընդհատած ըլլալուն համար է։

ՑԱՂ

420. «Ցաղն կարճ և ուղիղ գիծ մի է այսպէս (—), որ երկու դէպքի մէջ կգործածուի. մի՛ և գըրաւորապէս տրամախօսութեան մէջ հարցման ու պատասխանւոյն մէջտեղը, առանց ըսէ, ըսաւ, պատասխանեց, ըսինեց, և այլն, խօսքերն գործածելու։

Պատանի դու, ըսաւ Գուսիկ անիկա տեսնելով,
ո՞չ ապաքէն դու Լաս Գաղասին պաշտած
Աստուածը կպաշտես։ Այո, պատասխանեց
Տավիլա։ Չե՞ս հաւատար որ մենք ալ քեզի
պէս այն Աստուծոյն ծառաներն ենք։—Կհա-
ւատամ։—Ապա եղբարք ենք. ընդէ՞ր ուրեմն
ձեռուըներդ մեր արեամբը թաթաւելու կու-
գաս։—Ես կհնազանդիմ։—Որո՞ւն։—Ար-
դէն գիտէք։—Այո, գիտեմ որ դուն ամենէն
չար, և ինձի դէմ ամենէն անագորոյն մար-
դէ ծնած ես։

421. «Երկրորդ՝ փակագծի տեղ կգործածուի, այսինքն խօսքին ընթացքին մէջ երկու կողմէն գատելու համար անանկ խօսք մ՛ որ միջանկեալ ու եր-

կայն է, և դիտողութիւն մը կպարունակէ։ Ասանկ խօսքեր առաջ փակագծի մէջ կառնուէին, հիմա Տաշով կզատուին, որ խօսքին թելը կտրած ըլլալուն համար՝ բուն խօսքին շարունակութիւնն հասկնալու դժուարութիւն չտայ։

## ՉԱԿԵՐՏ

422. ‟Չակերտը ՚կրկին ստորակետի ձևով (‟) նշան մի է, որն որ կոչում եղած խօսք մը նշանակելու համար կգործածուի։

423. ‟Ոմանք Չակերտը կոչում եղած խօսքին բոլոր տողերուն սկիզբը կդնեն, այսպէս.

‟Հռովմայեցւոց հրեշտակներն Բրեննոսի հետ եղած դաշնադրութիւնն ջնջելով՝ այս իշխանին դաշանց դէմ ըրած նենգութեանը դէմ խօսեցան։ ‟Այդ ոսկին Կապիտոլ տարէք, ‟ըսաւ Բրեննոս, հրեշտակներուն. և դուք, ‟ո՛ Գաղատացիք, ըսաւ, ձեր կշիռներովդ ու ‟կշռորդներովդ հետ դարձէք. Հռովմայեցիք ‟իրենց երկիրներն սրով կուզեն ժառանգել։

424. ‟Ոմանք ալ Չակերտը կոչում եղած խօսքին սկիզբն ու վերջը կդնեն։

Յետոյ դառնալով ժողովրդին՝ որ իրեն եղած բռնութեանը դէմ զայրացած կերեւէր, ըսաւ. ‟Աջակից եղէք ինձի, ընկերա՛կիցք իմ. ասանկ մեծ բռնակալութեան մը դէմ մեզի ուրիշ նպաստ չկայ բայց եթէ մեր զօրութիւնը”։

## ՓԱԿԱԳԻԾ ( )

425. «Փակագծին գործածութիւնն յայտնի է. խօսքին մարմինէն դուրս՝ բայց անոր, իբր յաւելուած կամ բացատրութիւն, յաւելուած մաս մը զատելու համար կը գործածուի։»

## ԸՆԹԱՄԱՆԱՑ (-)

426. Ասիկա բառերն տողին ծայրն բաժնելու պէտք կըլլայ, որ [illegible] կըսուի ։ Ու տողադարձի կանոնն հեգելու կանոնին համեմատ է, այսպէս.

427. Ա. Մէկ ձայնաւոր մ' որ բառին սկիզբն առանձին վանկ կըլլէ, տողին վերջը կը գրուի. օրինակ. [illegible]։

428. Բ. Երկու զատ զատ վանկ ընող ձայնաւորներուն մէկն անդին անցնելու է. ինչպէս, [illegible]։ Բայց մէկ ձայնաւոր մը մինակ վար առնուլ տգեղ է ու անսովոր. ինչպէս, [illegible]։

429. Գ. Երկբարբառներն, այսինքն՝ երկու ձայնաւորներ մէկ հնչումով միացած, [illegible], չեն բաժնուիր. ինչպէս, [illegible]։

430. Բայց [illegible] ձայնաւորի նախադաս եղած՝ առաջին վանկերուն մէջ կըրնայ զատուիլ կամ ուր որ [illegible] կը հնչուի, փոխելով [illegible] ի. զոր օրինակ. [illegible]

[illegible]: Նոյնպէս այ --, ե-, է-, ձայնաւորէն առաջ ա գիրն ըթաւ հնչուելուն համար երբեմն հարկը պահանջելով կրնան զատուիլ. [illegible], [illegible], [illegible], [illegible], [illegible], [illegible]:

431. Ոմանք այս սկզբունքով [illegible], [illegible], հոգի, որդի, և այսպիսի բառից վերջահոլովներուն ը կցանեն տողադարձին, այսպէս, [illegible], [illegible], հո-գւով, որ-դւոյ. սխալ թաւ հնչելով, որ չըլլար. այլ ճանչելով ը Ուղղականի է ձայնաւորին տեղն փոփոխմամբ դրուած իբրեւ ձայնաւոր, նախընթաց բաղաձայնովը զատելու է այսպէս, [illegible], [illegible], հո-գւով, որ-դւոյ:

432. Դ. Բառին մէջ բաղաձայնը մէկ որ ըլլայ, միշտ անդին գրելու է, թէեւ բարդ կամ ածանցեալ ըլլայ բառն առանց յօդակապ ձայնաւորի. զորօրինակ. [illegible], [illegible], [illegible], [illegible], [illegible], [illegible], [illegible], [illegible], [illegible], [illegible], [illegible], հո-գւոյ:

433. Ե. Երկու կամ աւելի բաղաձայն որ ըլլայ, մէկը միայն անդին առնելու է. զորօրինակ. [illegible], [illegible], [illegible], [illegible], [illegible], [illegible], [illegible], [illegible], [illegible], [illegible]:

434. Բայց թէ որ երկու կամ աւելի տառեր բնական են բաժնուելու մասին, որ կըլլայ բարդած կամ ածանցած բառերուն մէջ, կրնան անդին անցնիլ. ինչպէս. [illegible], [illegible], [illegible], [illegible], [illegible], [illegible]:

435. Զ. Եւ որ բաղաձայներուն մէջ ը տառ կայ անգիր, տողադարձին գրուելու է իրօք տողին վերջը. զորօրինակ. [illegible], [illegible], [illegible], [illegible], [illegible], [illegible], [illegible]:

436. Իսկ միւս տողին ծայրը կդրուի ը, թէ որ փոխագրուած բաղաձայններն կորած բառին բնական գրութիւնը չեն. ինչպէս, [illegible], [illegible], [illegible], [illegible]։ Բայց կըղատութին, [illegible], [illegible], [illegible], [illegible], քանզի զատուածններն բնիկ գրութեամբ բաւեր են։

437. Նոյնպէս սկզբի ու վերջի վանկերուն մէջ, ուր որ արտաբերելու ատեն անգիր ը տառ կայ, խօսք դնելու է տողադարձին. զորօրինակ. [illegible], [illegible], [illegible], [illegible], [illegible], [illegible], [illegible], [illegible], [illegible]։

## ԱՊԱԹԱՐՑ (')

438. Ապաթարցը կբանեցուի, ուր որ գիր մը կձըգուի, և ասիկա ոտանաւոր գրուածքներու մէջ աւելի պէտք կըլլայ. զորօրինակ. Մ՚ իմանար, մ՚ երեւնար, խօսք մ՚ ալ, բան մ՚ որ. փոխանակ ըսելու մի իմանար, մի երեւնար, խօսք մը ալ, բան մը որ։

[illegible]' առնուս, [illegible]' երթայ, տան '[illegible] առնուն հարուած, '[illegible] արցունք թափելու, [illegible]' գին անցնիլ. այսինքն՝ [illegible] առնուս, [illegible] երթայ, [illegible] առնուն, [illegible]արցունք, [illegible] գին։

Ի վերջին պատերազմին բերլայ '[illegible] վըկանս իւր
Հայրենիս.
այսինքն [illegible] վըկանս։

Մ՚ աչքէ անցունես.
այսինքն, մի աչքէ։

## ԳԼՈՒԽ Բ

### ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹԻՒՆ

439. Ստուգաբանութիւնը բառերուն ծագման, աճանցման, բարդութեան և ուրիշ փոփոխութիւններուն ուսմունքն է։

440. Լեզու մը կատարեալ ունենալու և անոր բառերն ճիշդ տեղին գործածելու համար անշուշտ այս հմտութիւնն կարևոր է. բայց որովհետև մեր բուն լեզուն գրաբարն է. և կատարեալ Հայերէն ունենալու համար յայտնի է թէ գրաբար լեզուն պէտք է ունիլ, ուստի հոս մենք այս նիւթին վրայ եթէ համառօտ տեղեկութիւն տալով անցնինք, մեր ուսանողներն գոհ պիտի ըլլան։

441. Արմատ. Արմատ կըսուին լեզուի մը նախնական բառերն, որոցմէ ուրիշ բառեր կածանցին կամ կբարդուին. ուստի գիր բառն հայերէն արմատ բառ է, որմէ կելնեն, Գրեմ, գրաւոր, գրեանք, անգիր, գրիչ, Ածանցներն. և Մատենագիր, պատմագիր, գրասէր, Բարդերն։

442. Ածանց. Ածանց կըսուին այն բառերն, որոնք Արմատին վրայ գիր կամ մասնիկ աւելցնելով շինուած են. ինչպէս են վերի, գրեմ, գրաւոր, գրեան, անգիր, գրիչ, բառերն, որոց ամէնն ալ գիր Արմատին Ածանցներն են։

443. Ածանց շինելու համար Արմատին վրայ աւելցուած գրեր կամ մասնիկներ՝ Ածանցական գիր կամ Մասնիկ կկոչուին. ուստի, աւոր, ստան, նոց, ակ, իկ, և ուրիշ շատեր, Հայերէն Ածանցական մասնիկներ են։

444. Բաղաձայն սկզբնատառով մասնիկներն բա-

ռներու վերջը կկըպչին թէ առանձին և թէ՝ ա, է, ձայնաւորներով. զորօրինակ. Ջնանոց, պարտիզպան, հովանոց, դռնապան, այգեպան։

445. Ածանցական գիր կամ մասնիկ մը՝ ոչ միայն բառին վերջը, այլեւ սկիզբը կրնայ յարիլ. ինչպէս, ան, չ, դ, դժ, դը, որոնք բացասութիւն կամ հակասութիւն կցուցնեն. զորօրինակ. Մահ, անմահ. փորձ, անփորձ*. Է, չէ. աստուած, չաստուած. Գետ, դգետ. Կար, դկար. Գոհ, դժգոհ. Բախտ, դժբախտ. Արգիւնք, դարգիւն. Երջանիկ, դերջանիկ. որոնք կընշանակեն, [illegible], [illegible], [illegible], [illegible], ևն, [illegible]։

446. Ածանցական մասնիկներն նշանակութիւն ունեցող բառեր չեն, բայց ամէնմէկն արմատական բառին վրայ մասնաւոր գաղափար կամ իմաստ մը կաւելցնէ. որոնք հոս եօթն տեսակներու մէջ կբովանդակենք ուսանողներուն դիւրութեանն համար. չէթէ բոլոր ածանցական մասնիկներն պիտի յառաջ բերենք, բայց օրինակի համար որչափ որ պէտք է։

Ա. ՀԱՑՐԱՆՈՒՆ մասնիկներ, որ հայրենիք, ազգ, լեզու, և կրօնք կյայտնեն.

եան. — Արամեան, հայկազեան, արեւելեան, Կեփասեան։

ական. — Նեստորական, աւետարանական, առաքելական։

ունի. — Արշակունի, Բագրատունի, Արծրունի։

---

* Ան մասնիկը քիչ անգամ ն ձգելով, մինակ ա կըգրուի նոյն մտքով. ինչպէս, ակամայ, ապաքէն, [illegible] (ևերկեր), իբր թէ [illegible]։
Նաեւ դ, բ, գրերէն առաջ երբեմն ամ ի կփոխուի. զորօրինակ. անպարիշտ, ամպարիշտ. անբիծ. ամբիծ։

րէն. — Հայերէն, Արաբերէն, Անգղիերէն,
ցի. — Պօլսեցի, Կիլիկեցի, Իտալացի, Անգղիացի:

Բ. ԳՈՐԾԱԿԱՆ *մասնիկներ, որ ՚ընողն, գործիքը, արհեստն և վարձքը կնշանակեն.*

ակ, նակ. — Գիտակ, նուիրակ, խօսնակ, կոչնակ:
ան. — Խթան, իշխան, ճարտասան, արժան:
իկ. — Թափանցիկ, օդապարիկ:
իչ. — Փրկիչ, արարիչ, հալածիչ, նկարիչ:
ող. — Սիրող, իշխող, լուացող, արբեցող:
ոց. — Աղոց, խարտոց, հոտոց, կթոց:
որդ. — Որսորդ, սայլորդ, ճանբորդ:
ու. — Ազդու, հոգաբարձու, ահարկու, բանսարկու:
չէք. — Բանողչէք, կրողչէք, աւետչէք:
պան. — Պարտիզպան, այգեպան, դռնապան, ջորեպան:
աւոր. — Սպասաւոր, զգաւոր:

Գ. ՈՒՆԱԿԱՆ *մասնիկներ, որ կցուած բառին ունողն, պարունակողն, տեղն, կամ անկէ շինուած ըլլալն, կամ անոր հետ վերաբերութիւն՝ յարմարութիւն ունենալն կյայտնեն.*

եղէն. — Լուսեղէն, հողեղէն, հրեղէն:
է. — Քարէ, փայտէ, ոսկիէ, արծըթէ:
ի. — Աղի, ջրի, անուանի, վերի, պէտքի..., հետը, — սեւաչուի:
ելի. — Սիրելի, զարմանալի, պատուելի:
ին. — Խորին, դժուարին, աշխարհային, հրեշտակային:
ական. — Վարձական, բնական, արհեստական:

ստան . — Հայաստան, Պարսկաստան, Թիւրքաստան:

նոց . — Թմբկնոց, Հիւրանոց, Հիւանդանոց:

ոլ . — Համոլ, ուժոլ:

ոց . — Դպրոց, միջոց:

որդ . — փոխանորդ, առաջնորդ, միջնորդ, կցորդ:

ուց . — Նեղուց, կտուց, դեղնուց, ճերմկուց:

րան . — Դասարան, վառարան, հանգստարան:

ցու . — Տիրացու, հարսնացու, մահացու:

ւոր . — Հոգեւոր, մարմնաւոր, շատաւոր:

ուք . — Խնդուք, մորուք, տեսուք:

Գ. ՑԱՃԱԽԱԿԱՆ մասնիկներ, որ կաւելցնեն՝ կամ զօրացնեն պարզին նշանակութիւնը.

ատ . — Խորխորատ, հեղեղատ, հաստատ:

ագին . — Ահագին, ցաւագին, զուարթագին:

ոտ . — Երկչոտ, կասկածոտ, նախանձոտ, ցեխոտ: կոտ, հետը, — մոռացկոտ:

ուտ . — Խաղուտ, ապառաժուտ, աւազուտ:

աւէտ . — Շահաւէտ, երանաւէտ:

Ե. ՆՈՒԱԶԱԿԱՆ մասնիկներ, որ կնուազեն, փաղաքշելով կպզտիկցունեն պարզին նշանակութիւնը.

ակ . — Նաւակ, լուսնակ, որդեակ:

էկ . — Տղէկ. էկ հետը, — հաստըկէկ, շատկէկ:

իկ . — Մանկիկ, հայրիկ, մայրիկ, կնիկ, լուիկ:

ուկ . — Խեղճուկ. ողորմուկ, մինուկ:

ցա . — Մարիցա, լուսիցա*:

---

* Ցա, մասնիկը Եւրոպացւոցմէ մտած է, իգական անուններուն վերջն կդրըուի հիմա սովորաբար:

Զ. ՎԵՐԱՑԱԿԱՆ *մասնիկներ, որ բայարմատ բառերու կցո ելով, վերացեալ նշանակութիւն կուտան բառին.*

**ած.** — *Արարած, կոտորած,* **եւ** *հետը,* — *խնդրուած, դիպուած. վերջը* **ք** *ով,* — *իջուածք, շինուածք:*

**անք.** — *Պարծանք, զարմանք, աղաչանք, փշրանք:*

**ացք.** — *Լուացք, ընթացք:*

**էք.** — *Օրհնէք**, (*այսինքն, օրհնութիւն.*) *անօրհնէք:*

**իստ.** — *Հանգիստ:*

**իւն.** — *Հնչիւն, գոչիւն, շշնչիւն:*

**իք.** — *Չարիք, կեղծիք, աւետիք, կարծիք, ընթրիք:*

**ոյթ.** — *Երեւոյթ, հասոյթ:*

**ոյթ** *և* **իւն**, *մէկտեղ.* — *Ձանձրութիւն, սովորութիւն:*

**ում.** — *Կոչում, ուսում, կործանում:*

**ուստ.** — *Ապրուստ, կորուստ, փախուստ:*

**ուրդ.** — *Խորհուրդ, ժողովուրդ, խառնուրդ:*

**ունդ.** — *Ծնունդ, սնունդ, սերունդ:*

**օն.** — *Պաշտօն. վերջը* **ք** *ով,* — *կրօնք:*

Է. ՆՈՅՆԱԿԱՆ *մասնիկներ, որ գրեթէ անփոփոխ կպահեն պարզին նշանակութիւնը.*

**ակ.** — *Էշ, էշակ. օրէն, օրինակ. կայծ, կայծակ.* **եւ** *հետը,* — *ժամանակ:*

**ան.** — *Նիշ, նշան. պատուէր, պատուիրան. կոխ, կոխան:*

**ած.** — *Խնդիր, խնդրուած:*

---

* Սխալ է օրհնէնք:

եստ · — Պահ, պահեստ · գոլ, գոլեստ ·
իլ · — Տես, տեսիլ · կաթ, կաթիլ :
ին · — Դժուար, դժուարին · դիւր դիւրին ·
խոր, խորին :
որդ · — Ժառանգ, ժառանգորդ · կից, կցորդ :
նի · — Յայտ, յայտնի · գաղտ, գաղտնի :
ուչ, ունչ · — Վայել, վայելուչ · անտէր, անտերունչ :

447 · Ուհի, անոյշ կամ կրճատեալն ոյշ, իբրեւ իգականացուցիչ մասնիկ կգործածուին, որ եթէ յատուկ անուանց կցուած են, կնշանակեն անոր աղջիկը կամ քոյրը, եւ եթէ հասարակ անուանց կցուած են, ընդհանրապէս պարզին իգականը կհասկցուի, կամ իգական անուն կշինեն. Ուհի, իշխանական բառերու վերջն անոր կինն ալ կնշանակէ. զորօրինակ·

Տիգրանուհի · Տիգրանին աղջիկը կամ քոյրը ·
Արմենուհի · Արմենակին աղջիկը կամ քոյրը ·
Թագուհի · կին թագաւոր, կամ թագաւորի կին ·
Տիրուհի · կին տիրող ·
Հայկանոյշ · Հայկին աղջիկը ·
Խոսրովանոյշ · Խոսրովին աղջիկը կամ քոյրը ·
Վարդանոյշ կամ Վարդոյշ · Հրանոյշ · } Իգական անուանք են :

448 · Երբեմն բառ մ' իր սկզբի վանկին վերջը, երբոր ձայնաւոր գիր է, ա կամ է, գիրն աւելցած, ու կրկնուելով կածանցի նշանակութիւնը սաստկացընելու համար, այսպէս.

Մինակ, մըմինակ · լման, լըլման · կլոր, կըկլո-

լոր. շիտակ, ընկշիտակ. լեցուն, ընկլեցուն ։ Թէեւ֊պէտ ասի Թրքերէնէն մտած է ։

449. Կան բառեր ալ երկու ծայրէն ածանցեալ. ինչպէս. Անպիտան, անտէրունչ, անկամայ, տգիտա֊բէն, տմարդի ։

450. Գործածեալ ածանցական մասնիկներն ոչ մի֊այն բառին յարաբերութիւնը կփոխեն, այլեւ անոր բնութիւնը կփոխեն. զորօրինակ՝ ածանցական մասնիկ կայ, որ բառը Գոյական կընէ, ինչպէս են, ութիւն, ում, եւն. Արբութիւն, զղջում ։ Կայ որ Ածական կընէ ինչպէս, աւոր, եղէն, ական, եւն. Զօրաւոր, Հրեղէն, անձ֊նական. կայ որ Բայ կշինէ. ինչպէս են, ամ, եմ, իմ, ում. Աղամ, սիրեմ, շահիմ, թողում. Նաեւ կայ որ Մակբայ կընէ, ինչպէս են, պէս, բար, րէն, եւն. Այս֊պէս, սովորաբար, Յունարէն ։

451. Բարդ. Բարդ կըսուին այն տեսակ բառեր որոնք երկու արմատ բառէ շինուած են. զորօրինակ. Տնտես, տուն եւ տես բառերէն. կաթնկեր, կաթն եւ կեր բառերէն. սրամիտ, սուր եւ միտք բառերէն ։

452. Բարդութեանց մէջ ալ բառերն իրենց յա֊րաբերութիւնը կամ պաշտօնը կփոխեն. եւ Բարդ բա֊ռին տալու իմաստը՝ բառը կազմող մասերուն դիրքէն կախում ունի ։ Զորօրինակ, Հայերէն բարդութեանց մէջ գրեթէ առհասարակ առջի բառը Խնդիր կամ Մակդիր է, երկրորդը խնդրառու կամ Անուն կամ բայանուն կամ բայածական ։

Օրինակի համար. Զօրաժողով, ձկնորսայր, Բար֊դերուն մէջ առջի բառերն զօրք, ձուկ, Յատկացուցչի զօրութիւն ունին, վերջիններն յատկացեալի. ուստի եւ՝ զօրաց ժողով, ձկան որսայր, կնշանակեն. Այս տեսակ բարդեր գոյական են ։

[illegible], [illegible], բարդերուն մէջ առջի բառերն խնդիր են, վերջիններն խնդրառու բայածական. որ [illegible], [illegible], կնշանակեն. Ասոնք Ածական են։

[illegible], [illegible], [illegible], Բարդերուն մէջ առջի բառերն սեռի խնդրոյ մը, վերջիններն ալ ներգործական Բայի մը զօրութիւն ունին. ուստի կնշանակեն, [illegible] [illegible] [illegible], [illegible] [illegible] [illegible], [illegible] [illegible] [illegible]։ Ասոնք թէ՛ իբր ածական և թէ իբր գոյական կգործածուին։

[illegible], [illegible], [illegible], Բարդերուն մէջ առջի բառերն Մակբայ են, վերջիններն Բայի զօրութիւն ունին, կամ բայածական են. ուստի կնշանակեն, [illegible] [illegible] [illegible], [illegible] [illegible] [illegible], [illegible] [illegible] [illegible]. կամ [illegible], [illegible], [illegible]. ասոնք Մակդիր են։

Կան ուրիշ Բարդեր՝ որոց առաջինն երկրորդին ածականն է. զորօրինակ. [illegible], [illegible], [illegible]. իբր՝ [illegible] [illegible]. [illegible] [illegible], [illegible] [illegible]։ Ասոնք ալ Մակդիր են։

453. Բառի մ՝ սկիզբի գիրն [illegible] և քիչ անգամ [illegible] փոխուելով, և կրկնուելով կբարդուի, յաւէտ Մակդիր անուաններն, ու ընդհանրապէս սաստկութիւն կցուցնէ. զորօրինակ. [illegible], [illegible]. կամ [illegible], [illegible]. [illegible] կամ [illegible]. [illegible]. [illegible]։

Այսպէս սաստկութիւն տալու համար կբարդուի նաև նոյնանշան բառով. զորօրինակ. [illegible]. [illegible]։

454. Գրաբարի աններղական կոչուած բառերն բարդուած ատեն թէև վերջին ըլլան, սովորաբար իրենց

վերջի +ն կվերնայ․ զորօրինակ․ [illegible], [illegible], [illegible], [illegible]․ [illegible], [illegible]․ Նմանապէս երրոր ածանցուի․ ինչպէս, [illegible]։

Երբեմն կըլլայ որ +ն պահէ․ ինչպէս, [illegible], [illegible]․ [illegible], [illegible]։

---

## ԳԼՈՒԽ Գ

## ՏԱՂԱՉԱՓՈՒԹԻՒՆ

455․ Տաղաչափութիւնն ոտանաւոր այսինքն ոտքով կամ վանկի չափով խօսք շինել կուսցունէ։

456․ Վանկի չափն կկազմուի խօսքի անդամներն թուով բաժնուելով։

457․ Երկու՝ երեք՝ չորս կամ հինգ վանկերով մէկ անդամ կըլլայ, ուր որ մէկ տողին մէջ ձայնն հանգիստ կընէ։

458․ Մէկ տողի մէջ կրնայ մէկ՝ երկու՝ երեք՝ չորս մինչեւ հինգ անդամներ ըլլալ։ Եւ մէկ անդամն երկու՝ երեք բառով ալ կըլլայ, մէկ բառով ալ*։

459․ Տաղաչափութեան անդամներն կրնան զուգավանկ ըլլալ կամ չըլլալ։

### Օրինակ [illegible]

5 — 5**

Թէ բանաս կարդաս | արիւնոտ դաշտեր,

---

* Քերթուածին անդամներն պէտք է աղէկ գիտել, կարդալու ատեն մէկմէկու չխառնելու համար, թէ՛ զուգավանկ ըլլան և թէ անզուգավանկ․ որ ուղիղ ըլլայ առոգանութիւնն արձակ շարադրութեան ընթերցանութենէն տարբեր, չափերուն ներդաշնակաւոր յարմարութեանն համեմատ։

** Այս թուանշաններն կցուցնեն թէ իւրաքանչիւր անդամ քանի վանկ ունի։

Մարգագոյն ներկուած՝ | իմ կողերս է այն.
Թէ՛ աչքէ անցուներս | շամիրած նիշակներ,
Մահահոտ ցըցուած՝ | իմ թիկունքս է այն։

## Օրինակ Ըն[illegible]

3—4—4—4
4—3—4—4

Ըզտեղի | առ և առ դուրս | անդ լուսոյն ժիւրն |
Եւրիդիկէ. (15 վանկ)
Յանըղդաս | տըս, եղո՛ւկ | յոգւոյն պարտեալ |
արկ զաչըս իւր։ (14 . .)
Ըսայ, և | յաչացն անդէն | զօրէն ծուխ |
ի նուրբ օդ. (13 . .)
Խառնեալ կորեաւ | տարադէմ, | և ոչ եւս այլ |
ետես ըզնա. (15 . .)
Որ զըստուերըս | ըմբըռնէր զուր, | և բան բա-
զում | կամէր ասել։ (16 . .)

460. Հոս կտեսնուի որ տաղաչափերն ազատութիւն *

* Այս ազատութիւնը վանկերուն ոմանց ---ն և ոմանց [illegible] արտասանելէն յառաջ եկած է. բայց ---ն որ կըսենք հելլենական և հռովմայեցւոց առոգանութեան հաստատուն չափերուն պէս հանկցուելու չէ, որ մեր քերթուածներուն մէջ այնպիսի բան չկայ, այլ բնական առոգանութեան երաժշտական գաշարժութիւնն կամ ծանրաքայլութիւնը, և իմաստին ու կրից նկատմամբ կամ թէ երբեմն սոսկ հաճոյից ազատութեամբ սուղ կարտասանուի վանկ մը կամ երկար. զորօրինակ.

4—4

Ո՛վ կամաւ | զանկապելին,
Կապեալ ըղձեռս | արձակողին։

4—3

Փա՛ռք քեզ, | Աստուած.
Փառաւորեալ | յաւիտեան։

4—4

Մե՛րկ ելաք | յորովայնէ.
Եւ մերկ դընիմք | ի տապանին։

ունին, ոչ թէ առանց օրէնքի, տողին անդամներուն ճշդութեանն զգոյշ ըլլալով, երբեմն վանկ մ' աւելի կամ պակաս դնել չափին մէջ. ինչպէս որ Հետեւեալ երգին մէջ ալ կերեւի, որ 11 և 9 վանկաչափ յօրինուած է:

2—3—3—3
3—3—3

Ո՜Հ թէ | Նոր ձեռ | քը գըլխոյս | վրայ դըրուէր,
Լըսէի | ես այն ձայնն | քաղցրութեան.
Եւ ինձի | ալ՝ անոնց | պէս՝ նայէր | երբ կըսէր, (12)
"Թո՛ղ տըղա՛ք | որ մանկունք | ինձի գան":
Բայց զիս | ալ փրկի | չըն իրեն | կըկանչէ,
Որ իր սէ | րըն ես ալ | ժառանգեմ.
Ու թէ | որ Հոս զին | քը խնդրեմ | խըրտէ,
Շուտով | պիտի վեր | ըր տեսնեմ. (8)
Ամեն | նորոգուած | Հոգիին | Հոն կընէ
Պատրաստ | օթեւան | բերկրալից. (8)
Որ իր | ժողովուր | դըն Հանգիստ | վայելէ
Եւ ար | քայութիւ | նըն երկնից: (8)

461. Թէպէտեւ ըսած ենք թէ երկբարբառներն իա, իե, իօ, եա, եի, եաւ, ուա, ուե, ուի, մէկմէկ վանկ են, ու պէտք չէ երկու վանկի պէս հնչել, բայց ոտանաւորի մէջ չըսխալելու Համար ենթամնայի նման սանկ (‿) նշան մը կդըրուի անոնց տակը, որ առանց տարակուսի միավանկ Հնչուի. զորօրինակ.

3—4—4—4

Պարգեւէ | քեզ գաւազան | միահեծան | տիեզերա-
սաստ: (÷այլ)

5—5

Քանզի կանչուած ես | փրկիչ Յիսուսին:

4—4
6

Ի՛մմանո–ելին | հողէն կանցնինք ,
Դէպ ի երկինք կերթանք ։

462. Ոտանաւորի տողերն քանի վանկով ըլլալն սահման չունի, երկուքէն մինչեւ տասնուհինգ, տասնուվեց կրնայ ըլլալ։ Եւ տողերն կրնայ նոյնաչափ կամ այլաչափ ըլլալ. միայն թէ մէկ քերթուածի կամ երգի մ'առաջին տունն ինչ չափով որ սկսուեցաւ, նոյնօրինակ շարունակել պէտք է. այսինքն՝ եթէ եօթըն կամ ութ վանկաչափ սկսուեցաւ իւրաքանչիւր տողերն, եօթն կամ ութ շարունակելու է հետեւեալ տներն ալ։ Եւ եթէ առաջին տան մէկ տողն ութ եւ միւսն վեց վանկաչափ սկսուեցաւ, այնպէս շարունակելու է հետեւեալներն, եւն։

463. Զանազան վանկաչափերու քանի մ'օրինակներ տանք։

Չորս և երեք վանկաւոր.

4

Հապա մանկունք
Սեհ քաջազունք՝
Ի գլուխ պըսակ
Ի յաղթանակ ,
Առեալ նըւագս
յԱրաքս արագս
Օ՛ն փութացուք
Օ՛ն երգեցուք՝

Սէր և գութ

Մ՚եր պըսակ
Ու մեր բաղդ
Հաւիրակ՝
Ցընծացեն
Որք լըսեն
Թէ “ուր Հայ,
Չիք անդ վայ”։

Վեց և չորս վանկաւոր.

2—4
4

Հաւատքս | քեղ կընայի,
Ո՛վ գառն | Գողգոթայի,
Փըրկիչ իմին
Չայնիս | մըտիկ ըրէ,
Իմ մեղ | քըս, Տէր, քաւէ,
Ըլլամ | ես յայսմհետէ
Միայն քուկին ։

Վեց և հինգ վանկաւոր.

6
5

Ո՛րք պիտի մեկտեղ գանք,
Ու միշտ մընանք հոն.
Ու հանգիստ վայելենք
Ու շատ բարիք հոն։
Աս չար աշխարհըս միշտ
Միայն կուտայ մեզ վիշտ.
Հոս չենք գտներ հանգիստ
Բընաւ յաւիտեանս։

Վեց վանկաւոր

3—3

Թէ Հայկայ | որդիք եմք,
Թէ Հայկայ | արիւն կրեմք,
Ամէնքս ալ | ի սուրբ սէր
Հայրենեաց | ի նուէր,
Քաջ որդիք | պանծալի
Ըլլամք միշտ | արժանի ։

Եօթն վանկաւոր

4—3

Իմ մայրենի | քաղցր լեզու,
Կեաց անսասան, | կեաց յաւէտ.
Կեաց միշտ լեզուդ | Հայկարժան
Կեաց ծաղկալից | ծաղկաւէտ ։

Ութ եւ եօթն վանկաւոր

4—4

4—3

ՈՀ, ի՛նչ անոյշ | ինչ գեղեցիկ
Մեր Հայրենեաց | զեփիւռիկ,
Շընչէ զըւարթ | մեր սրտերուն,
Տալով աշխոյժ | զօրութիւն ·
Ան ինք կոչէ | ըզմեզ Հայեր,
Գըրգուել յիւր ծոց | ծնելասէր ։

Ութ վանկաւոր

4—4

Աղօթքըս, Տէր | ողորմութեան
Քուկին առջիդ | միշտ մօտենայ ·
Եւ Սուրբ խօսքիդ | ճշմարտութեան
Սիրտս հետեւող | լըսող ըլլայ ։
Լեզուս քու խօսքդ | պիտի պատմէ,
Զի անիկա | է միշտ շիտակ ·

Պատուիրանքներդ | պիտի գովէ,
Զի են արդար | և լուսարձակ։

### Տասն վանկաւոր

5—5

Դժուար գործ մը չէ | թէ որ դուն չիմա
Սահնալ ըսկըսիս | բարի Աստուծմէն.
Երբ չարը մեղքին | մէջ կըծերանայ,
Սիրտն է խիստ դժուար | դառնալ իր ճանբէն։

### Տասնումէկ՝ երկու և ութ վանկաւոր

4—4—3

2

4—4

Թըռած Մասեաց | մառախլապատ | երկինքէն,
Հրաւէր կարդայ | ազատութեան | Հայրենեաց,
Ասդին անդին | թափառական | Հայերուն.
Ձայն աւետեաց | Հայաստանի | բերանէն
Ողջոյն կուտայ | Հայոց, ողջոյն | Նոր փառաց,
"Հերիք" կըսէ | "այսչափ Հարիւր | տարուան քուն".
Օն աչք
Մեր Հայրենեաց | հրաւիրակին.
Ականջ
Զի պատգամ է | այս երկնային։

### Տասնուհինգ և տասնուվեց վանկաւոր

3—4—4—4

4—4—4—4

Ով ընդհատ | ինչ ի բերայ | Սանդարապետն |
յանդունդս ի խոր
Խեթահար | ցասմամբ քինու | զմըտաւ ածեալ |
զիւր պարտութիւն,

Նու զի զէնք | և զրահք հայկին | յերկնաւո-
րա | ցըն զօրութեանց.
Գըրդեղեալք | են ի սլաքս | ցըն մարդկայնոց |
անզրծելիք,
« Թէ մեր », ասէ | , « ըըթեյան | անօթք մար-
տի | առ Միքայէլ,
փըշրեսցեն | սակայն զհայկին | , և կամ թէ
գէթ | ունիցին տեղ »։
Վհանգի մինչ այն | ինչ ըղձըրըրըրդ | պահու տը-
խուր | այն գիշերին
Խոնարհէր | հողւ ինիրհ | վըստամ ըղդըլուխ |
իւր ծանրաքուն
Նրեկի | ասուպիկայ | մարտի պէսպէս | մայլ
հոգովք։

464. Թէեւ ամէն մէկ տողի մէջ ամբողջ նախա-
դասութիւն մ'ըլլալ օրինաւոր է, բայց համձարով
և ճարտարութեամբ մէկ տողն միւսին կրնայ խառնուիլ։

465. Տաղաչափութիւնն նոյնայանգ կամ առանց
յանգի յօրինելու վրայով տարբեր կարծիքներ եղած
են և կան, չէթէ միայն մեր ազգին քերթողներուն
մէջ, այլ ուրիշ Եւրոպական ազգերուն մէջ ալ. և ինչ-
պէս որ անոնց, մանաւանդ Անգղիացւոց մէջ նոյնա-
յանգն ընդունելի եղած է հիմա ընդհանրապէս,
նոյնը մեր ազգին հիմակուան ճաշակին ալ, կերեւի թէ,
գեղեցիկ և քաղցր եկած է. բայց ո՛չ երկար քեր-
թուածներուն մէջ, և ոչ ալ՝ մէկ երգի մ' երեք չորս
տներին բոլորն ալ նմանավերջ ըլլալով, որ տաղտ-
կալի է ականջի. և գեղեցիկ ու քաղցր կուգայ, երբոր
միայն երկու կամ երեք տողերն նմանավերջ ըլլան *։

* Բագրատունի վարդապետն որ ներկայ դարուս հեղինակ և

465. Նմանավերջ ըլլալու համար, եթէ ձայնաւոր է տողին յանգը, պէտք է միեւնոյն ձայնաւորով վերջանան տողերն. զորօրինակ.

4—4

Ով մեղաւոր վաղէ, եկո՜,
Պատրաստ է Տէրն քեզ ներելո՜։
Այն մեծ պատուէրն, Որդեակ, սովրէ,
Որ Տէր Աստուած սիրես, կըսէ։
Մանկանց ձայնէն ինք կախորժի,
Իր սուրբ երեսն խնդրել կուզէ։
Ով իր սիրոյն համեստ որդի,
Իր խոստացած շընորհքն խնդրէ։

466. Իսկ եթէ տողին յանգը բաղաձայնով վերջանայ, պէտք է որ նախադաս ձայնաւորն նոյն ըլլայ բոլորովին, և վերջին բաղաձայնն կամ նոյն՝ և կամ անոր լծորդ տառ ըլլայ. զորօրինակ.

---

առաջին պաշտպան է առանց յանգի քերթողութեան, ինքն Վիրգիլիոսի յառաջաբանին մէջ (Եր. 13. 14.) այսպէս կըսէ, "Այսու ամենայնիւ ոչ եթէ խոտել կամիցիմք զճիշդ զուգավանդ տաղս, և մերժել զձայնական յանգս յոտանաւորաց մերոց, այլ ի մեծ չափս և յերկայն քերթածս, մանաւանդ ի թարգմանեալս ոչ կարեւոր ինչ համարիմք լինել նախնեաց օրինաց հաւանեալ"։ "Նախնեաց օրինաց" կըսէ, քանզի մեր նախնի քերթողներէն շատերն և աւելի հիներն՝ ոչ այնքան նոյնաձայն յանգիւ վանկաչափ տաղեր յօրինելու փոյթ ունեցած են, այլ յաւէտ անդամներուն վայելուչ համեմատութիւնն ու զուգաչափութիւնը դիտած են։ Բոլոր շարականներն և տաղերն ու մեղեդիներն, որ տաղաչափութիւն են, ասոր կվըկայեն, մանաւանդ անոնք որ Շնորհալիէն առաջ երգուած են։ Որոց օրինակներն տես նոյն յառաջաբանին մէջ, Եր. 12. Ծան։ Նա դարձեալ կըսէ. "Սակայն և այնպէս ի մանր քերթուածս ինչ, մանաւանդ քնարերգականս, ես առաւել ի նոյնավանկ անդամովք տաղս, յոյժ վայելուչ և գեղեցիկ զայն (զնոյնայանգն) կարծեմք, եթէ ըստ պատշաճի ի ձայն ճշգրտեսցին",

4—4

Բայց թշնամիք սուրբ օրինաց
Իբրեւ փոշի պիտի ցրուին.
Եւ ապստամբք Տերոջ կամաց,
Անոր դէմքէն կըկորսուին։

4—4
3—3

Ունիմ ես բիւր փաստ և պատճա-
ռներ միշտ փառք տալու.
Զի ինձ տուիր շընորհք հանճար,
Իմ Տէրըս ճանչնալու։

467. Ներելի է որ ճիշդ նման չեղող յանգերով ալ, ինչպէս, -ն՝ -ն ին հետ, էն՝ էն ին հետ, -րդ՝ -րդ ին հետ, -՝ -յ- ին հետ, -ոյ՝ -րյ և -նյ ին հետ, -՝ -յ ին հետ, և ուրիշ այսպիսիներով վերջանան տողերն. և արդարեւ՝ աւելի անոյշ ու ճարտար յօրինուած կըլլայ, երբոր լծորդ գրերով կազմուի յանգերուն նմանաձայնութիւնը. զորօրինակ.

5—5

Անոր երեսէն վախցէք, ով մարդիկ,
Զի իր խօսքերով պիտի շուտ դատուիք։

4—3

Զի հօն Տէրն հաստատեց,
Օրհնութիւն և վարձք ալ մէջ։

Ցօղէ Նըշոյլդ տըխրանոյն,
Պանդուխտ հոգւոյս ցաւոց բոյժ։

468. Այնչափ անոյշ չըլլար և անարուեստ է քեր-

թուածն երբոր նոյն հոլովով, նոյն ածանցական մասնիկով, և բայից նոյն ժամանակովն եւայլն է տողերուն յանգը:

469. Հայերէն բառից մէջ ը ձայնաւորն երբեմն սղելով կանցնի, և երբեմն երկարելով վանկ կկազմէ: Ուստի տաղաչափին հարկաւոր մէկ գիտնալու բանն է, թէ այս ձայնաւորն ո՛ւր պէտք է սղել կամ երկարել, և ո՛ւր ազատ է երկուքին ալ: Այս տառին վրայ Ուղղագրութեան գլխոյն մէջ բաւական խօսած ենք. տես Ձայնաւոր տառք. Ը:

470. Հոս միայն սա յիշելու ենք, թէ բառի մ' սկիզբն երկու բաղաձայն մէկանց յաջորդ ձայնաւորին հետ իբրև մէկ վանկ պէտք է հնչուիլ, որ ըսած ենք, տաղաչափութեան մէջ ազատութիւն է թէ՛ սղելու՝ և թէ երկարելով իբրև զատ վանկ կարդացուելու. մինչև անգամ եթէ նայ գրելով ալ ըլլայ. զոր օրինակ.

4—4

Անշուշտ քընաւ ես չեմ մոռնար.
Արդեօք ո՛ր մարդ կամ ո՛ր հրեշտակ
Փրկչիս նըման ինձ սէր ցուցուց,
Կըրեց վասն իմ վիշտ դըժընդակ.
Հըրէական հին զոհերէն.

5—5

Արդ թէ ես անոր չըհընազանդիմ,
Ծաղիկ մը շուտով հընար է թոռմիլ:

471. Նմանապէս բառերուն վերջն բաղաձայնէ ետև նայ գրերն, և ս, դ, ն, յօդերն, որոց անմիջապէս ձայնաւոր կամ յ, հ, տառերն յաջորդելով

կարգին, ոտանաւորի մէջ ազատութիւն է չըղելու. զորօրինակ.

4—4

Դու մեծ փրկիչս իմ յոյսս ես.
Առանց իր բարձր հրամանին։

5—5

Աստուածը օծեց ամէն մարդէ վեր։
Անոր օրհնութիւն բերանը երգեց։
Եւ այս պատճառաւ ազգերը ամէն։

3—4

—6—

Տէր, տուր որ շընորհքովը
Հաւատարիմ մընամ։

472. Տաղաչափութեան մէկ կարեւոր ճիւղն է ոտքն։

473. Հայերենի մէջ ոտք կիմացուի մէկ տողի մէջ քանի վանկ ըլլալն. ըստ Եւրոպացւոց, Ոտքն է կապակցեալ քանի մը վանկերն, որոց առաջինն կամ վերջինը շեշտն ունի. քանզի ձայնն անոր օգնութիւնովը բոլոր քերթուածին մէջ չափուած ընթացքով մը քայլ կառնու. զորօրինակ.

5—5

Երնե՛կ այն տղի՛ն որ ի՛ր մանկութեա՛ն
Մատա՛ղ հասակի՛ն մէջ կը՛վարժուի՛։

4—3

Գո՛հացէ՛ք՝ միշտ Աստուծմէ՛,
Ո՛ր Աստուա՛ծ է ա՛ստուծո՛ց.
Երկինքէ՛ն ինք կը՛ղըրկէ՛,
Պա՛րգեւնե՛ր ամէ՛ն մարդո՛ց։

474. Այս երգերուն մէջ, ֆօ՛հա, չէ՛ք ժէլը, Ա՛օ-դօլօթ, մէկմէկ շեշտ ունենալով՝ երկերկու վանկով մէկմէկ ոտք են. մէ՛, շեշտ մ' ունենալով մէկ վանկով ոտք մ' է. այն դըլէ՛ն, մէկ շեշտ մ' ունենալով երեք վանկով ոտք մ' է. որ ըսել է թէ ոտք կըլլայ մէկ՝ երկու կամ երեք վանկով ալ։

475. Նոյն երգերուն բառից շարքն երբոր անանկ փոխենք որ շեշտը ճիշդ տեղը չգայ՝ սխալ կըլլայ։ Ինչպէս վերջին տողին շարքը չենք կրնար փոխել, Ա՛մէն ժա՛րդօյ դօլքէ-ներ, ըսել. քանզի եօթը վանկաչափ ոտանաւորի առաջին վանկը պիտի առնու շեշտը, ու անկէ ետեւ ամէն երկրորդ վանկը շեշտ ունի. բայց ո՛չ ամէն՝ ու ոչ ժարդօյ՝ բառերուն առաջին վանկը շեշտ կընդունի։

476. Պէտք է գիտնալ որ ը՛, ըմ, ըդ, ըն, յօդերըն, նաեւ մը, ու, ն, բառերն շեշտ չեն ընդունիր. զորօրինակ.

5—5

Որ սէրս ու հաւա՛տ | քըս աճեցունէ։

4—4

Եւ իր շընո՛րհ | քը յայտնելով։
Գուցէ աղե՛ր | սըս ընդունի։
Բոլոր մեղքե՛ | րըս, Տէր, ներէ։
Իր սըխալնե՛ | րը ո՛վ գիտէ։
Քանզի արի՛ւ | նըդ պատուական։

477. Յայտնի է թէ Հայերէն երկավանկ բառերուն շեշտն և բազմավանկ բառերուն ալ նախնական շեշտն վերջին վանկը կառնու. բայց կան յօրօղէըր և նախայօրօղէըր բառեր ալ, այսինքն՝ վերջինէն առջի

կամ՝ սկըզըբի վանկը շեշտ առնողներ թէեւ քիչ են։ Առնցմէ զատ բացառականով ներկայ Բայերն, որ բացառականը կառնու շեշտն, կամ՝ Բայի հետ ընկերացած Անունն կամ Ածկդիր անուանն կամ Դերբայն, որ այնատեն Բայն շեշտ չառնուր․ ինչպէս, Յա՛յնժամ, Հա՛ղա, ա՛յագե, մա՛նաաանդ, ը՛դանեամ, ը՛ժամէր, ը՛րեմեր, մ՛ արտարար, գ՛ ըրջեր, յա՛ ղարար, Բ՛ղ տար, ատրած եր, տա՛ճ եմ, ևն, ասոնց ալ շեշտը տողին շեշտին տեղը գալու է, ապաթէոչ սխալ կըլլայ ոտքերն․ զորօրինակ.

4—4

Որպէս և յա՛յն | ժամ ըղնոսին․
Սարեն մինչ յա՛յն | կոյս անըընակ։

478․ ԳԻՏԵԼԻՔ․ Ոտանաւորի շեշտի նկատմամբ ուրիշ դիտողութեան արժան կէտ մը կայ, երբոր երգն կամ տաղն Եւրոպական երաժշտութեան եղանակաց վրայ երգելու նպատակաւ կ՚յօրինուի, այն է երգին շեշտերն եղանակի շեշտերուն ճիշդ տեղն բերել։

479․ Եւրոպական եղանակի շեշտերուն վրայ հըմտութիւն ունենալու համար հարկ է որ քիչ մը բացատրութիւն ընենք անոր կանոններուն վրայով*։

480․ Կանոնաւոր երաժշտութիւնն Եւրոպական եղանակին համեմատ թղթի վրայ գրուած մասնաւոր նշաններով կցուցուի, զուգահեռական գծով տողերու վրայ կամ միջատեղը գրուած․ այսպէս.

---

* Հետեւեալ վարդապետութիւնը Աւետաբեր օրագրին 141—143րդ թիւերուն մէջի Տաղաչափական երեք յօդուածներէն քաղուած է։




481. Այս հինգ տողերն տողաշար կըսուին, ու անոր վրայ վերէն վար քաշուած կարճ գծերն ձողն կըսուին։ Այս կարճ գծերուն մէջտեղի միջոցներն չափ կըսուին. այսինքն, ա էն մինչեւ բ ը չափ մ' է, ու բ էն մինչեւ գ ը չափ մ' է, եւն։

482. Այս տողաշարին վրայ գրուած երաժշտական նշաններն խաղ կամ նօթա կըսուին, որոնք վեց տարբեր ձեւերով են։

483. Երբեմն միայն երկու խաղ կըլլան չափ մը մէջ, ինչպէս վերի օրինակին մէջ, երբեմն երեք, երբեմն չորս կամ աւելի խաղեր։

484. Երգելու ատեն չափին մէկ կողմին միւսէն աւելի ձայնի սաստկութիւն կընդունի, և ասոր այս է ձեւն։

485. Երբոր չափի մը մէջ երկու կամ երեք խաղ կայ, շեշտն առաջին՝ կամ թէ ըսենք գաւազանէն անմիջապէս ետքն եղող խաղին վրայ կզարնուի։ Երբոր չորս խաղ ըլլայ չափի մը մէջ, առաջինին վրայ կզարնուի ամենէն զօրաւոր շեշտն, բայց երրորդն ալ երկրորդական շեշտ մ' ունի։

486. Ուրեմն երգի մը բառերն անանկ պէտք է շարուին, որ բառերուն բնական ձեւն եղանակին ձեւէն հետ համեմատ գան։

487. Ինչպէս որ ըսինք առաջ, Հայերէն երկվանկ բառերուն ձեւն ընդհանրապէս ձեւէն վանկն կառնու զօրօրինակ. ու — տո՛ւ, ձէ — ձե՛ւ, խո — ճո՛ւ, և բնաւ մէկը, ո՛ւ — տու, ձէ՛ — ձեւ, խո՛ — ճու չարտասաներ։

488. Երեք վանկով բառերն նախնական շեշտ մ' ունին երրորդ վանկին վրայ, ու երկրորդական շեշտ մ' ունին առաջին վանկին վրայ. զորօրինակ. Հա՛ս—տա—տե՛լ, յա՛յտ—նու—թի՛ւն, նե՛ր—գոր—ծե՛լ. քանզի միջին վանկը շուտով կանցնի ընականաբար, և առաջին վանկն երկրորդէն աւելի զօրաւոր կհնչուի, բայց երրորդ վանկն ամենէն զօրաւոր շեշտ ունի:

489. Նմանապէս չորս վանկով եղած բառերուն նախնական շեշտն վերջին վանկին վրայ է, ու երկրորդական շեշտն երկրորդին. զորօրինակ. ա—րա՛—գու—թի՛ւն, նե—րո՛—ղու—թի՛ւն, հրեշ—տա՛—կա—յի՛ն. և ընաւ մէկը, ա—րա՛—գու՛—թիւն չարտասաներ:

490. Հինգ վանկով եղած բառերուն շեշտն, ինչպէս, կա՛—մա—կո՛—րու—թի՛ւն, առաջին, երրորդ և վերջին վանկերուն վրայ է. որոց վերջինն դարձեալ ամենէն զօրաւոր կամ նախնական շեշտն է: Ու վեց վանկով բառերունը, ինչպէս, հե—րե՛—տի—կո՛—սու—թի՛ւն, երկրորդ, չորրորդ ու վերջին վանկերուն վրայ է*. Թէպէտ հինգ կամ վեց վանկով բառ ընդունելի չէ գործածել ոտանաւորի մէջ:

491. Երգ ութ վանկով կանոնաւոր եղանակ մը կպահանջէ որ ամեն երկրորդ վանկը շեշտուի: Շեշտ չունեցող վանկերուն տեղն տաշ դնելով այսպէս ըլլալու է, —՛—՛—՛—՛. ու այս ոտքն ունեցող երգերուն մէջ բոլոր տողերն այս մասին միեւնոյն ըլլալու են. զորօրինակ.

Հո—գո՛վ սըր—տո՛վ պաշ—տե՛նք Աս—տուա՛ծ.

Ասոր ամէն մէկ երկրորդ վանկն երաժշտութեան յար-

* Այս երկրորդական շեշտերն նշանակեցինք, քանզի երգն եղանակին շեշտերուն յարմարելու համար անհրաժեշտ պէտք է այս հմտութիւնը:

մարելու համար այն նոյն կերպովը չեշտուելու է։
492. Այս տողն թէոր այսպէս գրուելու ըլլար,

Հո—գո՛վ կը—պա՛շ—տենք մե՛նք Աս—տուա՛ծ.

չեշտերէն մէկերկուքը սխալ պիտի ըլլային։ Հեշտն ամենմէկ երկրորդ վանկին զարնուելովն՝ այս կերպ գրուածքին մէջ չեշտին մէկն կը—պա՛շ—տենք բառին մէջ միջին վանկին վրայ կիյնայ. որն որ վերջնոյն վը-րայ պիտի ըլլար, ու առաջնոյն վրայ ալ երկրորդական չեշտ մը պիտի ըլլար։ Կը—պա՛շ—տենք բառին պաշ վանկը զօրաւոր ձայնով արտասանուիլ չըլլար։
493. Ասանկ պարագայի մէջ կրնայ պարզապէս բառերուն կարգը փոխուելովն այս սխալին ճարն գըտ-նուիլ, Դերանունը Բայէն առաջ գրուելով, այսպէս,

Հո—գո՛վ մեք կը՛—պաշ—տե՛նք Աս—տուա՛ծ։

Այս կերպով կտեսնուի որ եղանակին ու երգին մէ-ջի չեշտերն համաձայն կուգան։
494. Ութ վանկով երգերուն մէջ երբեմն ուրիշ տեսակ մը կըլլայ, թէպէտեւ քիչ, որ [illegible] [illegible] կկոչուի. ասոր մէկ օրինակը կայ 111 րդ հոգե-ւոր երգին մէջ որուն առաջին տողն է,

Ով աչք մը բընաւ է տեսեր.

ասոր չեշտն այսպէս կուգայ — ՛ — — ՛ — —՛. կամ թէ չեշտը բառերուն վրայ գրուելով, այսպէս.

Ով ա՛չք մը բը—նա՛ւ է տե—սե՛ր.

Ասիկա չեշտերուն տարբերութեանն համար միւս ու-

թավանկերուն պէս նոյն եղանակին վրայ բնաւ չկրնար աղէկ երգուիլ*։

495. Արդ քանի մը տարբեր չափերուն իրենց յատուկ շեշտերն ցուցնելու համար հետեւեալ օրինակներն կուտանք․

* Շատ հաւանական է որ Եւրոպական երաժշտութեան հմտութիւնը չունեցող մէկը՝ մեծ տարբերութիւն պիտի չըտեսնէ բառ մ՚առաջ կամ ետեւ դրուելուն վրայ, կամ թէ շեշտն այս և այն վանկին զարնուելուն վրայ․ բայց հասարակ ընթերցման արտասանութեան եղանակովը դիւրաւ պիտի բացատրուի ասիկա ։ Զօրօրինակ սա խօսքը, Այ–դէ– –մըն մըր էր –նյէն հ–մ–ր հ–լի– դէտէ տ–յ․ եթէ սանկ շեշտելով կարդալու ըլլանք, Այ–դէ՛– –՛մըն մըր էր –՛նյէն հ–մ–ր հ–՛լի– դէ՛տէ տ–յ, յայտնի է թէ բոլորովին անհաճոյ է ամէն ականջի, և իբրեւ սխալ արտասանութիւն պիտի մերժուի ։ Ճիշդ ասոր նման անհաճոյ է Եւրոպական երաժշտի մը՝ շեշտերն իրենց տեղն չեղող երգ մ՚ երգելն, և իբրեւ համբակ քերթուած մ՚անարգելի․ ինչպէս սա երգն որուն շեշտերն սխալ է․

Կու—զէ՛ք ըլ—լա՛լ հրեշ—տա՛կ մը,
փառք փառք փառք տը—ւէք,
Կու-զէ՛ք մու—նա՛լ ձեր հո՛—գը,
փառք փառք փառք տը—ւէք։

Հիմա երգին շեշտերն ու եղանակին շեշտերն բաղդատենք իրարու հետ, որ յայտնի տեսնուի անհամաձայնութիւնը․

Երգ — ՛ — ՛ — ՛ —
Եղանակ ՛ — ՛ — ՛ — ՛

Արդ՝ երբոր այսչափ անհամաձայնութիւն կայ, յայտնի է որ չկրնար երգուիլ։ Եւ այս անհամաձայնութիւնը շտկելու մեծ դժուարութիւն մը չկայ, քանզի միայն դ––ւ բառ մ՚ սկիզբն աւելցնելով,

Դո՛ւք կու—զէ՛ք հրեշ—տա՛կ մ՚ըլ—լա՛լ,
Դո՛ւք կու—զէ՛ք ձեր հո՛գն մու—նա՛լ.

ըստամենայնի կհամաձայնի եղանակի շեշտերուն։

(8)*

Ը—սի՛ թէ ե՛ս ճամ—բա՛ս պա—հե՛մ ,
Որ ի՛մ լե—զո՛ւս մեղք չը՛—գոր—ծե՛մ.

որուն ամէնմէկ երկրորդ վանկն շեշտ առած է ։

(8 , 6)

Ով Տէ՛ր մե—զի՛ պա—տուի՛—րե—ցի՛ր ,
Որ սո՛ւրբ ըլ—լա՛նք սըր—տո՛վ ։

ըստ վերնոյն շեշտ առած ։

( 7 )

Ո՛վ մեր Հա՛յ—րը ե՛րկ—նա—ւո՛ր ,
Քո՛ւ ա—նո՛ւ—նըդ սո՛ւրբ ըլ—լա՛յ .

որուն առաջին վանկն շեշտուելով անկէ ետեւ ամէն մէկ երկրորդ վանկն շեշտուած է ։

(6 , 6 , 8 , 6)

Ե—կէ՛ք Տէրն սի՛—րող—նե՛ր ,
Պատ—մե՛նք ցըն—ծո՛ւ—թիւն—նի՛ս .
Մէկ—տե՛ղ ել—նե՛ն մեր քա՛ղցր եր—գե՛ր
Մին—չե՛ւ յա—թո՛ռն փըրկ—չի՛ս ։

(8 , 8 , 6)

Այն սո՛ւրբ ա—րի՛ւնն որ ինք թա—փե՛ց ,
Ու մե՛—ղա—պա՛րտ հո—գի՛ս փըր—կե՛ց ,
Պի—տի՛ ես ե՛ր—գէ—ի՛ .

( 7 , 6 )

Երկ—րի՛ս ա—մէ՛ն ծայ—րե՛—րը ,
Մե—զի՛ կա—ղա—ղա—կե՛ն ։

---

* Այս թուանշանն երգին ամէնմէկ տողն քանի վանկով ըլլալն կցուցնէ . այսինքն թէ նոյն երգն ութավանկ է ։

(8, 7, 4)

Տէ՛ր, յաղ—թէ՛ ու—ժո՛վ փոր—ձո՛—ղը,
Քա՛—րե—ղէ՛ն սիրտն կա՛—կուղ—ցո՛ւ.
Ը՛ս—կը—սէ՛ հի—մա՛ մեծ գո՛ր—ծը,
Մե՛—ղա—ւո՛րն քե—զի՛ դար—ձո՛ւ.
Զօ՛—րա—ցո՛ւ մեզ,
Օ՛գ—նու—թի՛ւնն է լո՛կ քեզ—մէ՛։

(8, 7)

Մե՛ր Սի—օ՛—նը ա՛—պա—հո՛վ է,
Զի՛ իր Տէ՛—րը կը՛—տի—րէ՛։

(10)

Ծա—ղի՛կ մը շու—տո՛վ հը—նա՛ր է թոռ—մի՛լ,
Ին—ձի՛ ալ այ—սօ՛ր հը—նա՛ր է մեռ—նի՛լ։

Ուրիշ չափեր ալ կան, որ առհասարակ գոր-ծածական ըլլալով զանց կընենք։

496. Տաղաչափութեան վրայ այլեւս տեղեկութիւնք պէտք են, այսինքն թէ՝ ինչ է Հովուաբանութիւն՝ Քնարերգութիւն՝ Եղերերգութիւն՝ Կատակերգութիւն, կամ Թատերական՝ Վարդապետական՝ Դիւցազնական՝ և Վիպասանական քերթուածներն. բայց մեր նպատակն այս գործոյս մէջ միայն ոտանաւորն շիտակ գրելու համար համառօտ ծանօթութիւն մը տալ էր, ուստի հոս կվերջացնենք՝ յորդորելով մեր ուսանողներն որ կատարեալ Հայկաբանութիւն ուսնելու և քերթողական արուեստին բաւական հմտութիւն ունենալու համար Հայերենի Գրաբարն ուսնելու ջանք ընեն։

## ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

1. Հայր բառին Գործիականն հայրով գրինք (41), և ցուցէ աւելի շիտակ է հօրով ըսել. որովհետև Գրաբար Գործիականն հարբ է Սեռականէն շինուած. և բարդութեան մէջ ալ գործածուած է հար. զորօրինակ. հարազատ։

2. Այն, Անորոշ Դերանուն է, որ կգործածուի Աշխարհաբար լեզուին մէջ ինչպէս որ Նոյն, և անոր հետ դնելու է (62)։

3. Գիրքի, Քարի, ռամկական է ըսինք (216), բայց սա կերպ խօսքերուն մէջ, Սուրբ Գիրքին վարդապետութիւնը. Քաղքին հայրը. որ աւելի վայելուչ է ըսել, Սուրբ Գրոց վարդապետութիւնը, Քաղաքաց հայրն. Բայց ուրիշ կերպ խօսքերու մէջ եզակի ձևով գործածել սովորութիւն եղած է, զորօրինակ. Յիսուսայ Գիրքին մէջ նշանակուի. չըսուիր, Յիսուսայ Գրոց մէջ։

4. Հանդէս բառին Սեռականը Գրաբարին պէս Հանդիսի գրինք (7. Ծան.) բայց շատերն հանդէսի կգրեն, որ ե ով գրուելու է։

# ՅԱՆԿ

## ՅԱՌԱՋԱԲԱՆ


ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ ա

ՀԱՅԵՐԷՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԼԵԶՈՒԻ 1

ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ 1

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ ԲԱՌԱԳԻՏՈՒԹԻՒՆ 3

ԳԼ. Ա. ԱՆՈՒՆ . . . . . 3
*Հոլովմունք Անուանց* . . . 6
*Անկանոն Հոլովմունք* . . . 10
*Անուններուն թուոյն վրայ գիտելիք* . 11
ԳԼ. Բ. ԴԵՐԱՆՈՒՆ . . . . . 11
Ա. *Անձնական Դերանուն* . . . 12
Բ. *Ցուցական Դերանուն* . . . 13
Գ. *Ստացական Դերանուն* . . . 15
Դ. *փոխադարձ Դերանուն* . . . 16
Ե. *Յարաբերական Դերանուն* . . 17
Զ. *Անորոշ Դերանուն* . . . 18
ԳԼ. Գ. ԲԱՅ . . . . . . 19
*Էական Բայ* . . . . . 23
*Կանոնաւոր Բայեր* . . . . 24
Ա *Խոնարհութիւն* . . . . 24
Բ *Խոնարհութիւն* . . . . 27
Գ *Խոնարհութիւն* . . . . 30
Դ *Խոնարհութիւն* . . . . 33

Ներգործական Բայերուն Կրաւորականը 34
Բայերուն Անկանոն խոնարհումը . . 35
Պակասաւոր բայեր . . . . 39
Բայից խոնարհման վրայ Դիտելիք . 40
Ստորադասական Եղանակ . . . 41
Օժանդակ Բայեր . . . . 42
ԳԼ. Դ. ԴԵՐԲԱՅ . . . . . 46
Անցեալ Դերբայ օժանդակ Բայից հետ 47
Ապառնի Դերբայ օժանդակ Բայից հետ 51
ԳԼ. Ե. ՄԱԿԴԻՐ . . . . . 53
Ա. Մակդիր անուան . . . . 53
Բ. Մակդիր բայի . . . . 57
ԳԼ. Զ. ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ . . . . 59
ԳԼ. Է. ՇԱՂԿԱՊ . . . . . 60
ԳԼ. Ը. ՁԱՅՆԱՐԿՈՒԹԻՒՆ . . . . 61

**ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ** 62

ԳԼ. Ա. Տէր բային ի՛նչ է և Բային հետ ի՛նչպէս կհամաձայնի . . . . 62
ԳԼ. Բ. Խնդիր և Խնդրառու . . . 66
Յօդ. Ա. Անուան խնդիրն՝ որ Յատկա-ցուցիչ կըսուի. . . 66
Յօդ. Բ. Մակդիր անուաններուն խըն-դիրներն. . . . 68
Յօդ. Գ. Բայերու խնդիրներն . 69
ԳԼ. Գ. Բացայայտիչ և Բացայայտեալ . 75
ԳԼ. Դ. Մակդիր անուան Անունի հետ . 78
ԳԼ. Ե. Կոչական . . . . . 81

**ՅԱՒԵԼՈՒԱԾ.** Ութ մասանց բանի վրայ դիտելիք զարգացելոց համար . . . 83

Գլ. Ա. *Անուան վրայ* . . . . 83
Գլ. Բ. *Դերանուան վրայ* . . . . 86
Ա. *Անձնական Դերանուն* . . . 86
Բ. *Անորոշ Դերանուն* . . . 86
Գ. *Յարաբերական Դերանուն* . . 87
Գլ. Գ. *Յօդի վրայ* . . . . . 90
Գլ. Դ. *Բայերու վրայ* . . . . . 102
Գլ. Ե. *Դերբայի վրայ* . . . . 105
Գլ. Զ. *Մակդրի վրայ* . . . . 114
Ա. *Մակդիր անուան . անոր աստիճաններն* 114
Բ. *Մակդիր բայի* . . . . 116
Գլ. Է. *Նախադրութեան վրայ* . . . 119
Գլ. Ը. *Շաղկապի վրայ* . . . . 120
Գլ. Թ. *Ձայնարկութեան վրայ* . . . 121

## ԵՐՐՈՐԴ ՄԱՍ ՇԱՐԱ՛ԴԱՍՈՒԹԻՒՆ 123

ՆԱԽԱԴԻՏԵԼԻՔ . . . . . . 123
Գլ. Ա. ՑԵՂԱՇՐՋՈՒԹԻՒՆ . . . 126
Գլ. Բ. ՋԵՂՉՈՒՄ . . . . . 134
" *Դերանուն Տէր բայի* . 134
" *Բայի* . . . . 136
" *Դերբայի* . . . . 137
" *Օժանդակ բայերու* . . 138
" *Խնդրոյ* . . . . 140
" *Դերանուան* . . . 142
" *Յատկացուցչի* . . . 142
" *Մակդիր անուանի* . . 143
" *Անուան* . . . . 143
" *Մակդիր բայի* . . . 144

Զեղչումն Նախադրութեան . : 145
" Շաղկապի . , . 146
" Մասնիկի կամ տառի մը . 147
Գլ. Գ. ԱՒԵԼԱԴՐՈՒԹԻՒՆ . . . 149

## ՉՈՐՐՈՐԴ ՄԱՍ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՏԱՂԱՉԱՓՈՒԹԻՒՆ 153

Գլ. Ա. ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ . . . . 153
Յօդ. Ա. Տառերու վրայ . . . 154
Ձայնաւոր տառք . . . 154
Բաղաձայն տառք . . . 160
Յօդ. Բ. Կէտադրութեան վրայ . . 165
Բութ . . . . . 165
Ստորակէտ . . . . 169
Խօսքի կամ պարբերութեան մը մասերուն կէտադրութեան կանոններն . . . . . 180
Միջակէտ . . . . 184
Վերջակէտ . . . . 186
Հարցական ու զարմացական կէտեր 189
Կախման կէտ . . . . 190
Տաշ . . . . . 191
Չակերտ . . . . . 192
Փակագիծ . . . . . 193
Ընթամնայ . . . . 193
Ապաթարց . . . . 195
Գլ. Բ. ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹԻՒՆ . . . 196
Գլ. Գ. ՏԱՂԱՉԱՓՈՒԹԻՒՆ . . . 204
Ծանօթութիւնք . . . 224